Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1872
1873
1874

84
Т-60

ԿՈՄՍ
ՄՈՆԹԷ-ՔՐԻՍԹՈՅ

ՅԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Կ. ՊՈԼԻՍ

Զմիւռնիա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1873

ԿՈՄՍ

ՄՕՆԹԷ-ՔՐԻՍԹՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

ԾԼԱՅՈՒԹԻՒՆ.

Արեգակն իր շրջանին գրեթէ երրորդ մասը հասեր էր, իր մայիս ամսոյ ջերմ և կենսարար ճառագայթները կղզւոյն ժայռերուն վրայ կը տարածէր, որոնք զգայես անոնց տաքութիւնը կ՚ըզգային. հաւամրգիներուն մէջէն հազարաւոր ճպուռներու միօրինակ և անդադար երգերը կը լսուէին. մրտենիներուն և ձիթենիներուն տերևները սօսափիւնով մը կը շարժէին. տաքցած կրանիթին վրայ Էտմոնի ըրած իւրաքանչիւր քայլին՝ զմրուխտներու նման մողէզները իր առջևէն կը փախչէին. ժայռերուն զառիվայրերուն վրայ վայրի այծերը հեռուանց կ՚ոստոստէին, որոնք բռնելու համար որսորդները հոս կու գային. վերջապէս՝ կղզին բոլորովին ամայի չէր, այլ այս տեսակ կենդանիներով լեցուն էր, և սակայն Էտմոն Աստուծոյ աչաց ներքև ինքզինքն առանձին կը կարծէր։

Իր սրտին մէջ այնպիսի այլայլութիւն մը կ՚ըզգար, որ գրեթէ երկիւղի կը նմանէր. վասն զի ցորեկուան լուսոյն վրայ անգամ չէր վստահէր և կը կարծէր թէ անապատին մէջ իսկ խուզարկու աչքեր իր ըրածները կը դիտէին։

Այս այլայլութիւնը այն աստիճան սաստկացաւ որ Էտմոն գործի սկսելու ատեն՝ կեցաւ, բրիչը գետինը թողուց, հրացանը առաւ,

357-54 գ
15692-ան

կղզւոյն ամենէ բարձր ժայռին վրայ ելաւ, և անկէ իւր շրջահայեաց նայուածքը ամեն կողմ պտրտցուց։

Բայց ստոյգն ըսելով՝ իւր ուշը գրաւողը ո՛չ Քորսիքա կղզւոյն բա-նաստեղծական երեւոյթն էր, որուն մինչև տուները կ՚որոշէր, ո՛չ այն գրեթէ անծանօթ Սարտենիան, որ Քորսիքայի ետին կ՚երեւէր, ո՛չ այն երեւելի յիշատակներ ունեցող Էլպա կղզին, և ո՛չ վերջա-պէս հորիզոնին վրայ տարածուած երկիրներուն հազիւ տեսանելի շարքը, որ նաւաստիին վարժ աչաց այն շքեղ ճենովան և վաճառա-շահ Լիվորնօն կ՚երեւէին։ Ո՛չ, այլ իւր ուշը գրաւողը առտու կա-նուխ մեկնող այն մաքսանենդաց նաւը և անորմէ ետև Ճանբայ ել-նող ճենովայի նաւն էր։

Առաջինը Պոնիֆաչիոյ նեղուցին մէջ աներեւոյթ ըլլալու վրայ էր. միւսը անոր հակառակ Ճանբան բռնելով և Քորսիքայի ծովե-ղերայ մօտէն անցնելով կը պատրաստուէր անկէց հեռանալու։

Զանոնք տեսնելով՝ Էտմոնի սիրտը հանդարտեցաւ։

Ան ատեն՝ իւր նայուածքը անմիջապէս իւր բոլորտիքը եղած ա-ռարկաներուն վրայ դարձուց. ինքը կոնաձև կղզւոյն բարձրագոյն դագաթին վրայ կը գտնուէր, որ հոյակապ պատուանդանով նուրբ արձանի մը կը նմանէր. իւր ստորոտը մարդ չկար, իւր բոլորտիքը մակոյկ մը չէր տեսնուեր. միայն կապուտակ ծովը կղզւոյն հիման հետ անդադար զարնուելով փրփրային ծոպերու շրջանակ մը կը կազ-մէր կղզւոյն բոլորտիքը։

Ան ատեն արագընթաց քայլերով բայց զգուշութեամբ վազե-լով վար իջաւ. այսպիսի ժամանակ խիստ կը վախնար որ իւր այնչափ յաջողութեամբ և խելքով կեղծած դիպուածին պէս դժբաղդութիւն մը չպատահի։

Ինչպէս որ ըսինք, Տանթէս ժայռերուն վրայ գծուած նշաննե-րուն վրայէն ետ դառնալու ատեն՝ դիտեր էր որ անոնց ծայրը նախ-նի յաւերժահարսի լոգարանի նման գաղտնի փոքր խորշ մը կար, որուն մէջ նաւակ մը մտցընելու և գաղտնի պահելու չափ՝ բերանը բաւական լայն և կեդրոնը բաւական ընդարձակ էր։ Ան ատեն՝ իւր ընդունած տեղեկութեանց համեմատ՝ նոյն գծին վրայէն յառաջանալով, որուն ծայրը հաւանականութեանց բաւիղին մէջ ըլլալը պատմեր էր իրեն

ծերբայ Գարիա, Տանթէս մտածեց որ կարգինալ Սբատան չտես-նուելու համար այս խորշը մտած և իւր նաւակը հոն ձգելով այն նշանները գծած պիտի ըլլայ մինչև իւր դանձը պահած տեղը։

Ա՛յս ենթադրութեամբ Տանթէս այն բոլորշի ժայռին քով մօ-տեցաւ։

Սակայն Էտմոն բանի մը վրայ խիստ կը զարմանար, և չէր կրնար իւր դիտութեան բոլոր ուժովը հասկընալ թէ ինչպէս ա-նանց խիստ մեծ զօրութիւն մը բանեցընելու՝ կարող եղեր էին այն ժայռը վեր հանել և իբր խարիսխ հոն տեղաւորել զայն, որ դուցէ հինգ վեց հազար լիտր ծանրութիւն ունենար։

Ցանկարծ Տանթէսի միտքը բան մը եկաւ։

— Փոխանակ վարէն վեր հանելու, ըսաւ ինքնիրեն, վերէն վար իջեցուցած են։

Ուստի ժայռին վրայ ցատկեց, որպէս զի տեսնէ թէ ինչպէս հոն գետեղեր էին զայն։

Իրօք՝ թեթեւ հակումով մը զառիվայրին վրայ ժայռը տեղաւորեր էին՝ տակը մոյթ մը դնելով և բոլորտիքը զգուշութեամբ քարեր և խիճեր յարմարցընելով, որոց վրայ հողով ծածկած էին, որպէս զի ժայռին բաժնուած կտոր ըլլալը յայտնի չըլլայ. այս հողին վրայ խոտեր բուսեր էին, մամուռը ամեն կողմ պատեր էր, և մրտենի-ներն ու հերձիները հոն աճեր էին, այնպէս որ ժայռն երկրին հետ միացած կ՚երեւէր։

Տանթէս զգուշութեամբ հողը մէկդի ընելով՝ բոլոր գործին ճար-տարութիւնը ճանչցաւ կամ գոնէ այնպէս կարծեց։

Ան ատեն բրիչը ժայռին և հողին մէջ տեղը սկսաւ խօթել, որ ժամանակէն պնդացեր էր։

Տան վայրկեան աշխատելով՝ իւր թևը մտնելու չափ ծակ մը բացաւ։

Տանթէս դնաց խիստ ամուր ձիթենի մը կտրեց, ոստերը վրայէն տաշեց, ծակին մէջ խօթեց զայն, և լծակի պէս սկսաւ գործածել։

Բայց ժայռը խիստ ծանր ըլլալէն զատ՝ տակը գրուած մոյթը այնպէս հաստատ կը բռնէր զայն, որ մարդկային ձեռք մը, հէր-քիւլէսինն իսկ ըլլար, պիտի չկրնար զայն տեղէն շարժել։

Այն ատեն Տանթէս մտածեց որ տակի մոյթը պէտք էր հանել:

Բայց ինչ կերպով:

Տանթէս շփոթած մարդոյնման նայուածքը իր բոլորտիքը շրջեց, և իր աչքը վառօդով լեցուն եղջիւրին հանդիպեցաւ, զոր իր Ճագօպօ բարեկամն իրեն թողուցեր էր:

Տանթէս ժպտեցաւ. դժոխային հնարք մը իր գործը պիտի կատարէր:

Իր բրիչովը կոթնած ժայռին և անոր տակը դրուած մոյթին մէջ խողովակ մը բացաւ, ինչպէս կ'ընեն ռահվիրաները՝ երբ մարդուս թեւը խիստ յոգնեցընող գործը թեթևցընել ուզեն, և մէջը վառօդ լեցուց. ետքը իր թաշկինակը թելատեց և բորակով գալարելով պատրոյգ մը ըրաւ, որուն կրակը տալուն պէս՝ քովէն հեռացաւ:

Պայթիւնը չուշացաւ. կոթնած ժայռը անպայման զօրութենէն վայրկեան մը բարձրացաւ, և ստորին ժայռը շառաչիւնով օդը ելաւ: Նոյն միջոցին Տանթէսի առաջուց բացած ծակէն անհամար միջատներ սարսափած դուրս վխտեցան, և ահագին կապտագոյն օձ մը, որ կարծես թէ նոյն գաղտնի քարայրին պահապանն էր, դուրս սահելով աներևոյթ եղաւ:

Այն ատեն Տանթէս մօտեցաւ. կոթնած ժայռը դէպ 'ի անդունդը հակեր էր. անվեհեր խուզարկուն անոր բոլորտիքը դարձաւ, ամենէ անհաստատ կողմը փնտռեց, լծակը անոր մէկ անկեան կոթնցուց, և Սիսիփոսի նման իր բոլոր ոյժը ժայռին տուաւ:

Ժայռը, որ արդէն ցնցիւնէն սասաներ էր, սկսաւ շարժիլ. Տանթէս իր ոյժը կրկնապատկեց, այնպէս որ զինքը տեսնողը այն Տիտաններէն մէկը պիտի կարծէր, որոնք աստուածոց գլխաւորին դէմ պատերազմելու համար լեռները իրարու վրայ կը դնէին: Վերջապէս ժայռը բաժնուելով, գլորելով և ժայռէ 'ի ժայռ զարնուելով դահավիժեցաւ և ծովուն մէջ ընկղմելով աներևոյթ եղաւ:

Ժայռին տեղը բոլորակ տեղ մը բացուեցաւ, ու քառակուսի սալաքարի մը մէջ անցուած երկաթեայ օղակ մը տեսնուեցաւ:

Տանթէս ուրախութեան և զարմացման ձայն մը հանեց. երբեք ո՛ր և իցէ գործի առաջին փորձը այսչափ յաջողելք մը ունեցած չէր:

Ուզեց իր գործը շարունակել, բայց իր սրունքը այնպէս կը դողդոջէին, իր սիրտը այնպէս սաստկութեամբ կը բաբախէր, և իր աչաց առջև այնպիսի կիզիչ ամպ մը պատեց, որ ստիպուեցաւ կենալ:

Բայց այս վարանումը փայլակի չափ միայն տևեց: Էտմոն լծակը օղակին մէջ անցուց, ուժով վերցուց զայն, և կնիքը քակուելով սալաքարը բացուեցաւ, և սանդուխի ձևով զառիվայր մը երևցաւ, որ աստիճանաբար մթնցած քարայրին խաւարին մէջ աներևոյթ կ'ըլլար:

Իր տեղը ուրիշ մը ըլլար՝ անմիջապէս վար պիտի իջնէր, և ուրախութեան աղաղակներ պիտի հանէր. բայց Տանթէս կեցաւ, գունատեցաւ և տարակուսեցաւ:

— Ա՛ղէ, ըսաւ ինքնիրեն, Ճանչնանք ինքզինքնիս. ձախորդութեան սովորելէն ետև՝ չըլլայ թէ ինքզինքնիս խաբենք. եթէ ոչ՝ այնչափ նեղութիւններ կրելս ոչինչ տեղը պիտի երթայ: Մարդուս սիրտը կը վհատի երբ յոյսէն չափազանց ընդարձակուելէն ետև՝ ցուրտ իրողութենէն վերստին ամփոփուի: Գուցէ Ֆարիա երազ մը տեսած է, և կարդինալ Սբատան այս քարայրին մէջ բան մը թաղած չէ, գուցէ իսկ ամենևին եկած չէ, կամ եթէ եկած է, այն աներկիւղ, բաղդախնդիր, անխոնջ և սևադէմ աւազակ Կեսար Պօրճիան իրմէ ետքը հոս եկած, իր հետքը գտած է, և ինծի պէս այս նշանները տեսնելով, այս քարը վերցուցած, ինձմէ առաջ վար իջած, և բան մը թողուցած չէ:

Վայրկեան մը անշարժ, մտախոհ և այն մութ և խորունկ բացուածքին վրայ աչքը յառած մնաց:

— Ուստի, հիմա որ ամենևին բանի մը վրայ վստահ չեմ, հիմա որ գիտեմ թէ անմտութիւն է ո՛ր և իցէ յոյս ունենալը, այս դէպքին հետևութիւնը տեսնելը հետաքրքրութիւն մը պիտի ըլլայ ինծի համար և ոչ ուրիշ բան:

Եւ տակաւին մտածութեան մէջ անշարժ մնաց:

— Այո՛, այո՛, այն թագաւորական աւազակին խաւարով և լուսով խառն կենաց մէջ այս դէպքը պէտք է որ դասուի, անոր գոյութեան գոյնզգոյն թելերը բաղկացընող տարօրինակ դէպքերուն հիւ-

առաջքին մէջ, պէտք է որ այս առասպելախառն դէպքն իսկ իր մէջ գործերուն հետ անլուծանելի շղթաներով յօդուի : Այո՛, Պօրձիա դիշեր մը հոս եկած է՝ մէկ ձեռքը ջահ բռնած և միւսը սուր մը, և իրմէ քսան քայլ հեռու, գուցէ այն ժայռին քովը՝ երկու տխրադէմ և սպառնալից նուիրակներ կը կենային՝ երկիրը, օդն ու ծովը հարցուփորձ ընելով, ինչ ատեն իրենց տէրը իր ահարկու և լուսակիր թևովը խաւարը թօթափելով վար կ'իջնէր, ինչպէս որ ես հիմա պիտի իջնեմ :

Այո՛, բայց իր գաղտնիքը այսպէս այն նուիրակներուն յայտնելէն ետև՝ արդեօք ի՞նչ ըրած է կեսար զանոնք, հարցուց Տանթէս ինքնիրեն :

Ո՛հ, պատասխանեց ինքնիրեն ժպտելով, անշուշտ ինչ որ Ալբիկը թաղողներն ըրաւ, զորոնք թաղեալին հետ թաղել տուաւ :

Սակայն եթէ հոս եկած է, կրկնեց Տանթէս, անշուշտ դանձը դտած տարած է. բայց Պօրձիան, այն մարդը, որ Իտալիան կանկարի մը կը նմանեցընէր, և տերև առ տերև կ'ուտէր զայն, Պօրձիան, կ'ըսեմ, իր ժամանակին յարգը աղէկ դիտնալով՝ այս ժայռը վերստին տեղաւորելու համար իր ժամանակը պիտի չկորսընցընէր :

Ի՞նչենք ուրեմն — :

Այն ատեն իր շրթանց վրայ տսրակուսանաց ժպիտ մը երևելով և մարդկային իմաստութեան այն վերջին «Գուցէ» խօսքը մրմնջելով վար իջաւ :

Տանթէս կարծեր էր թէ վարը մութ և խիստ ու ապականեալ օդ մը պիտի գտնէ. բայց ընդ հակառակն՝ կապտագոյն մշնշաղոյս մը տեսաւ հոն. օդը և լոյսը ոչ միայն իր բացած ծակէն ներս կը մտնէին, այլ և ժայռերուն ձեղքուածներէն, որոնք դրսէն անտեսանելի էին, և որոց մէջէն երկնից կապուտը կ'երևէր, և կանաչ կաղնիներուն շարժող ոստերն և մորենիներուն փշալից և պատող ճիւղերը կ'երևէին :

Այս քարայրին մէջ քանի մը մանրերկրորդ ճնալէն հետև, որուն օդն աւելի գաղջ էր քան թէ խոնաւ, աւելի հաճոյական էր քան թէ գարշահոտ, և ջերմութիւնը կղզոյն ջերմութենէն նուաղ էր, ինչպէս և կապոյտ լոյսն արեգական լոյսէն, Տանթէս, ինչպէս որ ըսինք, մթութեան սովորած ըլլալուն՝ քարայրին հեռաւորագոյն անկիւնները կրցաւ դիտել. այս քարայրը կրանիթի քարէ էր, որոց անկիւնաւոր մակերևոյթն ադամանդի նման կը փայլփլէր :

— Ափսո՛ս, ըսաւ Էդմոն ժպտելով, ահա անտարակոյս ասոնք պիտի ըլլան կարդինալին թողուցած դանձերը, և այն բարի աբբան, այս փայլուն պատերը երազին մէջ տեսնելով, այնպիսի անսահման յոյսեր ունեցած է :

Բայց գոյ սորված այն կտակին խօսքերը յիշեց որ կ'ըսէր. «Երկրորդ քարայրին հեռաւորագոյն անկիւնը» :

Տանթէս տակաւին առաջին քարայրին մէջ մտեր էր, հիմա պէտք էր երկրորդին մուտքը գտնել :

Տանթէս քարայրին ամեն կողմերը դիտեց. երկրորդ քարայրը բնականաբար կղզոյն ներքին կողմը պիտի ըլլար. քարերուն շարքը զննեց, և դնաց զարկաւ միջնորմին այն մասին, ուր իրեն այնպէս երևցաւ թէ ծակ մը պիտի ըլլայ՝ անտարակոյս աւելի ղուշտեան համար գաղտնի պահուած :

Իրիչը վայրկեան մը ժայռին զարնելով՝ այնպիսի անթափանց ձայն մը հնչեց, որ Տանթէսի ձակատը քրտինքով պատեց. վերջապէս համբերատար ականագործին այնպէս երևցաւ թէ կրանիթեայ պատին մէկ մասին վրայ իր ըրած հարուածին արձագանքը խորունկէն կու գար. իր եռանդալի նայուածքը պատին մնտեղյուշ, բանտարկեալի շօշափմամբը ճանչցաւ որ հոն ծակ մ'ըլլալ պէտք էր, ղոր գուցէ ուրիշ մէկը չկրնար ճանչնալ :

Սակայն Տանթէս, որ կեսար Պօրձիայի պէս ժամանակին յարդը աղէկ կը ճանչնար, անօգուտ տեղը չաշխատելու համար՝ միջնորմին բոլոր երկայնքը իր բրիչովը քննեց, հրացանին բունը պատինը զարկաւ, կասկածելի տեղերուն աւազը մէկդի ըրաւ, և բան մը չգտնելով, և բան մը չտեսնելով, վերստին պատին այն մասին քովը գարձաւ, որ այն մխիթարիչ ձայնը հաներ էր, ու նորէն և աւելի ուժով պատին զարկաւ :

Այն ատեն զարմանալի բան մը տեսաւ. բրիչովը զարկած ատեն՝ պատին վրայէն ձեփը թափեցաւ և հասարակ որմնաքարի նման սպիտակագոյն ու կակուղ քար մը երևցաւ : Երկրորդ քարայրին մուտքը քարերով գոցեր, զանոնք ձեփով ձեփեր, և կրանիթի գոյնն ու փայլունութիւնը տուեր էին :

Տանթէս բրիչին սուր ծայրը պատին զարկաւ, և մէկ մատնաչափ ներս մխեց։

Տանթէս Ֆարիայի հաստատածին պէս ապացոյցները տեսնելով պէտք էր վստահ ըլլալ, բայց տարակոյսը և գրեթէ վհատութիւնը իր տկարացեալ սիրտը պաշարեր էր մարդկային կարողութեան գաղտնի կերպով. իր ըրած այն նոր փորձը, որ իր ոյժը պիտի նորոգէր, ընդ հակառակն զինքը բոլորովին ուժաթափ թողուց. բրիչը զոգցես ձեռքէն գետինն ինկաւ, ճակատի քրտինքը սրբեց, և լոյսին ելաւ, պատրուակ բռնելով որ տեսնէ թէ արդեօք մէկը զինքը կը դիտէ, բայց իրօք վասն զի օդ առնելու պէտք ունէր, վասն զի կ'ըզգար որ պիտի նուաղէր։

Կղզիոյն մէջ մարդ չկար, և արեւն իր զենիթը հասնելով իր կիզիչ ճառագայթները կը սփռէր. հորիզոնին վրայ շափիւղայի նման մակոյկներ կ'երևէին։

Տանթէս դեռ բերանը բան մը դրած չէր. բայց այսպիսի միջոցի մը մէջ անկարելի էր հաց ուտել. ումպ մը շաքարօղի խմեց, և ոգի առնելով վերստին քարայրին մէջ մտաւ։

Իրեն այնչափ ծանր երևցած բրիչը վերստին թեթևցեր էր. գրիչ մը բռնելու պէս զայն գետնէն վերցուց, և սկսաւ եռանդով աշխատիլ։

Քանի մը հարուած լսեցնելէն ետև՝ նայեցաւ որ քարերը հիւսուած չէին, այլ միայն վրայ վրայի դրուած և ծեփով գոցուած էին, ինչպէս որ արդէն ըսինք. ուստի բրիչին ծայրը քարերուն մէկուն միջոցը խօթեց, բռնին վրայ ոյժը տուաւ, և ուրախութեամբ նայեցաւ որ քարը ծխնիներու վրայ դարձածի պէս գլորելով իր ոտից քովն ինկաւ։

Այնուհետև բրիչովը միւս քարերն ալ մի առ մի քաշեց հանեց տեղէն։

Ծակը բացուելուն պէս՝ Տանթէս կրնար ներս մտնել. բայց իր քանի մը վայրկեան սպասելը՝ յուսոյ յարելով ստուգութեան վրայ տարակուսիլ էր։

Վերջապէս առաջին քարայրէն երկրորդը անցաւ։

Երկրորդ քարայրը առջինէն աւելի ցած, աւելի մութ էր, և աւելի սոսկալի երևոյթ մը ունէր. օդը որ նոյն միջոցին բացուած

ծակէն միայն ներս կը մտնէր, տապականեալ հոտ մը ունէր, և Տանթէս կը զարմանար թէ ինչպէս նոյն հոտը առաջինին մէջ չկար։ Ուստի դուրս ելաւ որ քիչ մը առողջ օդ հնչէ, և ետքը վերադարձաւ։

Բացուած ծակին ձախ կողմը խորունկ և մութ անկիւն մը կար։

Բայց ինչպէս որ ըսինք՝ Տանթէսի աչաց մութ տեղ չկար։

Իր նայուածքը երկրորդ քարայրին մէջ շրջեց, և զայն առաջինին պէս դատարկ գտաւ։

Եթէ գանձը ստոյգ կար՝ այն մութ անկիւնը թաղուած պիտի ըլլար։

Իր ճգնաժամը հասեր էր. երկու ոտք գետինը փորելով Տանթէս կամ անպայման ուրախութեան և կամ վերջին յուսահատութեան մէջ պիտի ընկղմէր։

Դէպ 'ի անկիւնը յառաջացաւ, և իբր անմիջական որոշմամբ համարձակ գետինը սկսաւ փորել։

Հինգերորդ կամ վեցերորդ հարուածին՝ երկաթին ծայրը երկաթի վրայ հնչեց։

Երբէք աղէտալի հնչիւն մը, երբէք գուժատու զանգակի մահաշունչ ձայն մը լսողին այն ատենէն ազդեցութիւն ըրած չէ, որչափ այն երկաթին հնչիւնը Տանթէսին ըրաւ. Տանթէս ասկէ աւելի սոսկալի այլայլութիւն մը զգացած չէր բնաւ։

Բրիչը քիչ մը անդին զարկաւ, նոյնպէս ընդդիմութեան մը պատահեցաւ, բայց տարբեր ձայն մը լսեց։

— Երկաթ շրջանակներով սախտակ սնտուկ մը պիտի ըլլայ աս, ըսաւ։

Այս միջոցիս յանկարծ ստուեր մը քարայրին լոյսը խափանեց։

Տանթէս բրիչը գետինը նետեց, հրացանն առաւ, ծակէն անցաւ և քարայրէն դուրս նետուեցաւ։

Վայրի այծ մը քարայրին առաջին ծակին վրայէն ցատկեր էր, և քանի մը քայլ անդին կ'արածէր։

Բարեպատեհ առիթ մ'էր այս իր ճաշը ապահովցնելու համար, բայց Տանթէս վախցաւ որ չըլլայ թէ հրացանի պայթման ձայնը մարդ մը լսէ։

Վայրկեան մը մտածեց, ուռենական խաղալի ոստ մը կտրեց, գնաց դեռ ծխող կրակէն վառեց, որու վրայ մաքսանենգերը իրենց նախաճաշիկը եփեր էին, և այն ջահով վերադարձաւ, որպէս զի իր ընելու գործը աղէկ տեսնէ ։

Այն ջահով իր փորած անձև և անկատար ծակին մօտեցաւ և նայեցաւ որ սխալած չէր. փոխադարձաբար երկաթին ու տախտակին վրայ զարկեր էր ։

Իսկոյն երեք ոտք երկայնութեամբ և երկու ոտք լայնութեամբ հողը մէկ դի ըրաւ, և բանուած երկաթով շրջանակուած կաղնիի փայտէ արկղ մը տեսաւ, որուն խուփին մէջ տեղը, արծաթի տախտակի մը վրայ, որուն փայլունութիւնը չկրցեր էր հողը կորսնցընել, Սբատայի գերդաստանին զինանշանները կը փայլէին, այսինքն ձուաձև վահանակի մը վրայ ուղղակի դրուած սուր մը կար, ինչպէս են Իտալացւոց վահանակները, և վրան կարդինալի գլխարկ մը զետեղուած էր ։

Տանթէս դիւրութեամբ ճանչցաւ զանոնք, ըստ որում աբբայ Ֆարիան այնչափ անգամ գծագրեր էր զանոնք իրեն ։

Ուստի ամենևին տարակոյս չկար, գանձը հոն էր. անշուշտ դատարկ սնտուկ մը այն տեղը պահելու համար զգուշութիւն պիտի չբանեցընէին ։

Անմիջապէս արկղին բոլորտիքը եղած հողերը դուրս հանեց և հետզհետէ երևան ելան մէջ տեղի փականքը երկու կախծու փակաղակներու մէջ տեղը, և երկու կողմնակի ճարմանդները. այս ամենն ալ նոյն ժամանակին սովորութեան համեմատ բանուած էին, քանզի արուեստով ամենէ անարգ մետաղներն անգամ կ'ազնուացընէին ։

Տանթէս սնտուկին ճարմանդներէն բռնեց և վերցընելու ջանաց. բայց այս բանս անկարելի էր ։

Այն ատեն սնտուկը բանալու փորձ փորձեց. փականքը և փակաղակները կղպուած էին. կարծես թէ հաւատարիմ պահապանները կը դժկամակէին իրենց գանձը յանձնել ։

Տանթէս բրիչին սուր ծայրը սնտուկին և խուփին մէջ տեղը խոթեց, և իր բոլոր ոյժը բրիչին բռնին վրայ տուաւ. այն ատեն՝

խուփը շառաչիւնով մը խորտակուեցաւ, և բևեռեալ երկաթ շրջանակները չդիմանալով նոյնպէս խորտակուեցան, թէև սնտուկին տախտակի կտորները տակաւին սեղմ բռնած էին, և սնտուկը բացուեցաւ ։

Թալկաւոր տենդ մը Տանթէսի բոլոր անձը պատեց. Տանթէս հրացանն առաւ, լեցուց զայն և իր քովը դրաւ ։ Իր աչքը գոցեց, ինչպէս կ'ընեն փոքր տղայք լուսաւոր երկնից վրայ տեսնուածներէն աւելի աստղեր տեսնելու համար իրենց երևակայութեան լուսաճաճանչ գիշերուան մէջ, ետքը իր աչքը բացաւ և շլացեալ մնաց ։

Սնտուկը երեք խորշերու բաժնուած էր ։

Առաջնոյն մէջ ոսկի դրամները կը փայլէին ։

Երկրորդին մէջ՝ ձոյլ ոսկւոյ անյարդար բայց կարգաւ շարուած գաւազաններ կային ։

Վերջապէս Էտմոն ձեռքը երրորդին մէջ դրաւ, որ կիսով չափ լեցուն էր, և ափովը ադամանդները, մարգարիտները, սուտակները յուզեց, որոնք շողշողուն ջրվէժի պէս իրարու վրայ ընկած ժամանակ՝ ապակիի վրայ կարկուտի վազելուն կը նմանէին ։

Իր դողդոջուն ձեռօքը ոսկին և թանկագին քարերը շօշափելէն և խառնելէն ետև՝ Էտմոն ոտք ելաւ և յիմարութեան մօտեցող մարդու մը սաստիկ եռանդովը քարայրներէն դուրս ցատկեց, ժայռի մը վրայ ելաւ, ուրկից կարելի էր ծովը դիտել, և բան մը չտեսաւ, ինքն առանձին էր հոն, և բոլորովին առանձին այն անհաշուելի, անլուր և առասպելական հարստութեանց հետ, որոնք իրը եղեր էին. միայն թէ արդեօք քո՞ւնէր թէ արթուն, արդեօք տեսածը անցաւոր երա՞զ մ'էր եթէ ստոյգ իրողութիւն մը ։

Իր գանձը վերստին տեսնել կ'ուզէր, սակայն կ'ըզգար իսկ որ այս միջոցիս պիտի չկրնար յստակ տեսնել ։ Վայրկեան մը իր երկու ձեռքը գլխուն վրայ դրաւ, որպէս թէ չթողու որ խելքը փախչի. ետքը սկսաւ պտըտիլ ոչ շիտակ ճամբու մը վրայ, քանզի Մօնթէ-Քրիսթոյի մէջ մասնաւոր ճամբայ մը չկայ, այլ գծուած նշաններուն վրայէն յառաջացաւ. իր առջևէն վայրի այծերը կը փախչէին, և իր աղաղակներովը ու շարժումներովը ծովային թռչունները կը վախցնէր ։ Ետքը՝ նոյնպէս տարակուսալից ետ դառնալով՝

առաջին քարայրէն երկրորդին մէջ անցաւ և դէմ առ դէմ ոսկիներուն և ադամանդներուն առջևը գտնուեցաւ ։

Այս անգամ ծնկան վրայ եկաւ, սարսռեալ ձեռօքը իր յուզեալ սիրտը սեղմելով, մտային աղօթք մը մրմնջեց միայն Աստուծոյ համար ։

Նոյն միջոցին իր սիրտը հանդարտեցաւ և աւելի երջանիկ երևցաւ, վասն զի նոյն վայրկենէն միայն սկսեր էր իր բարօրութեանը հաւատալ ։

Այն ատեն՝ սկսաւ իր գանձը համրել. հազար կտոր ձոյլ ոսկի կար՝ իւրաքանչիւրը երկու կամ երեք լիտր ծանրութեամբ. ասոնցմէ զատ՝ քսան և հինգ հազար ոսկի դրամներ կոյտ կոյտ շարեց. որոց իւրաքանչիւրը Գաղղիոյ ութսուն ֆրանքի արժողութիւն ունէր, և ամէնքն ալ Աղեքսանդր Զ.ին և անոր նախորդներուն պատկերները կը կրէին, բայց տակաւին խորշը հազիւ կէս եղեր էր ։ Վերջապէս տասն անգամ երկու լիաբուռն ձեռօք՝ մարգարիտները, թանկագին քարերը ու ադամանդները չափեց, որոց շատը՝ ժամանակին ամէնէն ճարտար ոսկերիչներէ բանուած ըլլալով իրենց բուն արժողութենէն աւելի թանկագին էին ։

Իրիկուն ըլլալով մթութիւնը սկսաւ սակաւ առ սակաւ ամեն կողմ տարածուիլ ։ Տանթէս վախցաւ որ չըլլայ թէ քարայրին մէջ մութին մնայ, և հրացանն առնելով դուրս ելաւ ։ Պատառ մը պաքսիմաթով և քանի մը ումպ գինիով իր ընթրիքը ընելէն ետև՝ քարը տեղը դրաւ, վրան պառկեցաւ, և այսպէս իր մարմնովը քարայրին մուտքը ծածկելով հազիւ քանի մը ժամ քնացաւ ։

Այն գիշերը Տանթէսի կենացը երկու կամ երեք քաղցր բայց միանգամայն սոսկալի գիշերներէն մէկն եղաւ ։



ԳԼՈՒԽ Բ

ԱՆԾԱՆՕԹԸ

Վերջապէս առտու եղաւ. որուն Տանթէս երկար ժամէ ի վեր աչքը բաց կ'սպասէր ։ Անմիջապէս ոտք ելաւ, առջի իրիկուան պէս՝ կղզւոյն բարձրագոյն ժայռին վրայ ելաւ, որպէս զի բոլորտիքը դիտէ. առջի իրիկուան պէս առանձնութիւնը ամեն կողմ կը տիրէր ։

Այն ատեն խոմծն ժայռէն վար իջաւ, քարը վերցուց, քարայրը մտաւ, իր ծոցերը թանկագին քարերով լեցուց, տախտակի և երկաթի բեկորները կրցածին չափ վերստին սնտուկին վրայ դրաւ, հողով ծածկեց զայն, և ոտքովը կոխելով աւազ ցանեց վրան, որպէս զի բացուած ըլլալը յայտնի չըլլայ. ետքը քարայրէն դուրս ելաւ, սալաքարը վերստին իր տեղը դրաւ, ու վրան զանազան մեծութեամբ քարեր գլորեց, որոց անջրպետներուն մէջ հող լեցուց, և մրտենիներ ու հաւամրգիներ տնկելով ջրեց զանոնք, որպէս զի առաջուց տնկուած երևին. այն կողմերը եղած իր քայլերուն հետքը աւրեց, և անհամբերութեամբ իր ընկերներուն դարձին սպասեց ։ Իրօք՝ ալ պէտք չէր ոսկւոյն և ադամանդներուն նայելով, և անօգուտ գանձերու վրայ հսկող վիշապի մը պէս Մօնթէ-Քրիսթօ կղզւոյն մէջ մնալով իր ժամանակը կորսնցընել ։ Հիմա պէտք էր մարդոց մէջ դառնալ, կենդանութիւն առնուլ և ընկերութեանց մէջ այն աստիճանը, ազդեցութիւնը և զօրութիւնը ունենալ, զորոնք այս աշխարհիս մէջ հարստութիւնը կու տայ, հարստութիւնը, որ մարդոց առաջին և ամենէ մեծ զօրութիւնն է ։

Մաքսանենգերը վեցերորդ օրը վերադարձան. Տանթէս Ժէօն Ամէլիին ընթացքէն ճանչցեր էր զայն հեռուէն. ուստի վիրաւորեալ Փիլոկտէտի պէս ընդ քարշ մինչև նաւահանգիստն իջաւ, և երբ իր ընկերները ցամաքն ելան, տրտնջելով իմացուց անոնց թէ զգալի կերպով աւելի աղէկ է. ետքը՝ բաղդախնդիրներուն պատմութիւնը մտիկ ըրաւ ։ Թէև անոնք յաջողեր էին, բայց նաւուն բեռը ցամա-

քը հանելնուն պէս՝ իմացեր էին թէ Թուլոնի մէջ հսկողութեան վրայ եղող շէղակայմ նաւ մը նաւահանգստէն դուրս ելնելով՝ դէպ 'ի իրենց կողմը կը յառաջանար ։ Ուստի կարելի եղածին չափ արագութեամբ փախեր էին , ցուելով թէ ինչու Տանթէս , որ նաւուն այնպիսի արագընթացութիւն մը տալ գիտէր , իրենց հետ չէր գտնուեր , որ զայն կառավարէր ։ Իրօք՝ քիչ մը ատեն ետքը՝ հետամուտ նաւը տեսեր էին , բայց գիշերուան օգնութեամբը և Քորսիքայի հրուանդանին միւս կողմն անցնելով ազատեր էին ։

Վերջապէս՝ այս ճանապարհորդութիւնն անյաջող վախճան մը չունեցաւ , և ամենքին մանաւանդ Ժագօպօ կը ցուէին թէ ինչու Տանթէս հետերնին չըլլար , որ իրեն ինկած բաժինն ընդունէր · իւրաքանչիւր ոք յիսուն թալեր բաժին առեր էր ։

Տանթէս անտարբեր կեցաւ և ժպտեցաւ իսկ անոնց ըրած այն շահերուն վրայ որոց մասնակից պիտի ըլլար եթէ իրենց հետ երթալ կարենար · և որովհետև Ժէն Ամէլին միայն զինքը առնելու համար Մօնթէ–Քրիսթօ եկած էր , ուստի նոյն իրիկունը նաւը մտաւ , որ դէպ 'ի Լիվօռնօ գնաց ։

Հոն հասնելուն պէս՝ Հրեայ սեղանաւորի մը գնաց , ու իւր ամենէն փոքր ադամանդներուն չորսը ծախեց անոր՝ իւրաքանչիւրը հինգ հազար ֆրանքի ։ Հրեայն կրնար հարցընել թէ այս թանկագին քարերը նաւաստի մը ինչպէս ստացած է · բայց շատ զգուշացաւ այս հարցումն ընելու , ըստ որում իւրաքանչիւրին վրայ հազարական ֆրանք կը շահէր ։

Հետևեալ օրը՝ նոր մակոյկ մը գնեց և Ժագօպօյին նուիրելով հարիւր թալեր ևս տուաւ անոր , որպէս զի կարենայ նաւաստիներ բռնել , սակայն այն պայմանաւ որ Ժագօպօ Մարսիլիա երթայ և տեղեկութիւն ստանայ Մէյլանի ծառափողոցը բնակող Լուի Տանթէս անուամբ ծերունիի մը , և Քաթալանցւոց գիւղը բնակող Մէրսէտէս անուն նորատի աղջկան մը վրայ ։

Ժագօպօ այս գործը երազ մը կարծեց · այն ատեն Էտմօն պատմեց անոր թէ իւր նաւաստի ըլլալը մտային հաճոյք մ'էր , վասն զի իւր ընտանիքը իրեն պէտք եղած ստակը չէր ուզեր տալ , և հիմա Լիվօռնօ հասնելով , հօրեղբօր մը իրեն թողուցած ժառանգու-

թիւնը ստացեր էր ։ Տանթէս իւր խոհեմութեամբը այս պատմութեան այնպիսի հաւանականութիւն մը տուաւ , որ Ժագօպօ չերկմտեցաւ բնաւ որ իւր հին ընկերը զինքը խաբել ուզէ ։

Միւս կողմանէ իսկ՝ Ժէն Ամէլի նաւապետին հետ Էտմոնի ըրած դաշանց ժամանակը լրացած ըլլալով , անորմէ բաժնուելու հրաման խնդրեց · նաւապետը 'ի սկզբան ջանաց զան համոզել որ իւր քովը կենայ , բայց Ժագօպօյին պէս ժառանգութեան պատմութիւնը լսելով՝ իւր նաւաստիին որոշմանը յաղթելու յոյսէն ետ կեցաւ ։

Հետևեալ առտու՝ Ժագօպօ ճամբայ ելաւ դէպ 'ի Մարսիլիա , և 'ի դարձին՝ Էտմոնը Մօնթէ–Քրիսթօ կղզին պիտի գար գտնէր ։

Նոյն օրը՝ Տանթէս առանց իւր ուր երթալը իմացնելու Ժէն Ամէլի նաւաստեաց մեծ նուէրներ տուաւ , ու անոնցմէ և իւր նաւապետէն բաժնուեցաւ , խոստանալով այս վերջինին որ օր մը իւր լուրերը իրեն հաղորդէ ։

Տանթէս Ճենովա գնաց ։

Անգղիացի մը լսած ըլլալով որ Ճենովացիք Միջերկրականի ամենէն ճարտար նաւագործներն են , քառասուն հազար ֆրանքի միակայմ նաւ մը ապսպրեր էր որ շինեն ։ Տանթէս վաթսուն հազար ֆրանք տալ առաջարկեց այն նաւուն փոխարէն , այն պայմանաւ որ նոյն օրը իրեն յանձնեն զայն ։ Անգղիացին մինչև նաւուն շինուիլը դէպ 'ի Զուիցէրի ճանապարհորդութեան գացեր էր , և երեք շաբաթէն կամ ամիս մը հազիւ պիտի վերադառնար ։ Նաւագործը մտածեց որ մինչև Անգղիացիին գալը կրնար ուրիշ մը շինել ։

Տանթէս նաւագործին հետ Հրէային դրամատունը գացին , քովի սենեակը մտան , և Հրէան նաւագործին վաթսուն հազար ֆրանք համրեց ։

Նաւագործը առաջարկեց Տանթէսին որ նաւաստիներ բռնելու հոգը իւր վրայ թողու · բայց Տանթէս շնորհակալ եղաւ անոր՝ ըսելով թէ սովորութիւն ունի առանձին ճանապարհորդելու , բայց միայն կը խնդրէ որ նաւուն խուցին մէջ , ննջարանին գլխի կողմը գաղտնի պահանոց մը շինէ , որուն մէջ նոյնպէս ծածուկ

երեք խորշեր ըլլան ։ Ասոնց չափը տալու, և հետևեալ առտու ամեն բան՝ պատրաստ ըլլալով՝ նաւը իրեն յանձնուեցաւ ։

Երկու ժամէն ետքը՝ Տանթէս Ճէնովայի նաւահանգստէն դուրս կ՚ելնէր հետաքրքիր մարդոց ուշադրութեան ենթակայ ըլլալով, որոնք կ՚ուզէին տեսնել այն Սպանիայի պարոնը, որ առանձին ճանապարհորդելու սովորութիւն ունէր ։

Տանթէս յաջողութեամբ յառաջացաւ, ղեկին օգնութեամբը զոր բնաւ ձեռքէն չթողուց, իր ուզած ճեմերն ընել տուաւ նաւուն. կարծես թէ նաւը մտացի էակ մ՚էր որ ամենաթեթև մղման մը հնազանդելու պատրաստ էր, և Տանթէս ինքնին համոզուեցաւ որ Ճէնովացիք աշխարհիս առաջին նաւակերտներն ըլլալու արժանի են ։

Հետաքրքիր մարդիկը իրենց աչքը նաւուն վրայէն չվերցուցին մինչև անոր աներևոյթ ըլլալը, և այն ատեն անոր բռնած ճամբուն վրայ սկսան վիճիլ. ոմանք կը պնդէին թէ Քորսիքա կ՚երթայ, ոմանք Էլպա կղզին, ոմանք գրաւ իսկ դնել կ՚ուզէին թէ Սպանիա կ՚երթայ, և այլք՝ Ափրիկէ. ամենևին մէկուն մտքէն չէր անցներ Մօնթէ—Քրիսթօ կղզին ։

Այսու ամենայնիւ Տանթէսի գացած տեղը Մօնթէ—Քրիսթօն էր, ուր հասաւ երկրորդ օրուան իրիկունը. նաւը խիստ արագընթաց էր և երեսուն ու հինգ ժամուան մէջ հոն հասեր էր ։ Տանթէս ծովեզերքին դիրքը աղէկ կը ճանչնար, և փոխանակ սովորական նաւահանգստին մէջ մտնելու, փոքր խորշին մէջ խարիսխ նետեց ։

Կղզին ամայի էր. Տանթէսի մեկնելէն ետքը մէկը եկած չէր երևեր. շուտով իր գանձին քովը գնաց, ամեն բան իր թողուցած վիճակին մէջ գտաւ ։

Հետևեալ առտու՝ իր անբաւ գանձը նաւը փոխադրելով, գաղտնի պահանոցին խորշերուն մէջ պահեց ։

Տանթէս ութ օր մը ևս սպասեց. այսչափ միջոցին իր նաւովը կղզւոյն բոլորտիքը պտըտեցաւ զայն վարժելով, ինչպէս ձիավարժ մը իր ձին կ՚վարժէ. անոր բոլոր յատկութիւնները և պակասութիւնները ճանչցաւ, և պէտք եղածները կարգի դնել տալով՝ պատուական նաւ մը ընել կ՚ուզէր ։

Ութերորդ օրը՝ Տանթէս նաւակ մը տեսաւ, որ բոլոր առագաստները բացած կղզւոյն վրայ կու գար. իսկոյն ճանչցաւ որ Ժաքօփօյինն էր. նշան մը տուաւ անոր, որուն Ժաքօփօ պատասխանեց, և երկու ժամէն ետքը մակոյկը իր քովը հասաւ ։

Էտմոնի երկու հարցմանց իւրաքանչիւրին տխուր պատասխաններ բերած էր ։

Ծերունի Տանթէս մեռեր էր ։

Եւ Մէրսէտէս աներևոյթ եղեր էր ։

Էտմոն այս երկու գոյժերը հանդարտ դէմքով մտիկ ըրաւ. բայց անմիջապէս ցամաքը իջաւ՝ արգիլելով որ մէկը իր ետևէն չգայ ։

Երկու ժամէն վերադարձաւ. Ժաքօփօյի մակոյկէն երկու հոգի իր նաւը անցան որ նաւուն ծառայութեանցը օգնեն. Տանթէս հրամայեց որ նաւուն գլուխը դէպ ՚ի Մարսիլիա ուղղեն ։

Իր հօրը մահը գուշակեր էր. բայց Մէրսէտէս ինչ եղեր էր արդեօք ։

Առանց իր գաղտնիքը հաղորդելու՝ Էտմոն չէր կրնար աւելի բացայայտ տեղեկութիւններ տալ գործակատարի մը. ասկէ զատ ինքը ուրիշ այնպիսի տեղեկութիւններ կ՚ուզէր առնալ, որոնք միայն իրեն կ՚նկատէին ։ Լիվօրնոյին մէջ նայած հայելին զինքը վստահացուցեր էր որ ճանչցուելու վտանգէն ազատ է, մանաւանդ որ ծպտելու համար ամեն միջոցները ունէր հիմա ։ Վերջապէս առտու մը միակայմ նաւը՝ մակոյկը ետին ձգած՝ յաջողութեամբ Մարսիլիայի նաւահանգիստը սահեցաւ մտաւ, և ճիշդ այն նաւամատոյցին դիմացը կեցաւ, ուրկից այն տխուր յիշատակի գիշերը զինքը նաւը իջեցուցեր էին Իֆ դղեակը տանելու համար ։

Նոյն միջոցին առողջապահութեան գործակալին մակոյկով դէպ ՚ի նաւը գալը Տանթէսին քիչ սարսուռ չպատճառեց. սակայն Տանթէս իր ունակացուցած կատարեալ վստահութեամբը Անգղիական անցագիր մը ցուցուց անոր, զոր Լիվօրնոյէն գնած էր, և այս օտարազգի հրամանագրով, որ Գաղղիոյ մէջ աւելի յարգի է քան թէ Գաղղիացւոյը, անարգել ցամաքն իջաւ ։

Տանթէս Քանըպիէր ելնելով՝ իր առջի տեսած մարդն եղաւ

Փոթոռ-Տեր-Դավթյանցը դարձավ Հայկին։ Ան ուրախ էր, որ նրան հանդիպեց այդ ժամանակ, երբ նա ամենից շատ էր կարոտել ընկերական խոսակցության։ Նրանք սկսեցին զրուցել։ Հայկը պատմեց Տանիելի մասին, որ ինչպես միշտ, այնպես էլ այդ անգամ ուշացել էր։

— Ես նրան ասացի, որ ինձ համար ամենից ավելի ուրախալի կլինի, եթե նա ինձ հետ ճաշի գա։ Ես ուզում էի նրան ներկայացնել մեր ընտանիքին։ Ես ուզում էի, որ նա ինձ ավելի լավ ճանաչի։ Ես ուզում էի, որ նա ինձ սիրի։

Տանիելն իր հերթին պատմեց Հայկին իր ծրագրերի մասին։ Նա ասաց, որ ինքը ցանկանում է ուսումը շարունակել Ամերիկայում, որ այնտեղ ավելի հեշտ է գիտական աստիճան ստանալ, քան Եվրոպայում։ Նա ասաց, որ ինքը ցանկանում է ապրել Ամերիկայում, որ այնտեղ ավելի հեշտ է հարստանալ, քան Եվրոպայում։ Նա ասաց, որ ինքը ցանկանում է ամուսնանալ Ամերիկայում, որ այնտեղ ավելի հեշտ է գտնել հարուստ կին, քան Եվրոպայում։

Հայկը ուշադիր լսում էր նրան։ Նա ուզում էր իմանալ, թե ինչ է մտածում Տանիելը իր մասին։ Նա ուզում էր իմանալ, թե ինչ է մտածում Տանիելը իր ընտանիքի մասին։ Նա ուզում էր իմանալ, թե ինչ է մտածում Տանիելը իր ապագայի մասին։

Տանիելն ասաց, որ ինքը ցանկանում է ամուսնանալ հարուստ կնոջ հետ, որ ինքը ցանկանում է ունենալ հարուստ կին, որ ինքը ցանկանում է ունենալ հարուստ կին, որ ինքը ցանկանում է ունենալ հարուստ կին

ԳԼՈՒԽ Գ

ՌՕՆ-ՏԻՒ-ԿԱՐԻ ՊԱՆԳՈՒԿԸ

Անոնք որ ինծի պէս Գաղղիոյ հարաւային կողմը ոտքով պտըտած են, Պէլկարտի և Պօքէրի մէջ տեղը, գրեթէ դիւղին և քաղաքին կէս ճանբան, բայց աւելի Պօքէրի մօտ քան թէ Պէլկարտի, փոքր պանդոկ մը տեսած են, որուն պատին վրայ Կարի կամուրջին այլանդակ պատկերը կախուած էր երկաթ թիթեղի վրայ գծագրուած, որ ամենաթեթև հովէն իսկ կը շարժէր։ Այս փոքր պանդոկը Հռոնոսի դետին ընթացքին ուղղութեամբը, և ճանապարհին ձախ կողմին վրայ շինուած էր՝ կռնակը դետին դարձուցած, որու քով այսինքն ճանապարհորդաց բացուած դրան հակառակ կողմը շրջափակ տեղ մը կար, որ Լանկըտոգի նահանգին մէջ պարտէզ կը կոչուի, ուր քանի մը վտիտ ձիթենիներ և քանի մը վայրի թզենիներ կ'երևէին, որոց տերևները փոշիէն ճերմկած էին. այս ծառերուն անջրպետներուն մէջ լոկ դարապղպեղ և սոխ տնկած էին. վերջապէս պարտիզակին մէկ անկիւնը՝ անխնամ ձեացած պահանոցի մը պէս հովանաւոր մեծ առի մը կար, որուն թիւրաթեք բունը տխրութեամբ բարձրացած էր և գագաթը հողմահարի նման բացուած՝ երեսուն աստիճան արևուն ներքև կը տատանէր։

Այս ամեն մեծ ու փոքր ծառերը հիւսիսային արևմտեան հողմին ուղղութեամբը հակեալ էին, որ Բրօվանսի երեք պատիժներէն մէկն է. միւս երկու պատիժներն էին, դուցէ ընթերցողք գիտնան կամ ոչ, Տիւրանս գետը և աւազանեայ ժողովը։

Շրջակայ դաշտին մէջ, որ փոշելի մեծ լճի մը կը նմանէր, հոս հոն ցորենի քանի մը յօղուններ կ'աճէին, զորոնք մշակները հետաքրքրութեամբ կը մեծցընէին, և որոնք ուրիշ բանի չեն ծառայեր բայց եթէ ճպուռներու գազարներու սեղ, որոնք իրենց

ցաւ և հարցուց թէ քատրուս անունով դերձակ մը միշտ նոյն սենեակը կ'բնակէր։ Պունապանը պատասխանեց իրեն թէ այն դերձակին գործերը դէշ երթալով՝ Պէլկարտէն Պօքէր երթալու ճանբան վրայ փոքր պանդոկ մը վարձած էր։

Տանթէս վար իջաւ, Մէյլանի ծառափողոցի այս տանը տիրոջ գտնուած տեղին անունը հարցուց, անոր տունը գնաց, զինքը լորտ Վիլմօր անուամբ ճանչցուց անոր (անցագրին մէջ իւր անունը և տիտղոսը այսպէս նշանակել տուեր էր) և քսան ու հինգ հազար ֆրանքի այն փոքր տունը գնեց անորմէ՝ արժողութենէն դոնէ տասն հազար ֆրանք աւելի վճարելով, սակայն եթէ կէս միլիոն իսկ ըլլար, Տանթէս պիտի վճարէր։

Նոյն օրը դաշնագիրը շինող պաշտօնատարը եկաւ իմացուց հինգերորդ դասիկոնի նորատի ամուսիններուն, որ նոյն տան նոր տէրը իրենց ազատութիւն կու տայ բոլոր տան մէջ ուրիշ սենեակներ ընտրել, առանց ո՛ր և իցէ կերպով իրենց վարձը աւելցընելու, այն դաշտմբ որ իրենց ձեռքը եղած երկու սենեակները իրեն յանձնեն։

Այս ղարմանալի դէպքը ութ օրէն աւելի Մէյլանի ծառափողոցը յաճախողներուն խօսակցութեան նիւթ մը եղաւ, և հազար տեսակ դիտողութիւններ եղան, որոց և ոչ մէկը ճիշդ էր։

Բայց ամենուն զարմանքը դրաւեց, երբ իրիկունը նոյն մարդուն քաթալանցւոց փոքր դիւղին մէջ պարտիզը և ձկնորսի աղքատ տան մը մէջ մտնելը տեսան, ուր ժամէ մը աւելի կենալով՝ տանն ու հինգ կամ տասն ու վեց տարիէ վեր մեռնող կամ աներևոյթ ըլլող շատ անձանց վրայօք լուրեր հարցուց։

Հետևեալ առտու այն աղքատ ձկնորսները, որոց տունը մտեր էր հարցումներ ընելու, երկու ուղևանով մակոյկ մը ընծայ առին։

Այս բարի մարդիկը անշուշտ կ'ուզէին այն առաւոտեայ օտարականին շնորհակալ ըլլալ, բայց նայեցան որ իրենց քովէն հեռանալով նաւաստի մը հրամաններ ընելէն ետև՝ ձի մը հեծաւ և Էքսի դուռէն դուրս ելաւ։

տաղտուկ և միօրինակ երդովը մելոդեալ Ճանապարհորդները կը ձանձրացընէին։

Գրեթէ եօթն կամ ութ տարիէ՝ ի վեր այս փոքր պանդոկը մարդու մը և կնոջ մը ձեռքն էր, որոց բոլոր ծառաները էին Թուանէթ անունով աղջիկ սեռեկատան մը և Բաղօ անունով ձիապարման մը. ասոնք գործակցութեամբ պանդոկին ամեն ծառայութիւնները լիովին կը կատարէին. քանդի Պօքէրէն Էկ–Մօրթ ջրանցք մը փորուելէն՝ ի վեր կառքերուն տեղ նաւերը յաջողութեամբ գործածուելով, շատ մարդ չէր յաճախեր պանդոկը։

Այս ջրանցքը՝ կարծես թէ ողբերգէլ պանդոկապետին վիշտերը աւելի ասստկացընելու համար՝ Հռոնոս գետին և Ճանբուն մէջ տեղէն բայեր էին, գրեթէ պանդոկէն հարիւր քայլ հեռու, որուն կարճ և հաւատարիմ նկարագրութիւնը ըրինք հիմա։ Այսպէս այն կողմը բանելով պանդոկին Ճանբան տնայի մնայեր էր։

Այս փոքր պանդոկը բանեցընողը քառասուն կամ քառասուն և երկու տարեկան բարձրահասակ, վախտ և ջղուտ մարդ մ'էր, և իր խորունկ ու փայլուն աչքերովը, իր արծուռնքովը և դէմքի գիծերը կենդանի ակռաներուն նման սպիտակ ակռաներովը հրաշալի մարդոց Ճշմարիտ պատկերը կը ներկայացընէր։ Իր մազերը, որոնք կարծես թէ իր տարիքին հետ մրցելով՝ դժկամութիւն կը ցուցընէին Ճերմկելու, և մանաւանդ նման մօրուքը ուռուար և դուրգ էին և հազիւ քանի մը մխրճոտ թելեր ունէին. իր դէմքը որ արդէն արեւէն այրած էր, քանի մը ժամանակէ՝ ի վեր կրկին թխութիւն մը ստացեր էր. քանդի ողբերգէլ մարդը սովորութիւն ըրեր էր առաւօտէն մինչև իրիկուն իր դրան սեմին վրայ ոտքի վրայ կանգնած սպասելու, որպէս զի ներս հրաւիրէ ոտքով կամ կառքով անցնող Ճանրորդները, և դրեթէ միշտ կը խաբուէր, և արևուն կիզիչ տաքութիւնէն պատսպարուելու համար՝ Սպանիացի ջրեպաններուն նման իր դլուխը կապած թաշկինակէն զատ բան մը չունէր։ Այս մարդը մեր առաջուան Ճանչցած Գասպար Քառրուսն է։

Իր կինը, որ հօրը անուամբ Մատըլէն Ռատէլ կը կոչուէր, ընդ հակառակն դեղին, նիհար և հիւանդոտ կին մ'էր։ Արևի

շրջակաները ծնած ըլլալ իր հայրենակցայ տանտիկան դիմելու նախնական նշանները կը պահէր, բայց Էկ–Մօրթի Ճանկերուն և Գամարկի Ճահիճներուն մօտ բնակողներուն հաստատակ եղած ջերմին շարունակ բռնուելով՝ իր դէմքը տակաւ տակաւ տղեղացեր էր. ոտքի գրեթէ միշտ դողդղալ նստած էր իր առաջին գամիկոնի սենեկին ներքին կողմը կամ անկողնոյն մէջ տարածուած և կամ թևաթոռին կռթնած, ինչ տեղն իր էրիկը քան սովորութեան դուռը կեցած կը հսկէր, ուր կտաւ առնելի երկար ժամանակ կ'ըսպասէր ամեն անգամ որ իր կնոջ տեղը բռնէր, և երբ Մատըլէն իր բազկին դէմ մշտահատաչ տրտունջներուն ձայնը կը բարձրացընէր, Քառրուս սովորաբար այս փիլիսոփայական խօսքերով կը պատասխանէր անոր.

— Լուէ, լա Գարդօնթ, Ասուծոյ կամքը այս է։

Այս մականունը իր կնոջը տալուն պատճառը՝ Մատըլէն Ռատէլին՝ լա Գարդօնթ գիւղը ծնած ըլլալն էր, որ Սալոն և Լամպ քաղաքաց մէջ տեղը կ'իյնայ։ Ուստի երկրին սովորութեան համեմատ՝ որ գրեթէ ամեն մարդոց իրենց անուան տեղ մականունը կու տային, պանդոկապետին բերան լեղլեն դուչ լա Գարդօնթ մականունը Մատըլէն անունէն աւելի քաղցրահնչուն եւ բևեռով՝ Քառրուս այնպէս կը կոչէր իր կինը։

Սակայն նախանձոտութեան վճռոյն Քառրուսի կեղծ հնազանդութիւնը լսելով՝ թող չկարծուի թէ մեր պանդոկապետը Պօքէրի ջրանցքին պատճառաւ իր վիճակին թշուառանալուն և իր կնոջ անդադար տրտնջանացը վրայ անդրդայ էր։

Քառրուս հարաւային մարդոց պէս սակաւապետ, անվեղս բայց ինատարած մէկն էր։ Ուստի՝ իր յաջողութեան ժամանակը, ամենևին հանդէս մը չէր անցըներ, ուր իր կնոջ հետ չներկայացնար՝ ինքը Գաղղիոյ հարաւային կողմի մարդոց վայելուչ հանդստովը, որ Քամպանցի և Պուանդամայն Անտալուզի ձևն ունէր, իսկ լա Գարդօնթ Արլի կանանց դեղեցիկ հագուստովը, որուն ձևը Ցոյներէն կամ Արաբացիներէն առնուած կը կարծուի։ Բայց քիչ քիչ ամեն բան անհրևոյթ եղան. իրենց ժամացոյցի շղթաները, մանեակները, դրնդղդյն դօտիները, բանուած կուրծք-

նոյները, Թաւշեայ բաճկոնները, վայելուչ դուլպաները, դունաւոր կօշկապատները, արծաթի կոճակներով մուճակները մի առ մի ծախեր էին, և Գասպար Քատրուս իւր անսպառ պերճութեան բարձրութենէն իջնալով, իւր կնոջը հետ աշխարհային ամեն հանդէսներէն ետ կեցեր էր, որոյ ուրախալի ձայները ՚ի մեծ ցաւ իւր սրտին մինչև պանդոկը կը հասնէին, զոր Քատրուս աւելի բնակութեան համար կը պահէր քան թէ շահու։

Ուստի Քատրուս ըստ սովորութեան՝ առտուան մէկ մասը դրան առջևը անցուց. իւր սխուր նայուածքը՝ մերկ փոքր դաշտի մը վրայէն, ուր քանի մը հաւեր իրենց կերակուրը կ՚փնտռէին, ամայի մնացած Ճանբուն երկու ծայրերը կը շրջէր, որուն մէկ կողմը դէպ ՚ի հիւսիս կը նայէր և միւսը դէպ ՚ի հարաւ, երբ իւր կնոջ կսկծալի ձայնը պարտաւորեց զինքը իւր տեղը թողուլ։ Քատրուս մրմռալով ներս մտաւ և առաջին պսիկոնը ելաւ՝ բայց թողուով պանդոկին դուռը, որպէս զի Ճանապարհորդները անցնելու առեն զինքը չմռնան։

Քատրուսի ներս մտած առենը՝ ինչպէս որ ըսինք՝ մարդ մը չկար այն երկայն փողոցին մէջ, որ երկու կարգ աղաղուն ծառերու մէջ Ճերմակ և անվերջ կը տարածուէր, և յայտնի կը տեսնուէր որ այս ժամուս որ և իցէ Ճանբորդ մը պիտի չհամարձակէր Ճանբայ ելնել և հարաւային Գաղղիոյ այս սոսկալի Սահարայէն անցնիլ։

Սակայն՝ եթէ Քատրուս իւր տեղը կեցած ըլլար, հատանաբար Պէլկարայի կողմը ձիաւորի մը երևիլը պիտի կրնար տեսնել, որ այնպիսի հանդարտ և սիրուն ընթացքով մը կը յառաջանար որ տեսնողը մարդուն և ձիուն մէջ բարեկամական յարաբերութիւններ պիտի նշմարէր. մանաւանդ ձի մ՚էր այն, որ կողմնակի քալուածքով վայելչապէս կը քալէր, իսկ ձիաւորը սևեր հագած և եռանկիւնի գլխարկով քահանայ մ՚էր. երկուքն ալ կէսօրուան արևուն կիզիչ ճառագայթներէն չվախնալով՝ միատեղ վայելուչ ընդոստներով կը յառաջանային։

Պանդոկին առջևը հասնելով՝ կեցան. դժուար էր որոշել թէ ձին զմարդը կեցուց թէ մարդը զձին. սակայն ինչ և իցէ՝ մարդը

ձիէն վար իջաւ, և զան սանձէն քաշելով, բայց պատուհանի մը փակաղակին կապեց, որուն միայն մէկ ծխնին մնացեր էր, ետքը դէպ ՚ի դուռը յառաջանալով քահանան ձեռքը բռնած պատառանին երկաթապատ ծայրովը երեք անգամ պրան սեամին զարկաւ՝ իւր կարմիր թաշկինակովը ճակատէն վաղած քրտինքը սրբելով։

Անմիջապէս մեծ շուն մը ոռք ելաւ, և քանի մը քայլ յառաջանալով սկսաւ հաչել և իւր սպիտակ ու սուր ակռաները ցուցընել. շան այս թշնամական երկու նշանները կը հաստատէին որ պանդոկը շատ մարդ չէր յաճախեր։

Իսկոյն՝ պատին ուղղութեամբը երկնցած փայտեայ սանդուխը ծանր քայլերով սատանեցաւ, և խեղճ պանդոկին տէրը գձկուելով ու երեսընդդէմ վար կ՚իջնար ներս ընդունելու այն ճանբորդը որ դրան առջև կեցեր էր։

— Ահա եկայ, կ՚ըսէր Քատրուս զարմանալով, ահա եկայ. լուէ, Մարկոթէն։ Մի վախնաք, պարոն, կը հաչէ բայց չխածներ։ Գինի կ՚ուզէք, այնպէս չէ՞, վասն զի օդը սաստիկ տաք է .... ո՛հ, ներեցէք, ընդմիջեց Քատրուս տեսնելով որ իւր Ճանբորդը աբբայ մ՚է, ներեցէք, զձեզ չտեսայ. ի՞նչ կը փափաքիք, ի՞նչ կ՚ուզէք, պարոն աբբայ, պատրաստ եմ ձեզ ծառայելու։

Քահանան երկու կամ երեք մանրերկրորդի չափ տարօրինակ ուշադրութեամբ այս մարդուն նայեցաւ, և այնպէս կ՚երևէր որ պանդոկապետին ուշադրութիւնն իսկ գրաւել կ՚ուզէր. բայց տեսնելով որ պանդոկապետը իւր հարցմանց պատասխանը չընդունելուն համար ցուցուցած զարմացումէն ուրիշ զգացում մը չէր յայտներ իւր դիմաց վրայ, հասկըցաւ որ այն զարմանքը դադրեցընելու ժամանակն էր, և Իտալացի հնչմամբ ըսաւ անոր.

— Պ. Քատրուսը դուն չե՞ս։

— Այո՛, պարոն, ըսաւ պանդոկապետը՝ դուք անոր լսութենէն աւելի այս հարցման վրայ զարմանալով, այո՛, ես եմ Գասպար Քատրուսը, և պատրաստ եմ ձեզ ծառայելու։

— Գասպար Քատրուս ... այո՛, կարծեմ թէ մականունդ ալ

մէկ տեղ է. ժամանակաւ դուն Մէյլանի ծառուղին՝ տան մը չորրորդ դասիկոնը կ՚բնակէիր, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Եւ հոն գերձակութիւն կ՚ընէիր:

— Այո՛, բայց գործս դէշ գնաց. այն անպիտան Մարսիլիայլին օղը այնչափ տաք է, որ կարծեմ թէ վերջապէս ամենևին դգեստ պիտի չհագնին հոն: Բայց դուք դովացուցիչ լմպելիք մը չէք ուզեր, պարոն աբբայ:

— Այո՛, ամենէն ընտիր գինիէդ շիշ մը բեր, ու խօսակցութիւնս դարձեալ կը շարունակենք, եթէ կ՚ուզես:

— Ինչպէս որ կը հաճիք, պարոն աբբայ, ըսաւ Քաւրուս:

Քաւրուս իւր գահոյքի գինիէն մնացած վերջին շիշը տեղաւորելու աւիթը չկորսընցնելով՝ իւր դեռնայարի սենեկին յատակին մէկ կողմը եղած կափարիչը բացաւ ու վար իջաւ. այս սենեակը միանդամայն աբահ և խոհանոց էր:

Երբ հինգ վայրկեան եաքը նորէն վեր ելաւ, աբբան ամուսակի մը վրայ նստած գտաւ՝ արմուկը երկար սեղանի մը կոթնցուցած, ինչ առեն Մարկոթէին, լսելով որ այս նորանշան ձանապարհորդը սովորութեան հակառակ խմելիք մը պիտի խմէ, անոր հետ հաշտուած կ՚երևէր, և իւր նիհար ու երկնցած պարանոցը և տկարացած աչքը ծունկին վրայ կ՚երկնցընէր:

— Մինակ ես հոս, հարցուց աբբան պանդոկապետին՝ երբ Քաւրուս գինիի շիշն ու բաժակ մը իւր առջևը դրաւ:

— Ո՛հ, այո՛, գրեթէ մինակ եմ, պարոն աբբայ. վասն զի կին մը ունիմ որ միշտ հիւանդ է, և ամենևին օգուտ մը չունի ինձ:

— Ուրեմն ամուսնացած ես, հարցուց քահանան հետաքրքրութեամբ մը և իւր բոլորտիքը այնպիսի նայուածք մը շրջելով որ սենեկին կարասիներուն աչքատիկ և ժժգին ըլլալը կը ցուցընէր:

— Հարուստ չեմ ըսել կ՚ուզէք, այնպէս չէ՞, պարոն աբբայ, ըսաւ Քաւրուս հառաչանք մը հանելով, բայց ինչ կրնամ ընել, կը տեսնեմ որ այս աշխարհիս մէջ հարստանալու համար առաքինի ըլլալը օգուտ չընէր:

Աբբան անթարթ նայուածքով մը Քաւրուսին նայեցաւ:

— Այո՛, պարոն, առաքինի մարդ մ՚եմ ես. այս մասին կրնամ պարծիլ, ըսաւ պանդոկապետը անոր երեսը նայելով, և մէկ պարծիլ, ըսաւ պանդոկապետը անոր երեսը նայելով, և մէկ ձեռքը կուրծքին վրայ դնելով ու գլուխը վերէն վար շարժելով, և այս ժամանակիս մէջ, ամեն մարդ իրեն համար չկրնար այսպէս ըսել:

— Երանի՛ թէ ըսածդ ճշմարիտ ըլլար, ըսաւ աբբան, վասն զի ես հաստատ համոզուած եմ որ վաղ կամ անապան առաքինի մարդը կը վարձատրուի և չարը կը պատժուի:

— Ձեր պաշտօնը այդպէս ըսել կու տայ, պարոն աբբայ, այո՛, ձեր պաշտօնը այդպէս ըսել կու տայ, կրկնեց Քաւրուս խիստ կերպով մը. ուստի աղատ է մարդ ձեր խօսքին չհաւատալու:

— Կը սխալիս այսպէս խօսելով, պարոն, ըսաւ աբբան, քանզի դուք ես ինքնին արդէն քեզ ըսածիս ապացոյցը պիտի տամ հիմա:

— Ի՞նչ ըսել կ՚ուզէք, հարցուց Քաւրուս զարմանքով մը:

— Ըսել կ՚ուզեմ թէ ամեն բանէ առաջ պէտք եմ ապահով ըլլալ թէ փնտռած մարդս դո՞ւն ես:

— Ի՞նչ ապացոյց կ՚ուզէք որ տամ:

— 1814ին կամ 1815ին Տանթէս անունով նաւաստի մը ձանչցած ես:

— Տանթէ՛սը, այն ողորմելի էտմոնը ձանչցած ըլլամ, ինչպէս չձանչնամ որ իմ ամենէն մտերիմ բարեկամներէս մէկն էր, պատասխանեց Քաւրուս, որուն երեսին վրայ ծիրանի կարմիր դոյն մը պատեց, ինչ ատեն աբբային սուր և անվրէպ աչքը կարծես թէ իւր խօսակցին բոլոր անձը պաշարեր էր:

— Այո՛, կարծեմ թէ էտմոն իսկ կը կոչուէր:

— Տարակուսելու հարկաւորութիւն չկայ, ես այնչափ վստահ եմ անոր էտմոն կոչուելուն, որչափ իմ Գասպար Քաւրուս կոչուելուս վրայ եմ: Ի՞նչ պատահեցաւ արդեօք այն խեղճ էտմոնին, պարոն. գինքը ձանչցած էք. կենդանի է տակաւին, ապրո՞ղ և երջանի՞կ է արդեօք:

— Բանտի մէջ մեռաւ, պատասխանեց աբբան, Թուլոնի ծիա-

ծառայութեան մէջ երկաթ գնացքներ քաշելու դատապարտեալ ձորմելիններէն աւելի յուսահատ և աւելի թշուառ:

Մտահատիկ դեղնութիւն մը Քատրուսի երեսը պատող կարմրութեան յաջորդեց: Խնդիրը մէկ կողմ դարձաւ, և աբբան նայեցաւ որ սանդղակապետը իր գլուխը կապած կարմիր թաշկինակին ծայրովը աչքէն վազած կաթիլ մը արտասուքը սրբեց:

— Խնդրեմ տղայ, մրմնջեց Քատրուս, ահա արդէն բաւական ուրիշ ապացոյց մը, պարոն աբբայ, որ բարերարն Աստուած միայն չարերուն բարիք կ'ընէ: Ո՛հ, կրկնեց Քատրուս՝ Գաղղիոյ հարաւային կողմի մարդոց պէս խօսելու տարբեր կերպերով, աշխարհս երթալով կը գէշնայ: Երկու օր երկինքէն աւազ իջնէր և օր մ'ալ կրակ և ամեն բան լմննար:

— Կ'երեւի թէ բոլոր սրտովդ կը սիրէիր այն երիտասարդը, ըսաւ աբբան:

— Այո՛, շատ կը սիրէի, ըսաւ Քատրուս, թէև անգամ մը իր երջանկութեան վրայ նախանձելուս համար ինքզինքս կը պախարակեմ. սակայն այն ժամանակէն 'ի վեր, ճշմարիտ կ'ըսեմ, իր թշուառ վիճակին վրայ շատ ցաւեր եմ:

Վայրկեան մը լուռ կեցան, որ ատեն աբբան իր անթարթ նայուածքը պանդոկապետին փոփոխական կերպարանքին վրայ յառեր էր:

— Ողորմելի երիտասարդը դուք կը ճանչնայք, շարունակեց Քատրուս:

— Իր մահուան անկողնոյ մէջ կանչեցին զիս որ կրօնական վերջին պարտքերը կատարեմ, շարունակեց աբբան:

— Եւ ինչ բանէ մեռաւ, հարցուց Քատրուս հեղձամղձուկ ձայնիւ:

— Եւ ինչ բանէ կը մեռնի երեսուն տարեկան մարդ մը բանտի մէջ, եթէ ոչ նոյն իսկ բանտէն:

Քատրուս իր ճակատէն վազած քրտինքը սրբեց:

— Ամենէն զարմանալին այն է, կրկնեց աբբան, որ Տանթէս իր մահուան անկողնոյն մէջ Յիսուսի ոտքերը համբուրելով կ'երդնուր անոր վրայ որ իր բանտարկութեան պատճառը չէր գիտեր:

— Ստոյգ է, իրաւունք ունի, մրմնջեց Քատրուս, չէր կրնար գիտնալ, ո՛չ, պարոն աբբայ, ողորմելի երիտասարդը սուտ չէ խօսեր:

— Այս պատճառաւ աղաչեց զիս որ իր թշուառութեան պատճառն իմանամ, զոր ինքը երբէք չէր կրցեր իմանալ, և եթէ իր անուան վրայ արատ մը եկած է, վերստին իր առջի պատիւը տեղը բերեմ:

Աբբային նայուածքը, որ երթալով աւելի կը հաստատուէր իր խօսակցին վրայ, Քատրուսի դիմաց վրայ գրեթէ տխուր զգացման նշան մը նկատեց:

— Հարուստ Անգղիացի մը, շարունակեց աբբան, որ Տանթէսի բանտակից է եղեր, և թագաւորութեան երկրորդ Վերանորոգութեան ժամանակ բանտէն ազատեր է, խիստ թանկագին ադամանդ մը ունի եղեր: Բանտէն ելնելու ժամանակը՝ 'ի նշան իր երախտագիտութեան՝ այն ադամանդը Տանթէսին նուիրեր է. որովհետև երիտասարդը Անգղիացիին մէկ հիւանդութեան մէջ իբրև եղբայր խնամեր էր զան: Տանթէս փոխանակ անով իր բանտապահներուն սիրտը շահել ջանալու, որոնք թէև կրնային իր ձեռքէն առնուլ և ետքը մատնել զինքը, իբրև թանկագին աւանդ մը իր քովը պահեր է. վասն զի եթէ բանտէն ազատէր, այն ադամանդը ծախելով պիտի հարստանար:

— Ուրեմն ըսածնուդ պէս, խիստ թանկագին ադամանդ մ'էր այն, ըսաւ Քատրուս աչքերը աւելի բանալով:

— Ամեն բան յարաբերական է, կրկնեց աբբան, խիստ թանկագին աւանդ մ'էր Էտմոնի համար, որովհետև յիսուն հազար ֆրանքի արժողութիւն ունէր:

— Յիսուն հազար ֆրանքի, ըսաւ Քատրուս, ուրեմն կաղինի չափ մեծ էր այն ադամանդը:

— Ո՛չ, գրեթէ այնչափ մեծ չէ, ըսաւ աբբան, բայց հիմա դու ինքնին կրնաս դատել, վասն զի քովս է:

Քատրուս կարծես թէ աբբային զգեստներուն մէջ ադամանդը փնտռել կ'ուզէր:

Աբբան սև կաշիէ փոքր տուփ մը հանեց ծոցէն, բացաւ զայն,

և Քատրուսի շլացեալ աչաց լուսացայտ ադամանդը փայլեցաւ, որ խիստ գեղեցկաշէն մատանիի մը վրայ հաղցուցած էին։

— Ու այս ադամանդը յիսուն հազար ֆրա՞նք կ'արժէ։

— Առանց մատանիին, որ նոյնպէս բաւական արժողութիւն ունի, ըսաւ աբբան։

Ու տուփը գոցելով՝ ծոցը դրաւ այն ադամանդը, որուն լոյսը տակաւին Քատրուսի մտաց մէջ կը փայլէր։

— Բայց այս ադամանդը ձեր ձեռքը ինչպէս կը գտնուի, պարոն աբբայ, հարցուց Քատրուս. Էտմօն զձեզ իր ժառա՞նգն ըրաւ։

— Ո՛չ, բայց կտակակատարը. Երեք մտերիմ բարեկամ և մէկ նշանած մը ունէի, ըսաւ ինձ. ապահով եմ որ չորսն ալ ինծի համար դառնապէս կը ցաւին. այն մտերիմ բարեկամներէս մէկուն անունը Քատրուս է։

Քատրուս սարսռեցաւ։

— Երկրորդին անունը, շարունակեց աբբան՝ առանց Քատրուսի զգացած յուզմունքը տեսնելը յայտնելու, երկրորդին անունը Տանկլար է, իսկ երրորդը, յաւելցուց, թէև իմ հակառակորդս էր, բայց նոյնպէս զիս կը սիրէր։

Դիւական ժպիտ մը Քատրուսի դէմքը լուսաւորեց, որ կ'ուզէր աբբային խօսքը ընդմիջել։

— Կեցի՛ր, ըսաւ աբբան, թո՛ղ որ վերջեմ, և եթէ ըսելու դիտողութիւն մը ունիս, վերջը ըրէ։ Երրորդը թէև իմ հակառակորդս էր, բայց նոյնպէս կը սիրէր զիս, և Ֆէրնան կը կոչուէր. իսկ նշանածիս անունը . . . ։ Նշանածին անունը մոռցեր եմ, ըսաւ աբբան։

— Մէրսէտէս էր, ըսաւ Քատրուս։

— Ո՛հ, այո՛, ճիշդ այդ է, կրկնեց աբբան գաղտնի ժպիտով մը, այո՛, Մէրսէտէս էր։

— Ետքը՞, հարցուց Քատրուս։

— Շիշ մը ջուր տուր ինծ, ըսաւ աբբան։

Քատրուս շտապաւ հրամանը կատարեց։

Աբբան բաժակը լեցուց և քանի մը ումպ խմեց։

— Ի՞նչ կ'ըսէինք, հարցուց աբբան բաժակը սեղանին վրայ դնելով։

— Թէ նշանածին անունը Մէրսէտէս էր։

— Այո՛, ճիշդ այդպէս։ Մարսիլիա կ'երթաս . . . Տանթէս է խօսողը, կը հասկընա՞ս։

— Կատարելապէս։

— Այս ադամանդը կը ծախես, հինգ մաս կ'ընես, և այն բարեկամներուս կը բաժնես, քանզի անոնք միայն սիրեցին զիս այս աշխարհիս մէջ։

— Ինչո՞ւ հինգ մասն պիտի ընէք, հարցուց Քատրուս, քանի որ միայն չորս հոգւոյ անունները տուիք։

— Ըստ որում հինգերորդը մեռեր է ըսին ինծ . . . ։ Հինգերորդը Տանթէսի հայրն էր . . . ։

— Ափսո՜ս, այո՛, ըսաւ Քատրուս իր սրտին մէջ ընդհարեալ կիրքերէն յուզուելով, ափսո՜ս, ողորմելի ծերունին մեռաւ։

— Այս դիպուածը Մարսիլիա լսեցի, պատասխանեց աբբան անտարբեր երևելու համար ինքզինքը զսպելով. բայց մինչափ երկար ատեն է անոր մեռնիլը, որ ամենևին մանրամասն տեղեկութիւն մը չկրցայ առնալ . . . ։ Այն ծերունւոյն մահուան վերայօք բան մը գիտե՞ս դուն։

— Ո՛հ, ո՞վ կրնայ ինձմէ աւելի աղէկ գիտնալ . . . բարի ծերունւոյն հետ մէկ տան մէջ կը բնակէինք . . . Էհ, այո՛, իր որդւոյն աներևութանալէն տարի մը ետքը ողորմելին մեռաւ։

— Բայց ի՞նչ բանէ մեռաւ։

— Բժիշկները անոր հիւանդութեան անունը տուին, կարծեմ թէ որովայնի հիւանդութենէ մեռաւ. զինքը ճանչցողները ըսին թէ կրած վիշտերէն մեռաւ . . . բայց ես որ գրեթէ անոր մեռնիլը տեսայ, կ'ըսեմ թէ ողորմելի ծերունին ուրիշ բանէ չմեռաւ, բայց եթէ . . . ։

Քատրուս խօսքը ընդմիջեց։

— Բայց ի՞նչ բանէ մեռաւ, կրկնեց քահանան անձկութեամբ մը։

— Կ'ուզէ՞ք որ ըսեմ, անօթութենէ։

— Անօթութենէ՜, պոռաց քահանան աթոռակին վրայէն ցատ-

կելով. անօթութենէ մեռաւ կ՚ըսես։ Ամենէ անարգ անասուններն անգամ անօթութենէ չեն մեռնիր. փողոցներու մէջ թափառող շուները բարեգութ ձեռք մը կը գտնեն որ իրենց պատառ մը հաց նետէ. և ինչպէս մարդ մը, քրիստոնեայ մը կրնայ անօթութենէ մեռնիլ ուրիշ մարդերու քով, որոնք ինքզինքնին քրիստոնեայ կ՚անուանեն։ Անկարելի բան է այդ, ո՛հ, բոլորովին անկարելի։

— Ես տեսածս ըսի ձեզ։

— Ո՛չ, այնպէս չէ, ըսաւ ձայն մը սանդուխին վրայէն, ինչու այդպէս խօսքեր կը խառնես, մա՛րդ։

Երկու խօսակիցները երեսնին դարձուցին, և սանդուխին վանդակներուն մէջէն լա Գարզօնթի հիւանդ գլուխը տեսան, որ մեծ նեղութեամբ մինչև սանդուխին մօտենալով՝ անոր վերնագոյն ոտքին վրայ նստած և գլուխը ծնկներուն կռթնցուցած՝ անոնց խօսակցութեան ականջ կը դնէր։

— Դուն ինչ կը խառնուիս, կնիկ, պատասխանեց Քատրուս, պարոնը ինծի տեղեկութիւններ կը հարցընէ, և քաղաքավարութիւնը կը պահանջէ որ ես գիտցածս ըսեմ։

— Այո՛, բայց խոհեմութիւնը կը պահանջէ որ չըսես. ո՞վ գիտէ ինչ դիտաւորութեամբ քեզ խօսիլ կու տայ, տգէտ մարդ։

— Բարի դիտաւորութեամբ, տիկին, ապահով եղիր, ըսաւ աբբան, և ամուսինդ ամենևին պէտք չէ վախնայ, միայն թէ աներկիւղ պատասխան տայ։

— Այո՛, պէտք չէ վախնայ . . . մարդիկ նախ մեծ խոստումներով կ՚ըսկսին, և ետքը գոհ կ՚ըլլան ըսելով թէ վախնալու բան չկայ, վերջապէս առանց իրենց խոստումը կատարելու կը ձգեն կ՚երթան, և առտու մը անզգուշութեան զոհ եղող ողորմելի մարդերը թշուառութեան մէջ կ՚իյնան՝ առանց գիտնալու իրենց ընդունած հարուածին ուրկից գալը։

— Անհո՛գ եղիր, բարի կին, պատասխանեց աբբան, իմ կողմէս գժբաղդութիւն մը չգար ձեր վրայ, ապահով եղիր։

Լա Գարզօնթ քանի մը խօսք ևս մրմռաց, գլուխը վերստին վեր ծնկաց կռթնցուց, և սկսաւ ջերմէն սարսռալ, ազատ թող-

լով իր էրիկը որ խօսակցութիւնը շարունակէ, բայց այնպիսի դիրքի մէջ էր որ անոնց ամեն մէկ խօսքը կրնար լսել։

Այս միջոցին աբբան քանի մը ումպ ջուր խմելով ոգի առեր էր։

— Ուրեմն, կրկնեց աբբան, այն ողորմելի ծերունւոյն հոգտանող մը չկա՞ր, որ այնպիսի մահուամբ մեռաւ։

— Ո՛չ, պարոն, կրկնեց Քատրուս, միայն Քաթալանցի Մէրսէտէս օրիորդը և Պ. Մորէլ զինքը խնամեցին. բայց թշուառ ծերունին խորունկ հակակրութիւն մը ունէր Ֆէրնանի համար, այն անձին, շարունակեց Քատրուս հեգնական ժպիտով մը, որ Տանթէս իր բարեկամը կարծեր էր։

— Ուրեմն բարեկամ չէ՞ր անոր, հարցուց աբբան։

— Գասպա՛ր, Գասպար, մրմնջեց կինը սանդուխին վրայէն, զգուշացի՛ր ըսելու խօսքէդ։

Քատրուս անհամբերութեան շարժմամբ մը և առանց իր կնոջ պատասխան տալու՝ ըսաւ աբբային.

— Կրնա՞յ մէկը բարեկամ ըլլալ այն անձին, որուն կնոջը կը ցանկայ։ Տանթէս ազնիւ սիրտ մը ունենալով, այն ամեն մարդերը իր բարեկամները կ՚անուանէ . . . խե՜ղճ Էտմոն . . .։ Իրօք, աւելի աղէկ էր որ բան մը չգիտնար, եթէ ոչ՝ իր մեռնելու ժամանակը խիստ դժուարաւ պիտի ներէր . . . ինչ կ՚ուզեն ըսեն, շարունակեց Քատրուս, ես աւելի մեռելներուն անէծքէն կը վախնամ՝ քան թէ կենդանեաց թշնամութենէն։

— Ապո՛ւշ մարդ, ըսաւ լա Գարզօնթ։

— Գիտե՞ս ուրեմն ինչ ըրաւ Ֆէրնան այն Տանթէսին, շարունակեց աբբան։

— Ի՞նչպէս չեմ գիտեր, անշուշտ գիտեմ։

— Խօսէ ուրեմն։

— Գա՛սպար, ուզածդ ըսէ, դուն գիտես, կրկնեց կինը, բայց եթէ ինծի կը հաւատաս, բան մի՛ ըսեր։

— Այս անգամ կարծեմ թէ իրաւունք ունիս, կնիկ, ըսաւ Քատրուս։

— Ուրեմն չե՞ս ուզեր ըսել, կրկնեց աբբան։

— Ի՞նչ օգուտ ունի ըսելը, ըսաւ Քատրուս։ Եթէ երիտասարդը կենդանի ըլլար և դար ինծի իւր բարեկամներն ու թշնամիները ճանչնալու, այնատեն չէ չէի ըսեր. բայց ինչպէս որ ըսինք՝ հիմա հողին տակն է ան, ուչ կրնայ ոխ պահել և ուչ վրէժ առնուլ. դուք ուրեմն այս խօսքերը։

— Ուրեմն կ՚ուզես որ անկեղծ բարեկամներու սահմանուած նուէր մը այնպիսի անձինց տամ, զորոնք դուն անարժան և կեղծ բարեկամներ կ՚անուանես։

— Ստոյգ է, իրաւունք ունիք, ըսաւ Քատրուս։ Սակայն թշուառ Էտմօնին թողուցած կտակը ինչ պիտի ըլլայ անոնց քով, եթէ ուչ ծովու մէջ կաթիլ մը ջուր։

— Մանաւանդ որ այն մարդիկը մէկ շարժումով կրնան զմեզ ջախջախել, ըսաւ կինը։

— Ի՞նչպէս, ուրեմն այն մարդիկը հարստացան և զօրացան։

— Ուրեմն անոնց պատմութիւնը չէք դիտեր։

— Ո՛չ, պատմէ ինձ նայինք։

Քատրուս վայրկեան մը մտածել ձևացուց։

— Ստուգիւ չեմ կրնար, վասն զի շատ երկար է։

— Աղատ ես լռել, բարեկամ, ըսաւ աբբան բոլորովին անտարբեր ձայնով մը, և ես չեմ պախարակեր զքեզ կասկածանոցդ համար. մանաւանդ որ Ճշմարիտ բարի մարդու մը պէս կը վարուիս. ուրեմն դուք այս խօսքերը։ Իմ պաշտօնս միայն կատարել է. ուստի և ես ադամանդը կը ծախեմ։

Այս ըսելով ադամանդը ծոցէն հանեց, տուփը բացաւ, և երկրորդ անգամ Քատրուսի շլացեալ աչաց փայլեցուց։

— Եկու տեսնես, կնիկ, ըսաւ Քատրուս բիրտ ձայնով մը։

— Ադամանդ մը, ըսաւ լա Գարդօնթ ոտք ելնելով և հաստատ քալուածքով սանդուխէն վար իջնելով։

— Զլսեցիր, կնիկ, ըսաւ Քատրուս. փոքր Տանթէս՝ իւր հօրը, իւր երեք բարեկամներուն, այսինքն Ֆէրնանին, Տանկլարին և ինձ, և իւր Մէրսէտէս նշանածին այս ադամանդը թողուցեր է, որ յիսուն հազար ֆրանք կ՚արժէ։

— Ո՛հ, ինչպէս զեղեցիկ զոհար է, ըսաւ կինը։

— Ասոր հինգերորդ մասը մեզ կ՚ուրեմն, ըսաւ Քատրուս։

— Այո՛, պարոն, պատասխանեց աբբան. ասկէ զատ՝ ծերուն Տանթէսին բաժինը կը մնայ, զոր չորսերնուդ բաժնելու իշխանութիւնը ունիմ։

— Եւ ինչո՞ւ չորսերնուս պիտի բաժնէք։

— Վասն զի Էտմօնի չորս բարեկամներն էք։

— Բարեկամ չեն անոնք որ կը մատնեն, մրմնջեց կամաց մը կինը։

— Այո՛, այո՛, ըսաւ Քատրուս, ես ալ նոյնը կ՚ըսէի։ Գրեթէ օրինազանցութիւն մը և ուխտադրժութիւն մ՚է մատնիչները և դուք մահապարտները վարձատրելը։

— Ի՛նչ ընեմ՝ դուք ուզեցիք, կրկնեց հաստատութեամբ աբբան՝ ադամանդը վերստին վերարկուին ծոցը դնելով. հիմա Էտմօնի բարեկամաց տեղերուն անուններն տուէք ինձ, որպէս զի կարենամ իւր վերջին կամքը՝ ի գործ դնել։

Քատրուսի ձակատը պատած քրտինքը ծանր կաթիլներով վար կը վազէր. աբբան ոտք ելաւ, դէպ՝ ի դուռը յառաջացաւ՝ իւր ձին անգամ մը տեսնել ձևացընելով, ետքը ետ դարձաւ։

Քատրուս և իւր կինը տարօրինակ յուզմամբ իրարու կը նայէին։

— Ադամանդը բոլորովին մերը պիտի ըլլայ, ըսաւ Քատրուս։

— Կը կարծե՞ս, պատասխանեց կինը։

— Եկեղեցական մը չկրնար զմեզ խաբել։

— Ի՛նչ կ՚ուզես՝ ըրէ, ըսաւ կինը, ես չեմ խառնուիր։

Եւ դողդողալով դէպ՝ ի սանդուխը յառաջացաւ։ Իւր ակռաները կը կափկափէին, թէև օդը տաստիկ տաք էր։ Սանդուխին վերջին ոտքին վրայ վայրկեան մը կեցաւ։

— Աղէկ մտածէ, Գասպար, ըսաւ կինը։

— Ես որոշումս ըրած եմ, պատասխանեց Քատրուս։

Լա Գարդօնթ Հաւաչանք մը հանելով իւր սենեակը մտաւ. իւր քայլերէն առաստաղին ձայնը կը լսէին, մինչև որ կինը թեւաթոռին քովը հասնելով՝ ծանրութեամբ մը վրան իյնաւ։

— Ի՞նչ է ըրած որոշումդ, հարցուց աբբան։

— Ամեն բան պատմելու, պատասխանեց Քատրուս։

— Ստուգիւ ես ալ այնպէս կարծեմ թէ այդ է խոհեմութիւնը, ըսաւ քահանան. ոչ թէ հետաքրքիր եմ դիտնալ այն բաները, որոնք դուն ինձմէ պահել կ'ուզես, այլ անոնց պատմութիւնը լսելով, եթէ կտակատէրին կամայը համաձայն իւր կտակը բաժնելու ըլլամ, աւելի աղէկ կ'ըլլայ:

— Ես ալ այնպէս կը յուսամ՝, պատասխանեց Քատրուս՝ որուն այտերը կարմրութենէն, ակնկալութենէն և հարստութեան ցանկութենէն բորբոքեցան:

— Պատրաստ եմ մտիկ ընելու, ըսաւ աբբան:

— Սպասեցէք, կրկնեց Քատրուս. կրնայ ըլլալ որ մեր խօսակցութեան ամենէն հետաքրքրական տեղը զմեզ ընդմիջէն, որ ամենևին չեմ ախորժեր. ասկէ զատ՝ պէտք չէ որ ուրիշ մէկը գիտնայ որ դուք հոս եկած էք:

Ա.յս ըսելով դնաց պանդոկին դուռը դոցեց, և աւելի զգուշութեան համար՝ դիշերուան նիկը դրաւ:

Ա.յս միջոցիս՝ աբբան աղէկ մտիկ ընելու համար անկիւն մը նստաւ, որպէս զի ինքը ստուերին մէջ ըլլայ, և լոյսը իւր խօսակցին դիմաց վրայ դայ. և դլուխը կախած, ձեռքերը միացուցած և կամ աւելի կնճռած կը պատրաստուէր իւր լսողական բոլոր զօրութեամբը մտիկ ընել:

Քատրուս աթոռ մը առաւ և անոր դիմացը նստաւ:

— Գիտցած ըլլաս որ ես չեմ խառնուիր, ըսաւ դողդոջուն ձայնով մը լա Գարդօնիէ, որ կարծես թէ առաստաղին մէջէն պատրաստուած տեսարանը կրցեր էր տեսնել:

— Շատ աղէկ, ըսաւ Քատրուս, լուէ ալ, ամեն բան իմ վրաս կ'առնում:

Ա.յս ըսելով սկսաւ:



ԳԼՈՒԽ Գ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ամեն բանէ առաջ, ըսաւ Քատրուս, կ'աղաչեմ, պարոն, որ ինձ խօսք տաք:

— Ի՞նչ բան, հարցուց աբբան:

— Եթէ երբէք իմ ձեզ պատմելու պատմութիւնս մէկու իմացընէք, ինձմէ լսած ըլլալնիդ պիտի չըսէք. վասն զի այն մարդերը, որոց պատմութիւնը պիտի ընեմ, հարուստ և զօրաւոր են, եթէ միայն իրենց մատին ծայրովը ինձ դպչին, ասպակիի պէս կրնան փշրել զիս:

— Անհո՛գ եղիր, բարեկամ, ըսաւ աբբան, ես քահանայ մ'եմ, և լսած խոստովանութիւնները իմ սրտիս մէջ կը մնանին: Պատճառ որ իմ նպատակս ուրիշ բան չէ, բայց եթէ բարեկամիս վերջին կամքը ըստ արժանւոյն կատարել: Ուրեմն առանց կողմնապահութեան, ինչպէս և առանց թշնամութեան խօսէ, ճշմարտութիւնը պատմէ, միայն ճշմարտութիւնը: Ես չեմ ճանչնար և հանականաբար ամենևին պիտի չճանչնամ այն մարդերը, որոց վրայօք պիտի խօսիս. մանաւանդ որ ես Իտալացի եմ և ոչ Գաղղիացի. Աստուծոյ կը վերաբերիմ և ոչ մարդոց, և պիտի երթամ վերատին վանքս մտնելու, ուրկից դուրս ելած եմ միայն մեռեալի մը վերջին կամքը կատարելու համար:

Ա.յս հաստատ խոստումը Քատրուսը քիչ մը վստահացուց:

— Եթէ այդպէս է, ըսաւ Քատրուս, կը հաւանիմ, բոլոր դիտցածս պիտի պատմեմ, և պիտի յուսընեմ որ անոնք Իտմոնի բարեկամները չէին, զորոնք ողորմելի երիտասարդը անկեղծ և անձնանուէր մարդիկ կարծեր էր:

— Նախ անոր հայրէն սկսինք, եթէ կը հաճիս, ըսաւ աբբան: Իտմոն երկարօրէն խօսեցաւ այն ծերունւոյն վրայ, զոր չափազանց կը սիրէր:

— Անոր պատմութիւնը տրտմալի է, պարոն, ըսաւ Քահանան ղլուխը շարժելով։ Հաւանականաբար պատմութեան սկիզբները պիտէք։

— Այո՛, պատասխանեց աբբան, Էմմոն անոր պատմութիւնը պատմեց ինձ մինչև իր Մարսիլիայի մօտ փոքր պանդոկի մը մէջ բռնուիլը։

— Բէզէվի՞ մէջ է այդ ըսածնիդ, ո՛հ, Տէր Աստուած, ճիշտ այն օրուան պէս ամէն բան աչացս առջև կը տեսնեմ։

— Իւր Հարսնախօսութեան ճաշին վրայ էին կարծեմ։

— Այո՛, ճաշ մը որ այնպիսի ուրախութեամբ սկսաւ և տխրութեամբ վերջացաւ։ Ոստիկանութեան գործակալ մը չորս հրացանակիր զօրքով նեբս մտաւ և Տանթէսը վերցուց։

— Իմ պիտցածս ալ մինչև հոդ կը հասնի, պարոն, ըսաւ քահանան։ Նոյն իսկ Տանթէս անկէ առելի բան չէր պիտեր. վասն զի յիշեալ հինգ մարդոց և ոչ մէկը երբէք տեսեր կամ անոնց վրայօք բան մը լսեր էր։

— Ուրեմն մնիկ ըրէք. Տանթէս բռնուելուն պէս՝ պ. Մորէլ վազեց անոր վրայ տեղեկութիւն հարցընելու, բայց արտանլի պատասխանները ընդունեց։ Ծերունի Տանթէս առանձին իւր տունը դարձաւ, լալով իր հարսանեկան զգեստները վրայէն նետեց, բոլոր օրը իւր սենեկին մէջ երթևեկութեամբ անցուց, և գիշերը ամենևին չքնացաւ. վասն զի ես անոր սենեկին տակի սենեակը կը բնակէի, և բոլոր գիշերը անոր քալելու ձայնը լսեցի. ես իսկ ճշմարիտ կ՚ըսեմ նոյն գիշերը ամենևին չքնացայ. այն թշուառ հօր վիշտերը սիրտս կը մորմոքէին, և կարծէի թէ իրօք սրտիս վրայ կը քալէ։

Հետևեալ առտու՝ Մէրսէտէս պ. Վիլֆօրի պաշտպանութիւնը խնդրելու համար Մարսիլիա եկաւ. բայց օգուտ մը չտեսնելով՝ իսկոյն ծերունւոյն այցելութեան գնաց։ Երբ զան այնպիսի տխրագգած և յուսահատեալ վիճակի մէջ տեսաւ և իմացաւ որ առանց անկողինը մտնելու գիշերը անցուցեր և առջի իրիկունէն բան մը չէր կերեր, ուզեց որ իւր հետը տանի, որ զինքը խնամէ. բայց ծերունին մերժեց անոր խնդիրքը։

«Ո՛չ, կ՚ըսէր, տունէս դուրս պիտի չելնեմ. վասն զի իմ ուղղմելի զաւակս ամենէն առելի զիս կը սիրէ, և եթէ բանտէն ելնէ, ամենէն առաջ իմ քովս պիտի վազէ. ինչ պիտի ըսէ թէ որ գայ և զիս հոս չգտնէ»։

Այս խօսքերը սենեկիս մէջէն մնիկ կ՚ընէի և կ՚ուզէի որ Մէրսէտէս համոզէ զան և իր հետը տանի, վասն զի գիշերը և ցորեկ գլխուս վրայ անոր քայլերուն ձայները վայրկեան մը հանգստութիւն չէին տար ինձ։

— Բայց դուն ալ ծերունւոյն քովը չէ՞ր երթար որ զան մխիթարես, հարցուց քահանան։

— Ո՛հ, պարոն, պատասխանեց Քահրուս, միայն սփոփիլ ուզողները կրնան մխիթարուիլ. բայց ան ամենևին չէր ուզեր մխիթարական խօսք մը լսել։ Ասկէ զատ՝ չեմ գիտեր ինչ պատճառաւ զիս տեսնել չէր ուզեր։ Սակայն գիշեր մը անոր հեծկլտանոց ձայնը լսելով, չկրցայ դիմանալ, և երբ վեր ելայ ու գրան առջև հասայ, ալ չէր հեծկլտար և աղօթք կ՚ընէր։ Իւր բարեպաշտութենէն և վիշտերէն շարժեալ արտասանած աղու խօսքերը և սրտաճմլիկ պաղատանքները այն աստիճան ազդեցին սրտիս, որ, կեղծաւորութիւն չեմ ըներ, այն օրը ինքնիրենս ըսի. — Մտուիւ շատ երջանիկ եմ որ մինակ եմ եղեր և ամենաբարին Աստուած ինձ զաւակ չէ տուեր, վասն զի եթէ հայր ըլլայի և այն ողորմելի ծերունւոյն ղգայած ցաւը ղգայի, չկրնալով ոչ մտացս և ոչ սրտիս մէջ անոր Աստուծոյ ուղղած խօսքերը գտնել, այն տառապանքէն ազատելու համար՝ ինքզինքս ուղղակի ծովը պիտի նետէի։

— Թշուառ հայր, մրմնջեց քահանան։

— Օրէ օր սկսաւ առանձին կեանք մը անցընել. շատ անգամ պ. Մորէլ և Մէրսէտէս զինքը տեսնելու կու գային, բայց ծերունին իւր դուռը չէր բանար և ոչ իսկ պատասխան մը կու տար, թէև ստոյգ գիտէի որ ներսն է։

Օր մը իւր սովորութեան հակառակ՝ Մէրսէտէսի այցելութիւնը ընդունելով, երբ այն չարաբաստիկ յուսահատ աղջիկը կը ջանար զան մխիթարել.

«Հաւատա՛ ինծի, աղջիկս, ըսաւ անոր, զաւակս մեռած է, և փոխանակ անոր սպասելնուս, ան մեզ կ'ըսպասէ. շատ երջանիկ եմ որ ծերունի ըլլալով ամենէն առաջ պիտի կրնամ զան տեսնել»։

Ո՛րչափ և բարի ըլլայ մարդ, շուտով կը դադրի զինքը տրտմեցընող անձին տեսութեան երթալէն. վերջապէս ծերունի Տանթէս բոլորովին մինակ մնաց, այնուհետև միայն քանի մը անծանօթ մարդեր կը տեսնէի, որոնք ծրարներով վար կ'իջնէին. այն ծրարներուն ինչ ըլլալը շուտով իմացայ, ծերունին իր ապրուստը ճարելու համար ունեցածը կը ծախէր։

Վերջապէս՝ թշուառ ծերունին մինչև իր հին զգեստները ծախեր էր. տանուտէրը երեք եռամսեայ վարձու վճարումը պահանջելով՝ տունէն հանել սպառնացաւ, բայց ծերունւոյն խնդրանօքը ութ օր մ'ևս պայմանաժամ տուաւ։ Այս մանրամասն տեղեկութիւնները նոյն իսկ տանուտէրէն իմացայ, որ անոր սենեկէն ելնելով իմ սենեակս եկաւ։

Առջի երեք օրերը անոր ըստ սովորութեան սենեկին մէջ քալելը լսեցի. բայց չորրորդ օրը ամենևին ոտքի ձայն չառի։ Իսկոյն վեր ելայ, դուռը գոց էր. բանալիքին ծակէն ծերունւոյն դեղնած և հիւծեալ դէմքը տեսնելով՝ հասկըցայ որ հիւանդացած է. շուտով Պ. Մորէլին իմացընել տուի և Մէրսէտէսին տունը վազեցի։ Երկուքն ալ փութացին եկան։ Պ. Մորէլ հետը բժիշկ մը բերած էր, որ հիւանդը քննելով՝ իմացուց որ որովայնի հիւանդութիւն ունի և հրամայեց որ կերակուրներէն զգուշանայ։ Ես հոն էի, պարոն, և երբեք պիտի չմոռնամ բժշկին այս հրամանին վրայ ծերին ժպիտը։

Անկէ ետև՝ դուռը բաց թողուց. կերակուրներէն զգուշանալու համար բժշկին հրամանը պատճառ բռնելով՝ բան մը չէր ուտեր։

Աբբան հեծելու պէս ձայն մը հանեց։

—Այս պատմութիւնը շատ հետաքրքրական կ'երևի ձեզ, այնպէս չէ՞, պարոն, ըսաւ Գատրուս։

—Այո՛, պատասխանեց աբբան, սրտաճմլիկ պատմութիւն մ'է այդ։

—Մէրսէտէս հասնելով՝ այնչափ փոխուած գտաւ զան, որ առջի անգամուան պէս որոշեց իր տունը փոխադրել։ Պ. Մորէլի կամքն ալ նոյն էր, մինչև բռնի ուզեց տանիլ զան. բայց ծերը այնպիսի ձայներ հանեց որ վախցան և թողուցին։ Մէրսէտէս զան խնամելու համար քովը կեցաւ, և Պ. Մորէլ մեկնելու ատենը նշան մը ըրաւ Քաթալանցիին թէ կրակարանին վրայ քսակ մը կը թողու։ Բայց ծերունին բժշկին հրամանը զէնք ունենալով ամենևին չուզեց բերանը բան մը դնել։ Վերջապէս ինն օր յուսահատութեամբ և ծոմով անցընելէն ետև՝ մեռաւ իր թշուառութեան պատճառ եղողներն անիծելով և Մէրսէտէսին ըսելով.

«Եթէ երբէք Էտմոնս տեսնես, ըսէ որ զինքը օրհնելով կը մեռնիմ»։

Աբբան ոտք ելաւ, սենեկին մէջ երկու պտոյտ ըրաւ, և իր դողդոջուն ձեռքը ցամքած կոկորդին տանելով՝ ըսաւ.

—Ու կը կարծես որ անոր մահուան պատճառը . . .։

—Անօթութիւնն է . . . պարոն, անօթութիւնը, այո՛, ըսաւ Գատրուս, հաւատի եղիք, այնչափ ստոյգ է այս՝ որչափ մեր հոս երկու քրիստոնեայ ըլլալնիս ստոյգ է։

Աբբան երերուն ձեռքով կիսալի բաժակը առաւ, 'ի մի ումպ խմեց զայն, և աչքը կարմրած ու այտերուն գոյնը նետելով՝ վերստին իր տեղը նստաւ։

—Ստուգիւ խիստ մեծ դժբաղդութիւն մ'է այս, ըսաւ այլայլեալ ձայնով մը։

—Այո՛, խիստ մեծ, մանաւանդ որ Աստուծոյ չէ յանցանքը, այլ մարդիկ պատճառ եղան։

—Միւս մարդոց պատմութեանը անցնինք. բայց միտքդ բեր որ ամեն բան պատմելու խօսք տուած ես, շարունակեց աբբան գրեթէ սպառնական կերպով մը. ըսէ ուրեմն, ո՞վ են այն անձերը, որոնք որդին յուսահատութենէ մեռցուցին և հայրը անօթութենէ։

—Երկու հոգի էին որոնք իրմէ կը նախանձէին, մէկը սիրահարութեան և միւսը փառասիրութեան պատճառաւ, և անոնց անունն է Ֆէրնան և Տանկլար։

— Եւ ինչպէս յայտնուեցաւ այդ նախանձը, ըսէ։

— Էտմոնը իբրև Պոնաբարդեան գործակալ ամբաստանեցին։

— Բայց երկուքէն ո՞րը ամբաստանեց, ո՞րն է ճշմարիտ յանցաւորը։

— Երկուքն ալ, պարոն. մէկը նամակը գրեց և միւսը թղթատարին յանձնեց զայն։

— Եւ ո՞ւր գրուեցաւ այդ նամակը։

— Ռէզէրվ, Հարսանեաց նախընթաց իրիկունը։

— Ճիշդ այնպէս է, այո, մրմնջեց աբբան. ով Ֆարիա, Ֆարիա, ինչպէս աշխարհիս մարդիկը և գործերը կը ճանչնայիր։

— Ի՞նչ ըսիք, պարոն, հարցուց Քատրուս։

— Ոչինչ, կրկնեց քահանան, շարունակէ։

— Գիրը չճանչցուելու համար՝ Տանկլար ձախ ձեռքով ամբաստանութեան նամակը գրեց, և Ֆէրնան նամակատունը տարաւ։

— Բայց, պոռաց յանկարծ աբբան, դուն հո՞ն էիր։

— Ե՞ս, ըսաւ Քատրուս զարմանքով, ո՞վ ըսաւ թէ ես հոն էի։

Աբբան զգաց որ անխորհուրդ յարձակում մը ըրեր էր։

— Բնաւ մէկը, ըսաւ. բայց այս մանրամասն պատմութիւնը այդպէս աղէկ գիտնալու համար՝ պէտք է որ ականատես եղած ըլլաս։

— Ստոյգ է, ըսաւ Քատրուս հեղձամղձուկ ձայնով, հոն էի։

— Եւ այն անիրաւութեան դէմ չկեցա՞ր, ըսաւ աբբան. ուրեմն դուն ևս անոնց գործակից էիր։

— Պարոն, ըսաւ Քատրուս, երկուքնին ալ զիս այնչափ խմցուցին որ գրեթէ ինքզինքս կորսնցուցի։ Այն ատեն ամեն բան ամպի մէջէ տեսնուածի պէս կ'երևէր ինծի, և այն վիճակին մէջ եղող մարդու մը խօսիլ կրցածին չափ ես ալ անոնց խօսեցայ, բայց անոնք պատասխան տուին թէ կատակ մ'էր ըրածնին և թէ այս կատակը հետևութիւն մը պիտի չունենայ։

— Բայց հետևեալ օրը, պարոն, հետևեալ օրը անշուշտ տեսար որ դէշ հետևութիւն մը ունեցաւ. սակայն ամենայնիւ ձայն չհանեցիր, թէև բռնուած ժամանակը դուն հոն էիր։

— Այո, պարոն, ես հոն էի և ուզեցի խօսիլ, ուզեցի ամեն բան պատմել, բայց Տանկլար չթողուց։

«Եթէ իրօք յանցաւոր է, ըսաւ ինծի, եթէ իրօք Էլպա կղզին խարիսխ նետած է և Փարիզի Պոնաբարդեան կուսակցութեան համար նամակ մը ունի, եթէ այն նամակը իր վրայ գտնեն, զինքը պաշտպանողները իրեն յանցակից կրնան համարուիլ»։

Ստոյգը ըսելու համար՝ նոյն ժամանակուան ոստիկանութենէն վախցայ, ուստի լռեցի. վատութիւն մ'էր ըրածս, կը խոստովանիմ, սակայն ես յանցանք չունիմ։

— Կ'իմանամ, թողուցիր որ ուզածնին ընեն, այնպէս չէ՞։

— Այո, պարոն, պատասխանեց Քատրուս, և այս բանս գիշեր ցորեկ խիղճս կը տանջէ, որուն համար շատ անգամ Աստուծմէ ներումն կը խնդրեմ. անտարակոյս իմ ձախորդութեանցս պատճառը կենացս ընթացքին մէջ գործած այս միակ յանցանքս պիտի ըլլայ։ Ուստի երբ լա Գարդոնթ սկսի տրտնջալ, միշտ այս խօսքը կը կրկնեմ թէ՝

«Լուէ, կնիկ, Աստուծոյ կամքը այս է»։

Եւ Քատրուս գլուխը խոնարհեց ճշմարիտ զղջում մը ցուցնելով։

— Գոհ եմ, պարոն, որ այսպէս ազատութեամբ խօսեցար, ըսաւ աբբան. յանցանքը ճանչցողը ներողութիւն կը գտնէ։

— Դժբաղդաբար Էտմոն մեռեր է, ըսաւ Քատրուս, և ան չներեց ինծի։

— Բան մը չէր գիտեր խեղճը, ըսաւ աբբան . . .։

— Բայց հիմա դուցէ գիտէ, կրկնեց Քատրուս. քանզի կ'ըսեն թէ մեռեալները ամեն բան գիտեն։

Վայրկեան մը լուռ կեցան. աբբան ոտք ելնելով մտախոհ պտըտելէն ետև՝ իր տեղը նստաւ վերստին։

— Երկու կամ երեք անգամ Պ. Մորէլի մը անունը տուիր, ըսաւ աբբան. ո՞վ է այդ մարդը։

— Փարաոն նաւուն և Տանթէսի տէրն էր։

— Այս տրտմալի եղելութեան մէջ ի՞նչ ընթացք ունեցաւ այդ մարդը։

— Առաքինի, աներկիւղ և սրտակից մարդու մը պէս վարուեցաւ, պարոն։ Քսան անգամ Էտմոնի համար բարեխօսութիւն ը-

րաւ, երբ կայսրը վերադարձաւ, այնչափ աղերսագիրներ դրեց, այնչափ աղաչանք և սպառնալիք ըրաւ որ Թագաւորութեան երկրորդ վերանորոգութեան ժամանակ՝ իբր Պոնապարդեան ընտանիքը կը հալածէին։ Ինչպէս որ ըսի, տատս անդամ Ծերունի Տանթէսին աներեակը եկաւ որ զան իւր տունը տանի, և անոր մահուան նախընթաց օրը կամ երկու օր առաջ՝ կրակարանին վրայ քսակ մը թողուց, որով Ծերունւոյն պարտքը և անոր թաղման ծախքը վճարեցին, այնպէս որ Թշուառ Ծերը՝ ինչպէս որ առանց մէկու միաս տալու ապրեր էր, նոյնպէս իւր կեանքը կնքեց։ Այն հիւսուած կարմիր մեծ քսակը դեռ քովս է։

— Պ. Մորէլը տակաւին կենդանի է, հարցուց աբբան։

— Այո՛, ըսաւ Քատրուս։

— Ուրեմն, կրկնեց աբբան, այդ մարդը Աստուծմէ օրհնած, հարուստ և երջանիկ պիտի ըլլայ . . .։

Քատրուս ցաւով ժպտեցաւ։

— Այո՛, ինծի պէս երջանիկ է, ըսաւ։

— Ուրեմն դժբաղդութեան մէջ է, պոռաց աբբան։

— Թշուառ վիճակի մէջ կը գտնուի, պարո՛ն, և ասկէ առելի սոսկալին՝ իւր պատիւը կորսընցընելու վրայ է։

— Ի՞նչ կերպով։

— Պ. Մորէլ քսան ու հինգ տարի աշխատելէն և Մարսիլիոյ վաճառականաց մէջ պատուաւոր անուն մը ստանալէն ետեւ՝ վերջին թշուառութեան մէջ ինկած է։ Երկու տարուան մէջ հինգ նաւ կորսընցուց, երեք սնանկութեանց մէջ մեծ կորուստներ ըրաւ, և հիմա ուրիշ յոյս չունի, բայց եթէ նոյն Փարաոն նաւը, որուն նաւապետն էր անբաղդ Տանթէս, և որ Հնդկաստանէն կ'ըսպասուի՝ որդան կարմիր և լեղակ բեռնաւորեալ։ Եթէ այն նաւն ևս միւսներուն պէս ոչնչանայ, Պ. Մորէլ կորսուած է։

— Այդ դժբաղդ մարդը կին և զաւակներ ունի՞։

— Այո՛, խիստ առաքինի կին մը ունի. իւր աղջիկը մարդու մը հետ պիտի ամուսնանար, բայց անոր ընտանիքը այսպէս աղքատացած աղջիկ մը չուզեր առնուլ. վերջապէս որդի մը ունի, որ բանակին մէջ տեղակալ է. այս ամենը փոխանակ Թշուառ մար-

դուն վիշտերը մեղմացընելու՝ աւելի կը սաստկացընեն։ Եթէ ինքը միայնակ ըլլար, հրացանով ինքզինքը պիտի սպաննէր և ամէն բան կը լմընար։

— Սոսկալի վիճակ, մրմնջեց աբբան։

— Ահա՛, պարո՛ն, ինչպէս կը վարձատրէ Աստուած առաքինութիւնը, ըսաւ Քատրուս։ Ես որ այն ձեզ պատմածէս զատ չարիք մը ըրած չեմ, Թշուառութեան մէջ կը գտնուիմ. խեղճ կնոջս ապաքինութեան համար բան մը ընել չկրնալով, անոր ջերմէն մեռնիլը տեսնելէս ետեւ՝ ես իսկ Ծերունի Տանթէսին պէս անօթութենէ պիտի մեռնիմ, ինչ սաեն Ֆէրնան և Տանկլար ոսկւոյ վրայ կը պլորին։

— Եւ ի՞նչպէս։

— Վասն զի անոնց ամէն գործը յաջող գնաց, իսկ բարի մարդոց գործերը ձախորդ կ'երթան։

— Ի՞նչ եղաւ այն թելադրիչ Տանկլարը, ամենէն յանցաւորը, այնպէս չէ՞։

— Մարսիլիայէն մեկնելով, Մորէլի յանձնարարութեամբը, որ անոր յանցաւոր ըլլալը չէր գիտեր, Սպանիայի սեղանաւորի մը քով պրպտութեան մտաւ. Սպանիոյ պատերազմին ժամանակ՝ Գաղղիացւոց բանակին պաշարին մէկ մասը մատակարարելու պաշտօնն ունենալով՝ հարստացաւ. իւր դրամագլուխը զարձընելով, եռապատիկ և քառապատիկ ըլլայն, և իւր սեղանաւորին աղջկէն այրի մնալով, տիկին Նարկոն այրի կնոջ մը հետ ամուսնացաւ, որ արդի Թագաւորին սենեկապետ և աստիճանաւոր պ. ար Սալվիէօյին աղջիկն է։ Միլիոնատէր ըլլալով, սեպուհի տիտղոսը տուին իրեն, այնպէս որ հիմա սեպուհ Տանկլար կը կոչուի. Մօն–Պլան փողոցը պալատ մը, իւր ախուռներուն մէջ տասն ձի, նախասենեկին մէջ վեց սպասաւոր և իւր արկղներուն մէջ չեմ գիտեր որչափ միլիոններ ունի։

— Ո՛հ, ըսաւ աբբան զարմանալու ձայնով մը, ուրեմն երջանիկ է ան։

— Ո՞վ գիտէ, դժբաղդութիւնը կամ երջանկութիւնը պատերուն գաղտնիքն են. սպաները ականջ ունին, բայց լեզու չու-

նին. եթէ մեծ հարստութեամբ երջանիկ կրնայ ըլլալ մարդս, Տանկլար իսկ երջանիկ է ։

— Ֆէրնան ի՞նչ եղաւ ։

— Ֆէրնանի գործը բոլորովին տարբեր է ։

— Բայց առանց պաշտպանութեան և առանց դաստիարակութեան աղքատ Քաթալանցի ձկնորս մը ինչպէս կրցաւ հարստանալ. ստուգիւ ամենէն աւելի այս կը զարմացընէ զիս ։

— Ամեն մարդ իսկ անոր կը զարմանայ. իր կենացը մէջ զարմանալի գաղտնիք մը ըլլալ պէտք է որ մարդ չգիտեր ։

— Բայց վերջապէս ինչ տեսանելի սանդուխով մը այն մեծ հարստութեան կամ բարձր պաշտօնին հասաւ ։

— Երկուքին ալ հասաւ, պարոն, երկուքին ալ. Ֆէրնան մեծ հարստութեան և միանգամայն բարձր պաշտօնի տէր եղած է ։

— Առասպել մը կ՚երևի ինծի այդ ։

— Ստոյգ է որ նմանութիւն ունի, բայց մտիկ ըրէք և կը համոզուիք ։

Նաբոլէոնի դարձէն քանի մը օր առաջ Ֆէրնան զօրաժողովի կանչուած էր. Պուրպոնները զինքը ազատ թողուցին, բայց երբ Նաբոլէոն վերադարձաւ, արտաքոյ կարգի զօրաժողով մը հրաման ըլլալով, Ֆէրնան պարտաւորեցաւ իր դրօշակին տակը վազել ։ Ես իսկ կանչուեցայ, բայց Ֆէրնանէն աւելի ծեր և նոր ամուսնացած ըլլալուս՝ ծովեզերաց վրայ ղրկուեցայ ։

Իսկ Ֆէրնան զօրաւոր գունդերուն մէջ խառնուեցաւ ու սահմանին վրայ երթալով՝ Լինիի պատերազմին մէջ գտնուեցաւ ։

Պատերազմին յետագայ գիշերը, թշնամւոյն հետ գաղտնի յարաբերութիւններ ունեցող զօրապետի մը դուռը հրամանի կ՚սպասէր ։ Նոյն գիշերը զօրապետը Անգղիացւոց բանակը պիտի երթար, ուստի առաջարկեց Ֆէրնանին որ իր հետը գայ. Ֆէրնան առաջարկութիւնն ընդունեց և զօրապետին հետ գնաց ։

Ֆէրնան այս ընթացքին համար կրնար զինուորական ատեանի կանչուիլ, եթէ Նաբոլէոն իր գահին վրայ կենար, բայց ընդհակառակն Պուրպոններուն քով մեծ համակրութիւն ստացաւ. ուստի հարիւրապետի երկրորդ տեղակալի աստիճանով Գաղղիա

վերադարձաւ, և զօրապետին պաշտպանութեամբը, որ մեծ ազդեցութիւն ունէր, Սպանիոյ պատերազմին ժամանակը 1823ին հարիւրապետ եղաւ, ճիշդ այն միջոցին որ Տանկլար առևտրական վտանգաւոր գործոց մէջ կը մտնէր ։ Ֆէրնան Սպանիացի ըլլալուն, զինքը Մատրիտ ղրկեցին որ իր հայրենակիցներուն ինչ ոգւոյ տէր ըլլալնին իմանայ. հոն Տանկլարին հանդիպեցաւ, անոր հետ գաղտնի խօսեցաւ, մայրաքաղաքին և գաւառներուն թագաւորականները համոզեց որ իր զօրապետին օգնեն, որուն հետ փոխադարձ խոստումներ ըրաւ, իր զօրաց գունդը իրեն ծանօթ ճամբաներէն անցընելով՝ թագաւորականներէ պահպանուած կիրճերուն քովը տարաւ, և վերջապէս, այս կարճատև արշաւանաց մէջ այնպիսի ծառայութիւններ ըրաւ, որ Թրոգատէրօն առնուելէն ետև՝ գնդապետ անուանեցաւ, և կոմսի տիտղոսով պատուոյ լէգէոնի պաշտօնատարի խաչն ընդունեց ։

— Ո՛վ բաղդ, ո՛վ կոյր բաղդ, մրմնջեց աբբան ։

— Այո՛, բայց մտիկ ըրէք, դեռ չլմնցաւ ։ Սպանիոյ պատերազմէն ետև՝ Եւրոպայի մէջ խաղաղութիւնը տիրելով, Ֆէրնանի բաղդը անյաջող գնաց ։ Միայն Յունաստան Տաճկաց դէմ ապըստամբեր էր, և իր անկախութեան պատերազմը սկսելով, ամեն մարդ իր աչքը Յունաստանի վրայ դարձուց, և Յունաց վրայ գթալով կ՚ուզէր օգնել անոնց ։ Գաղղիոյ կառավարութիւնը առանց յայտնապէս զանոնք պաշտպանելու՝ ինչպէս որ գիտէք, հատուած առ հատուած գաղթականներ կը ղրկէր ։ Ֆէրնան Յունաց օգնելու համար հրաման խնդրեց և ընդունեց, սակայն իր անունն ալ բանակին արձանագրքին մէջէն հանել չտուաւ ։

Քիչ մը ժամանակ ետքը՝ լսեցինք որ ալ Մորսէրֆ կոմսը, քանզի Ֆէրնան այս անունը կը կրէր, Ալի փաշային քով մարզիչ զօրապետի պաշտօնը ընդուներ էր ։

Ինչպէս որ գիտէք՝ Ալի փաշան սպաննուեցաւ. բայց մեռնելէն առաջ՝ Ֆէրնանի ծառայութիւնները վարձատրեց՝ անոր մեծ գումար մը թողլով, որով Ֆէրնան Գաղղիա վերադարձաւ. ուր իր զօրապետի տեղակալի պաշտօնը վերստին իրեն յանձնեցին ։

— Եւ հիմա ինչ կ՚ընէ, հարցուց աբբան ։

— Եւ հիմա, շարունակեց Քատրուս, Փարիզի մէջ, Հէլտէր փողոցը, Թիւ 27, շքեղ պալատ մը ունի։

Աբբան բերանը բացաւ որ խօսի, բայց վարանող մարդու մը պէս վայրկեան մը կեցաւ, և ինքզինքը զսպելով ըսաւ.

— Բայց Մէրսէտէս ինչ եղաւ. ինծի ըսին թէ աներեւոյթ եղեր է։

— Սուտ է, ըսաւ Քատրուս, հետեւեալ օրը աւելի փառաւոր ծագող արեւու պէս աներեւութացաւ։

— Ուրեմն ա՛ն ալ հարստացաւ, հարցուց աբբան հեգնական ժպիտով մը։

— Այս ժամուս Մէրսէտէս Փարիզի ամենէն մեծ տիկիններէն մէկն է, պատասխանեց Քատրուս։

— Շարունակէ՛, ըսաւ աբբան, ինծի այնպէս կ'երեւի թէ երազի մը պատմութիւնը կը լսեմ։ Ես ալ շատ տարօրինակ բաներ տեսած ըլլալուս՝ պատմածներդ այնչափ չեն զարմացըներ զիս։

— Մէրսէտէս 'ի սկզբան Էտմօնը կորսնցընելուն համար յուսահատութեան մէջ մնաց։ Իւր Վիլֆօրի ըրած աղաչանքը և ծերունի Տանթէսի ըրած անձնանուիրութիւնը արդէն պատմեցի ձեզ։ Իւր յուսահատութեան վրայ ուրիշ վիշտ մը ևս ունեցաւ և այն էր Ֆէրնանի բացակայութիւնը, որուն յանցանքը չէր գիտեր և իբրև եղբայր կը սիրէր զայն։

Ֆէրնանի մեկնելէն ետև՝ Մէրսէտէս առանձին մնաց։

Երեք ամիս արտասուօք անցուց. ո՛չ Էտմօնէն լուր մը կ'ընդունէր և ոչ Ֆէրնանէն. իւր աչաց առջև յուսահատութենէ սպառող ծերունիէ մը զատ ուրիշ բան չէր տեսներ։

Իրիկուն մը՝ Մարսիլիայէն Քաթալանցւոց գիւղը երթալու ճամբուն անկիւնը ըստ սովորութեան բոլոր օրը կենալէն ետև՝ առաջուանէ աւելի սրտաբեկ և յուսահատ իւր տունը վերադարձաւ. այն ճամբուն երկու փողոցներուն մէկէն ո՛չ իւր սիրահարը երևցեր էր և ոչ իւր բարեկամը, ո՛չ մէկին և ոչ մէկալին վրայ լուր մը առած չէր։

Յանկարծ իրեն ծանօթ ոտնաձայն մը առաւ, սրտի անձկութեամբ մը գլուխը դարձուց, և դուռը բացուելով, Ֆէրնանը տեսաւ երկրորդ տեղակալի հագուստով։

Եթէ Մէրսէտէս կու լար այս միջոցիս, իւր արտասուքը Ֆէրնանի համար չէր, այլ իւր անցեալ կենաց մէկ մասը յիշելուն համար էր։

Մէրսէտէս Ֆէրնանի ձեռքը սեղմեց այնպիսի յուզմամբ մը, որ այս վերջինը սէրը կարծեց, սակայն աղջկան այս յուզմունքը ուրիշ բան չէր, բայց եթէ առանձնակեաց անձկութեան երկար ժամերէն ետև՝ վերջապէս բարեկամ մը տեսնելը և աշխարհիս մէջ առանձին չմնալու ուրախութիւնն էր։ Բաց յայսմանէ՝ ստոյգը խօսելու համար, Ֆէրնան երբէք ատելի եղած չէր իրեն, միայն թէ Մէրսէտէս անոր սիրահարած չէր. քանզի Մէրսէտէսի բոլոր սիրտը ուրիշ մը գրաւած էր, այս ուրիշը բացակայ էր . . . աներեւոյթ եղեր էր . . . գուցէ իսկ մեռեր էր։ Այս վերջին կարծիքին վրայ Մէրսէտէս չէր կրնար իւր հեծեծանքը զսպել, և վիշտէն իւր աղիքը կը գալարէին. այն կարծիքը, որուն ժամանակաւ ինքը կ'ընդհարէր երբ իրեն յիշէին, հիմա առանձին իւր մտաց առջև կը ներկայէր. բաց յայսմանէ՝ ծերունի Տանթէս իսկ անդադար իրեն կ'ըսէր. «Մեր Էտմօնը մեռած պիտի ըլլայ, եթէ ոչ՝ մինչև հիմա գալ պէտք էր»։

Ինչպէս որ ըսի՝ ծերունին մեռաւ. եթէ կենդանի ըլլար, գուցէ Մէրսէտէս երբէք ուրիշի կինը պիտի չըլլար. վասն զի իւր անհաւատարմութեանը համար միշտ պիտի մեղադրէր զինքը։ Ֆէրնան այս բանս հասկըցաւ, և ծերունւոյն մահուանէն ետքը վերադարձաւ եկաւ. այս անգամ տեղակալի պաշտօնն ունէր։ Առաջին ճանապարհորդութենէն դառնալուն՝ Մէրսէտէսին հետ սիրոյ խօսք մը անգամ չըրաւ, երկրորդէն դառնալուն՝ յիշեց անոր թէ կը սիրէ զինքը։

Մէրսէտէս վեց ամիս ևս ժամանակ խնդրեց որ կարենայ սպասել և լալ Էտմօնին համար։

— Իրօք, ըսաւ աբբան դառն ժպիտով մը, ընդ ամենը տասն և ութ ամիս կ'ընէ. աւելի ինչ կը պահանջէ խիստ պաշտելի սիրահար մը։

Ետքը Անգղիացի քահանան այս խօսքերը մրմնջեց.

— Ո՛վ տկարութիւն, կին է քու անունդ*։

— Վեց ամիս ետքը, կրկնեց Քատրուս, ամուսնութիւնը Ակուլի եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ։

— Նոյն եկեղեցւոյ մէջ Մէրսէտէս Էտմոնի հետ պիտի ամուսնանար, մրմռաց քահանան, միայն թէ նշանածը փոխուած էր։

— Մէրսէտէս ամուսնանալու ժամանակ թէև այլայլութիւն մը չէր ցուցըներ, շարունակեց Քատրուս, սակայն Րէզէրվի առջևէն անցնելու ատեն նուաղեցաւ, քանզի հոն տասն և ութ ամիս առաջ հարսնախօսութեան հանդէսը կատարեր էին այն անձին հետ, զոր տակաւին կը սիրէր եթէ իր սրտին խորը քննելու համարձակէր։

Ֆէրնան թէև երջանիկ էր, բայց իր սիրտը ամենևին հանգարտ չէր, ինչպէս որ նոյն միջոցին զինքը տեսայ. ամեն ժամանակ Էտմոնի վերադարձէն կը վախնար. Քաթալանցւոց գիւղը թողլով տխուր յիշատակներ և միանգամայն վտանգներ պիտի ունենար. ուստի հարսնիքէն ութ օր ետքը իր կնոջը հետ իրենց հայրենիքէն մեկնեցան։

— Այնուհետև Մէրսէտէսը տեսա՞ր, հարցուց աբբան։

— Այո՛, Սպանիոյ պատերազմին ժամանակ Բերբինեան քաղաքին մէջ տեսայ, ուր Ֆէրնան զինքը թողուցեր էր, և Մէրսէտէս իր որդւոյն ուսմունք կը սորվեցընէր։

Աբբան սարսռեցաւ։

— Իր որդւո՞յն ըսիր, հարցուց քահանան։

— Այո՛, պատասխանեց Քատրուս, և անունը Ալպէր է։

— Ուրեմն Մէրսէտէս դաստիարակութիւն ստացեր էր, որ կարենայ դաստիարակել իր որդին, շարունակեց աբբան։ Կարծեմ՝ Էտմոն ըսաւ ինծի թէ ձկնորսի մը գեղեցիկ բայց անկիրթ աղջիկ մ՚էր ան։

— Ո՛հ, ըսաւ Քատրուս, Էտմոն աղէկ չէ ճանչցեր իր նշանածը։ Մէրսէտէս կրնար թագուհի ըլլալ, պարոն, եթէ արքայական թագը գեղեցկագունին և ամենէն հանճարեղ անձին գլուխը

*Frailty, thy name is woman.

դնել հարկ ըլլար։ Որչափ իր հարստութիւնը կ՚աճէր, ինքն ևս հարստութեան հետ կ՚աճէր ու կը զարգանար։ Նկարչութիւն, երաժշտութիւն, և շատ ուրիշ ուսումներ կը սորվէր։ Բայց այս ալ խոստովանելու է որ այս ամենը իր միտքը զբօսցընելու, մոռնալու և իր սրտին մէջ արմատացած սիրոյն հետ՝ կռուելու համար կ՚ընէր։ Եւ հիմա ամեն բան պէտք է որ ըսուի, շարունակեց Քատրուս. հարստութիւնը և պատիւները անտարակոյս զինքը մխիթարած են։ Մէրսէտէս հարուստ և կոմսուհի մը եղած է, սակայն . . . ։

Քատրուս խօսքը ընդմիջեց։

— Սակայն ինչ, հարցուց աբբան։

— Սակայն, ապահով եմ որ Մէրսէտէս երջանիկ չէ, ըսաւ Քատրուս։

— Ի՞նչպէս գիտես։

— Երբ ես չքաւորութեան մէջ ինկայ, մտածեցի որ իմ հին բարեկամներս կարելի է օգնեն ինծի. ուստի Տանկլարին տունը գացի. բայց ան ինծի ընդունելութիւն անգամ չտուաւ։ Այն ատեն՝ Ֆէրնանին գացի, որ իր սենեկապանին ձեռօք ինծի հարիւր ֆրանք տալ տուաւ։

— Ուրեմն ո՛չ Ֆէրնանին և ոչ Մէրսէտէսին երեսը չտեսար։

— Ո՛չ, բայց տիկին տը Մորսէրֆ զիս տեսեր է։

— Ի՞նչպէս։

— Երբ իրենց տունէն դուրս կ՚ելնէի, ոտքիս առջև քսակ մը ինկաւ, որուն մէջ քսան ու հինգ Լուի ոսկի կար. անմիջապէս գլուխս վերցուցի և Մէրսէտէսը տեսայ, որ պատուհանին վանդակները կը գոցէր։

— Պ. Վիլըֆօր ինչ եղաւ, հարցուց աբբան։

— Անոր հետ բարեկամութիւն չունէի. զինքը չէի ճանչնար որ անորմէ օգնութիւն մը խնդրելու երթայի։

— Բայց չե՞ս գիտեր ինչ եղաւ ան, և Էտմոնի դժբաղդութեան մէջ ինչ մաս ունեցաւ։

— Ո՛չ, բայց այս միայն գիտեմ որ զան վերցընել տալէն քիչ մը ատեն ետքը՝ Սէն-Մէրանի օրիորդին հետ ամուսնանալով՝

Մալպիլեայէն մեկնեցաւ։ Անտարակոյս բաղդը միւսներուն պէս իրեն ալ ժպտած է, անշուշտ Ցանկլարին պէս հարստացած և Ֆէրնանի պէս յարգեալ պիտի ըլլայ․ ես միայն, պարոն, ինչպէս որ կը տեսնէք, աղքատ, թշուառ և Աստուծոյ երեսէն ինկած մնացի։

— Կը սխալիս, բարեկամ, ըսաւ աբբան․ երբեմն մեզ այնպէս կ'երևի թէ Աստուած զմեզ մոռցած է, երբ իր արդարութիւնը կը դադրեցընէ․ բայց միշտ ժամանակ կու գայ որ կը յիշէ զմեզ, և ահա ասոր ապացոյցը։

Այս ըսելով՝ աբբան ադամանդը ծոցէն հանեց և Քատրուսին տալով,

— Ա՛ռ, բարեկամ, ըսաւ անոր, այս ադամանդը քուկդ է։

— Միայն ինձ է այս, պոռաց Քատրուս․ ո՜հ, պարոն, կատակ չէ՞ ըրածնիդ։

— Այս ադամանդը իր բարեկամներուն պիտի բաժնուէր․ բայց կը տեսնեմ որ Էտմոն միայն մէկ բարեկամ ունի եղեր, ուստի անօգուտ է զայն բաժնելը։ Ա՛ռ այս ադամանդը և ծախէ․ վերստին կը կրկնեմ՝ յիսուն հազար ֆրանքի արժողութիւն ունի, և կը յուսամ թէ այս գումարը բաւական է զքեզ թշուառութենէ հանելու։

— Ո՜հ, պարոն, ըսաւ Քատրուս երկչոտութեամբ մէկ ձեռքը երկնցընելով, և միւսովը իր ճակատէն վազած քրտինքը սրբելով, ո՜հ, պարոն, մարդու մը երջանկութեան կամ յուսահատութեան վրայօք կատակ մի՛ ընէք։

— Երջանկութեան և յուսահատութեան ինչ ըլլալը աղէկ ճանչնալուս համար՝ երբե՛ք չեմ ախորժիր անոնց վրայօք կատակ ընել։ Ա՛ռ զայս, բայց 'ի փոխարէն . . . ։

Քատրուս այս խօսքին վրայ ետ քաշեց իր ձեռքը, որ արդէն ադամանդին դպցեր էր։

Աբբան ժպտելով,

— Ասոր փոխարէն, շարունակեց, տո՛ւր ինձ այն կարմիր մետաքսեայ քսակը, որ Պ. Մորէլ ծերունի Ցանթէսին կրակարանին վրայ թողուցեր էր, և որուն համար հիմա ըսիր թէ քու քովդ է։

Քատրուս աւելի ևս զարմանալով՝ կաղնեայ մեծ պահանոցի մը մօտեցաւ, բացաւ զայն, և աբբային՝ խամրած կարմիր մետաքսեայ երկար քսակ մը տուաւ, որուն վրայ ժամանակաւ ոսկեզօծեալ երկու պղինձ օղակներ կային։

Աբբան առաւ զայն, և անոր տեղ ադամանդը տուաւ։

— Ո՜հ, պարոն, խիստ արդարասէր մարդ մ'էք, պոռաց Քատրուս․ վասն զի ստուգիւ մարդ չէր գիտեր որ Էտմոն այս ադամանդը թողուցած է և ձեր քովը կը գտնուի։

— Շատ աղէկ, մռմռաց աբբան, դուն իսկ նոյնը պիտի ընէիր, եթէ իմ տեղս ըլլայիր։

Այս ըսելով ոտք ելաւ, գլխարկը և ձեռնոցներն առաւ։

— Ամեն ըսածներդ իրաւ են, այնպէս չէ՞, և ես կրնամ բոլորովին հաւատալ անոնց։

— Կեցէք, պարոն աբբայ, ըսաւ Քատրուս․ այս պատին անկիւնը օրհնեալ փայտէ խաչելութիւն մը և այս մորթարկղին վրայ կնոջս Աւետարանը կայ․ բացէք այս գիրքը, և ձեռքս խաչելութեան վրայ երկնցընելով, իմ հոգւոյս փրկութեան և քրիստոնէական հաւատքիս վրայ երդում ընեմ որ ամեն բան եղածին պէս պատմեցի ձեզ։

— Շատ աղէկ, ըսաւ աբբան՝ Քատրուսի այս կերպ խօսելէն՝ ճշմարիտը պատմելուն վրայ համոզուելով, շատ աղէկ, յաջողութիւն կը մաղթեմ քեզ։ Մնաս բարով, ես կը վերադառնամ իմ վանքս հեռու այն մարդերէն, որոնք իրարու այնչափ չարիք կը հասցընեն։

Աբբան Քատրուսի եռանդագին սրտի յափշտակութենէն հազիւ ազատելով, իր ձեռօքը դրան նիգը հանեց, դուրս ելաւ, ձին հեծաւ, և վերջին անգամ պանդոկապետը բարևելով, որ բարձրաձայն ողջոյններով ինչ ըսելը չէր գիտեր, եկած կողմէն ճամբայ ելաւ։

Երբ Քատրուս երեսը դարձուց, իր ետևը լա Գարգօնթը տեսաւ, որ առաջուանէ աւելի դեղնած և աւելի դողդոջուն կ'երևէր։

— Լսածս ստո՞յգ է, ըսաւ կինը։

— Ադամանդը միայն մեղմ ձգելը, ըսաւ Քատրուս ուրախու-
թենէ խենդեցած։

— Այո՛։

— Բոլորովին ստոյգ. ահա, տես։

Կինը վայրկեան մը դիտելէն ետև՝ կամայ ձայնով մը ըսաւ.

— Բայց եթէ կեղծ է։

Քատրուսի դէմքը նեռեց և սկսաւ վարանիլ։

— Կեղծ ըսիր... մրմռայ Քատրուս. և ինչ պատճառաւ այս
մարդը կեղծ ադամանդ մը պիտի տայ ինձ։

— Որպէս զի առանց վճարելու բերանէդ պաղտնի խօսքերը
առնէ, ապուշ մարդ։

Քատրուս այս ենթադրութեան բեռին տակ վայրկեան մը շփո-
թած մնաց։

— Ո՛հ, ըսաւ վայրկեան մը ետքը, և իւր դլխարկը առնելով,
դլուխը կապած կարմիր թաշկինակին վրայ հպաւ, հիմա կ'ի-
մանանք։

— Եւ ինչպէս պիտի իմանաս։

— Այսօր Պօքէրի տօնավաճառի օրն է. Փարիզէն դոհար-
դործներ եկած են, հիմա կ'երթամ անոնց կը ցոյցընեմ։ Դուն,
կինիկ, տանը հսկէ, ես երկու ժամէն կը վերադառնամ։

Այս ըսելով Քատրուս պանդոկէն դուրս նետուեցաւ, և վա-
զելով՝ անծանօթ մարդուն բռնած ճանբուն հակառակ կողմը ղար-
կաւ։

— Ցիսուն հազար ֆրանք, մրմռաց լա Գարլօնթ միտակ ձեա-
լով. դումար մ'է այս... բայց հարստութիւն մը չէ։



ԳԼՈՒԽ Ե

ԹԱՆՏԵՐՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պէլիարտէն Պօքէր երթալու ճանբուն վրայ տեղի ունեցած
անցքին հետևեալ օրը՝ կապոյտ թիլպուրիով, նանքինեան կեր-
պասէ տնտաղէստով և ճերմակ բամիոնով երեսուն կամ երեսուն
երկու տարեկան մարդ մը՝ իւր ձայնը և շարժուածքը Անգլիացիի
նմանցընելով, Մարսիլիոյ քաղաքապետին ներկայացաւ։

— Պարոն քաղաքապետ, ըսաւ անոր, ես Հռոմի Թոմսըն և
Փրէնչ անուն վաճառատան առաջին դրագիրն եմ. տասն տարիէ
՚ի վեր Մարսիլիոյ Մորէլի և Որդւոյ վաճառատան հետ յարաբե-
րութեան մէջ ենք, և այս յարաբերութեանց մէջ դրեթէ հարիւր
հազար ֆրանքի չափ բռնուած ենք, և քիչ անհանդստութեան
մէջ չենք՝ լսելով որ այն վաճառատունը կործանման վիճակի մէջ
է։ Ուստի այն վաճառատան վրայօք տեղեկութիւն ստանալու հա-
մար դիտմամբ Հռոմէն հոս եկած եմ։

— Պարոն, պատասխանեց քաղաքապետը. իրօք դիտեմ որ
չորս կամ հինգ տարիէ ՚ի վեր դժբաղդութիւնը կարծես թէ Պ.
Մորէլը կը հալածէ. հետզհետէ չորս կամ հինգ նաւ կորընչ-
ցուց և երեք կամ չորս տնտեսութեանց մէջ մեծ կորուստներ ը-
րաւ. թէև ես իսկ տասն հազար ֆրանքի չափ պահանջք ունիմ
անորմէ, սակայն ինձ չվերաբերիր անոր հարստութեան վիճակին
վրայօք ձեզ տեղեկութիւն տալ։ Իրր քաղաքապետի մը հարցու-
ցէք ինձ թէ ինչ դաղափար ունիմ Պ. Մորէլի վրայ, և ես կը
պատասխանեմ ձեզ թէ խիստ առաքինի մարդ մ'է ան, որ մին-
չև հիմա իւր դործերը կատարեալ ճշդութեամբ կատարած է։
Ահա այս միայն կրնամ ըսել ձեզ անոր վրայօք, պարոն. եթէ
ասկէ աւելի տեղեկութիւն կ'ուզէք, բանտերու տեսուչ Պ. որ
Պովիլլին ներկայացէք, որ նուայլ փողոցը, թիւ 15 կը բնակի.

կարծեմ թէ՝ նոյն Մորէլի վաճառատունէն երկու հարիւր հազար ֆրանք առնելիք ունի, և եթէ խօսք վախնալու բան մը կայ, անոր պահանջքը իմինէս աւելի մեծ գումար մը ըլլալուն՝ գուցէ ան ինձմէ աւելի տեղեկութիւն ստացած ըլլայ անոր վրայօք :

Անգղիացին անոր ազնիւ զգացմանց հաւատքը յայտնելէն ետեւ՝ բարեւեց զան, դուրս ելաւ և Անգղիացիի մասնաւոր քալուածքով դէպ 'ի որոշեալ փողոցը ուղեւորեցաւ :

Պ. տը Պօվիլ իւր դահլճին մէջ կը գտնուէր. Անգղիացին զան տեսնելով՝ զարմացման այնպիսի շարժում մը ըրաւ, որ իւր այցելութիւն ըրած անձը առաջին անգամ տեսած չըլլալը կը յայտնէր : Իսկ Պ. տը Պօվիլ այնչափ յուսահատեալ էր, որ յայտնի կ'երեւէր թէ այս միջոցիս իւր միտքը զբաղող մտածութիւնները իրեն միջոց չէին տար անցեալը յիշելու :

Անգղիացին՝ Մարսիլիոյ քաղաքապետին ըրած հարցումը գրեթէ նոյն կերպով բանտերու տեսչին եւս կրկնեց Անգղիացւոց սովորական պաղութեամբ :

— Ո՛հ, պարոն, պոռաց Պ. տը Պօվիլ, դժբաղդաբար ձեր երկիւղը անհիմն չէ, և ես յուսահատած եմ: Մորէլի վաճառատան վրայ երկու հարիւր հազար ֆրանք շահու դրած էի. այս երկու հարիւր հազար ֆրանքը աղջկանս օժիտն էր, զոր տասն հինգ օրէն ամուսնացընելու կը մտածէի. այս երկու հարիւր հազար ֆրանքին հարիւր հազարը ներկայ ամսոյ 15ին պիտի վճարէր, և հարիւր հազարը հետեւեալ ամսոյ 15ին: Իմ այս բաղձանքս Պ. Մորէլին յայտնեցի, որպէս զի վճարումը ճիշտ օրին կատարէ, և ահա, պարոն, ճիշտ կէս ժամ յառաջ Պ. Մորէլ հոս գալով, իմացուց որ եթէ ամսոյ 15ին իւր Փարաւոն նաւը չվերադառնայ, նոյն գումարը վճարելու անկարելութեան մէջ պիտի գտնուի :

— Այդ խօսքը՝ վճարումը յապաղելու կը նմանի, ըսաւ Անգղիացին :

— Չէ՛ք ըսեր, պարոն, թէ սնանկութեան կը նմանի, պոռաց Պ. տը Պօվիլ յուսահատութեամբ :

Անգղիացին վայրկեան մը մտածել ձեւացընելէն ետեւ՝ ըսաւ.

— Ուրեմն, պարոն, այդ առնելիքնուդ վրայ երկիւղ ունիք :

— Իբր կորուսած կը սեպեմ զայն :

— Շատ աղէկ, ես կը գնեմ զայն :

— Դո՞ւք :

— Այո՛, ես :

— Բայց անշուշտ մեծ զեղջումով մը :

— Ո՛չ, երկու հարիւր հազար ֆրանք վճարելով. մեր վաճառատունը, յաւելցուց Անգղիացին ծիծաղելով, այդ կերպ գործեր չըներ :

— Եւ երբ պիտի վճարէք :

— Հիմա, կանխիկ :

Այս ըսելով Անգղիացին իւր ծոցէն թղթադրամներու ծրար մը հանեց, որ Պ. տը Պօվիլի պահանջքին կրկին գումարը կը պարունակէր :

Պ. տը Պօվիլի դիմաց վրայ ուրախութեան նշոյլ մը երեւցաւ. սակայն ինքզինքը զսպելով՝ ըսաւ անոր.

— Պարոն, պէտք եմ իմացընել ձեզ, թէ հաւանականաբար գուցէ այս գումարին հարիւրին վեցն անգամ չընդունիք :

— Ինծի չնկատեր այդ բանը, պատասխանեց Անգղիացին, այլ Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան կը նկատի, որուն հրամանը ես կը կատարեմ: Գուցէ իւր նպատակը իրեն հակառակորդ վաճառատան մը կործանումը փութացընել է : Բայց ես այն միայն գիտեմ որ պատրաստ եմ նոյն գումարը համրել ձեզ եթէ պարտամուրհակները մեր վաճառատան վրայ դարձընէք. միայն թէ միջնորդութեանս իրաւունքը կը պահանջեմ:

— Այո՛, պարոն, իրաւունք ունիք, պոռաց Պ. տը Պօվիլ. միջնորդութեան վարձքը սովորաբար հարիւրին մէկ ու կէս է. բայց ձեզ հարիւրին երկո՞ւս, երե՞ք, հի՞նգ, վերջապէս աւելի կ'ուզէ՞ք, խօսեցէ՛ք :

— Պարոն, կրկնեց Անգղիացին ծիծաղելով, ես ալ իմ վաճառատանս պէս եմ, և այս կերպ գործեր չեմ ըներ. ո՛չ, իմ միջնորդութեանս վարձքը բոլորովին ուրիշ տեսակ է :

— Խօսեցէք ուրեմն, պարոն, պատրաստ եմ ձեր խնդիրքը կատարելու :

— Դուք բանաբեր սեռուչն էք:

— Տասն և չորս տարիէ աւելի ժամանակէ՝ ի վեր:

— Ելնող և մտնող բանտարկեալներուն արձանագրութիւնը կը պահէք:

— Անշուշտ:

— Այդ արձանագրութեանց մէջ բանտարկելոց վերաբերեալ ծանօթութիւններ ևս կը գտնուին:

— Իւրաքանչիւր բանտարկեալ իրեն վերաբերեալ թուղթերն ունի:

— Շատ աղէկ, պարոն, Հռոմի մէջ ողորմելի աբբայ դաստիա-բակ մը ունէի, որ յանկարծ աներևոյթ եղաւ: Ետքէն իմացայ որ Իֆ դղեակը բանտարկուեր է. անոր մահուան վրայօք քանի մը մանրամասն տեղեկութիւններ կ՚ուզէի ստանալ:

— Անունը ինչ է:

— Աբբայ Ֆարիա:

— Ո՛հ, շատ աղէկ կը յիշեմ, պուռայ Պ. տը Պօվիլ, խեղճ մ՚էր ան:

— Այնպէս կ՚ըսէին:

— Բայց իրօք խեղճ էր:

— Կարելի է. և ինչ տեսակ խեղճութիւն ունէր:

— Կ՚ուզէր հաւատացընել թէ անբաւ դանձի մը տեղը կը ձանչնայ և յիմարական դումարներ կը խոստանար կառավարութեան եթէ զինքը ազատել ուզէր:

— Խեղճ աբբայ, և մեռած է հիմա:

— Այո՛, պարոն, գրեթէ հինգ կամ վեց ամիս կայ, փետրուար ամսոյ մէջ մեռաւ:

— Սուր յիշողութիւն մը ունենալու էք, պարոն, որ այսպէս թուականները կը յիշէք:

— Թշուառ աբբային մահուան թուականը աղէկ կը յիշեմ, որովհետև անոր հետ զարմանալի դիպուած մը պատահեցաւ:

— Կրնա՞նք այն դիպուածին ինչ ըլլալը իմանալ, հարցուց Անղղիացին այնպիսի հետաքրքրութեամբ մը, որ աղէկ դիտող անձ մը պիտի զարմանար անոր անտարբեր դիմաց վրայ զայն տեսնելու:

— Ո՛հ, այո՛, պարոն, աբբային ստորերկրեայ բանտը գրեթէ քառասուն և հինգ կամ յիսուն ոտք հեռաւորութիւն ունէր Պոնաբարդական հին գործակալի մը բանտէն, որ 1615ին Յափշտակչին դարձին ամենէն աւելի օգնողներէն մէկը, և խիստ յանդուգն ու վտանգաւոր մարդ մ՚էր...:

— Ստո՞յգ կ՚ըսէք, ըսաւ Անգղիացին:

— Այո՛, պատասխանեց Պ. տը Պօվիլ. 1816ին կամ 1817ին այն մարդը տեսնելու առիթն ունեցայ, և իր ստորերկրեայ բանտին մէջ զինուորներով կ՚իջնէին. այն մարդը խորին ազդեցութիւն մը ըրաւ սրտիս և ես ամենևին պիտի չմոռնամ անոր գիմաց դծագրութիւնը:

Անգղիացին գաղտնապէս ժպտելով ըսաւ.

— Այն երկու բանտերը ինչ եղան ըսէք, պարոն:

— Յիսուն քայլ հեռաւորութեամբ իրարմէ բաժնուած էին, բայց կ՚երևի թէ այն Էտմոն Տանթէսը...:

— Այն վտանգաւոր մարդուն անունը...:

— Էտմոն Տանթէս էր: Կ՚երևի թէ այն Էտմոն Տանթէսը դրացիներ ձեռք ձգեր կամ շիներ է. վասն զի պետնափոր ձանբայ մը երևան ելաւ, որուն միջոցաւ բանտարկեալները իրարու կը հաղորդակցէին:

— Այդ պետնուղին անշուշտ փախչելու նպատակաւ բացուած էր:

— Ճիշտ այդպէս, բայց ի՛ մեծ դժբաղդութիւն բանտարկեալներուն՝ աբբայ Ֆարիան յանկարծ ընդարմացմամբ կը մեռնի:

— Կը հասկընամ, այս բանս իրենց փախչելու խորհրդին արգելք եղած է:

— Մեռնողին համար, այո՛, պատասխանեց Պ. տը Պօվիլ, բայց ոչ ապրողին համար. ընդհակառակն՝ Տանթէս աբբային մահը իր փախուստը փութացընելու միջոց մը ըրեր էր, անշուշտ կարծեր էր որ Իֆ դղեակին մեռեալ բանտարկեալները հասարակ գերեզմանատան մը մէջ կը թաղուին. ուստի մեռեալը իր սենեակը կը փոխադրէ, անոր տեղ ինքը պարկին մէջ կը մտնէ, և թաղման վայրկենին կ՚ըսպասէ:

— Խիստ վտանգաւոր միջոց մ՚է այդ, և իր քաջասրտութիւնը կը յայտնէ, կրկնեց Անդղիացին:

— Արդէն ըսի ձեզ, պարոն, թէ խիստ վտանգաւոր մարդ մ՚էր. բարեբաղդաբար ինքնին ազատեց կառավարութիւնը անոր իրեն համար ունեցած երկիւղէն:

— Ի՞նչ կերպով:

— Ի՞նչպէս, չհասկըցա՞ք:

— Ո՛չ:

— Իֆ դղեակը դերեզմանատուն չունի. մեռեալները ոտքին երեսէն և վեց քիլօնոց դունդ մը կապելով՝ պարզապէս ծովը կը նետեն:

— Եաքը՞, հարցուց Անդղիացին հասկընալու դժուարութիւն ցուցընելով:

— Եաքը՛, ոտքին երեսէն և վեց քիլօնոց դունդ մը կապելով ծովը նետեցին ղինքը:

— Ի՞նչ կ՚ըսէք:

— Այո՛, պարոն, շարունակեց տեսուչը: Կրնաք հասկընալ թէ վախտականին զարմանքը ինչ աստիճան եղաւ երբ ժայռերուն վրայէն վար գահավիժիլը ղղայ: Կ՚ուզէի նոյն վայրկենին անոր դէմքը տեսնել:

— Դժուար պիտի ըլլար այդ բանը:

— Հոգ չէ՛, ըսաւ Պ. տը Պօվիլ, որուն երկու հարիւր հազար ֆրանքը ազատելու ստուգութիւնը ղինքը ուրախ կ՚երևցընէր, հոգ չէ, ես մտօքս կ՚երևակայեմ:

Այս ըսելով սկսաւ քրքջիլ:

— Ատոյգ է, ըսաւ Անդղիացին:

Եւ սկսաւ ինքն ալ Անդղիացւոյ մը պէս ծիծաղիլ, այսինքն ականջներուն ծայրովը:

— Ուրեմն, շարունակեց Անդղիացին՝ անորմէ առաջ իր ծիծաղը զսպելով, ուրեմն փախտականը խեղդուեցաւ:

— Պատուականաբար:

— Այս կերպով դղեակին կառավարիչը կատաղիէ մը և մեանգամայն խենթէ մը ազատեցաւ ուրեմն:

— Ատուկիւ:

— Եւ այս դիպուածին վրայ յայտարարութեան մը պէս բան մը հրատարակել պէտք էր:

— Այո՛, անոր մահուան յայտարարութիւնը հրատարակեցինք: Տանթէսի ազգականները՝ եթէ ունի՝ կրնային անոր մեռեալ կամ կենդանի ըլլալը դիտնալու հետաքրքրութիւնն ունենալ:

— Այդ կերպով հիմա անոնց սիրտը կը հանդարտի եթէ անոր ունեցածը ժառանգած են. վասն զի ալ մեռած է ան:

— Այո՛, այո՛, և երբ որ ուզեն՝ վկայագիր մը տալու պատրաստ ենք:

— Տանթէսի գործը լմընցած է, ըսաւ Անդղիացին, հիմա գտնանք մեր արձանագրքին:

— Ատոյգ է. կը ներէք, պարոն. Տանթէսի պատմութիւնը գմեզ մեր նպատակէն հեռացուց:

— Ի՞նչ բանի համար ներումն կը խնդրէք. ընդհակառակն այդ պատմութիւնը շատ հետաքրքրական երևցաւ ինձ:

— Իրօք այնպէս է: Հիմա կը բաղձաք ուրիշն տեսնել այն ողորմելի աբբային վերաբերեալ տեղեկութիւնները, որ խիստ քաղցրաբարոյ մէկն էր:

— Այո՛, շատ պիտի ուրախանամ:

— Դահլիճս եկէք որ ցուցընեմ ձեզ:

Երկուքնին ալ Պ. տը Պօվիլի դահլիճը մտան:

Ամեն բան կատարեալ կարգաւ տեղաւորուած էր. ամեն արձանագրութիւն իր թուովը նշանակուած և ամեն վերաբերեալ թուղթերը իր խորշին մէջ զետեղուած էին: Տեսուչը իր թևաթոռին վրայ Անդղիացին նստեցուց, Իֆ դղեակին արձանագիրքը և անոր վերաբերեալ թուղթերը անոր առջևը դրաւ, և ապատ թողլով զան որ ուզածին պէս թուղթերը դարձընէ, ինքը իր անկիւնը քաշուեցաւ իր օրագիրը կարդալու:

Անդղիացին աբբայ Ֆարիային վերաբերեալ թուղթերը դիւրութեամբ գտաւ. բայց կ՚երևի թէ Պ. տը Պօվիլի իրեն պատմած պատմութիւնը իր հետաքրքրութիւնը շարժած էր. վասն զի աբբային պատմութիւնը կարդալէն ետև՝ թուղթերը սկսաւ դարձը-

նել մինչև որ Էտմոն Տանթէսի թուղթերուն ծրարին հասաւ: Անոր մէջ ամեն բան գտաւ. ամբաստանութեան նամակը, հարցափորձի նկարագրութիւնը, Մորէլի աղերսագիրը և Պ. Վիլֆորի ծանօթութիւնները կարգաւ դրեր էին: Կամաց մը ամբաստանութեան նամակը ծալեց, ծոցը դրաւ, հարցափորձի նկարագրութիւնը կարդաց, և նայեցաւ որ անոր մէջ Նուարթիէի անունը յիշուած չէր, 10 ապրիլ 1815 թուականով Մորէլի աղերսագիրը աչքէ անցուց, որու մէջ նաւատէրը Վիլֆորի խորհրդովը Տանթէսի՝ Կայսեր օգտին համար ըրած ծառայութիւնները չափազանցօրէն կը պատմէր, որոնք Վիլֆորի վկայութիւնները կը հաստատէին: Այն ատեն ամեն բան հասկըցաւ: Վիլֆոր Նաբոլէոնին ուղղուած այս նամակը պահելով թագաւորութեան երկրորդ վերանորոգութեան ժամանակ թագաւորի գործակալին ձեռքը սոսկալի զէնք մը եղեր էր: Ուստի Անգղիացին չզարմացաւ ամենևին երբ թուղթը դարձընելով այս ծանօթութիւնը տեսաւ, որ իր անուան դիմացը տողակալի մէջ գրուած էր:

ԷՏՄՕՆ ՏԱՆԹԷՍ	Նաւաստի Պոնաբարդական մը, որ Նաբոլէոնին Էլպա կղզիէն դառնալուն մեծ ջանք ըրած է: Խիստ գաղտուկ տեղ պահուի, եւ մեծ զգուշութեամբ հսկուի:

Այս տողերուն տակը ուրիշ գրով գրուած էր այս խօսքերը.

«Վերնագոյն ծանօթութիւնը տեսանք. անկարելի է բան մը ընել»:

Միայն թէ տողակալին ծանօթութեան գիրը Մորէլի աղերսագրին տակը գրուած վկայութեան գրին հետ բաղդատելով, նայեցաւ որ երկու գիրն ալ իրարու կը նմանին, այսինքն երկուքն ալ Վիլֆորի ձեռօք գրուած էին:

Իսկ տողակալին վարը գրուած ծանօթութիւնը կարդալով Անգղիացին հասկըցաւ որ տեսուչ մը Տանթէսի վիճակին վրայ սակաւ կարեկցութիւն ունենալով դրած էր, բայց վերնագոյն ծանօթութիւնները կարդալով՝ անկարելի եղեր էր իր կարեկցութիւնը 'ի գործ դնել:

Ինչպէս որ ըսինք՝ տեսուչը անոր հաճելի ըլլալու և աբբայ

Ֆարիային աշակերտը իր խուզարկութեանց մէջ չնեղելու համար՝ անոր քովէն հեռացեր էր և Տրաբօ Պլան անունով օրագիրը կը կարդար:

Ուստի Անգղիացին ամբաստանութեան նամակին ծալելն ու ծոցը դնելը չտեսաւ, այն նամակը, որ Րէզէրվի ձողաբարձին տակը գրուած էր, և Մարսիլիոյ նամակատան դրոշմովը փետրուար 27ին երեկոյեան ժամը վեցին ժողվուած նամակներէն ըլլալը կը ցուցընէր:

Բայց այս ևս պէտք է ըսել, որ եթէ տեսուչը տեսած իսկ ըլլար, այն թուղթէն աւելի իր երկու հարիւր հազար ֆրանքը յարգելով՝ Անգղիացիին ըրածին ամենևին դէմ պիտի չդնէր, թէև խիստ անկանոն գործ մ'էր ըրածը:

— Շնորհակալ եմ, ըսաւ վերջապէս Անգղիացին աղմուկով մը արձանագիրքը գոցելով: Ուզածս գտայ. հիմա ես պէտք եմ խոստմանս վրայ կենալ. փոխանակագիրները մեր վրայ դարձուցէք միայն ու ստակին ընդունելնուդ համար ստորագրեցէք, և ես պատրաստ եմ գումարը հատուցանել:

Իր տեղը Պ. տը Պօվիլի տուաւ, որ շուտով փոխանակագիրները Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան վրայ դարձուց, ինչ ատեն Անգղիացին թղթադրամները կը համրէր:

ԳԼՈՒԽ Ժ

ՄՈՐԷԼԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Մորէլի վաճառատունը ճանչցողներէն անոնք որ քանի մը տարի առաջ Մարսիլիայէն մեկնելով, այս միջոցիս վերստին հոն մտնէին, մեծ փոփոխութիւն մը պիտի գտնէին:

Յաջողութեան ճանբուն վրայ եղող այն կենդանութեան, զուարթութեան և երջանկութեան տեղ, պատուհանաց վարագոյրներուն ետեւէն երեւցող այն զուարթ դէմքերուն տեղ, ականջնուն ետին գրիչ մը մնած՝ նրբանցքներուն մէջէն անցնող այն զբաղեալ գրագիրներուն տեղ, և թղթաբերներուն աղաղակներուն ու ծիծաղներուն թնդացող բակերուն մէջ զետեղուած ապրանաց հակերուն տեղ, այն մերկ նրբանցքներուն և դատարկ բակերուն մէջ տխուր և մահատիպ երեւոյթ մը անմիջապէս իրենց աչքին պիտի զարնէր։

Վաճառատան բազմաթիւ պաշտօնեաներէն միայն երկու հոգի մնացեր էին, որոց մէկը քսան երեք կամ քսան ու չորս տարեկան երիտասարդ մ'էր Էմմանուէլ Ռէյմօնտ անունով, որ Մորէլի աղջկան սիրահարած ըլլալով՝ չուզեր էր վաճառատունէն մեկնիլ, թէև իր ծնողքը իրենց բոլոր ջանքը 'ի գործ դրեր էին զան անկէ հեռացընելու. իսկ միւսն էր միականի ծերուկ մը Գոգլէս անունով, որուն այս մականունը՝ այս մեղուանման փեթակին ժամանակաւ լցուած և այսօր գրեթէ ամայի մնացած վաճառատան երիտասարդները դրած էին, և այնպէս աղէկ իր բուն անուան տեղը բռներ էր, որ հաւանականաբար պիտի չդառնար չնայէր, եթէ այսօր զինքը իր բուն անուամբը կանչէին։

Գոգլէս Պ. Մորէլի ծառայութեան մէջ մնալով՝ իր ամբողջ վիճակին համեմատ զարմանալի փոփոխութեան մը ենթակայ եղեր էր։ Գանձապետութեան միանգամայն ծառայութեան աստիճանին հասեր էր։

Սակայն ինքը Գոգլէս ամենևին փոխուած չէր, այլ միշտ բարի, համբերող, անձնանուէր, և իր հաշուոց մէջ անողոքելի էր. թէև միայն Պիւթագորեան աղիւսակը կը ճանչնար, և այն՝ մատերուն ծայրովը, սակայն ամեն մարդու մինչև Պ. Մորէլի հաշիւները գլուխ կը հանէր, ամենևին չխաբուելով իր դիմացինին զինքը սխալեցնելու համար ըրած ո՛ր և իցէ փորձերէն։

Մորէլի վաճառատան վրայ պատող ընդհանուր տխրութեան մէջ Գոգլէս միայն անկարեկիր կ'երևէր. բայց ընթերցողք թող չխաբուին երբէք, այս անտարբերութիւնը սիրոյ նուազութենէն չէր, այլ ընդ հակառակն անդրդուելի համոզումէ մը յառաջ կու-

գար։ Այն մուկերուն պէս՝ որոնք ծովուն վրայ կորնչելու համար բաղդէն դատապարտուած նաւէն քիչ քիչ կը հեռանան, և անոր խարիսխը քաշելու ատեն՝ այն անձնասէր հիւրերուն բոլորովին մեկնելուն պէս՝ այն գրագիրներուն և պաշտօնեաներուն խումբը, որոց ապրուստը նաւատէրին վաճառատունէն էր, քիչ քիչ գրատուն և մթերանոց բոլորովին դատարկ թողուցին, և Գոգլէս անոնց հեռանալը կը տեսնէր առանց անոնց մեկնելուն պատճառը իմանալու համար հոգ ընելու. Գոգլէս իր հաշիւները գիտէր միայն, և անոնց համար պատասխանատու էր. քսան տարիէ 'ի վեր որ Մորէլի վաճառատան մէջ կը գտնուէր, վճարումներուն այնպիսի կանոնաւոր կերպով ըլլալը տեսնելով՝ չէր կրնար ամենևին համոզուիլ որ այս կանոնաւոր ընթացքը երբէք կրնայ կասիլ, և վճարումները յապաղիլ, ինչպէս յորդաջուր գետէ մը բանուած աղացք մը ունեցող աղօրեպան մը չհամոզուիր որ գետին ջուրը կրնայ քաշուիլ։ Իրօք՝ մինչև այն ժամանակը Գոգլէսի համոզման ընդդիմահարող բան մը պատահած չէր։ Աւարտեալ ամսոյ վերջին վճարումները ամենայն ճշդութեամբ կատարեր էին։ Գոգլէս հաշիւներուն մէջ Պ. Մորէլի ըրած եօթանասուն սանթիմի մէկ սխալը գտնելով, նոյն օրը այն տասն և չորս սուն Պ. Մորէլին տարաւ տուաւ, որ վշտալի ժպիտով զանոնք ընդունելով, և կոյցես դատարկ գզրոցի մը մէջ նետելով ըսաւ.

— Շատ աղէկ, Գոգլէս, դուն արկղապետներուն մէջ մարգարիտ մ'ես։

Եւ Գոգլէս այս խօսքէն խիստ գոհ ըլլալով իր տեղը վերադարձեր էր. վասն զի Պ. Մորէլի այն գովեստը թէ Մարսիլիոյ առաքինի մարդոց մարգարիտն է, յիսուն թալերի նուէրէ մը աւելի Գոգլէսի սիրտը կը փաղաքշէր։

Բայց վերջին ամսոյ պատուաւոր վճարումէն ետև՝ Պ. Մորէլ խիստ մտատանջ ժամեր անցուցեր էր. այն վճարման համար իր ամեն ճիգը 'ի գործ դրեր էր, և վախնալով որ չըլլայ թէ իր ստակի սղութեան լուրը Մարսիլիոյ մէջ տարածուի, երբ իր այսպէս վերջին օգնութեան դիմելը տեսնեն, իր կնոջ և աղջկան

քանի մը գոհարները և իր արծաթեղէններուն մէկ մասը վաճառելու համար Պօքէրի տօնավաճառին գացեր էր։ Այս զոհողութեամբ այս անգամ ևս Մորէլի վաճառատունը իր վճարումները խիստ պատուաւոր կերպով ըրեր էր. բայց արկղը բոլորովին դատարկ մնացեր էր։ Վարկատուները՝ եղած տարաձայնութենէն վախնալով՝ իրենց սովորական ինքնասիրութեամբը քաշուեր էին. ներկայ ամսոյ 15ին Պ. տը Պօվիլին վճարելի հարիւր հազար ֆրանքին, և յետագայ ամսոյ 15ին մնացեալ հարիւր հազար ֆրանքին վճարման դէմ Պ. Մորէլ իրօք ուրիշ յոյս չունէր, բայց եթէ Փարաօն նաւուն դարձը, որուն ճանբայ ելնելը ուրիշ նաւէ մը իմացեր էր, քանզի միատեղ խարիսխը քաշելով միւս նաւը անվնաս նաւահանգիստը հասեր էր։

Բայց այս նաւը Փարաօն նաւուն պէս Կալկաթայէն մեկնելով, արդէն տասն և հինգ օրէ 'ի վեր Մարսիլիա հասեր էր, իսկ Փարաօնին վրայօք ամենևին լուր մը չկար։

Իրաց այս վիճակին մէջ՝ Հոմի Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան կողմէն ղրկուած անձը Պ. Մորէլի տունը ներկայացաւ՝ Պ. տը Պօվիլի հետ այն երևելի գործը կատարածին հետևեալ օրը։

Էմմանուէլ անոր առջևն ելաւ. այս երիտասարդը, որ ամեն նոր եկողին դէմքէն կը վախնար, վասն զի այս նոր եկողը նոր պարտատէր մը կ'ըլլար, որ իրեն անհանգստութիւն պատճառելով վաճառատան տէրը կը հարցնէր, այս երիտասարդը, կ'ըսենք, իր տէրը այս այցելութեան նեղութենէն խնայելու համար՝ հարցուց անոր թէ ինչ կը խնդրէ. բայց այցելուն իմացուց իրեն թէ Պ. Էմմանուէլի հետ գործ չունի, այլ Պ. Մորէլի հետ անձամբ կ'ուզէ խօսիլ։

Էմմանուէլ հառաչանք մը հանելով Գոգլէսը կանչեց, և հրամայեց անոր որ օտարականը Պ. Մորէլի քովը տանի։

Գոգլէս օտարականին կ'առաջնորդէր. սանդուխին վրայ տասն ու վեց կամ տասն ու եօթն տարեկան գեղեցկադէմ նորատի աղջիկ մը տեսան, որ վշտալից դէմքով օտարականին կը նայէր։

Գոգլէս աղջկան դիմաց վրայ այն անհանգստութեան նշանը չնշմարեց, սակայն օտարականը աղէկ դիտեր էր զայն։

— Պ. Մորէլ իր դահլճին մէջն է, այնպէս չէ՞, օրիորդ Ժիւլի, հարցուց արկղապետը։

— Այո՛, կամ գէթ այնպէս կարծեմ, ըսաւ աղջիկը վարանելով. գնա՛ առաջ նայէ, Գոգլէս, թէ որ հայրս հոն է, իմացուր որ այս պարոնը զինքը կ'ուզէ։

— Անօգուտ բան է իմացընելը, օրիորդ, պատասխանեց Անգղիացին. վասն զի Պ. Մորէլ անունս չգիտեր։ Միայն թէ՝ այս բարի մարդը կրնայ ըսել անոր թէ ես Հոմի Թոմսըն և Ֆրէնչ անուն վաճառատան առաջին գրագիրն եմ, որոյ հետ պարոն հօրդ վաճառատունը յարաբերութեան մէջ է։

Նորատի աղջիկը դեղնեցաւ և իր ճանբան շարունակեց դէպ 'ի վար իջնելու, մինչ ատեն Գոգլէս և օտարականը վեր կ'ելնէին։

Աղջիկը Էմմանուէլի եղած գրատունը մտաւ, և Գոգլէս բանալիով մը, զոր իր քովը կը պահէր, և որմէ յայտնի կ'երևէր որ իր տիրոջը քով ազատ մուտք ունէր, երկրորդ դստիկոնին դաւթին անկիւնը դուռ մը բացաւ, օտարականը նախասենեկի մը մէջ մտցուց, ուրիշ դուռ մը բացաւ, և ինքը միայն մտնելով վերստին գոցեց զայն, և Թոմսըն ու Ֆրէնչ վաճառատան կողմէն ղրկուած անձը վայրկեան մը հոն առանձին թողլէն ետև՝ ետ դառնալով նշան մը ըրաւ անոր թէ կրնայ մտնել։

Անգղիացին ներս մտնելով՝ Պ. Մորէլը իր գրասեղանին առջևը նստած և իր վաճառատան արձանագրքին առջևը գունատեալ գտաւ, որու մէջ իր անցեալը արձանագրուած էր։

Պ. Մորէլ օտարականը տեսնելով՝ արձանագիրքը գոցեց, ոտք ելաւ, աթոռ մը ներկայացուց անոր, և երբ օտարականին նստիլը տեսաւ, ինքն ևս նստաւ։

Տասն ու չորս տարուան մէջ բարի վաճառականը խիստ փոխուեր էր. պատմութեանս սկիզբը երեսուն և վեց տարեկան ըլլալով՝ գրեթէ յիսուն տարեկան հասակին մէջ պիտի մտնէր։ Իր մազերը ճերմկեր էին, ճակատը թախծալից կնճիռներով խռովեր էր. վերջապէս իր նայուածքը, որ ժամանակաւ այնպէս հաստատ և համարձակ էր, հիմա յողդողդ և վարանեալ կ'երևէր, և կարծես թէ միշտ կը վախնար գաղափարի մը կամ մարդու մը վրայ կենալու։

Անգղիացին յայտնի շահախառն հետաքրքրութեամբ անոր երեսը նայեցաւ ։

— Պարոն , ըսաւ Մօրէլ , որուն սրտի անձկութիւնը կրկնապատկած կ'երեւէր օտարականին իր վրայ ըրած զննութիւնը , ինծի հետ խօսի՞լ կը փափաքիք ։

— Այո՛ , պարոն . անշուշտ գիտէք որու կողմէն գալս ։

— Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան կողմէն , գոնէ այսպէս ըսաւ ինձ արկղապետս ։

— Ստոյգ ըսեր է , պարոն ։ Թոմսըն և Ֆրէնչ վաճառատունը այս և յետագայ ամսոյ մէջ երեք կամ չորս հարիւր հազար ֆրանք պարտք ունի վճարելու Գաղղիոյ մէջ , և ձեր օրինաւոր ճշդութիւնը ճանչնալով , ձեր ստորագրութեամբը գտնուած բոլոր վճարատոմսերը ժողվեց , և ինձ յանձնեց որ նոյն վճարատոմսերուն հետզհետէ եկած պայմանաժամերուն գումարները ձեզմէ առնելով իր պարտքը հատուցանեմ ։

Մօրէլ խորին հառաչանք մը հանեց և ձեռքը քրտինքով պատած ճակատին տարաւ ։

— Ուրեմն , պարոն , հարցուց Մօրէլ , իմ ստորագրութեամբս փոխանակագիրներ ունի՞ք ձեռքերնիդ ։

— Այո՛ , պարոն , բաւական մեծ գումարի մը համար ։

— Ո՞րչափ գումար է , հարցուց Մօրէլ այնպիսի ձայնով մը որ կը ջանար աներկիւղ երեւցնել ։

— Նախ՝ այս երկու հարիւր հազար ֆրանքը ունիմ , ըսաւ Անգղիացին ծոցէն ծրար մը հանելով , զորոնք բանտերու տեսուչ Պ. տը Պօվիլ մեր վաճառատան վրայ դարձուցած է ։ Պ. տը Պօվիլին այս պարտքերնիդ կը ճանչնա՞ք ։

— Այո՛ , պարոն , հինգ տարիէ 'ի վեր հարիւրին չորս ու կէսով քովս շահու դրած է ։

— Եւ ե՞րբ պիտի վճարուի ։

— Կէսը ներկայ ամսոյս 15ին , և կէսը հետեւեալ ամսոյ 15ին ։

— Ճիշդ այդպէս . ասկէ զատ՝ երեսուն երկու հազար հինգ հարիւր ֆրանք կայ ներկայ ամսոյս վերջը վճարելի . ասոնք ալ ձեզմէ ստորագրուած և երրորդ պարտատէրէ մը մեր հրամանին դարձուցած փոխանակագիրներ են ։

— Ասոնք ես կ'ընդունիմ , ըսաւ Մօրէլ , որուն դիմաց վրայ ամօթխածութեան կարմրութիւնը պատեր էր՝ մտածելով որ իր կենաց մէջ առաջին անգամ գուցէ պիտի չկարենար իր ստորագրութեան պատիւը պահել ։ Ամէնը ասո՞նք են ։

— Ո՛չ , պարոն , հետեւեալ ամսոյ վերջը վճարելի գրեթէ յիսուն և հինգ հազար ֆրանք ևս կայ , որոնք Մարսիլիոյ Բասգալի վաճառատունը և Ուիլտ ու Թըրնըրի վաճառատունը մեր վրայ դարձուցած են , և ընդ ամէնը երկու հարիւր ութսուն եօթն հազար հինգ հարիւր ֆրանք կ'ընէ ։

Այս հաշիւը ներկայացուցած ժամանակ թշուառ Մօրէլին զգացածը նկարագրելը անկարելի է ։

— Երկու հարիւր ութսուն եօթն հազար հինգ հարիւր ֆրանք , կրկնեց նաւատէրը մեքենապէս ։

— Այո՛ , պարոն , պատասխանեց Անգղիացին . . . բայց , շարունակեց վայրկեան մը լուռ կենալէն ետև , յայտնի խօսիմ , Պ. Մօրէլ , մինչև հիմա ձեր ունեցած անստգիւտ ուղղութեան համբաւը տարածուած ժամանակը Մարսիլիոյ հասարակութեան մէջ տարաձայնութիւն մը կը շրջի որ ձեր գործոյ տակէն պիտի չկրնաք ելնել ։

Գրեթէ բիրտ կերպով Անգղիացւոյն այսպէս բացուելուն վրայ Մօրէլ սաստիկ դեղնեցաւ ։

— Պարոն , ըսաւ անոր , քսան ու չորս տարիէ 'ի վեր որ հօրմէս ինծի անցած վաճառատան կառավարութիւնը առած եմ , զոր հայրս ալ երեսուն և հինգ տարի կառավարած է , մինչև հիմա Մօրէլի և Որդւոց ստորագրութեամբ պարտատոմսակ մը ներկայացուած չէ մեր արկղին առանց վճարուելու ։

— Այո՛ , ես ալ գիտեմ , պատասխանեց Անգղիացին . բայց իբր պատուաւոր մարդ պատուաւոր մարդու համարձակ խօսեցէք , պարոն . այս գումարն ևս նոյն ճշդութեամբ պիտի վճարէ՞ք ։

Մօրէլ սարսուեցաւ և իր խօսակցին երեսը նայեցաւ , որ այնպիսի համարձակութեամբ իրեն հետ կը խօսէր ։

— Այդպիսի համարձակ հարցման , ըսաւ անոր , պէտք է համարձակ պատասխան տալ ։ Այո՛ , պարոն , պիտի վճարեմ , եթէ

ինչպէս որ կը յուսամ՝ նաւս անվտանգ մեր նաւահանգիստը հասնի. վասն զի անոր գալուստը պիտի վերադարձընէ ինձ այն վարկը, զոր հետզհետէ գլուխս եկած դժբաղդութիւններով կորսընցուցի. բայց եթէ դժբաղդութեամբ Փոթոռն նաւը, որ իմ վերջին ապաւէնս է, չդայ . . . :

Թշուառ նաւատերին աչքը արտասուօք լեցուեցան :

— Ի՞նչ պիտի ընէք, Հարցուց Անդղիային, եթէ ձեր այն վերջին ապաւէնը չվերադառնայ :

— Ի՞նչ պիտի ընեմ, շարունակեց Մորէլ, ո՛հ, պարոն . . . խիստ է ըսելը. սակայն դժբաղդութեան արդէն սովրած ըլլալով պէտք է ամօթոյ ալ սովորիլ . . . ի՞նչ կրնամ ընել. կարծեմ թէ վճարումներս կասեցընելու պիտի պարտաւորիմ :

— Բայց ամենևին բարեկամ մը չունիք որ կարենայ այս պարագայիս մէջ օգնել ձեզ :

Մորէլ վշտալից ժպտեցաւ :

— Աղէկ գիտէք, պարոն, ըսաւ անոր, որ մարդս գործի մէջ ամենևին բարեկամ չունի, այլ թղթակիցներ :

— Սաղդ է, մրմնջաց Անդղիային : Ուրեմն միայն մէկ յոյս ունիք :

— Միայն մէկ :

— Եւ այն վերջի՞ն յոյսերնիդ է :

— Այո՛ :

— Եւ եթէ այդ յոյսը պարապն ելնէ . . . :

— Կորսուած եմ, պարոն, բոլորովին կորսուած :

— Ձեր տունը դալու ժամանակս՝ նաւ մը նաւահանգիստը կը մտնէր :

— Գիտեմ, պարոն. երիտասարդ մը՝ որ դժբաղդութեանս մէջ ինձ հաւատարիմ մնաց, իւր ժամանակին մէկ մասը վաճառատանս վերի յարկը եղած հովանոցը կ'անցընէ՝ այն յուսով որ ամենէն առաջ ինքը վազէ ինձ բարի լուր մը տալու : Այդ նաւուն հասնիլը արդէն այն երիտասարդէն լսացայ :

— Եւ ձերը չէ՞ այն նաւը :

— Ո՛չ. Պորտըլէզի մը ծէբճոփ անուն նաւն է, որ նոյնպէս Հնդկաստանէն կու գայ, բայց իմս չէ :

— Գուցէ Փոթոռնը տեսած է, և ձեզ լուր մը կը բերէ :

— Ստոյգը ըսեմ, պարոն. անստուգութեան մէջ մնալու չափ եռակայմ նաւուս վրայ լուր մը առնելու կը վախնամ : Անստուգութիւնը գոնէ ակնկալութիւն մը կու տայ :

Այնուհետև Պ. Մորէլ կամաց ձայնով մը յաւելցուց.

— Այս յապաղումը բնական չէ. Փոթոռնը փետրուարի 5ին Գալկաթայէն մեկներ է, մէկ ամիսէն առելն ժամանակէ՝ ի վեր հոս ըլլալ պէտք էր :

— Ի՞նչ կայ, ըսաւ Անդղիային ականջ դնելով, այս ձայները ի՞նչ կը նշանակեն :

— Ո՛հ, ցէր Աստուած, ո՛վ ցէր Աստուած, պոռաց Մորէլ դունատելով, ինչ կայ արդեօք տակաւին :

Իրօք՝ սանդուխին վրայ ձայներ կը լսուէին. ումանք կ'երթային և ումանք կու գային, և վերջապէս ցաւալի ձայն մը լսուեցաւ :

Մորէլ ոտք ելաւ որ դուռը բանայ. բայց իւր այժը կորսընցընելով վերատին իւր աթոռին վրայ ինկաւ :

Երկու խօսակիցները իրարու դէմ մնացին. Մորէլ իւր բոլոր անդամներովը կը դողդղար, և օտարականը խորին վշտակցութեան նշաններով անոր երեսը կը նայէր : Ձայները գադրեր էին, սակայն կ'երևէր որ Մորէլ բանի մը կ'ըսպասէր. քանզի անշուշտ այն ձայները պատճառ մը ունէին և հետևութիւն մը ունենալու էին :

Օտարականին այնպէս երևցաւ որ բազմութիւն մը կամաց մը սանդուխէն վեր կ'ելնէ, և անոնց քայլերուն ձայնը պատին մէջ դադրեցաւ :

Առաջին դրան փականքին մէջ բանալիք մը խօթեցին, և դրան իւր ծխնեաց վրայ դառնալուն ձայնը լսուեցաւ :

— Այն դրան բանալին միայն Գոզլէսին և Թիւլիին քովը կը պտնուի, մրմնջեց Մորէլ :

Շատ չանցաւ՝ երկրորդ դուռն ալ բացուեցաւ, ու դունատեալ և արտասուաթոր այտերով նորատի աղջիկը երևցաւ :

Մորէլ դողդղալով ոտք ելաւ, և իւր աթոռին թևին կռթնեցաւ, վասն զի ոտքի վրայ կանգնելու ոյժ չունէր : Իւր աղջիկը հարցուփորձ ընել կ'ուզէր, բայց իւր ձայնը չելաւ :

— Ո՛հ, հայր իմ, ըսաւ աղջիկը ձեռքերը միացընելով, ներէ աղջկանդ դժբաղդութեան մը գուժաբերն ըլլալու:



Մորէլի երեսը սոսկալի դեղնութիւն մը պատեց, Ժիւլի անոր գրկաց մէջ նետուեցաւ:

— Ո՛ հայր իմ, հա՛յր իմ, ըսաւ աղջիկը, մի՛ յուսահատիր:

— Ուրեմն Փարաոն կորսուեր է, հարցուց Մորէլ հեղձամղձուկ ձայնով մը:

Նորատի աղջիկը չպատասխանեց, բայց հաստատական նշան մը ըրաւ իր գլխովը, զոր իր հօրը կուրծքին վրայ կռթնցուցեր էր:

— Բայց մէջի նաւաստիները, հարցուց Մորէլ:

— Ազատեր են, ըսաւ աղջիկը, նաւահանգիստը մտնող Պորտըլէզի նաւէն ազատեր են:

— Շնորհակալ եմ, ո՛վ Աստուած, ըսաւ Մորէլ, որ գոնէ միայն զիս կը պատժես:

Անգղիացին որչափ և անտարբեր կը ջանար երևիլ, սակայն արտասուք մը իր արտևանունքը թրջեց:

— Ներս մտէք, ըսաւ Մորէլ, ներս մտէք, վասն զի կարծեմ թէ ամենքդ ալ դրան առջևն էք:

Իրօք՝ այս խօսքերուն վրայ տիկին Մորէլ հեծկլտալով ներս մտաւ և Էմմանուէլ անոր ետևէն կու գար. ասոնց ետևը նախասենեկին մէջ եօթն կամ ութ կիսամերկ նաւաստիներու խոժոռ դէմքերը կ'երևէին:

Անգղիացին այս մարդիկը տեսնելով սարսռեցաւ. քայլ մը առաջ անցաւ անոնց քով երթալու համար. բայց ինքզինքը զսպեց և ընդ հակառակն դահլճին մթագոյն և հեռաւորագոյն անկիւնը քաշուեցաւ:

Տիկին Մորէլ թևաթոռին վրայ նստաւ և իր ամուսնոյն մէկ ձեռքը իր ձեռաց մէջ առաւ, մինչ ատեն Ժիւլի իր հօրը կուրծքին կռթնած կեցեր էր: Էմմանուէլ դահլճին մէջ տեղը մնացեր էր, և կարծես թէ Մորէլի ընտանիքին և դրան առջևը կանգնող նաւաստեաց մէջ կապ մը կը կազմէր:

— Նաւը ինչպէս կորսուեր է, հարցուց Մորէլ:

— Մօտեցի՛ր, Փէնըլօն, ըսաւ երիտասարդը, և պատմէ ինչպէս ըլլալը:

Հաստատակածին արևէն խամրած ծերունի նաւաստի մը յառաջ եկաւ իր հնացեալ պլխարկը ձեռացը մէջ շրջշրջելով։

— Բարի լոյս, պ. Մորէլ, ըսաւ նաւաստին՝ իբր թէ առջի իրիկունը Մարսիլիայէն մեկնելով՝ Էքսէն կամ Թուլոնէն կը դառնար։

— Բարի լոյս, բարեկամ, ըսաւ նաւատէրը՝ չկրնալով իր արտասուաց մէջ իր ժպիտը ղսպել. ուր է նաւապետը։

— Նաւապետը հիւանդանալով Բալմա մնաց, պ. Մորէլ. բայց եթէ Աստուած ուզէ՝ բան մը պիտի չըլլայ, և քանի մը օրէն պիտի տեսնես որ քեզի և ինձի պէս առողջ վիճակի մէջ պիտի վերադառնայ։

— Շատ աղէկ . . . : Պատմէ հիմա, Բէնըլըն, ըսաւ Մորէլ։

Բէնըլըն իր բերանին մէջ ունեցած ծամախոտը աջ այտէն ձախ կողմը տարաւ, ձեռքը բերանին առջևը պրաւ, մէկ կողմ դարձաւ, սևագոյն երկար լորձունք մը ցայտեցուց նախասենեկին մէջ, մէկ ոտքը յառաջացուց, և իր աղըբերուն վրայ տատանելով սկսաւ պատմել.

— Մինչև Սպիտակ Հրուանդանին և Պոյտոր Հրուանդանին մէջ տեղը հանդիպինք՝ ութ օր հարատային արևելեան քաղցրասիրտ հողմով հանդարտութեամբ յառաջանալնէս ետև՝ Կօմար նաւապետը ինձ մօտենալով (պէտք ես դիտնալ որ ղեկը իմ ձեռքս էր) ըսաւ ինձ. — Հայր Բէնըլըն, հորիզոնին վրայ բարձրացող ամպերուն վրայ ինչ կարծիք ունիս։

Ճիշտ նոյն միջոցին ես ալ անոնց կը նայէի։

— Ի՛նչ կարծիք պիտի ունենամ, նաւապետ. կարծեմ թէ սովորականէն աւելի շուտ կը բարձրանան, և խիստ չար նպատակ ունեցող ամպեր կ'երևին։

— Ես ալ այդ կարծիքէն եմ, ըսաւ նաւապետը, ուստի միշտ պէտք եմ զգուշութիւններս՝ ի գործ դնել։ Եվնելու հողմին համար բացուած առագաստները խիստ շատ են . . . : Ո՛ւր էք, տղաք, շուտով փոխակայմերուն առագաստները և առջի եռանկիւնի առագաստը ամփոփեցէք։

Ճիշտ ժամանակին հասեր էինք, վասն զի դեռ հրամանը չպոր-

ծպրտած՝ հողմը մեր առագաստները ուռեցուց և նաւը մէկ կողման վրայ կը հակէր։

— Լաւ, պոռաց նաւապետը, առագաստները տակաւին շատ են. մեծ առագաստը ամփոփեցէք։ Հինգ վայրկեան ետքը՝ մեծ առագաստը ամփոփուեցաւ, և միայն ցուկակայմի առագաստով, թակաղաղի և անոնց վրայի փոքր առագաստներով կը քալէինք։

— Ի՞նչ կայ, հայր Բէնըլըն, ըսաւ ինձ նաւապետը, ինչո՞ղ ղլուխդ կը շարժես։

— Կը տեսնեմ որ առջևնիս ղէշ է։

— Կարծեմ թէ իրաւունք ունիս, ծեր, ըսաւ, յանկարծական հողմի մը պիտի հանդիպինք։

— Ի՞նչ կը տարակուսիս, նաւապետ. Ճշմարիտ կ'ըսեմ, այդ յանկարծական հողմը կրնայ մեծ վնասներ տալ, կատարեալ փոթորիկ մը կը նշմարեմ ես և կամ բան մը չեմ գիտեր։

Հողմը այնպէս կը յառաջանար, ինչպէս Մօնթերըտոնի աւազը կը յառաջանայ. բարեբաղդաբար գիմային մարդը զան կը ճանչնար։

— Թակաղաղի առագաստները երկու կարգ նեղցուցէք, պոռաց նաւապետը, առագաստակալներուն չուանները թուլցուցէք, առագաստները հողմին դարձուցէք, և թակաղաղները վար իջեցուցէք։

— Այդ զգուշութիւնները այն ծովերուն համար բաւական չէին, ըսաւ Անդղիացին. ես ձեր տեղը ըլլայի՝ առագաստները չորս կարգ կը սեղմէի, և ցուկակայմի առագաստը բոլորովին կ'ամփոփէի։

Անդղիացիին այս հաստատ, ազատ և յանկարծ ձայնին վրայ ամենքը սարսուեցան։ Բէնըլըն ձեռքը աչքի վրայ դրաւ, որպէսզի տեսնէ թէ ո՛վ է իր նաւապետին գործերը այնպիսի համարձակութեամբ մեղադրողը։

— Մենք առկէ աղէկը ըրինք, պարոն, ըսաւ ծերունի նաւաստին յարգական եղանակաւ մը, բոլոր առագաստները ամփոփեցինք, և նաւը առանց առագաստի կը քալէր։

— Նաւը շատ հին ըլլալուն այն վտանգին պիտի չկրնար դիմանալ, ըսաւ Անդղիացին։

— Եւ ահա այդ պատճառաւ մենք ալ կորսընցուցինք զայն։ Տասն երկու ժամ տարաբերելէն ետև՝ նաւին տակը ջուրի ճանապայ մը բացուեր էր։ — Բէնըլըն, ըսաւ ինձ նաւապետը, կարծեմ թէ պիտի ընկղմինք, բարեկամ. ղեկը ինձ տուր և դուն նաւուն յատակը իջիր։

Ղեկը առեր տուի, վար իջայ, և նայեցայ որ ջուրը երեք ոտք բարձրացեր էր։ Խակոյն վեր վազեցի պոռալով. Շուտով ջրհան ներուն վազեցէք։ Ո՛հ, ստուգիւ, արդէն շատ ուշ էր։ Սկսանք ջուրը պարպել. բայց կարծեմ թէ որչափ կը պարպէինք, այնչափ աւելի կը լեցուէր։

— Ալ չեմ կրնար, ըսի չորս ժամ աշխատելէն ետև. քանի որ պիտի ընկղմինք, թողունք որ նաւը ինքնիրեն ընկղմի. մարդս մէկ անգամ կը մեռնի։

— Այսպէս օրինակ կու տաս ընկերներուդ, վարպետ Բէնըլըն, ըսաւ նաւապետը, շատ աղէկ, սպասէ, հիմա կու գամ։

Խակոյն գնաց իր խցիկէն երկու ատրճանակ բերաւ։

— Ջրհանը ձեռքէն ձգողին ղլուխը ասոնցմով պիտի ջախջախեմ։

— Աղէկ, ըսաւ Անգղնայլին։

— Իրաւացի պատճառ մը մարդուս այժ կու տայ, շարունակեց նաւաստին, մանաւանդ որ այս միջոցիս օդը սկսեր էր բացուիլ և հողմը լչնալ. սակայն ջուրը միշտ կը բարձրանար՝ թէև քիչ և դուցէ երկու մատնաչափ մէկ ժամու մէջ, բայց վերջապէս կը բարձրանար։ Մէկ ժամու մէջ երկու մատնաչափ բարձրութիւնը ոչինչ է, բայց տասն երկու ժամու մէջ քսան ու չորս մատնաչափ կ'ընէ, և քսան ու չորս մատնաչափը երկու ոտք։ Երկու ոտք՝ երեք ալ արդէն լցուեր էր, ըսել է նաւին մէջ հինգ ոտք ջուր ունէինք։ Երբ նաւ մը իր փորին մէջ հինգ ոտք ջուր կ'ունենայ՝ չդողեալ կրնայ համարուիլ։

— Բաւական է, ըսաւ վերջապէս նաւապետը, և Պ. Մորել ղմեզ մեղադրելու տեղի չունենար այսուհետև. նաւը աղատելու կրցածնիս ըրինք, հիմա մարդիկը աղատելու համար պէտք է ջանանք։ Տղաք, մակոյկը ծովը իջեցուցէք, և կրցածնուդ չափ շուտով...։

— Մտիկ ըրէ, Պ. Մորել, շարունակեց Բէնըլըն, ամենքս ալ Փոքրոն֊ը խիստ կը սիրէինք, բայց այնչափ՝ որչափ որ նաւաստի մը իր նաւը կը սիրէ, սակայն իր մորթը անկէ աւելի կը սիրէ։ Ուստի նաւապետին կրկին հրամանին չսպասեցինք. վասն զի ստուգիւ նաւն իսկ կարծես թէ ողբալով մեզ կ'ըսէր. Գացէք շուտով, ինչո՞ւ կեցեր էք, շուտով հեռացէք. խեղճ Փոքրոն֊ը իրաւունք ունէր. վասն զի կ'ըզգայինք որ նաւը յայտնապէս կ'ընկղմէր։ Խակոյն մակոյկը ծովը իջեցուցինք, և ութերնիս ալ անոր մէջ մտանք։

Նաւապետը ամենէն վերջը իջաւ, ո՛չ, այսպէս չէ, ամենևին չուզեց նաւէն բաժնուիլ. այն առեն ես դրկեցի զան և ընկերներս նետեցի, որմէ ետև ես ալ ցատկեցի։ Ժամանակը հասեր էր. վասն զի ցատկելէս անմիջապէս ետքը՝ նաւուն յարկը այնպիսի շառաչիւնով մը խորտակեցաւ, որ կարծես թէ քառասուն և ութ թնդանօթ կրող նաւու մը միահամուռ ռմբակոծութեան ձայնը կը լսուէր։

Տասն վայրկեան ետքը՝ նախ ղլխի կողմէն ընկղմեցաւ, ետքը ետևի կողմէն, և իր պոչին ետևէն վազող շան մը պէս սկսաւ իր բոլորտիքը դառնալ, վերջապէս՝ Մնաք բարեաւ, ընկերներ, ըսաւ, պրրրրրռւ... և ամեն բան լմընցաւ. Փոքրոն֊ը անեծքևոյթ եղեր էր։

Իսկ մենք երեք օր առանց ուտելու և առանց խմելու ծովուն երեսը մնալէ ետև՝ երբ մեզմէ մէկը ուտելու համար մէջերնիս վիճակ նետելու խօսքեր կ'ընէինք, յանկարծ ֆրեգատ նաւը տեսանք և նշան ըրինք անոր. նաւը զմեզ տեսնելով՝ ղլուխը մեր կողմը դարձուց, իր մակոյկը մեզի ղրկեց, և զմեզ ազատեց։ Ահա, Պ. Մորել, պատահած դժբաղդութեան ճիշտ պատմութիւնը այս է, որուն համար պատուոյս և նաւաստիութեանս վրայ երդում կ'ընեմ։ Այնպէս չէ՞, ընկերներ։

Նաւաստեայ հաւանութեան միահամուռ քրթմնջիւնը կը ցուցնէր որ պատմիչին մանրամասն նկարագրութիւնը ճշմարիտ էր։

— Շատ աղէկ, բարեկամներ, ըսաւ Պ. Մորել, ամենքդ ալ ազնիւ մարդիկ էք, և ես առաջուց գիտէի որ դժբաղդութեանդ

միակ պատճառը ճակատագիրս է ։ Աստուծոյ կամքն այս է և ո՛չ մարդոց սխալանութիւնը․ պաշտենք ուրեմն Աստուծոյ կամքը ։ Հիմա, ըսէք՝ ո՞րչափ է ձեր ամսականներէն մնացեալ պահանջքը ։

— Ո՛չ, Պ. Մորէլ, այդ խօսքը մի՛ ըներ մեզ ։

— Ընդ հակառակն՝ այդ խօսքը ամենէն կարևոր է ինձ, ըսաւ նաւատէրը տխուր ժպիտով մը ։

— Շատ աղէկ, ուրեմն երեք ամսական կը պահանջենք, ըսաւ Բէնըլոն ։

— Գօգլէս, այս ազնիւ մարդոց իւրաքանչիւրին երկու հարիւր ֆրանք վճարէ ։ Բարեկամներ, ուրիշ ժամանակ կրնայի ձեզ տրուած դումարը աւելցընել․ բայց ներկայ ժամանակս դժբաղդ է ինձ համար, և ձեռքս մնացած քիչ մը ստակը իմս չէ ։ Ուստի ներեցէք ինձ, և այս պատճառաւ չըլլայ որ գէշ մտնաք ։

Բէնըլոն իւր գլխոյ վրայ խանդաղատութեան նշան մը ցուցուց, իւր ընկերներուն մօտեցաւ, և անոնց հետ քանի մը խօսք ընելէն ետև՝ ետ դարձաւ ։

— Խնդիրը եթէ այս բանիս վրայ է, Պ. Մորէլ, ըսաւ՝ իւր բերանի ծամախոտը միւս կողմը տանելով և նախասենեկին մէջ երկրորդ անգամ լորձունք մը ցայտեցընելով, որ առաջինին հետ գնաց միացաւ, խնդիրը եթէ այս բանիս վրայ է․․․ ։

— Ի՞նչ բանի ։

— Ստակին ։

— Ետքը՞ ։

— Ընկերներս կ՚ըսեն թէ առ այժմ իւրաքանչիւրին յիսուն ֆրանք բաւական է, և մնացեալին կրնան սպասել ։

— Շնորհակալ եմ, բարեկամներ, շնորհակալ եմ, պոռաց Պ. Մորէլ իւր սիրտը շարժելով․ ամենքդ ալ ազնիւ սիրտեր ունիք․ բայց ընդունեցէք, ընդունեցէք ձեզ տրուած դումարը, և եթէ աղէկ տեղ մը գտնէք, ազատ էք, կրնաք մտնել ։

Մորէլի խօսքին այս վերջին մասը ազնիւ նաւաստեաց սրտին այնպիսի զարմանալի ազդեցութիւն մը ըրաւ, որ խեղճերը սկսան ապշութեամբ իրարու երես նայիլ ։ Բէնըլոն քիչ մնաց շնչարգելութեամբ ծամախոտը պիտի կլլէր․ բարեբաղդաբար ձեռքը շուտով կոկորդին տարաւ ։

— Ի՞նչ կ՚ըսես, Պ. Մորէլ, ըսաւ հեղձամղձուկ ձայնով մը, մեզ ճանբա՞յ կու տաս․ ուրեմն գոհ չե՞ս մեզմէ ։

— Ո՛չ, զաւակներս, ըսաւ նաւատէրը, ո՛չ, ընդ հակառակն շատ գոհ եմ ձեզմէ ։ Բայց ի՞նչ ընեմ․ ալ նաւ չունիմ, և նաւաստիի ալ պէտք չունիմ ։

— Ինչպէս, ուրիշ նաւ չունի՞ս, ըսաւ Բէնըլոն․ բայց կրնաս ուրիշ նաւեր շինել տալ, մենք կ՚ըսպասենք ։ Աստուծոյ ողորմութիւնը մեծ է ։

— Նաւ շինել տալու համար ստակ չունիմ, Բէնըլոն, ըսաւ նաւատէրը վշտալից ժպիտով մը․ ուստի չեմ կրնար ընդունիլ ձեր առաջարկութիւնը, թէև խիստ պարտաւորիչ է ։

— Թէ որ ստակ չունիս, ուրեմն պէտք չես վճարել մեզ․ մենք ևս այն խեղճ Փարաօնին պէս կ՚ընենք, այսինքն չոր կ՚անցընենք ։

— Բաւական է, բարեկամներ, բաւական է, ըսաւ Մորէլ սրտի սաստիկ յուզմամբ․ գացէք, կ՚աղաչեմ, աւելի յաջող ժամանակի մէջ իրարու հետ կը տեսնուինք ։ Էմմանուէլ, յաւելցուց նաւատէրը, հետերնին գնա՛, և կամքս կատարուելուն հոգ տար ։

— Գոնէ վերստին տեսնուինք, այնպէս չէ՞, Պ. Մորէլ, ըսաւ Բէնըլոն ։

— Այո՛, բարեկամներ, գէթ կը յուսամ, գացէք ։

Եւ նշան մը ըրաւ Գօգլէսին, որ նաւաստիներուն առջևը ինկաւ և Էմմանուէլ անոնց ետևէն գնաց ։

— Հիմա, ըսաւ նաւատէրը իւր կնոջ և աղջկան, զմեզ վայրկեան մը առանձին թողուցէք․ պարոնին հետ ընելու քանի մը խօսք ունիմ ։

Եւ իւր աչօքը Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան ներկայացուցիչը ցուցուց, որ տեղի վրայ և անշարժ մնացեր էր նոյն անկիւնը բոլոր այս խօսակցութեան ժամանակ, որուն միայն քանի մը խօսքով մասնակից եղեր էր ։

Տիկին Մորէլ և իւր աղջիկը իրենց աչքը օտարականին վրայ դարձուցին, զոր բոլորովին մոռցեր էին, և դուրս ելնելու ատեն՝ աղջիկը պաղատալից վսեմ նայուածքով մը անոր նայեցաւ, որուն Անգղիացին ժպիտով մը պատասխանեց ։

Երիտ մարդերը առանձին մնացին։

— Անշուշտ, պարոն, ըսաւ Մորէլ վերստին իւր աթոռին վրայ նստելով, ամէն բան տեսաք և ամէն բան լսեցիք, և ձեզ խմացընելու բան չմնայ։

— Այո՛, տեսայ, պարոն, ըսաւ Անդղիացին, որ նոր դժբաղդութիւն մը պատահեր է ձեզ, որուն միւսներուն պէս արժանի չէիք, և այս բանս ձեզ հաճելի ըլլալու համար արդէն ունեցած փափաքս կը հաստատէ։

— Ո՛հ, պարոն, ըսաւ Մորէլ։

— Ես ձեր դլխաւոր պարտատէրներէն մէկն եմ, այնպէս չէ՞։

— Գոնէ ամենէ մծտ պայմանաժամ ունեցողը փոխառնակագիրները ձեր ձեռքը կը դտնուին։

— Վճարելու համար ժամանակ կը խնդրէք։

— Այդ բարութիւնը իմ պատիւս և հետևաբար կեանքս պիտի աղատէ, ըսաւ Մորէլ։

— Ո՞րչափ ժամանակ կը խնդրէք։

Մորէլ սկսաւ վարանիլ.

— Երկու ամիս, ըսաւ։

— Շատ աղէկ, ըսաւ օտարականը, երեք ամիս ժամանակ կուտամ ձեզ։

— Բայց, ըսաւ Մորէլ, կը կարծէք որ Թոմսըն և Ֆրէնչ վաճառատունը . . . ։

— Անհոդ եղիք, պարոն, պատասխանատուութիւնը իմ վրաս կ'առնում։ Այսօր յունիսի Յն է։

— Այո՛։

— Այս փոխառնակագիրները սեպտեմբերի Յին վճարելու համար նորոգեցէք, ու ես սեպտեմբերի Յին առաւաւտն ժամը տասն ու մէկին (ժամացոյցը այս վայրկենիս Ճիշտ տասն ու մէկ կը նշանակէր) հոս պիտի ներկայանամ։

— Եւ ես կ'ըսպասեմ ձեզ, պարոն, ըսաւ Մորէլ, և այն օրը կամ պիտի վճարեմ և կամ պիտի մեռնիմ։

Այս վերջին խօսքերը այնպիսի կամաց ձայնով արտասանեց, որ օտարականը չկրցաւ լսել։

Փոխառնակագիրները նորոգուեցան, հիները պատուեցին, և ողորմելի նաւատէրը դոնէ երեք ամիս ունէր աւելը իւր վերջին Ճիկը՝ի գործ դնելու։

Անդղիացին իւր աղգին մասնաւոր պաղատութեամբը անոր հնարհակալութիւնները ընդունելէն ետև՝ Պ. Մորէլը բարևեց, որ դան օրհնելով մինչև դուռը անոր ընկերացաւ։

Սանդուխին վրայ Անդղիացին Ժիւլիին պատահեցաւ, որ վար իջնել կը ձևացընէր, բայց իրօք անոր կ'ըսպասէր։

— Ո՛հ, պարոն, ըսաւ աղջիկը ձեռքը միացընելով։

— Օրիորդ, ըսաւ օտարականը, օր մը նամակ մը պիտի ընդունիս «Սէնպատ նաւաստի» ստորագրութեամբ . . . այս նամակին հրամանները որչափ և տարօրինակ երևին քեզ, անվրէպ կատարէ։

— Շատ աղէկ, պարոն, պատասխանեց Ժիւլի։

— Կը խոստանաս որ պիտի կատարես։

— Կ'երդնում, ըսաւ Ժիւլի։

— Մնաս բարեաւ, օրիորդ. միշտ բարի և առաքինի աղջիկ մը եղիր ինչպէս որ ես, և մեծ յոյս ունիմ որ Աստուած պիտի վարձատրէ զքեզ Էմմանուէլի հետ ամուսնացընելով։

Ժիւլի կամաց մը հառաչեց, կեռասի պէս կարմրեցաւ և սանդուխին վանդակներուն կռթնեցաւ որ չիյնայ։

Օտարականը բարևելու նշան մը ընելէն ետև՝ իւր ճանբան շարունակեց։

Բակին մէջ Բէնըլոնը տեսաւ, որ իւրաքանչիւր ձեռքը հարիւր ֆրանքնոց թուղթի մը դլորած բուներ էր, և կ'երևէր թէ զանոնք առնելու չէր համոզուեր։

— Հէտս եկուր, բարեկամ, ըսաւ անոր Անդղիացին, քեզ ըսելիք ունիմ։

ԳԼՈՒԽ Է

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5Ը

Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան ներկայացուցիչին այս անյօսալի միջոցիս Մորէլին շնորհած պայմանաժամը ողորմելի նաւատէրին այնպէս երևցաւ որ իւր ձակատագիրը վերջապէս իւր դժբեմ դէմքը ցուցընելէն դադրեր էր։ Նոյն օրը այս դործը իւր աղջկան, ինոջը և Էմմանուէլին պատմեց, որով եթէ ոչ հանդստութիւն՝ դոնէ սակաւ ինչ յոյս մտեր էր ընտանեաց սրտին մէջ։ Բայց դժբաղդաբար Մորէլի դործը միայն Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան հետ չէր, որ իրեն այնչափ համակրութիւն ցուցուցեր էր։ Ինչպէս որ արդէն ըսեր էր, միայն թղթակիցներ ունի վաճառական մը և ոչ բարեկամներ։ Երբ այս եղելութեան վրայ խորհուրդ կը մտածէր, չէր կրնար Թոմսըն և Ֆրէնչ պարոններուն իրեն հետ ունեցած մեծանձն վարմունքին պատճառը հասկընալ, զոր միայն նոյն վաճառատան եսութեան կու տար. անշուշտ մտածեր էին թէ՝ լաւագոյն է օրնել մարդու մը, որ մեզ երեք հարիւր հազար ֆրանքի չափ պարսք ունի, քան թէ անոր կործանումը փութացընել և դրամագլխին հարիւրին վեց կամ ութ առնուլ միայն։

Դժբաղդաբար, թէ թշնամութեամբ և թէ տգիտութեամբ Մորէլի բոլոր թղթակիցները նոյն մտադրութիւնը չըրին, մանաւանդ որ անոնցմէ ոմանք հակառակ կերպով վարուեցան։ Մորէլէն ստորագրուած փոխանակադիրները կասկածոտ երկիւղով մը արկղին ներկայացան, և փոյթ Անդղիացւոյն շնորհած պայմանաժամին՝ ամենքն ալ Գոդլէսէն ձդտութեամբ վճարուեցան։ Ուստի Գոդլէս միշտ իւր բաղդատուշակ հանդարտութեան մէջ մնաց։ Միայն Պ. Մորէլ երկիւղով կը մտածէր, որ եթէ ամսոյս 15ին վճարելի Պ. ոը Պօվիլլին հարիւր հազար ֆրանքի, և 30ին՝ երեսուն ու եր-

կու հազար հինդ հարիւր ֆրանքի փոխանակադիրները վճարելու պարտաւորեալ ըլլար, որոց համար պայմանաժամ ընդուներ էր, այն ժամանակէն արդէն կորսուած պիտի ըլլար։

Մարսիլիոյ բոլոր վաճառականաց կարծիքը այն էր, որ Պ. Մորէլ հետզհետէ պատահած ձախորդութեանց պիտի չկրնայ դիմանալ։ Ուստի մեծ զարմանքի մէջ մնացին երբ ամսոյն վերջին վճարումները սովորական ձշդութեամբ կատարուիլը տեսան։ Այսու ամենայնիւ ամենուն մտաց վստահութիւնը տակաւին չհաստատուեցաւ, և թշուառ նաւատէրին հաշուեկշռին յայտարարութիւնը լսնալու համար յետագայ ամսոյ վերջին սպասեցին։

Բոլոր ամսուան մէջ Մորէլ իւր բոլոր ջանքը 'ի գործ դրաւ ունեցածը դումարելու համար։ Ժամանակաւ իւր փոխանակադիրերը ինչ թուականով որ ըլլար՝ մեծ վստահութեամբ կը գնէին և կը փնտռէին իսկ։ Մորէլ իննսուն օրով փոխանակադիրերը շրջաբերութեան դնել ուզեց, բայց բոլոր դրամատանց դռները իւր առջևը գոցուեցան։ Ի՞արեբաղդաբար Մորէլ ժողովելի դումարներ ունէր, որոց վրայ կրնար յուսալ. այս դումարները ամփոփելով՝ իւր յուլիս ամսոյ պարտքերուն դէմ առնելու կարող եղաւ։

Սակայն Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան ներկայացուցիչը աներևոյթ եղեր էր Պ. Մորէլի ըրած այցելութեան հետևեալ կամ երրորդ օրը. Մարսիլիոյ մէջ միայն քաղաքապետին, բանտերու տեսչին և Պ. Մորէլի հետ տեսութիւն ըրած ըլլալով՝ իւր ձանապարհորդութիւնը այս երեք անձանց քով թողուցած տարբեր յիշատակներէն զատ՝ ուրիշ հետք մը թողուցած չէր։ Իսկ Փոքսոնին նաւաստիները կ'երևի թէ դործ մը դտած էին, վասն զի անոնք ևս աներևոյթ եղեր էին։

Կօմար նաւապետը, որ իւր հիւանդութեանը պատճառաւ Բալմա մնացեր էր, առողջանալով վերադառնալէ ետև՝ Մ. Մորէլին առջևը ներկայելու կ'երկմտէր. բայց նաւատէրը անոր հասնիլը իմանալով անձամբ անոր տեսութեան դնաց։ Արդէն Փոքսոնին աղէտին ժամանակ նաւապետին աներկիւղ ընթացքը ծէնըլոնէն իմացեր էր, ուստի ինքը սկսաւ միխիթարել զան։ Իւր

ձեռօքը անոր ամնականները բերեր էր, զորոնք կօմար նաւապետը ամենևին պիտի չհամարձակէր երթալ պահանջելու։

Սանդուխէն վար իջնելու ժամանակ՝ Պ. Մորէլ Բէնըլոնին հանդիպեցաւ որ վեր կ'ելլէր. կ'երևէր որ Բէնըլոն իւր ստակը աղէկ գործածեր էր. վասն զի բոլորովին նոր զգեստներ հագած էր։ Բարի ղեկավարը իւր նաւատէրը տեսնելով՝ խիստ շփոթած երևցաւ. դաւթին հեռաւորագոյն անկիւնը քաշուեցաւ, իւր բերանի ծամախոտը փոփոխակի ձախէն աջ և աջէն ձախ տանելով, խուովեալ նայուածքով անոր կը նայէր, և Պ. Մորէլն սովորական մտերմութեամբը իրեն երկնցուցած ձեռքը երկիւղով մը սեղմելէն զատ բան մը չկրցաւ ըսել։ Պ. Մորէլ Բէնըլոնի շփոթութիւնը անոր հագուստին վայելչութեանը տուաւ. յայտնի կ'երևէր որ բարի նաւաստին իւր ստակովը այսչափ ծախք չէր կրնար ընել. ուստի անշուշտ ուրիշ նաւու մը մէջ պաշտօն մը գտած էր. և դուցէ Փարաօնին տուգը աւելի երկար չսպահելուն համար կ'ամչնար։ Դուցէ իսկ կօմար նաւապետին եկեր էր իւր բաղդաւորութիւնը և նոր տէրէն ընդունած ընծաները իմացընելու։

— Աղնիւ բարեկամ, ըսաւ Մորէլ հեռանալու տեղն, երանի թէ զձեզ սիրածիս պէս ձեր նոր տէրն ալ զձեզ սիրէր, և ինձմէ աւելի երջանիկ ըլլայիք . . .։

Օգոստոս ամսուան մէջ Մորէլ անդադար փորձեր փորձեց իւր առջի վարկը ձեռք բերելու և կամ ուրիշ նոր մը ստանալու համար։ Օգոստոսի 20ին Մարսիլիոյ վաճառականները անոր տուրհանդակի կառք մը մտնելը տեսնելով՝ կարծեր էին որ հաշուեկշիռը ներկայ ամսոյ վերջը պիտի ելլէ, և Մորէլ առաջուց կը մտիներ որ այն դժբաղդ վճռոյն ներկայ չգտնուի՝ իւր տեղը փոխանորդ ձգելով իւր Էմմանուէլ առաջին դրագիրը և իւր Գոզլէս արկղապետը։ Բայց ամեն այս դուշակութեանց հակառակ՝ օգոստոսի 31ին Մորէլի արկղը ըստ սովորութեան բացուեցաւ։ Գոզլէս վանդակապահներուն ետին՝ Ռվըռահոսի արդարոյն պէս հանդարտ երևցաւ, իրեն ներկայացուած փոխանակագիրները սովորական ուշադրութեամբ քննեց, ու նոյն ձշդութեամբ ամեն փոխանակագիրները մի առ մի վճարեց։ Ասոնցմէ զատ՝ երկու պարտա-

տոմներ ևս ներկայացան, որոնք Պ. Մորէլ դուշակեր էր, և Գոզլէս նոյն ձշդութեամբ անոնք ևս միւսներուն պէս վճարեց։ Ամենևին մէկը բան մը չէր հասկընար, և ամեն մարդ չարպուշակ մարդարէներու յամառութեամբ Մորէլի վաճառատունը սեպտեմբերի վերջը պիտի սնանկանայ կ'ըսէին։

Սեպտեմբերի 1ին Մորէլ վերադարձաւ. իւր բոլոր ընտանիքը մեծ անհանգստութեամբ իրեն կ'ըսպասէր. դէպ 'ի Փարիզ ըրած իւր այս ճանապարհորդութիւնը իւր պատիւը ազատելու վերջին յոյս մը դտնելու համար էր։ Մորէլի միտքը Տանկլարը եկեր էր, որ այս միջոցիս միլիոնատէր և ժամանակաւ իւր երախտապարտն էր. որովհետև Մորէլի յանձնարարութեամբը Տանկլար Սպանիացի սեղանաւորին քով մտեր էր, որով անբաւ հարստութեան տէր եղեր էր։ Տանկլարի համար կ'ըսէին թէ այսօր վեց կամ ութ միլիոն և անսահման վարկ մը ունի. Տանկլար առանց իւր ծոցէն թալեռ մը հանելու՝ կրնար Մորէլը ազատել. եթէ փոխառութեան մը համար երաշխաւոր ըլլար, Մորէլ ազատած էր. Մորէլ երկար ժամանակէ 'ի վեր Տանկլարէն այս շնորհքը խնդրելու կը մտածէր. բայց մարդս երբեմն բնազդական ընդդիմութիւններ ունի, որոց ինքը տէր չէ, և այս դերազոյն միջոցին պիտի ելլելու համար Մորէլ օր օրի կը ձգէր։ Սակայն Մորէլ իրաւունք ունէր, վասն զի Տանկլարէն մերժուելով՝ վերաւորեալ սրտիւ ետ դարձեր էր։

Այսպէս Մարսիլիա վերադառնալով՝ ամենևին մէկուն տրտունջ մը չցայտնեց և ամենևին մէկը չմեղադրեց. իւր կինը և աղջիկը համբուրեց, սիրով Էմմանուէլի ձեռքը սեղմեց, երկրորդ յարկին դահլիճը մտաւ և Գոզլէսը իւր առջևը կանչեց։

— Այս անգամ, ըսին մայրն ու աղջիկը Էմմանուէլին, կորսուած ենք։

Եղբը երկուքնին մէկտեղ խորհելով որոշեցին որ Թիւլլի իւր եղբօրը գրէ որ անմիջապէս ելնէ գայ։ Թիւլլին Մաքսիմիլիէն եղբայրը Նիմ քաղաքը պահապան զօրաց մէջ կը գտնուէր։

Ողորմելի կինն ու աղջիկը բնազդմամբ կ'ըզգային որ իրենց ապառնացող հարուածին առաջն առնելու համար՝ իրենց բոլոր ջիղը 'ի գործ դնելու պէտք ունէին։

Ասկէ զատ՝ Մաքսիմիլիէն Մորէլ թէև հաղիւ քսան երկու տարեկան էր, բայց իւր հօրը վրայ մեծ ազդեցութիւն ունէր։

Այս երիտասարդը անյողդողդ և ողջամիտ մէկն էր։ Պաշտօնի մը մէջ մտնելու միջոցին, իւր հայրը զինքը ստիպած չէր որ իրեն ապագայ մը պատրաստէ, այլ իւր որդւոյն հարցուցեր էր թէ ինչ ասպարէզ կ'ուզէ մտնել. Մաքսիմիլիէն զինուորական ըլլալու փափաքը յայտնելով, ընտիր ուսումներ սորվելէն ետև՝ իւր բարեկամին՝ Ջանքովը բազմարուեստեան դպրոցը մտեր, և անկէ 53րդ գնդին երկրորդ տեղակալի աստիճանով դուրս ելեր էր։ Արդէն տարիէ մը՝ի վեր նոյն պաշտօնը կը վարէր, և իրեն խոստացեր էին որ առաջին առթիւ զինքը տեղակալ պիտի անուանեն։ Գնդին մէջ Մաքսիմիլիէն Մորէլ խիստ օրինապահ մէկը նկատուած էր ոչ միայն զինուորի մը վրայ դրուած պարտքերը, այլ և մարդկային բոլոր պարտքերը ձշդիւ կատարելուն համար, և այս պատճառաւ զինքը Սթոյչկեան կ'անուանէին։ Սակայն՝ այս մականունը անոր տուողներուն շատերը միայն լսած ըլլալնուն համար կը կրկնէին, և անոր ինչ նշանակելն անդամ չէին դիտեր։

Եւ ահա այս երիտասարդն էր որուն մայրն ու քոյրը զինքը օդնութեան կը կանչէին այն ծանր պարագային մէջ։

Տիկին Մորէլ և իւր աղջիկը խաբուած չէին, վասն զի պ. Մորէլ Գոդլէսին հետ դահլիճը մտնելէն վայրկեան մը ետքը՝ Ֆիւլի տեսաւ որ այս վերջինը դունատեալ, դողդղալով և բոլորովին շփոթեալ դուրս ելաւ։

Ֆիւլի ուզեց հարցուփորձ ընել զան իւր քովէն անցնելու առթիւ, բայց բարեսիրտ մարդը չկենալով՝ անսովոր աճապարանօք սկսաւ սանդուխէն վար իջնել, և թևերը դէպ՝ի երկինք բարձրացընելով՝ միայն այսպէս պոռալու դոհ եղաւ.

— Ո՛հ, օրիորդ, օրիորդ, այս ինչ սոսկալի դժբաղդութիւն է, և ո՛վ երբէք կրնար մտքէն անցընել։

Վայրկեան մը ետքը՝ Ֆիւլի տեսաւ զան որ երկու կամ երեք խոշոր արձանագրքեր, թղթադարան մը և քսակ մը ստակ առած վեր կ'ելնէր։

Իւր արկղին մէջ միայն վեց կամ ութ հազար ֆրանք կար,

և մինչև ամսոյն 5ը չորս կամ հինգ հազար ֆրանք ևս ժողովելի ունէր. ամենը մէկ առ առաւելն հաշուելով՝ միայն տասն ու չորս հազար ֆրանք պատրաստ ունէր երկու հարիւր ութսուն եօթն հազար ու հինգ հարիւր ֆրանքին դէմ։ Ան հաշիւ վճարելու անդամ բաւական դումար մը չունէր։

Այսու ամենայնիւ՝ Մորէլ ձաշի իջած տեղն՝ բաւական անխռով կ'երևէր։ Այս հանդարտութիւնը ամենէ աստիկ տառապանքէն աւելի սոսկացուց իւր կինն ու աղջիկը։

Ճաշէն ետև՝ Մորէլ դուրս ելնելու սովորութիւն ունէր. փոկէայոյ ըսուած ժողովատեղին կ'երթար սուրճ խմելու և Սէմաֆոր օրագիրը կարդալու. այն օրը ամենևին դուրս չելաւ և վերտին իւր դրատունը մտաւ։

Իսկ Գոդլէս բոլորովին ապշած կ'երևէր. օրուան մէկ մասը բակին մէջ քարի մը վրայ նստած անցուց՝ դլուխը բաց և երեսուն աստիճան արևուն տակ։

Էմմանուէլ կը ջանար տիկինն ու օրիորդը հանդարտեցընել, միայն թէ խեղճը աղէկ պերճախօս չէր։ Երիտասարդը վաճառատան բոլոր գործերը աղէկ ճանչնալուն համար՝ աղէկ կ'ըզգար որ Մորէլի ընտանեաց վրայ մեծ աղէտ մը պիտի գայ։

Գիշերը տիկին Մորէլ և Ֆիւլի արթուն կեցեր էին յուսալով որ Մորէլ իւր դահլիճէն իջնելով իրենց սենեակը գայ. բայց անոր թեթև քայլերով իրենց դրան առջևէն անցնելը լսեցին, քանզի անշուշտ Մորէլ կը վախնար որ չըլլայ թէ զինքը ներս կանչեն։

Ականջ դնելով նայեցան որ Մորէլ վերստին իւր սենեակը մտնելով՝ ներսէն դուռը գոցեց։

Ան ատեն տիկին Մորէլ իւր աղջիկը ղրկեց որ երթայ պառկի, ու Ֆիւլիին երթալէն կէս ժամ ետքը՝ ոտք ելաւ, իւր շղթաներն հանեց և յուշիկ կերպով դաւիթը մտաւ, որպէս զի փականքին ծակէն դիտէ թէ ինչ կ'ընէ իւր ամուսինը։

Դաւթին մէջ ստուեր մը տեսաւ որ ետ կը քաշուէր. այս ստուերը Ֆիւլիին էր, որ նոյնպէս անհանգստութեամբ իւր մայրէն առաջ հոն եկեր էր։

Նորատի աղջիկը իր մօրը մօտենալով,

— Գիր կը գրէ, ըսաւ։

Երկուքն ալ առանց իրարու խօսելու այս բանս գուշակեր էին։

Տիկին Մորէլ աչքը ծակին դրաւ։ Իրօք Մորէլ գիր կը գրէր. բայց բան մը գիտեց որ իր աղջիկը չկրցեր էր գիտել, որ իր ամուսինը դրոշմեալ թուղթի վրայ կը գրէր։

Կինը սոսկաց մտածելով որ Մորէլ իր կտակը կը շինէ. իր բոլոր անդամները սարսռեցան, բայց դարձեալ ինքզինքը զսպեց ու իր աղջկան բան չըսաւ։

Հետևեալ առտու՝ Պ. Մորէլ բոլորովին հանդարտ կ'երևէր, ըստ սովորութեան իր գրատունը նստաւ, և ամեն անգամուան պէս նախաճաշիկի իջաւ, միայն թէ ճաշէն ետև Ժիւլին իր քովը նստեցուց, իր զաւակին գլուխը գրկացը մէջ առաւ և երկար ատեն այնպէս բռնեց։

Իրիկունը՝ Ժիւլի իր մօրը ըսաւ թէ իր հայրը թէպէտ անխռով կ'երևի, բայց անոր սիրտը ուժգին կը բաբախէ։

Միւս երկու օրերը գրեթէ նոյն կերպով անցան։ Սեպտեմբերի 4ին իրիկունը՝ Պ. Մորէլ իր դահլճին բանալին Ժիւլիէն ուզեց։

Ժիւլի այս հրամանին վրայ սարսռեցաւ, վասն զի իրեն աղէտալի հրաման մը երևցաւ այն։ Ինչ պատճառաւ իր հայրը կ'ուզէր իր ձեռքէն առնուլ այս բանալին, զոր միշտ իր քովը պահեր էր, և իր մանկութեան մէջ միայն զինքը պատժելու համար ձեռքէն կ'առնուին։

Նորատի աղջիկը Պ. Մորէլի երեսը նայեցաւ.

— Ի՞նչ ըրի, հայր իմ, ըսաւ անոր, որ այս բանալին ձեռքէս կ'ուզես առնուլ։

— Ոչինչ, զաւակս, պատասխանեց թշուառ Մորէլ, որուն աչքէն արտասուք բղխեցուց այս անկեղծ հարցումը, ոչինչ, բայց ես պէտք ունիմ անոր։

Ժիւլի բանալին փնտռել ձևացուց։

— Սենեակս ձգած պիտի ըլլամ, ըսաւ։

Ուստի դուրս ելաւ, բայց փոխանակ իր սենեակն երթալու՝ վազելով վար իջաւ և Էմմանուէլին խորհուրդ հարցուց։

— Մի տար հօրդ այդ բանալին, ըսաւ երիտասարդը, և վաղը առտու՝ եթէ կարելի է՝ ամենևին քովէն մի բաժնուիր։

Ժիւլի ուզեց քանի մը հարցումներ ընել. բայց Էմմանուէլ ուրիշ բան չէր գիտեր, և կամ չէր ուզեր ուրիշ խօսք խօսիլ։

Սեպտեմբերի 5 լուսնալու բոլոր գիշերը՝ տիկին Մորէլ ականջը պատին դրաւ, մինչև առտուան ժամը երեքը իր ամուսնոյն անհանգստութեամբ սենեկին մէջ քալելը լսեր էր։

Ժամը երեքին Մորէլ անկողինը մտաւ։

Մայրն ու աղջիկը գիշերը միասին անցուցին։ Առջի իրիկունէն Մաքսիմիլիէնին կ'սպասէին։

Ժամը ութին Պ. Մորէլ իրենց սենեակը մտաւ, ինքը հանդարտ կ'երևէր, բայց գիշերուան անհանգստութենէն իր դէմքը գունատեր և այլայլեր էր։

Կինն ու աղջիկը չհամարձակեցան իրեն հարցընել թէ գիշերը ինչպէս անցուց։

Երբեք իր կինն ու աղջիկը իրեն այնչափ սիրելի երևցած չէին. իր դժբաղդ աղջկան երեսը նայելէն և զան համբուրելէն չէր կշտանար։

Ժիւլի Էմմանուէլին պատուէրը յիշեց և ուզեց իր հօրը հետ երթալ երբ ան իրենց քովէն կը բաժնուէր. բայց Մորէլ քաղցրութեամբ ընդդիմելով,

— Մօրդ քով կեցիր, ըսաւ անոր։

Երբ Ժիւլի սկսաւ աղաչել,

— Կամացս հնազանդէ, ըսաւ Մորէլ։

Այս առաջին անգամն էր որ Մորէլ իր աղջկան կը հրամայէր իր կամացը հնազանդելու. բայց այնպիսի հայրական քաղցրութեամբ մը այս խօսքը արտասանեց, որ Ժիւլի չհամարձակեցաւ քայլ մը յառաջ երթալ։

Ողորմելի աղջիկը իր կեցած տեղը անձայն, անշարժ և ոտքի վրայ մնաց։ Վայրկեան մը ետքը՝ դուռը բացուեցաւ, զգաց որ մէկը զինքը կը գրկէր, և իր ճակատը կը համբուրէր։

Աչքը վեր վերցուց և ուրախութեան ձայն մը հանեց։

— Մաքսիմիլիէն, եղբայրս, պոռաց։

Ա յս ձայնին վրայ՝ տիկին Մորէլ վազելով եկաւ և իր որդւոյն գրկացը մէջ նետուեցաւ։

— Մա՛յր իմ, ըսաւ երիտասարդը փոփոխակի իւր քրոջ և մօր երեսը նայելով, ի՞նչ կայ և ի՞նչ պատահեցաւ. նամակնիդ սարսափեցուց զիս և ես վազելով հոս եկայ։

— Ժիւլի, ըսաւ տիկին Մորէլ իւր որդւոյն նշանն մը ընելով, գնա՛ հօրդ իմացուր որ Մաքսիմիլիէն եկաւ։

Նորաստի աղջիկը սենեակէն դուրս ցատկեց, և սանդուխին առջի ոտքը կոխելու առեն՝ մարդ մը տեսաւ որ ձեռքը նամակ մը բռնած էր։

— Օրհորդ Ժիւլի Մորէլը դուն չե՞ս, ըսաւ այս մարդը Իտալական աղդու արտասանութեամբ։

— Ա՛յո, պարո՛ն, պատասխանեց Ժիւլի թոթովելով, բայց ի՞նչ կ՚ուզես, ես քեզ չեմ ճանչնար։

— Կարդա՛ այս նամակը, ըսաւ մարդը նամակը անոր ներկայացնելով։

Ժիւլի զայն առնելու երկմտութիւն ցուցուց։

— Հօրդ ազատութիւնը ասկէ կախեալ է, ըսաւ նուիրակը։

Նորաստի աղջիկը աշխուժիւ մը նամակը անոր ձեռքէն առնելով բացաւ զայն և կարդաց.

«Հիմա այս վայրկեանիս Մէյլան ծառուղին գնա՛, թիւ 15 տունը մտի՛ր, հինգերորդ դասիկոնի սենեկին բանալին դռնապանէն ուզէ՛, այն սենեկին մէջ մտի՛ր, կրակարանին անկիւնը մետաքսեայ կարմիր քսակ մը պիտի գտնես, առ զայն և շուտով հօրդ տար։

«Ժամը տասն ու մէկին քսակը հօրդ ձեռքը հասցընել պէտք ես։

«Ինձ կուրութեամբ հնազանդելու խօսք տուիր, հիմա կը յիշեցընեմ քեզ քու խոստումդ։

«ՍԷՆՊԱՍ ՆԱՒԱՍՏԻ»

Նորաստի աղջիկը ուրախութեան ձայն մը հանեց, աչքը վեր վերցուց և նամակաբերը փնտռեց որ անոր հարցուփորձ ընէ, բայց մարդը անհետացեր եղեր էր։

Ան առեն աչքը վերտուին նամակին վրայ դարձուց, որ երկրորդ անգամ կարդայ զայն, և նայեցաւ որ յետին գրութիւն մը կար։

Ուստի այս խօսքերն ևս կարդաց.



«Այս յանձնարարութիւնը պէտք ես անձամբ և առանձին կատարել. եթէ հետդ մարդ գայ կամ քու տեղդ ուրիշ մէկը հոն ներկայանայ, դռնապանը պիտի չճանչնայ զձեզ»:

Այս յետին Ֆր—Բէ—ը նորատի աղջկան ուրախութիւնը բոլորովին փոխեց: Արդեօք իր առջևը որոգայթ մը կը լարէին, և վախնալու բան մը ունէ՞ր: Անմեղ աղջիկը չէր գիտեր թէ իր հասակաւ աղջիկ մը ինչ վտանգներու մէջ կրնայ իյնալ, սակայն երբեմն առանց վտանգը ճանչնալու՝ անկէ կը վախնայ մարդ. այս ևս ստոյգ է որ ամէնէ մեծ սարսափ պատճառողները անծանօթ վտանգներն են:

Ծիւլի երկմտելով՝ որոշեց որ մէկուն խորհուրդ հարցընէ:

Բայց զարմանալի զգացմամբ մը ոչ իր մօրը դիմեց և ոչ իր եղբօրը, այլ Էմմանուէլին:

Ուստի վար իջաւ, Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան ներկայացուցիչին իրենց տունը եկած օրը պատահածը, սանդուխին վրայ ըրած խօսակցութիւնները, իր անոր ըրած խոստումը Էմմանուէլին պատմեց և նամակը ցուցուց:

— Պէտք ես երթալ, օրիորդ, ըսաւ Էմմանուէլ:

— Պէ՞տք եմ երթալ կ՚ըսես, մրմնջեց Ծիւլի:

— Այո՛, ես ալ հետդ կու գամ:

— Բայց չկարդացի՞ր որ ես մինակ պէտք եմ երթալ, ըսաւ Ծիւլի:

— Միւզէ փողոցին անկիւնը ես քեզ կ՚սպասեմ, ըսաւ երիտասարդը, և եթէ ինձ անհամբերութիւն տալու չափ ուշանալու ըլլաս՝ այն ատեն քովդ կը հասնիմ, և ճշմարիտ կ՚ըսեմ՝ վա՜յ անոնց որոց համար ինձ տրտունջ մը ընես:

— Ուրեմն, Էմմանուէլ, կրկնեց աղջիկը երկմտելով, կը կարծե՞ս որ այն տունը երթալ պէտք եմ:

— Այո՛, մինթէ նաւիրակը չըսա՞ւ որ հօրդ ազատութիւնը անկէ կախեալ է:

— Բայց վերջապէս հայրս ինչ վտանգի մէջ է, Էմմանուէլ, հարցուց աղջիկը:

Էմմանուէլ վայրկեան մը երկմտեցաւ, բայց կարճ խօսքով և

առանց յապաղելու նորատի աղջիկը համոզելու բաղձանքը զինքը յաղթեց:

— Մտիկ ըրէ, ըսաւ անոր, այսօր սեպտեմբերի 5ն է, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Այսօր ժամը տասն ու մէկին հայրդ երեք հարիւր հազար ֆրանքի մօտ վճարելիք ունի:

— Այո՛, գիտենք:

— Աղէկ, ըսաւ Էմմանուէլ, բայց արկղին մէջ միայն տասն ու հինգ հազար ֆրանք ունի:

— Ուրեմն ի՞նչ պիտի ընէ:

— Եթէ այսօր ժամը տասն ու մէկէն առաջ հայրդ մէկը չգտնէ որ իրեն օգնութեան հասնի, կէսօրին պիտի ստիպուի իր սնանկութիւնը յայտնել:

— Ո՜հ, եկո՛ւ, եկո՛ւ ուրեմն, պոռաց նորատի աղջիկը երիտասարդը իր հետը տանելով:

Այս միջոցիս տիկին Մօրէլ ամեն բան իր որդւոյն պատմեր էր:

Երիտասարդը աղէկ գիտէր որ հետզհետէ իր հօրը պատահած դժբաղդութիւններէն ետև՝ տան մէջ մեծ խնայողութիւն մը ըրեր էին, բայց չէր գիտեր որ գործերը այս աստիճանին հասած են:

Ուստի ուժաթափ և յուսահատ մնաց:

Բայց յանկարծ սենեկէն դուրս նետուելով՝ արագութեամբ սանդուխէն վեր ելաւ, վասն զի կը կարծէր թէ հայրը իր դահլճին մէջ պիտի գտնէ, բայց պարապ տեղը դուռը զարկաւ:

Այս դահլճին առջևը սպասած ժամանակը՝ իր հօրը սենեկին դրան բացուիլը լսեց, ետին դարձաւ և իր հայրը տեսաւ: Պ. Մօրէլ փոխանակ ուղղակի իր դահլիճը երթալու՝ իր սենեակը մտեր էր, և հիմա անկէ դուրս կ՚ելնէր:

Պ. Մօրէլ Մաքսիմիլիէնը տեսնելով՝ զարմացման ձայն մը հանեց, վասն զի երիտասարդին հասնիլը չէր գիտեր: Եղած տեղը անշարժ մնաց՝ իր ձախ թևովը թիկնոցին տակը պահած առարկայն սեղմելով:

Մաքսիմիլիէն աշխուժիւ սանդուխէն վար իջաւ, և իւր հօրը պարանոցը փաթթուեցաւ. բայց յանկարծ ետ քաշուեցաւ՝ միայն իւր աջ ձեռքը Պ. Մորէլի կուրծքին կպճնցուցած մնալով:

— Հայր իմ, ըսաւ մեռելատիպ դունատելով, թիկնոցիդ տակը պահած գոյդ մը ատրճանակները ինչ պիտի ընես:

— Ո՛հ, ահա ես ալ ասկէ կը վախնայի, ըսաւ Մորէլ:

— Հայր իմ, հայր իմ, Աստուծոյ սիրոյն համար ըսէ՝ այս ատրճանակները ինչ պիտի ընես:

— Մաքսիմիլիէն, պատասխանեց Մորէլ պղտցեալ իւր որդւոյն երեսը նայելով, դուն մարդ մ'ես, և պատիւը ճանչցող մարդ մը. եկու, քեզ ամեն բան պատմեմ:

Մորէլ համարձակ քալուածքով սանդուխէն վեր ելաւ դէպ 'ի իւր դահլիճը, իսկ Մաքսիմիլիէն երերալով անոր ետևէն կ'երթար:

Մորէլ դուռը բացաւ և իւր որդւոյն ետևէն վերատին դոցեց զայն, նախասենեկին մէջէն անցաւ, դրասեղանին մօտեցաւ, ատրճանակները սեղանին մէկ անկիւնը դրաւ, և մատին ծայրովը բաց արձանագիրք մը ցոյցուց իւր որդւոյն:

Այս արձանագրքին մէջ իւր վաճառատան ճիշդ վիճակը նշանակուած էր:

Մորէլ կէս ժամէն երկու հարիւր ութսուն եօթն հազար հինգ հարիւր ֆրանք վճարելիք ունէր:

— Կարդա՛, ըսաւ Մորէլ:

Երիտասարդը կարդաց և վայրկեան մը յուսահատեալ ապշած մնաց:

Մորէլ բան մը չէր խօսեր. և ինչ կրնար ըսել Թուանշաններուն անողոքելի վճռոյն դէմ:

— Եւ այս դժբազդութեան առաջն առնելու համար ամեն կրցածդ ըրիր, հայր իմ, ըսաւ երիտասարդը վայրկեան մը ետքը:

— Այո՛, պատասխանեց Մորէլ:

— Ամենևին ժողովելի դատարներու վրայ յոյս չունիս:

— Ամենևին:

— Բոլոր ակնկալութիւններդ կորսընցուցած ես:

— Բոլորն ալ:

— Եւ կէս ժամէն, ըսաւ Մաքսիմիլիէն վշտալի ձայնիւ մը, մեր անուան պատիւը պիտի կորսընցընե՞նք:

— Արիւնը անպատուութիւնը կը լուայ, ըսաւ Մորէլ:

— Իրաւունք ունիս, հայր իմ, և հիմա միտքդ կը հասկընամ:

Այս ըսելով ձեռքը դէպ 'ի ատրճանակները երկնցուց:

— Ուրեմն մէկը քեզի և մէկը ինծի համար է, ըսաւ. շնորհակալ եմ:

Մորէլ անոր ձեռքը բռնեց:

— Բայց քու մայրդ... քոյրդ... ո՞վ պիտի սնուցանէ:

Սարսուռ մը երիտասարդին բոլոր մարմինը պատեց:

— Հայր իմ, մտածէ որ կենդանի ճնամ կ'ըսես:

— Այո՛, ապրէ, կրկնեց Մորէլ, վասն զի քու պարտքդ է. քու միտքդ հանդարտ և զօրաւոր է. Մաքսիմիլիէն... Մաքսիմիլիէն, դուն հասարակ մարդ մը չես. ես քեզ չեմ հրամայեր, և քու վրադ չեմ իշխեր. այլ այս կ'ըսեմ միայն. Օտարականի մը պէս իմ վիճակս քննէ, և դուն անձամբ վճռէ:

Երիտասարդը վայրկեան մը մտածելէն ետև՝ իւր աչաց մէջ խորին հնազանդութեան զգացում մը յայտնեց. հանդարտ և տխուր յուզմամբ իբր պատուանշան ունեցած ուսադիրները հանեց:

— Շատ աղէկ, ըսաւ ձեռքը Մորէլին երկնցընելով, խաղաղութեամբ մեռիր, հայր իմ, և ես կ'ապրիմ:

Մորէլ ուզեց իւր որդւոյն առջևը ծնկան վրայ դալ, բայց Մաքսիմիլիէն գրկեց զան, և երկու աղնիւ սիրտերը վայրկեան մը գրկընդխառնեալ իրարու վրայ կը բաբախէին:

— Գիտե՞ս որ յանցանքը իմս չէ, ըսաւ Մորէլ:

Մաքսիմիլիէն ժպտեցաւ:

— Գիտեմ, հայր իմ, որ իմ ձանչցած մարդերուս մէջ ամենէն առաքինին դուն ես:

— Շատ աղէկ, ուրեմն ամեն բան իմացար, հիմա դարձիր քու մօրդ և քրոջդ քով:

— Հայր իմ, ըսաւ երիտասարդը ծնկան վրայ դալով, օրհնէ զիս:

Մորէլ իր որդւոյն գլուխը երկու ձեռքը բռնեց, իր բերանը մօտեցուց, և քանի մը անգամ համբուրելէն ետև՝

— Ո՛հ, այո՛, այո՛, ըսաւ, իմ անունովս և արդար մարդոյ երեք ցեղերուն անունովը կ՛օրհնեմ զքեզ. բայց մտիկ ըրէ ինչ կ՛ըսեն անոնք իմ բերանովս. — Դժբաղդութեան կործանած շէնքը նախախնամութիւնը կարող է վերստին կանգնելու: Այսպիսի մահուամբ մեռնիլս տեսնելով, խիստ անողոք սիրտերն ալ քու վրադ պիտի գթան. դուշէ տան քեզ այն պայմանաժամը որ ինձ չտային. այն տեղն աշխատէ որ անոնց բառը քու վրադ արտասանել չտաս. գործէ, աշխատէ, ո՛վ երիտասարդ, եռանդեամբ և քաջութեամբ բաղդին հետ կռուէ. խիստ խնայողութեամբ ապրէ մօրդ և քրոջդ հետ, որպէս զի պարտատէրներուս ստակը աւելցընես և բազմապատկես: Մտածէ որ վերստին առաջին վիճակին մէջ հաստատուելու օրդ դեղեցիկ և մեծ օր մը պիտի ըլլայ, այն օրը, այս նոյն գրատան մէջ դուն պիտի ըսես. — Հայրս մեռաւ, վասն զի իմ այսօրուան կրցածս ան չկրցաւ ընել. սակայն հանդարտ և հանգիստ իր կեանքը կնքեց, քանզի մեռնելու ատենը գիտէր որ ես պիտի ընեմ:

— Ո՛հ, հայր իմ, հայր իմ, պոռաց երիտասարդը, եթէ ասկայն կարելի ըլլար որ ապրէիր:

— Եթէ ապրիմ, ամեն բան կը փոխուի. եթէ ապրիմ, բարեմտութիւնը տարակուսի և գթութիւնը թշնամութեան կը փոխուի. եթէ ապրիմ, ուխտադրուժ և խոստմնազանց պիտի համարուիմ և վերջապէս սնանկացեալ պիտի կոչուիմ: Ընդ հակառակն՝ եթէ մեռնիմ, մտածէ, Մաքսիմիլիէն, իմ գիակս առաքինի թշուառ մարդու մը գիակը պիտի նկատուի: Եթէ կենդանի մնամ, իմ ամենէ մտերիմ բարեկամներս ինձմէ պիտի հեռանան. բայց եթէ մեռնիմ՝ բոլոր Մարսիլիան ինծի հետ պիտի ընկերանայ մինչև իմ վերջին բնակարանս. եթէ կենդանի մնամ՝ իմ անունս քեզ պատիւ պիտի չբերէ, բայց եթէ մեռնիմ՝ ճակատդ բաց է, և միշտ կրնաս ըսել. — Ես այն մարդուն զաւակն եմ, որ առաջին անգամ խոստմնազանց գտնուելուն համար ինքզինքը սպաննեց:

Երիտասարդը հառաչանք մը հանեց, բայց իր հօրը կամաց անձնատուր երևցաւ: Այս երկրորդ անգամն էր որ իր հօրը կը հառզուէր, բայց այս համոզումը իր սրտէն չէր այլ մտքէն:

— Հիմա, ըսաւ Մորէլ, զիս առաձնին թող և նայէ որ մայրդ ու քոյրդ ասկէ հեռացընես:

— Ինչո՞ւ վերստին տեսնել չեմ ուզեր, հարցուց Մաքսիմիլիէն:

Երիտասարդը այս առաջարկութիւնը այն պատճառաւ կ՛ընէր որ իր քրոջը այցելութենէն իր հայրը ազատելու վերջին և պաղտնի յոյս մը ունենայ:

Պ. Մորէլ գլուխը շարժեց:

— Այս առտու տեսայ զան, ըսաւ, ու ինծի բարեաւ ըսի:

— Մասնաւոր յանձնարարութիւն մը չունին ինձ ընելու, հայր իմ, հարցուց Մաքսիմիլիէն այլայլեալ ձայնիւ:

— Այո՛, զաւակս, նուիրական յանձնարարութիւն մը ունին:

— Ըսէ, հայր իմ:

— Թոմսըն և Ֆրէնչ վաճառատունը միայն իմ վրաս դութ ունեցաւ կամ մարդասիրութեամբ և կամ գուցէ եուսթեամբ, չեմ կրնար մարդոց սրտին գաղտնիքը գիտնալ: Իւր ներկայացուցիչը, որ տասն վայրկենէն հոս պիտի ներկայանայ երկու հարիւր ութսուն եօթն հազար հինգ հարիւր ֆրանքի գումարը պահանջելու, երեք ամիս պայմանաժամ շնորհեց ինձ: Կ՛ուզեմ որ ամենէն առաջ այս վաճառատան պարտքս վճարես, որդեակս, այն մարդը քեզ նուիրական մէկը թող համարուի:

— Շատ աղէկ, հայր իմ, ըսաւ Մաքսիմիլիէն:

— Եւ հիմա երկրորդ անգամ ինծի բարեաւ, ըսաւ Մորէլ, գնա՛, գնա՛, միևնակ ձնալ կ՛ուզեմ. պահակելու սենեկիս գրասեղանին մէջ կտակս կը գտնես:

Երիտասարդը ոտքի վրայ և անշարժ մնաց. միայն կամքի զօրութիւնն ունէր բայց ոչ գործադրելու:

— Մտիկ ըրէ, Մաքսիմիլիէն, ըսաւ հայրը, ենթադրէ թէ ես քու տեղդ գինուոր ըլլայի, և մարտկոցի մը վրայ յարձակելու հրամանն ընդունած ըլլայի, և դուն գիտնայիր որ յարձակելու ժամանակս պիտի սպաննուիմ, քիչ մը առաջ ըսածիդ պէս պիտի

չըսէ՞իր ինծ այս խօսքը թէ՝ — Գնա՛, հայր իմ, վասն զի եթէ չերթաս՝ պատիւդ պիտի կորսնցընես, և ամէնալէն լաւագոյն է մեռնիլը ։

— Այո՛, այո՛, ըսաւ երիտասարդը՝ Մորէլը իր գրկացը մէջ սեղմելով. գնա՛, հայր իմ ։

Այս ըսելով դահլիճէն դուրս նետուեցաւ ։

Մաքսիմիլիէնի դուրս ելնելէն ետև՝ Մորէլ վայրկեան մը ոտքի վրայ և աչքը դէպ 'ի դուռը յառած մնաց. ետքը ձեռքը երկընցուց, զանգակի մը չուանը բռնեց և հնչեցուց զայն ։

Վայրկեան մը ետքը՝ Գոքլէս ներս մտաւ ։

Ծերունին բոլորովին փոխուած կ'երևէր. յայտնի դժբաղդութեան երեքօրեայ համոզումը զինքը ընկճեր էր ։ Մորէլի վաճառատան վճարումները կասեցընելու մտածութիւնը քսան տարու աւելի եղածէն աւելի զինքը գետինը կը կորացընէր ։

— Սիրելիդ իմ Գոքլէս, ըսաւ Մորէլ այնպիսի սրտաշարժ ձայնիւ մը, որ անկարելի է նկարագրել, նախասենեկին մէջ սպասէ. երեք ամիս առաջ արդէն հոս եկող Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան ներկայացուցիչը գալուն պէս՝ ինծ իմացուր ։

Գոքլէս ամենևին պատասխան չտուաւ, գլխովը նշան մը ըրաւ, գնաց նախասենեկին մէջ նստաւ և սպասեց ։

Մորէլ վերստին իր աթոռին վրայ ինկաւ. իր աչքը կախուած ժամացուցին տարաւ. միայն եօթն վայրկեան մնացեր էր. ժամացուցին լեզուակը անհաւատալի արագութեամբ կը յառաջանար, իրեն այնպէս կ'երևէր թէ անոր քալելը կը տեսնէ ։

Անկարելի է այս ճգնաժամին մէջ այս մարդուն մտքէն անցածները նկարագրել, որ դեռ չծերացած՝ գուցէ սխալ բայց իրաւացի պատճառաւ մը աշխարհիս մէջ բոլոր իրեն սիրելի եղածներէն և ընտանեկան քաղցրութիւնները վայելող կեանքէն բաժնուելու վրայ էր. անոր վրայ գաղափար մը ունենալու համար՝ պէտք էր անոր քրտինքով ծածկուած բայց անձնանուէր ճակատը և անոր արտասուօք թրջուած բայց դէպ 'ի երկինք բարձրացած աչքը տեսնել ։

Ժամացուցին լեզուակը անդադար կը յառաջանար, ատրճա-

նակները լեցուած էին. ձեռքը երկնցուց, անոնց մէկը առաւ, և իր աղջկան անունը մրմնջեց ։

Ետքը մահաբեր զէնքը սեղանին վրայ դրաւ, գրիչը ձեռքը առաւ և քանի մը խօսք գրեց ։

Այն ատեն իրեն այնպէս կ'երևէր թէ իր սիրելի աղջկան տուած վերջին ողջոյնը բաւական չէր ։

Աչքը ժամացուցին վրայ դարձուց. այնուհետև վայրկեանները չէր համրեր, այլ մանրերկրորդները ։

Զէնքը վերստին ձեռքը առաւ, բերանը բաց և աչքը ժամացուցին լեզուակին յառած մնաց, և կայծհանը բացած ժամանակ՝ անոր ձայնէն սարսռեցաւ ։

Այս միջոցիս՝ աւելի պաղ քրտինք մը իր ճակատը պատեց, և աւելի մահաձիգ անձկութիւն մը իր սիրտը ճնշեց ։

Սանդուխին դրան ձայնը առաւ, որ իր ծխնեաց վրայ կը դառնար ։

Ետքը՝ իր դահլիճին դուռը բացուեցաւ ։

Ժամացոյցը տասն ու մէկ պիտի զարնէր ։

Մորէլ իր երեսն անգամ չդարձուց, այլ կ'ըսպասէր որ Գոքլէս իրեն իմացընէ թէ՝ «Թոմսըն և Ֆրէնչ վաճառատան ներկայացուցիչը եկաւ» ։

Ուստի ատրճանակը բերանին մօտեցուցած կեցեր էր ։

Յանկարծ ձայն մը լսեց . . . իր աղջկան ձայնն էր այն . . . ։

Երեսը դարձուց և Ժիւլին տեսնելով՝ ատրճանակը ձեռքէն ինկաւ ։

— Հայր իմ, պոռաց նորատի աղջիկը գրեթէ շնչասպառ և ուրախութենէն բոլորովին այլայլեալ ներս մտնելով, ազատեցար, ազատեցար ։

Այս ըսելով իր հօրը գրկաց մէջ նետուեցաւ՝ մետաքսեայ կարմիր քսակը վեր բռնելով ։

— Ի՞նչպէս ազատեցայ, աղջիկս, ըսաւ Մորէլ, ինչ ըսել կ'ուզես ։

— Այո՛, ազատեցար, ահա՛, տե՛ս, տե՛ս, ըսաւ աղջիկը ։

Մորէլ քսակը առնելով սարսռեցաւ, վասն զի անորոշ կերպով միտքը կու գար որ այս քսակը ժամանակաւ իրն էր ։

Քսակին մէկ կողմը՝ երկու հարիւր ութսուն եօթն հազար հինգ հարիւր ֆրանքի փոխանակագիրը կը գտնուէր։

Ա յս փոխանակագիրը հատուցուած էր։

Քսակին միւս կողմը՝ կաղինի մեծութեամբ ադամանդ մը կար՝ մաղաղաթի մը վրայ գրուած այս երկու խօսքով.

« Ժիւլիին օժիտը »։

Մորէլ ձեռքը ճակատին տարաւ. կարծէր թէ երազ կը տեսնէ։

Ա յս միջոցիս ժամացոյցը տասն ու մէկ կը զարնէր։

Պողպատ ուռին՝ ժամացոյցի սկահակին վրայ տուած հարուածները կարծէր թէ իւր սրտին վրայ կը զարնէին։

— Ըսէ, աղջիկս, այս քսակը ո՞րկից գտար։

— Մէյլան ծառուղին թիւ 15 տան հինգերորդ դատիկոնը գտնուած խեղճ փոքր սենեկի մը կրակարանին անկիւնը։

— Բայց, պրոսց Մորէլ, այս քսակը քուկդ չէ։

Ժիւլի այն ատեն նոյն առտու ընդունած նամակը իւր հօրը ներկայացուց։

— Եւ այն տունը մինակդ գացիր, հարցուց Մորէլ նամակը կարդալէն ետև։

— Էմմանուէլ հետս եկած էր և Միւզէ փողոցին անկիւնը ինձ պիտի սպասէր. բայց տունէն մեկնած ժամանակս ղինքը հոն չգտնելուս շատ զարմացայ։

— Պարո՛ն Մորէլ, պրոսց ձայն մը սանդուխին վրայէն, պարո՛ն Մորէլ։

— Անոր ձայնն է, ըսաւ Ժիւլի։

Նոյն միջոցին Էմմանուէլ ուրախութենէն և սրտի յուզմունքէն այլայլեալ ներս մտաւ։

— Փաթաւոնը, պրոսց, Փաթաւոնը եկաւ։

— Ի՞նչ կ'ըսես, խենթեցա՞ր, Էմմանուէլ. չե՞ս դիտեր որ Փաթաւոնը կորսուեցաւ։

— Փաթաւոնը, պարո՛ն, Փաթաւոնը մեր նաւահանգիստը մտաւ, և աշտարակին վրայէն անոր հասնելուն նշանը կու տան։

Մորէլ ուժաթափ իւր աթոռին վրայ ինկաւ. չէր կրնար այս անհաւատալի, անլուր և կեղակարծ դիպուածոյ հաւատալ։

Բայց Էմմանուէլի ետևէն Մաքսիմիլիէն իսկ ներս մտնելով,

— Հայր իմ, պրոսց, ինչ կ'ըսէիր թէ Փաթաւոն նաւը կորսուեցաւ։ Նօթր-Տամ-տը-լա-Կարտի պահպանորդը նշան տուեր է և Փաթաւոնը մեր նաւահանգիստը կը մտնէ կ'ըսեն։

— Բարեկամներ, ըսաւ Մորէլ, եթէ այս ամենը ճշմարիտ է, Աստուծոյ մէկ հրաշքը համարել պէտք է։ Անկարելի է, անկարելի։

Բայց եթէ ճշմարիտ և անհաւատալի բան մը կար, իւր ձեռքը բռնած քսակը, հատուցուած փոխանակագիրը և այն շքեղ ադամանդն էր։

— Ո՛հ, պարո՛ն, ըսաւ Գաղէօ ամենէն վերջը, ինչ ըսել կ'ուզէք, Փաթաւոն մնաց։

— Երթանք ուրեմն, զաւակներս, ըսաւ Մորէլ ոտք ելնելով, երթանք տեսնենք զայն, և Աստուած գթայ մեր վրայ եթէ սխալ ըսեր մ'է այս։

Ամենքն ալ վար իջան. տիկին Մորէլ սանդուխին մէջ տեղը կ'ըսպասէր. ողորմելի կինը չհամարձակեր էր վեր ելնելու։

Մէկ վայրկենի մէջ Գանըպիէր հասան։

Նաւամատոյցին վրայ բազմութիւնը ամիսոփուեր էր։

Բոլոր այս բազմութիւնը Մորէլի տունջև ձանբայ մը բացին։

— Փաթաւոնը, Փաթաւոնը, կը պոռային ամեն կողմէն։

Իրօք, ինչ զարմանալի և անլուր բան, Ս. Յովհաննու աշխատարակին գիմացը՝ ճիշդ միւս Փաթաւոն նաւուն մեծութեամբը և միւսին պէս որդան կարմիր և ընդակ բեռնաւորեալ նաւ մը խարիսխ կը նետէր. խելացի վրայ սպիտակ գրերով այս խօսքերը գրած էին. — ՓԱՐԱՒՈՆ. ՄՈՐԷԼ ԵՒ ՈՐԴԻ ՄԱՐՍԻԼԻՈՑ. Նաւուն յարկին վրայ կօմար նաւապետը հրամաններ կ'ընէր, և Բէնըլոն Պ. Մորէլին նշաններ կ'ընէր։

Ա յնուհետև տարակուսելու բան չմնաց. իւր գոյութիւնը կը վկայէր զայն, և տասն հազար հոգի նոյնը կը վկայէին։

Նաւամատոյցին թռումբին վրայ ինչ ատեն Մորէլ և իւր որդին զնրար կը գրկընդխառնէին՝ ի ծափահարութիւն այս հրաշքին ականատես եղող բոլոր հանդիսականաց, սև մօրուքով երեսին

կէսը ծածկուած մարդ մը, որ պահանորդի մը հիւղին ետին պահուած՝ խանդաղատութեամբ այս տեսարանը կը դիտէր, այս խօսքերը մրմնջեց.

— Երջանկացիր, ազնիւ սիրտ. օրհնեալ ըլլաս քու մինչև ըրած և ընելու բարեացդ համար. Թող իմ երախտագիտութիւնս քու բարերարութեանդ պէս դաղտնի մնայ:

Եւ իւր ուրախութեան ու երջանկութեան յայտարար ժպիտով մը պահուած տեղէն բաժնուեցաւ, և առանց մէկուն ուշադրութիւնը դրաւելու, այնչափ բաղմութիւնը պատահածին համար իրար կ'անցնէին, նաւամատոյցին փոքր սանդուխներուն մէկէն վար իջաւ, և երեք անդամ կանչեց.

— Ժագօպօ, Ժագօպօ, Ժագօպօ:

Այն ատեն մակոյկ մը իրեն մօտեցաւ, ղինքը ներս ընդունեց, և փառաւոր զարդարուած շեղակայմ նաւ մը տարաւ, որուն յարկին վրայ անծանօթ մարդը նաւաստիի մը թեթեւաշարժութեամբը ցատկելով, անկէ երկրորդ անդամ Պ. Մորէլին նայեցաւ, որ ուրախութենէն լալով՝ բոլոր բաղմութեան իրեն ներկայացուցած ձեռքը մտերմութեամբ կը սեղմէր, և անորոշ նայուածքով մը այն անծանօթ բարերարը կը փնտռէր, զոր երկինքը կը կարծէր:

— Եւ հիմա, ըսաւ անծանօթ մարդը, մնաք բարեաւ, բարեբարութիւն, մարդասիրութիւն և երախտագիտութիւն . . . : Մնաք բարեաւ, ո՛վ մարդուս սիրտը զուարճացընող զգացումներ: Բարիները վարձատրելու համար՝ նախախնամութեան դործը կատարեցի . . . հիմա Աստուած թող իւր վրէժխնդրութիւնը ինձ տայ չարերը պատժելու:

Այս խօսքերէն ետև՝ նշան մը ըրաւ. կարծես թէ նաւը մեկնելու համար այս նշանին կ'ըսպասէր, ուստի անմիջապէս ճանբայ ելաւ և աներևոյթ եղաւ:



ԳԼՈՒԽ Ը

ԻՏԱԼԻԱ. — ՍԻՆՊԱՏ ՆԱՒԱՍՏԻ

Դէպ 'ի 1838 տարւոյն սկիզբները Իտալիոյ Ֆիորէնցա քաղաքին մէջ երկու երիտասարդներ կային, որոնք Փարիզի ամենէ ազնուական ընտանիքէ էին. առնոյ մէկն էր դերակոմս Ալպէր տը Մորսէրֆ, և միւսը սեպուհ Ֆրանզ ա'Էբլինէ: Երկուքնին ալ մէջերնին այնպէս համաձայներ էին որ նոյն տարւոյն բարեկենդանը Հռոմ երթան անցընեն, ուր Ֆրանզ, որ դրեթէ չորս տարիէ 'ի վեր Իտալիա կը բնակէր, Ալպէրին առաջնորդութիւն պիտի ընէր:

Եւ որովհետև դիւրին դործ մը չէր բարեկենդանը Հռոմի մէջ անցընել, մանաւանդ երբ հասարակ տեղ մը չեն ուզեր բնակիլ, ուստի Սպանիոյ ըսուած հրապարակը պանդոկի մը Բասդրինի առնուն տիրոջը դիր դրեցին աղաչելով որ իրենց համար վայելուչ բնակարան մը պահէ:

Բայց Բասթրինի պատասխան դրեց թէ միայն երկրորդ դասակոնը երկու սենեակ և մէկ դահլիճ պարապ ունի, զորոնք չափաւոր վարձով մը այսինքն օրը քսան Ֆրանքով կրնայ իրենց վարձել: Երկու երիտասարդները անոր առաջարկութիւնը ընդունեցին, բայց մինչև բարեկենդան իրենց ժամանակը անօդուտ տեղը չանցընելու համար՝ Ալպէր Նաբոլի գնաց, իսկ Ֆրանզ Ֆիորէնցա մնաց:

Մէտիսիներուն* այս քաղաքին կեանքը քիչ մը ժամանակ վարելէն, Ակմբանոց կոչուած փափկութեան այն դրախտը լաւ մը պտըտելէն և Ֆիորէնցայի պատիւ բերող շքասէր պանդոկապետներէն աղէկ ընդունելութիւն դտնելէն ետև՝ արդէն Պոնաբարդի

*Ֆիորէնցայի անուանի եւ զօրաւոր գերդաստան մ'է, որմէ դուքսեր, դրաւիչներ եւ Թագուհիներ ելած են:

որորանն եղող Քորսիքա կղզին տեսած ըլլալով, իրեն մտային հաճոյք մը եկաւ այն Էլպա կղզին երթալ տեսնելու, որ ժամանակաւ Նաբոլէոնի մեծ օթևանն եղած էր։

Ուստի իրիկուն մը՝ Լիվորնոյի նաւահանգստէն մակոյկ մը մտնելով, և նաւավարներուն միայն հրամայելով որ դէպ 'ի Էլպա կղզին քաշեն, իւր վերարկուին մէջ փաթթուած մակաւկին մէջ պառկեցաւ։

Ծովային թռչունի մը իւր բոյնէն բաժնուելուն պէս՝ մակոյկը նաւահանգստէն բաժնուեցաւ և հետևեալ առտու Ֆրանզ Բորթո–Ֆէրրայօ ցամաքը եկաւ։

Ֆրանզ Հսկային քայլերուն ձգած բոլոր հետքերուն վրայէն այս կայսերական կղզւոյն ամեն կողմերը պտըտելէն ետև՝ վերստին իւր մակոյկը դարձաւ Մարչիանայէն։

Երկու ժամ ճանբայ ընելէն ետև՝ Բիանոզա իջաւ, ուր իրեն ապահովցուցեր էին թէ բազմաթիւ կարմիր կաքաւներ պիտի գտնէ։

Իւր որսորդութիւնը շատ դէշ գնաց. Ֆրանզ հազիւ հազ քանի մը նիհար կաքաւներ մեռցուց, և պարապ տեղը խոնջեցող ամեն որսորդի պէս դժգոհ՝ վերստին իւր մակոյկը մտաւ։

— Եթէ Ձեր Վսեմութիւնը ուզէ, ըսաւ մակուկապետը, պատուական որս մը կրնայ ընել։

— Եւ ո՞ր։

— Ան կղզին կը տեսնէ՞ք, շարունակեց մակուկապետը մատովը դէպ 'ի հարաւային կողմը՝ խիստ դեղեցիկ լեղակադոյն ծովուն մէջէն բարձրացող կոնաձև կոյտ մը ցուցընելով։

— Ան կղզւոյն անունը ի՞նչ է, հարցուց Ֆրանզ։

— Մօնթէ–Քրիսթօ, պատասխանեց Լիվորնացին։

— Ան կղզւոյն մէջ որսորդութիւն ընելու հրաման չունիմ։

— Ձեր Վսեմութիւնը հրամանի պէտք չունի, քանզի կղզին անապատ է։

— Զարմանալի բան, ըսաւ երիտասարդը, Միջերկրական ծովուն մէջ անապատ կղզի՞ կայ։

— Եւ բնական է այս, տէր իմ, վասն զի այս կղզին ժայռերու կոյտ մ'է, և իւր բոլոր տարածութեանը մէջ գուցէ արտավար մը մշակեալ երկիր չունի։

— Եւ որո՞ւն է այս կղզին։

— Թոսկանայիին։

— Ի՞նչ տեսակ որս կը գտնուի հոն։

— Իւրաւոր վայրի այծեր։

— Որոնք քարերը լիզելով կ'ապրին, ըսաւ Ֆրանզ չհասատալու ժպիտով մը։

— Ո՛չ, բայց քարերուն անջրպետներուն մէջ աճած հատամրգիները, մրտենիները և հերձիները ուտելով կ'ապրին։

— Բայց ո՞ւր պիտի պառկիմ։

— Ցամաքը քարայրներուն մէջ և կամ նաւը ձեր վերարկուին տակը։ Սակայն եթէ Ձեր Վսեմութիւնը ուզէ՝ որսորդութենէ անմիջապէս ետքը կրնանք Ճանբայ ելնել. աղէկ դիտէք որ յորեկուան պէս դիշերն ալ աղէկ Ճանբորդութիւն կ'ընենք, և եթէ հով չըլլայ՝ թիակները կը գործածենք։

Եւ որովհետև Ֆրանզ տակաւին բաւական ժամանակ ունէր իւր ընկերին քովն երթալու, և Հռոմի մէջ բնակարան գտնելու հոգէն ազատեր էր, իւր առջի անբաղդ որսորդութեան փոխարէնը հանելու համար այս առաջարկութիւնը ընդունեց։

Իւր հաստատական պատասխանին վրայ՝ նաւաստիները ցած ձայնով իրարու հետ քանի մը խօսք ըրին։

— Ի՞նչ ունիք, հարցուց Ֆրանզ, ի՞նչ եղաք, ուրիշ անկարելութիւն մը կայ։

— Ո՛չ, կրկնեց մակուկապետը. բայց պէտք ենք իմացընել Ձեր Վսեմութեանը որ կղզին երթողը մաքրողական օրերու դատապարտուած է։

— Ի՞նչ ըսել կ'ուզես։

— Ըսել կ'ուզեմ որ Մօնթէ–Քրիսթօ կղզին անմարդաբնակ է, և երբեմն Քորսիքայէն, Սարտենիայէն կամ Ափրիկէէն եկող մաքսանենգեր և ծովահէներ հոն կ'ապաստանին։ Եթէ ուր և իցէ նշանով մը այն կղզին երթալը իմացուի, Լիվորնօ դառնալնուս՝ պիտի ստիպուինք վեց օր առողջավայրն անցընել։

— Ի՞նչ կ'ըսես, այդ բանը խնդիրը կը փոխէ. վեց օր, ճիշտ աշխարհիս արարչագործութեան օրերուն չափ։ Քիչ մը շատ է, տղաք։

— Բայց ո՞վ պիտի ըսէ թէ Ձեր Վսեմութիւնը Մօնթէ-Քրիսթօ գնաց։

— Ես չպիտի ըսեմ, յայտնի է, ըսաւ Ֆրանց։

— Եւ ոչ իսկ մենք, ըսին նաւաստիները։

— Ուրեմն քաշեցէք նաւը դէպ 'ի Մօնթէ-Քրիսթօ։

Մակուկապետը հրաման մը ըրաւ. մակոյկին գլուխը կղզիին վրայ դարձուցին, և մակոյկը սկսաւ անոր ուղղութեամբը յառաջանալ։

Ֆրանց սպասեց որ նաւաստիները իրենց գործը լմնցընեն, և երբ մակոյկը իր նոր ճամբան բռնեց, առագաստները հովով ուռեցան, և չորս նաւաստիները իրենց տեղը նստան՝ երեքը դէպ 'ի առջև և մէկը ղեկին, այն ատեն խօսակցութիւնը շարունակեց.

— Սիրելիդ իմ, Կաէթանօ, ըսաւ մակուկապետին, կարծեմ կ'ըսէիր թէ Մօնթէ-Քրիսթօ կղզին ծովահէններու ապաստանարան մ՞է. այս բանս այծերէն աւելի ուրիշ որս մը կ'երևի ինձ։

— Այո՛, տէր իմ, ստոյգ է։

— Մաքսանենգ ըլլալը գիտէի, բայց կը մտածէի որ Ալճէրիան առնուելէն և անոնց իշխանութիւնը կործանուելէն 'ի վեր ծովահէնները միայն Գուբըրի և Մէրիէթ նաւապետին վիպասանութեանց մէջ կը գտնուին։

— Ձեր Վսեմութիւնը կը սխալի. ծովահէնները ինչպէս և աւազակները Լեւոն ԺԲ պապէն ջնջուած համարուած են, սակայն անոնք ամեն օր մինչև Հռոմի դրան մօտ ճանբորդները կը բռնեն։ Չլսեցի՞ք, հազիւ վեց ամիս առաջ Հռոմի մէջ եղող Գաղղիոյ դեսպանը Վիլէթրիէն հինգ հարիւր քայլ անդին կողոպտուեցաւ։

— Այո՛, կը յիշեմ։

— Եթէ Ձեր Վսեմութիւնը մեզի պէս Լիվօրնօ բնակէր, ամեն ատեն այս խօսքերը պիտի լսէր թէ՝ Ապրանքով բեռնաւորուած նաւ մը կամ Անգղիական շոգեկայմ նաւ մը, որ Պասթիա, կամ Բօրթօ-Ֆէրրայօ և կամ Չիվիթա-Վէքքիա կ'ըսպասուէր, ամենևին չվերադարձաւ, անոր ինչ ըլլալը չգիտցուիր, անշուշտ ժայռի մը վրայ խորտակուած է։ Ի՞նչ կը կարծէք, այն խորտակիչ ժայռը ցած և նեղ մակոյկ մ՛է վեց կամ ութ հոգւով,

որոնք մութ և մրրկալից գիշեր մը՝ անապատ և անմարդաբնակ կղզեակի մը ետին կը բռնեն զայն և կը կողոպտեն, ինչպէս որ աւազակները անտառի մը անկիւնը սուրհանդակի մը կառքը կը կեցընեն և կը կողոպտեն։

— Բայց վերջապէս այս չարագործներուն պատահողները ինչո՞ւ չեն գանգատիր, կրկնեց Ֆրանց՝ միշտ մակուկին մէջ տարածուած, ինչո՞ւ Գաղղիոյ, Սարտենիոյ կամ Թոսկանայի կառավարութեան չեն բողոքեր։

— Կը հարցընես թէ ինչո՞ւ, ըսաւ Կաէթանօ ժպտով մը։

— Այո՛, ինչո՞ւ։

— Վասն զի նաւուն կամ շոգեկայմին մէջ գտնուած բոլոր թանկագին բաները իրենց մակոյկը փոխադրելէն ետև՝ նաւաստիներուն ձեռքը և ոտքը կը կաշկանդեն, ամեն մէկուն պարանոցէն ալ քսան և չորս քիլոնոց գնտակ մը կը կապեն, ղեկի բռնուած նաւուն յատակը տակառի մը չափ ծակ մը կը բանան, վեր կ'ելնեն, մառաններուն բերանները կը գոցեն, և իրենց մակոյկը կը փախչին։ Նաւուն մէջ ողբալու և հառաչելու ձայներ կը լսուին, տասն վայրկեան ետքը՝ նաւը կ'ըսկսի սակաւ առ սակաւ ընկղմիլ։ Նախ մէկ կողմին վրայ կը հակի, ետքը միւս կողմին վրայ, վերջապէս ուղղակի կ'ըսկսի ընկղմիլ։ Յանկարծ թնդանօթի ձայնի նման աղմուկով մը յարկին խորտակուելու ձայնը կը լսուի։ Այն ատեն նաւը ծովածուփ կը յուզուի՝ ջուրին հետ մաքառող խեղդուողի մը պէս, որ իր շարժումներովը աւելի կ'ընկղմի։ Ջուրը նաւուն դատարկ կողմերը շուտով լեցուելէն ետքը՝ ծակերէն դուրս կը նետուի՝ այն ջրային սիւներուն նման, զորոնք քանի մը հսկայանման վիշապաձուկեր իրենց շնչահաններէն դուրս կը ցայտեցընեն։ Վերջապէս խորդալու պէս վերջին ձայն մը կը հանէ, իր բոլորտիքը վերջին շրջան մը կ'առնու և ջուրին մէջ կը սուզի լայնաբերան ձագարի նման անդունդ մը բանալով, որու մէջ ջուրերը վայրկեան մը շրջան կ'առնուն. սակաւ առ սակաւ ջուրը կը միանայ և հետքը կ'ոչնչանայ, այնպէս որ հինգ վայրկեան ետքը՝ Աստուծոյ աչքը միայն կարող է այն խաղաղ ծովուն խորը ընկղմած նաւը տեսնել։

Հասկըցա՞ք հիմա, յաւելցուց մակուկավարը ժպտելով, թէ ինչ պատճառաւ նաւը մէկ մ'ալ չվերադառնար, և նաւաստիները չեն կրնար բողոքել։

Եթէ Կաէթանօ հօն երթալու առաջարկութիւնը ընելէն առաջ այս պատմութիւնը ըրած ըլլար, հաւանական է որ Ֆրանց որոշումը ընելէն առաջ մտածէր. բայց արդէն ճամբայ ելեր էին և ետ դառնալը վատութիւն մը պիտի համարուէր։ Ֆրանց այն մարդոց կը նմանէր, որոնք չեն ախորժիր վտանգաւոր պարագաներու մէջ մտնել, սակայն երբ այս պարագան իրենց առջևն ելնէ, առանց այլայլելու պաղ արիւնով մը կը դիմահարեն անոր. այն խաղաղասէր մարդոց կը նմանէր, որոնք կենաց մէջ վտանգը՝ իբր մենամարտութեան մէջ հակառակորդ մը կը համարին, որոնք անոր շարժումները կը զննեն, անոր ոյժը կը կշռեն, աւելի շունչ առնելու համար կը կենան քան թէ վատ երևելու, և մէկ նայուածքով իրենց հակառակորդին վրայ ունեցած գերազանցութիւննին իմանալով մէկ հարուածով կ'ըսպաննեն զան։

— Ես չեմ հաւատար այդ բանին, կրկնեց Ֆրանց, Սիկիլիա և Գալապրա ճանբորդութիւններ ըրեր եմ, երկու ամիս Արշիպեղագոսին մէջ նաւով պտըտեր եմ, և ամենևին աւազակի կամ հէնի ստուերը տեսած չեմ։

— Ես այն մտօք չըսի Ձեր Վսեմութեանը, որ դուք ձեր նպատակէն ետ կենաք, ըսաւ Կաէթանօ. այլ դուք ինձ հարցում մը ըրիք, և ես ձեր պատասխանը տուի միայն։

— Այո՛, սիրելիդ իմ Կաէթանօ, այդ պատմութիւնդ շատ կարևոր է և որովհետև կ'ուզեմ ժամանակս աղէկ գործածել, ուրեմն յառա՛ջ, քաշեցէք դէպ 'ի Մօնթէ-Քրիսթօ։

Այսու ամենայնիւ շուտով իրենց նպատակին կը մօտենային, հովը յաջող կը փչէր, և նաւը մէկ ժամու մէջ վեց եօթն մղոն կը յառաջանար։ Որչափ կը մօտենային, այնչափ կղզին կարծես թէ ծովուն մէջէն բարձրանալով կը մեծնար, և վերջալուսին յստակ մթնոլորտին մէջէն զինանոցի մը ռումբերուն նման իրարու վրայ կուտեալ ժայռերը կ'երևէին, որոց անջրպետներուն մէջ կարմրած հաւամրգիները և կանաչազարդ ծառերը կը տեսնէին։

Իսկ նաւաստիները թէև կատարեալ հանդարտ կ'երևէին, սակայն յայտնի կ'երևէր որ իրենց հսկողութիւնը արթնցեր էր, և իրենց նայուածքը առջևնին տարածուած ընդարձակ հայելիին վրայ կը շրջէին. հորիզոնին վրայ միայն ձկնորսի քանի մը նաւակներ կը տեսնուէին, որոնք սպիտակ առագաստներով ալիքներուն ծայրերը կը տատանէին որորներու նման։

Մօնթէ-Քրիսթոյէն հազիւ տասն ու հինգ մղոն հեռի էին երբ արևը Քորսիքայի ետին սկսաւ մտնել, որուն լեռները աջ կողմը բարձրանալով իրենց ատամնաձև տխուր երևոյթը երկնից վրայ կը նկարուէին։ Ատամաստոր հսկային նման ժայռերուն այս կոյտը սպառնական դէմք մը կը ցուցնէր մակոյկին՝ արևուն լոյսը արգիլելով և միայն անոր ոսկեգոյն մէկ մասը երևցընելով. լերանց ստուերը սակաւ առ սակաւ ծովուն վրայ տարածուեցաւ, և կարծես թէ այս վաղաշէջ վերջալոյսը իւր առջևէն կը հալածէր, որ վերջապէս մինչև բրգաձև կոյտին գագաթը մղուեցաւ, ուր բորբոքեալ հրաբուղխի մը բոցին նման վայրկեան մը մնաց. բայց ստուերը աստիճանաբար բարձրանալով կղզւոյն գագաթն ալ գրաւեց, և այնուհետև կղզին մոխրագոյն լեռ մը կ'երևէր, որ երթալով կը մթննար։ Կէս ժամ ետքը մթութիւնը կատարեալ պատեր էր։

Բարեբաղդաբար նաւաստիները իրենց սովորական ծովերուն մէջն էին, և Թոսկանայի արշիպեղագոսին ամենափոքր ժայռն անգամ կը ճանչնային. քանզի մակոյկը շրջապատող խորին մթութեան մէջ Ֆրանց բոլորովին հանգիստ չէր։ Քորսիքան գլխովին աներևութացեր էր, և Մօնթէ-Քրիսթօ կղզին իսկ անտեսանելի եղեր էր. բայց կ'երևէր թէ նաւաստիները լուսակն կենդանւոյն պէս մթութեան մէջ տեսնելու զօրութիւնն ունէին, և ղեկավարը ամենևին երկբայութիւն մը չէր ցուցըներ։

Արևը մտնելէն գրեթէ ժամ մը ետքը՝ Ֆրանց իւր ձախ կողմը քառորդ մը մղոն հեռու՝ աղօտ առարկայ մը տեսնել կարծեց. բայց անկարելի էր անոր ինչ ըլլալը որոշել, և որպէս զի չըլլայ թէ նաւաստիներուն ծաղրը շարժէ տատանող ամպերը ցամաք երկիր մը կարծելուն համար, լռեց։ Սակայն յանկարծ ծով-

եզերքը մեծ լոյս մը երևցաւ. ցամաք երկիրը կրնար ամպի նմանիլ, բայց այս բոցը անշուշտ օդերևոյթ մը չէր։

— Ի՞նչ է այն լոյսը, հարցուց Գրանդ։

— Լուցէք, ըսաւ մակուկապետը, կրակ վառած են հոն։

— Բայց կղզւոյն մէջ բնակիչ չկայ կ'ըսէիր։

— Տեղացի բնակիչ չկայ ըսի, բայց ըսի նաև որ մաքսանենգներու ապաստան մ'է։

— Ծովահէններուն իսկ ապաստանն է։

— Այո՛, պատասխանեց Կաէթանօ. այս պատճառաւ պատուիրեցի որ նաւուն գլուխը դարձընեն. ինչպէս որ կը տեսնէք, կրակը ետևնիս մնաց։

— Բայց այս կրակը, շարունակեց Գրանդ, կարծեմ թէ աւելի ապահովութիւն կը պատճառէ քան թէ անհանգստութիւն. տեսնուելէ վախցող մարդիկ կրակ չեն վառեր։

— Ո՛հ, հոգ չէ, ըսաւ Կաէթանօ. եթէ մթութեան մէջ կղզւոյն դիրքը դիտել կարենայիք, պիտի տեսնէիք որ այս կրակը ոչ ծովեզերքէն և ոչ Բիանոզայէն կ'երևի, այլ միայն ծովու կողմէն։

— Ուրեմն կը վախնաս որ այս կրակին բոլորտիքը դէշ ընկերնե՞ր ժողվուած են։

— Ես ալ այդ բանը ստուգել կ'ուզեմ, կրկնեց Կաէթանօ՝ աչքը այս երկրային աստղին վրայ յառած։

— Եւ ինչպէս պիտի կրնաս ստուգել։

— Հիմա կը տեսնէք։

Այս խօսքերուն վրայ՝ Կաէթանօ իւր ընկերներուն հետ խորհրդակցեցաւ, և հինգ վայրկեան վիճաբանելէ ետև՝ լռութեամբ նաւուն ընթացքը փոխեցին, և առջի ուղղութեամբ սկսան յառաջանալ, որով կրակը բարձրացած ժայռի մը ետին մնալով աներևոյթ եղաւ։

Այն ատեն նաւուղիղը ղեկին միջոցաւ ուրիշ ուղղութիւն մը տուաւ մակոյկին, որ յայտնապէս մօտենալով կղզիէն միայն յիսուն քայլ հեռու կը գտնուէր։

Առագաստը վար առին, և մակոյկը նոյն տեղը կեցաւ։

Այս գործը խիստ լռութեամբ կատարեցին, արդէն նաւուն ընթացքը փոխելէն 'ի վեր խօսք մը անգամ չարտասաներ էին։

Մօնթէ-Քրիստօ երթալու առաջարկութիւնը Կաէթանօ ըրած ըլլալուն համար՝ բոլոր պատասխանատուութիւնը իւր վրայ առած էր։ Չորս նաւաստիները առանց իրենց աչքը անոր վրայէն վերցընելու՝ թիակները պատրաստեցին և զանոնք քաշելու համար անոր հրամանին սպասեցին։

Իսկ Գրանդ արդէն մեզ ծանօթ եղած իւր պաղ արիւնովը իւր զէնքերը աչքէ կ'անցընէր. երկու երկփող և մէկ լայնափող հրացաններ ունէր, զորոնք լեցուց պատրաստեց։

Այս միջոցիս՝ մակուկապետը իւր տառատոկը և շապիկը հաներ, և տռնազգեստը վեր քաշեր էր, բայց փոկոտն ըլլալուն համար՝ ոչ մուճակ ունէր հանելու և ոչ գուլպայ։ Ուստի կատարեալ լռութեան նշանը տալու համար՝ մատը շրթանց վրայ դնելէն ետև՝ ծովուն մէջ սահեցաւ, և այնպիսի զգուշութեամբ դէպ 'ի ծովեզրը լողաց որ անկարելի էր անոր շարժմանց ձայնը լսել։ Միայն անոր շարժումներէն գոյացած փոսփորական լոյսէն անոր հետքը կրնային տեսնել։

Շատ չանցաւ այս հետքն ալ աներևոյթ եղաւ. յայտնի կ'երևէր որ Կաէթանօ գետինը կոխեր էր։

Մակոյկին մէջ եղողները կէս ժամու չափ անշարժ մնացին, որմէ ետև նոյն հետքին ծովեզրէն մօտ երևիլը և դէպ 'ի մակոյկը մօտենալը տեսան։ Անմիջապէս ետքը և երկու թևափոխով Կաէթանօ մակոյկը վերադարձաւ։

— Ի՞նչ լուր, ըսին միաբերան Գրանդ և չորս նաւաստիները։

— Ի՞նչ լուր կ'ուզէք, ըսաւ. Սպանիացի մաքսանենգներ են, որոց հետ միայն Քորսիքացի երկու ծովահէններ կան։

— Այդ Քորսիքացի երկու ծովահէնները Սպանիացի մաքսանենգներու հետ ի՞նչ կ'ընեն։

— Ո՛հ, տէր իմ, ըսաւ Կաէթանօ խիստ ընկերսիրական ձայնիւ մը, այս աշխարհիս մէջ պէտք է իրարու օգնել։ Շատ անգամ երբ այն ծովահէնները ցամաքի վրայ պահապան զօրքերէն կամ հրացանակիրներէն նեղը կ'իյնան, մակոյկ մը և անոր մէջ մեզի պէս բարի նաւաստիներ կը գտնեն, և մեր ծովածուփ տան մէջ ապաստան մը կը խնդրեն։ Ի՞նչ օգուտ հալածուող ողորմելի

մարդու մը խնդրած օգնութիւնը մերժել. ուստի կ'ընդունինք զան և ապահովութեան համար ծովուն բացերը կ'ելլենք: Այս դործը ընելով բան մը չենք կորսընցներ, այլ մեր նմանիներուն մէկուն կեանքը կամ դոնէ աղատութիւնը ապահովցուցած կ'ըլլանք, և մը այս ծառայութեան փոխարէն՝ անոնք մեզ երախտապարտ կը մնան մեզ յարմար տեղ մը ցուցընելով, ուր անարգել կրնանք մեր ապրանքը ցամաք հանել:

— Ի՛նչ կ'ըսես, սիրելիդ իմ Կաէթանօ. ուրեմն դուն ալ քիչ մը մաքսանենգ ես:

— Է՛հ, ինչ կրնամ ընել, տէր իմ, ըսաւ մակուկապետը անհնարաղրելի ժպիտով մը. մարդս ամեն դործ կրնայ ընել. ապրիլ պէտք է:

— Ուրեմն այս ժամուս Մօնթէ–Քրիսթօ պտնուող մարդոց հետ ծանօթութիւն ունիս:

— Գրեթէ: Մենք նաւաստիքս ապատ–որմաշէն (ֆրան–մասօն) ըսուած աղանդաւորներուն պէս ենք, նշաններով ղիրար կը ճանչնանք:

— Կը կարծեմ որ ցամաք ելլելու ամենևին երկիւղ չունիք:

— Ամենևին. մաքսանենգները դող չեն:

— Բայց այն երկու Քորսիքայի ծովահէնները . . . կրկնեց Ֆրանզ՝ վտանգին պատեհութիւնները առաջէն մտածելով:

— Ի՞նչ ընեն, ըսաւ Կաէթանօ, յանցանքը իրենցը չէ, այլ կառավարութեան:

— Ի՞նչպէս:

— Անշուշտ. քանզի մէկն մը շինելնուն համար կառավարութիւնը զանոնք կը հալածէ, ուրիշ յանցանք չունին. կառավարութիւնը կարծէ թէ Քորսիքայի բնութեան մէջ վրէժխնդրութեան ոգի կայ:

— Մէկն մը շինել ինչ ըսել է. մարդ մը սպաննել ըսել կ'ուզես, ըսաւ Ֆրանզ իւր հարցումները շարունակելով:

— Թշնամի մը սպաննել ըսել կ'ուզեմ, կրկնեց մակուկապետը. որ բաւական շատ տարբեր է:

— Ուրեմն, շարունակեց երիտասարդը, երթանք այն մաքսա-

նենգներէն և ծովահէներէն ապաստան մը խնդրելու. կը կարծեմ որ տան մեզ:

— Անշուշտ:

— Քանի՞ հոգի են:

— Չորս հոգի, երկու հոգի ալ ծովահէները՝ վեց կ'ընէ:

— Ուրեմն ձիշտ մեր թիւը ունին. եթէ այն պարոնները չար խորհուրդ մը ունենան իսկ, մեր այժը անոնց ուժին հաւասար է, և հետևաբար անոնց դիմադրելու կարող պիտի ըլլանք: Ուստի վերջին անդամ կը կրկնեմ, քաշեցէք դէպ 'ի Մօնթէ–Քրիսթօ:

— Այո, տէր իմ, բայց պիտի ներէք որ վերստին ղուշաբերութիւնիս ձեռքէ չձգենք:

— Անշուշտ, բարեկամ. Նեստորի պէս խելացի և Ոդիսևսի պէս խոհեմ եղիր: Ոչ միայն կը ներեմ, այլ և կը խրատեմ իսկ:

— Ուրեմն, լուութիւն, ըսաւ Կաէթանօ:

Այն ատեն ամենքն ալ լուեցին:

Ֆրանզի պէս ամեն բանի բուն նպատակը խորհող մարդու մը համար, իրենց այս կացութիւնը առանց վտանգաւոր ըլլալու՝ ծանր ըլլալէն պակաս չէր: Խորին մթութեան ժամանակ, ծովուն մէջ տեղը նաւաստիներու մէջ առանձին կը դտնուէր, որոնք գինքը չէին ճանչնար, և իրեն անձնանուէր ըլլալու պատճառ մը չունէին, որոնք պիտէին թէ իւր կառարին մէջ քանի մը հազար ֆրանք ունի, և տասն անդամ, եթէ ոչ տեղնուօք դէթ հետաքրքրութեամբ իւր ընտիր զէնքերը քններ էին: Ուրիշ կողմանէ ալ՝ միայն այս նաւաստիներուն ընկերութեամբը այնպիսի կղզիի մը վրայ պիտի ելլէր, որուն անունը խիստ կրօնական էր, բայց կ'երևէր թէ Գողգոթային Քրիստոսի տուած ապաստանէն ուրիշ ապաստան մը պիտի չտար Ֆրանզին այն մաքսանենգներուն և ծովահէներուն միջոցաւ: Ամէն եղբը՝ ցօրեկը պատմուած այն պատմութիւնը, զոր չափազանցօրէն կարծեր էր, դիշերը իրեն աւելի ճշմարտանման կ'երևէր: Ուստի այս կրկին քայլ գուցէ երևակայական վտանգին մէջ տեղը դտնուելով, աչքը նաւաստիներուն և ձեռքը հրացանին վրայէն չէր վերցներ:

Սակայն նաւաստիները իրենց առաջաստները վերստին բացեր

և իրենց երթևեկութեամբը բացած ակօսին վրայ վերադարձեր էին։ Ֆրանզ արդէն քիչ մը խառարին սովորած ըլլալով, մութին մէջ կրանիթեայ հակայն կը տեսնէր, որուն եղերքին մօտէն մակոյկը կ'երթևեկէր։ Եռքը վերջապէս ժայռի մը անկիւնը անցնելով, կրակը վերստին տեսան, որ առաջուանէ աւելի կը փայլէր, և որուն բոլորտիքը հինգ կամ վեց հոգի նստեր էին։

Կրակին լուսին ցոլացումը ծովուն վրայ հարիւր քայլի չափ անդին կը տարածուէր։ Կաէթանօ մակոյկը կրակին ճիշտ դիմացը բերաւ, պլուխը դէպ 'ի յառաջ դարձուց և քաջութեամբ լուսաւոր շրջանին մէջ մտաւ ձկնորսի մը երգը առանձին սկսելով, որուն վերջին մասը իր ընկերները միաձայն կը կրկնէին։

Երգին ձայնը առնելնուն պէս՝ կրակին բոլորտիքը նստող մարդերը ոտք ելնելով՝ նաւամատոյցին մօտեցեր էին և իրենց աչքը մակոյկին վրայ յառած կը նայէին, որպէս զի եկողներուն ոյժը և նպատակը իմանան։ Կ'երևի թէ իրենց ըրած հարևանցի ընտութիւնը բաւական համարեր էին. քանզի բաց 'ի մէկէն որ ծովեզերը մնաց, ամենքն ալ վերադարձան կրակին բոլորտիքը նստան, որուն վրայ ամբողջ ուլ մը կը խորովէին։

Երբ նաւակը քանի քայլի չափ հեռաւորութեամբ երկրին մօտեցաւ՝ ծովեզերը մնացող մարդը՝ պահպանութեան սպասող պահանորդի մը պէս իր լայնափող հրացանը մեքենապէս անոնց ցոյց և Սարտենիայի գաւառական լեզուով պոռաց. — Ո՞վ էք դուք։

Ֆրանզ պաղութեամբ իր երկփող հրացանին բլթակը բացաւ։

Ան ատեն Կաէթանօ այն մարդուն հետ քանի մը խօսք ըրաւ, զորոնք Ճանապարհորդը չհասկըցաւ, բայց կ'երևէր որ այն խօսքերը իրեն կը նկատէին։

— Ձեր վսեմութիւնը կ'ուզէ՞ որ իր անունը տանք, հարցուց մակուկապետը, թէ անծանօթ կ'ուզէ երևիլ։

— Ընտիս կատարեալ անծանօթ պէտք է որ մնայ. միայն այս ըսէ անոնց, կրկնեց Ֆրանզ, թէ զուարճութեանս համար ճանապարհորդող Գաղղիացի մ'եմ։

Երբ Կաէթանօ այս պատասխանը հաղորդեց, պահանորդը կրա-

կին շուրջը նստող մարդոց մէկուն հրաման մը ըրաւ, որ անմիջապէս առագաստը ամբարձին և ժայռերուն մէջ անհետացաւ։

Այս միջոցիս լուռթիւն եղաւ։ Իւրաքանչիւր ոք իր գործոց զբաղած կ'երևէր. Ֆրանզ մակոյկէն դուրս ելնելու կը պատրաստուէր, նաւաստիները իրենց առագաստը ամփոփելու, և մաքսանենգները իրենց ուղը խորովելու. սակայն այս յայտնի անտարբերութեան ժամանակ՝ փոխադարձաբար զերար կը դիտէին։

Անհետացած եղող մարդը մեկնած կողմին հակառակ կողմէն յանկարծ երևան ելաւ, և դլխովը պահանորդին նշան մը ըրաւ, որ մակոյկին կողմը դառնալով՝ միայն այս խօսքը արտասանելու բաւական համարեց. — Հրամայեցէք։

Նաւաստիները հրաւէրը կրկնելու չսպասեցին. թիակներու չորս հարուածով մակոյկը երկրին մօտեցաւ. Կաէթանօ ծովափը ցատկեց, պահանորդին հետ ցած ձայնով վերստին քանի մը խօսք ըրաւ. իր ընկերները մի առ մի դուրս ելան, վերջապէս անոնց ետևէն Ֆրանզ ցամաքը ելաւ։

Իր փոկաւոր հրացաններէն մէկը ինքը բռներ էր, միւսը Կաէթանօ, և նաւաստիներէն մէկը իր լայնափող հրացանը առած էր։ Իր հագուստին ձևը արուեստագէտի մը և միանգամայն պճնասէրի մը հագուստին ձևին կը նմանէր, որով աստղջաքանիներուն ամենևին կասկած մը և հետևաբար անհանգստութիւն մը չպատճառեց։

Մակոյկը ծովեզերը կապեցին, և քանի մը քայլ յառաջ անցան հանդչելու յարմար տեղ մը գտնելու համար. բայց անշուշտ իրենց գացած կողմը պահանորդին յարմար երևցած պիտի չըլլար, վասն զի Կաէթանոյին պոռաց.

— Այդ կողմէն մի՛ երթաք, եթէ կը հաճիք։

Կաէթանօ ներսումն խնդրեց, և առանց կենալու անոր հակառակ կողմը յառաջացաւ, ինչ ատեն նաւաստիները ճանբան լուսաւորելու համար կրակէն ջահ մը վառելու զացեր էին։

Գրեթէ երեսուն քայլ հեռանալէն ետև՝ ժայռերով շրջապատեալ փոքր տափարակ տեղ մը տեսան, ուր նստարաններ ձևացուցած էին պահանորդի աթոռակներու նման։ Շրջապատը եղած

քուսական հողին երակներուն մէջ քանի մը կարճաբերձ կաղնիներ և թանձրախիտ մրտենիներ կ'աճէին։ Ֆրանզ ջահով բոլորտիքը դիտեց, և մոխիրի կոյտ մը տեսնելով՝ իմացաւ որ Մօնթէ-Քրիսթօ կղզւոյն թափառական այցելուները այն տեղւոյն յարմարութիւնը իրմէ առաջ տեսնելով, իրենց սովորական կայարանն ըրեր էին։

Ֆրանզին ծր և իջէ դէպ մը պատահելու երկիւղը դադրեր էր. ցամաք երկիրը կոխելէն, և այս ասպնջականներուն եթէ ոչ բարեկամական դէթ անտարբեր վարմունքը տեսնելէն ետև՝ իր մտատանջութիւնը անհետացեր, և դրացի խումբին խորոված ուլին հոտէն ախորժակի փոխուեր էր։

Իր այս փափաքը Կաէթանոյին յայտնեց, որ ապահովցուց ղինքը թէ կրնայ շուտով ընթրիք մը պատրաստել, քանի որ հետերնին մակուկին մէջ հաց, գինի, վեց կաքաւ և զանոնք խորովելու համար լաւ կրակ մը ունէին։

— Ասկէ զատ, յաւելցուց մակուկապետը, եթէ ուլին հոտը խիստ ախորժելի երևցաւ Ձեր Վսեմութեանը, կրնամ մը թռչուններէն երկուքը անոնց չորքոտանիին մէկ պատառին հետ փոխել։

— Շատ աղէկ, ուզածդ ըրէ, Կաէթանօ, ըսաւ Ֆրանզ. ստիպի միջնորդութիւն ընելու շատ յարմարութիւն ունիս։

Ան միջոցին՝ նաւաստիները հաւամրկիներ ժողվեր, կանաչ մրտենիներու և կաղնիներու ոստերէ կոյտ մը ըրեր, և կրակը տուեր էին անոր, որ շուտով բոցավառելով դեղեցիկ տեսք մը կ'ընծայէր։

Սակայն Ֆրանզ միշտ ուլին հոտը ծծելով անհամբերութեամբ մակուկապետին դառնալուն կ'ըսպասէր. երբ Կաէթանօ վերադարձաւ՝ խիստ մտազբաղ կ'երևէր։

— Ի՞նչ լուր, հարցուց Ֆրանզ, առաջարկութիւննիս մերժեցի՞ն։

— Ընդհակառակն, ըսաւ Կաէթանօ, գլխաւորնին գաղղիացի երիտասարդ մը ըլլալնիդ իմանալով կը հրաւիրէ որ իւր հետը ընթրէք։

— Գլխաւորը խիստ քաղաքավար մարդ մը կ'երևի, և կը նայիմ որ մերժելու պատճառ մը չունենալէս զատ՝ ընթրիքիս բաժինն ալ հետս տանիլ կ'ուզեմ։

— Ո՛հ, հարկ չկայ, ընթրելու համար պէտք եղածէն աւելին ունի, միայն թէ զարմանալի դաշամբ մը կ'ուզէ զձել իւր բնակարանը ընդունիլ։

— Իւր բնակարա՞նը, կրկնեց երիտասարդը, ուրեմն տո՞ւն մը չինել տուած է։

— Ո՛չ, բայց այնպէս կը հաստատեն թէ խիստ վայելուչ բնակութիւն մը ունի։

— Այդ գլխաւորը կը ճանչնա՞ս դուն։

— Անոր վրայօք խօսելնին լսեր եմ։

— Աղէ՞կ թէ գէշ խօսելնին։

— Երկու կերպով ալ։

— Ի՞նչ կ'ըսես. և ո՞րն է առաջարկուած դաշինքը։

— Պէտք է թողուք որ ձեր աչքը կապեն, և իւր ուզած ժամանակը միայն արձկեն։

Ֆրանզ իւր կրցած չափ Կաէթանոյին դէմքը դիտեց, որպէս զի այս առաջարկութեան դաղտնիքը իմանայ։

— Ո՛հ, իրաւունք ունիք, կրկնեց մակուկապետը Ֆրանզին մտքէն անցածին պատասխանելով, պէտք է որ մտածէք։

— Ի՞նչ կ'ընէիր թէ որ իմ տեղս ըլլայիր, հարցուց երիտասարդը։

— Կ'երթայի, որովհետև բան մը պիտի չկորսընցընէի։

— Առաջարկութիւնը կ'ընդունէի՞ր։

— Այո՛, գոնէ հետաքրքրութեան համար։

— Ուրեմն այդ գլխաւորին բնակարանին մէջ հետաքրքրական բաներ կան տեսնելու։

— Մտի՛ր ըրէք, ըսաւ Կաէթանօ ձայնը ցածցընելով, չեմ գիտեր՝ ըսածնին ստո՞յգ է . . .։

Կաէթանօ խօսքը ընդմիջեց, որպէս զի տեսնէ թէ օտարական մը իրենց խօսակցութիւնը մոխիկ կ'ընէ։

— Ի՞նչ կ'ըսեն։

— Կ'ըսեն թէ գլխաւորը ստորերկրեայ բնակութիւն մը ունի, որուն գուլ Բիթիի պալատը ոչինչ է։

— Ի՛նչ ցնորք, ըսաւ Ֆրանզ վերստին իւր տեղը նստելով։

— Ցնորք չէ, շարունակեց մակուկավարը, այլ ճշմարիտ։ Ս. Փէրթէնան նաւուն Գամա ղեկավարը անոր բնակութիւնը մոռնալով ըսեր է որ այնպիսի գանձեր միայն պարիկներու պատմութեանց մէջ կը գտնուին։

— Բայց գիտես որ այդպիսի խօսքերով Ալի–Պապայի այրը իջնելնին պիտի հաւատացընես ինծի։

— Ես լսածս ըսի ձեզ, տէր իմ։

— Ուրեմն խորհուրդ կու տաս որ այս առաջարկութիւնը ընդունիմ։

— Ձեր գիտնալու բանն է. Ձեր Վսեմութիւնը ուզածին պէս կրնայ ընել. այսպիսի պարագայի մէջ չեմ ուզեր ձեզ խորհուրդ տալ։

Ֆրանզ մտածեց որ այնպիսի հարուստ մարդ մը չէր կրնար վնաս մը հասցընել իրեն, որ միայն քանի մը հազար ֆրանք ունէր իւր վրայ, և որովհետև այս առաջարկութիւնը ընթրիք մը ընելու համար էր՝ ընդունեց զայն։

Կաէթանօ գնաց պատասխանը տանելու։

Սակայն ինչպէս որ ըսինք, Ֆրանզ խոհեմ ըլլալով ուզեց իւր անսովոր և գաղտնի ասպնջականին վրայ կարելի եղածին չափ աւելի մանրամասն տեղեկութիւն մը ստանալ։ Ուստի նաւաստիի մը կողմը դարձաւ, որ այս խօսակցութեանս ժամանակ կաքաւներուն փետուրները կը հանէր՝ իւր պաշտօնին վրայ պարծող մարդու մը ծանրութեամբը, և հարցուց անոր թէ ինչպէս այս մարդիկը այն կղզին եկած են, ըստ որում ամենևին նաւ մը կամ մակոյկ մը տեսած չէին ծովեզրը։

— Ես ամենևին չեմ զարմանար, ըսաւ նաւաստին, ըստ որում անոնց նաւը կը ճանչնամ։

— Գեղեցի՞կ նաւ է։

— Կը բաղձամ որ Ձեր Վսեմութիւնը այնպիսի նաւ մը ունենայ աշխարհիս բոլորտիքը պտըտելու համար։

— Եւ ի՞նչ ուժ ունի։

— Գրեթէ հարիւր տակառաչափի ուժ ունի, և զուարճութեան համար շինուած շեղակայմ նաւ մ'է, բայց շէնքը այնպէս ընտիր է որ երկար ժամանակ ծովուն կրնայ դիմանալ։

— Ո՞ւր շինուած է այն։

— Չեմ գիտեր, բայց Ճենովա կարծեմ։

— Եւ ինչպէս մաքսանենգներու գլխաւոր մը, շարունակեց Ֆրանզ, իւր առուտուրին համար սահմանեալ նաւ մը շինել տալու կը համարձակի Ճենովայի նաւահանգստին մէջ։

— Ես ձեզ չըսի որ այս նաւուն տէրը մաքսանենգ մ'է, ըսաւ նաւաստին։

— Դուն չըսիր, բայց կարծեմ Կաէթանօն ըսաւ։

— Կաէթանօն հեռուէն մարդերը տեսեր էր, բայց մէկուն հետ խօսեցած չէր տակաւին։

— Բայց եթէ այդ մարդը մաքսանենգ չէ, ինչ է ուրեմն։

— Իւր հաճոյքը համար ճանապարհորդող հարուստ մը։

— Այս մարդը խիստ զարմանալի մարդ մը պիտի ըլլայ, ըսաւ Ֆրանզ ինքնիրեն, ըստ որում անոր վրայ եղած պատմութիւնները տարբեր են իրարմէ։

— Եւ ինչ է անոր անունը։

— Իրեն հարցուած ժամանակը՝ կը պատասխանէ թէ Սէնպատ նաւաստի կը կոչուի. բայց իւր ճշմարիտ անունը այս ըլլալուն կը տարակուսիմ։

— Սէնպատ նաւաստի։

— Այո՛։

— Եւ ո՞ւր կը բնակի այդ պարոնը։

— Ծովուն վրայ։

— Ի՞նչ երկրէ է։

— Չեմ գիտեր։

— Զինքը տեսա՞ծ ես։

— Երբեմն։

— Ի՞նչպէս մարդ է։

— Ձեր Վսեմութիւնը անձամբ պիտի տեսնէ զայն։

— Եւ ո՞ւր պիտի ընդունի զիս։

— Անտարակոյս Կաէթանոյի ձեզ ըսած ստորերկրեայ պալատին մէջ։

— Այս կղզին եկած ժամանակնիդ, երբ ամէն կողմ անապատ

՝ը տեսնէր, ամենևին հետաքրքրութիւն մը ունեցած չէք այն դիւթեալ պալատը մտնելու։

— Ո՛հ, այո՛, տէր իմ, կրկնեց նաւաստին, և շատ անգամ, բայց մեր ամեն խուզարկութիւնները պարապը ելած են։ Ամեն կողմ քարայրը փնտռած ենք, և անոր ձանրան պտած չենք։ Սակայն կ՚ըսեն թէ անոր դուռը բանալիով չբացուիր, այլ դիւթական խօսքով մը։

— Ստուգիւ, կարծեմ թէ Հալըր Ա-ղէ ֆէնէրնէրուն մէկ պատմութիւնը կը լսեմ՝։

— Նորին Վսեմութիւնը ձեզ կ՚ըսպասէ, ըսաւ ձայն մը իր ետևէն, որ պահանորդինն ըլլալը ճանչցաւ։

Այս պահանորդը շեղակայմին երկու նաւաստիներուն հետ եկած էր։

Ֆրանզ ՝ի պատասխանի՝ իր թաշկինակը ծոցէն հանեց և իրեն հետ խօսողին ներկայացուց զայն։

Առանց խօսք մը խօսելու՝ անոր աչքը կապեցին այնպիսի յուշիկ կերպով, որ անզգուշութիւն մը չընելու համար ունեցած երկիւղին կը յայտնէր. այնուհետև երդում ընել տուին որ իր կապոցը քակելու համար փորձ մը պիտի չփորձէ որ և իցէ կերպով։

Ֆրանզ երդում ըրաւ։

Ան ատեն երկու մարդերը անոր իւրաքանչիւր թևէն բռնեցին, և Ֆրանզ անոնց օդնութեամբը և պահանորդին առաջնորդութեամբը կը քալէր։

Գրեթէ երեսուն քայլ առնելով, և ուլին ախորժաբեր հոտը քիչ քիչ աւելնալով, հասկըցաւ որ մաքսանենգերուն նստած տեղին աւելի կ՚անցնէր. եռքը յիսուն քայլի չափ ևս յառաջացան՝ անշուշտ պահանորդին իրենց չթողուցած կողմը. հիմա կը հասկըցուէր այն արգելքին պատճառը։ Քիչ մը եռքը օդը փոխուելով՝ հասկըցաւ որ ստորերկրեայ ճամբու մը մէջ մտան. քանի մը մանրերկրորդ յառաջանալէն ետև՝ դրան մը բացուելու ձայնը լսեց, և իրեն այնպէս երևցաւ որ օդը աւելի կը փոխուէր, և դաղջ ու քաղցրաբոյր օդ մը կը շնչէր։ Վերջապէս զգաց որ

սուսար և կակուղ օթոյի մը վրայ կը կոխէր. այն ատեն իր առաջնորդները զինքը թողուցին։ Վայրկեան մը լուռթիւն եղաւ, և ընաիր Գաղղիարէն լեզուաւ բայց օտարականի արտասանութեամբ ձայն մը ըսաւ իրեն.

— Բարի եկաք, պարոն, կրնաք ձեր կապոցը հանել։

Ինչպէս որ կը կարծուի՝ Ֆրանզ չսպասեց որ այս հրաւէրը կրկնեն. թաշկինակը արձկեց և իր դիմացը երեսուն և ութ կամ քառասուն տարեկան մարդ մը տեսաւ, որ Թունուզցիի զգեստ հագած էր, այսինքն կապոյտ մետաքսէ երկար ծոպով կարմիր գլխանոց մը, սակի թելով բանուած սև տուեայ բաճկոն մը, լայն և ուռեցած շալուարդյն վարտիք մը, բաճկոնին պէս ոսկեկուռ կոշկապատներ և դեղին մուճակներ. մէջքը աղնիւ գիսի մը կապած, և սրածայր ու կոր դաշոյն մը իր գօտիին խօթած էր։

Այս մարդը թէև իր դեղնութիւնէն գրեթէ կասպարի գոյն մը ունէր, սակայն խիստ դեղեցկադէմ կ՚երևէր. աչքը ազդու և սրատես էր. իր շիտակ և գրեթէ ձակատին ուղղութեամբ քիթը Յոյնի պատկերը կ՚ընծայէր, և մարդարիտի նման իր սպիտակ ակռաները դեղեցիկ կ՚երևէին սև ընչացքին և մօրուքին մէջ տեղը։

Միայն թէ այս դեղնութիւնը տարօրինակ էր. զան տեսնողը՝ երկար ատենէ ՝ի վեր դերեզմանի մը մէջ փակուելով մարմնոյ բնական գոյնը կորուսած մարդ մը պիտի կարծէր։

Թէև բարձրահասակ չէր, բայց շատ վայելուչ մարդ մը կ՚երևէր, և հարաւային կողմի մարդոց պէս իր ձեռքերն ու ոտքերը փոքր էին։

Բայց ամեն բանէն աւելի Ֆրանզին զարմանքը գրաւողը կամ կարասեայ փառաւորութիւնն էր, որոյ պատմութիւնը Կաէթանոյին ըրած ժամանակը՝ ցնորք մը կարծեր էր։

Սենեակին բոլոր պատերը ոսկեհուռ ծաղիկներով գործուած շալուարդյն Տաճկի կերպասներով զարդարուած էին։ Սենեկին ներքին կողմը տեսակ մը բազմոց մը կար, որուն վրայովը շարած էին կարմրագոյն պատեհաններով և ականակուռ դաստապաններով Արաբացի զէնքեր. Վենետկեան ապակիէ սքանչելի ձևով և գոյնով կանթեղ մը առաստաղէն կախուած էր. գետինը Տաճկաս-

տանի օթոց մը փրուած էր, որուն մէջ իւր ոտքը միւնչևը կոճը կը մխուէր։ Վարագոյրներ կախուած էին Ֆրանզին ներս մտած դրան և չափազանց լուսաւորուած ուրիշ սենեկի մը դրան առջևը։

Ասպնջականը վայրկեան մը թողուց որ Ֆրանզ իւր հիացման մէջ մնայ, բայց իւր աչքը անոր վրայէն չէր վերցներ, և անոր քննութեանը փոխարէն ինքն ալ զան կը քննէր։

— Պարոն, ըսաւ անոր վերջապէս, հազար անգամ ներումն կը խնդրեմ ձեր իմ տունս գալու ժամանակ ձեզ եղած դժուշութեան համար։ Բայց որովհետև այս կղզին գրեթէ միշտ անմարդաբնակ է, եթէ բնակութեանս գաղտնիքը իմացուի, անշուշտ հանգստութիւնս պիտի կորսընցնեմ, և ինձ մեծ դժբաղդութիւն մը պիտի ըլլայ՝ ոչ թէ ընելու կորստեանս, այլ ուզած ժամանակս՝ աշխարհէս հեռու հոս առանձնանալ չկրնալուս համար։ Ուստի կ'ուզեմ ձեր այս փոքր դժդոհութիւնը մոռցընել տալ՝ ձեր հոս գտնել չյուսացածը նուիրելով, այսինքն՝ չափաւոր ընթրիք և հանգիստ անկողին մը։

— Պէտք չէ որ այսպիսի բանի մը համար ներումն խնդրէք, պատասխանեց Ֆրանզ. քանզի միշտ տեսած եմ որ դիւթեալ պալատ մը մտնել ուզողին աչքը կը կապեն, այսպէս Բաուլ Հէյլընոնեռւն մէջ մտած է. ուստի ես ալ չեմ մեղադրեր զձեզ ձեր այսպիսի վարմունքին համար. ըստ որում տեսածս Հաղար և մէկ Գիշերներուն հրաշալեայ հետևութիւնն է։

— Ափսոս, Ղուկուղղոսի ըսածին պէս ես ալ ձեզ պիտի ըսեմ. եթէ ձեր այցելութեան պատիւն ունենալս գիտցած ըլլայի, անշուշտ պիտի պատրաստուէի։ Սակայն իմ մենանոցս ձեր հրամանին կը յանձնեմ և իմ ընթրիքս ձեզ կը նուիրեմ։ Ալի, կերակուրը պատրաստ է։

Գրեթէ նոյն վայրկենին վարագոյրը բացուեցաւ, պարզ սպիտակ պատմուճանով Նուպիայի խափչիկ մը նշան ըրաւ իւր տիրոջը թէ կրնայ Ճաշարանը անցնիլ։

— Ձեմ գիտեր, ըսաւ անծանօթը Ֆրանզին, թէ դուք ալ ինծի համամիտ էք. առանց գիմացինիս անունը կամ տիտղոսը գիտնալու՝ անոր հետ երկու կամ երեք ժամ մնալէն աւելի անտանելի

բան չկայ։ Հիւրընկալութեան օրէնքը խիստ պատուելուս համար կ'ընտիրտիմ կամ ձեր անունը և կամ պատուանունը հարցընել, կ'աղաչեմ՝ ըսէք ինձ թէ ձեզի ինչպէս կոչելու եմ, որով խօսքս ձեզ ուղղել կարենամ, և ձեզ անհանգստութիւն չտալու համար կ'իմացընեմ որ սովորաբար ղիս Սէնպատ նաւատի կը կոչեն։

— Ես ալ, պատասխանեց Ֆրանզ, ամենևին դժուարութիւն չեմ տեսներ որ ղիս այս միջոցիս Ալայէտտին կոչէք, ըստ որում Ճիշտ Ալայէտտինի կը նմանիմ, միայն անոր հրաշագործ Ճրագը ես չունիմ։ Այսպէս կոչուելով՝ Արևելքէն հեռացած պիտի չըլլանք, ուր բարի ոգիի մը գործութեամբը գացած պիտի ենթադրեմ ինքզինքս։

— Ուրեմն, Ալայէտտին իշխան, ըսաւ զարմանալի ասպնջականը, կերակուրին պատրաստ ըլլալը լսեցիք, այնպէս չէ. հաճեցէք սեղանատունը անցնիլ, և ձեր ամենաճաշակոտ ծառան ձանբան ցուցընելու համար ձեր առջևը կ'անցնի։

Իրօք այս խօսքերուն վրայ՝ Սէնպատ վարագոյրը բանալով Ֆրանզին առջևը անցաւ։

Ֆրանզ ուրչափ կը յառաջանար, այնչափ նորանոր հիանալու բաներ կը տեսնէր. Ճաշարանը առաջին սենեկին չափ փառաւոր չէր, բայց հին ձևով բոլորովին հարթաքանդակ թանկագին մարմարիոնով շինուած էր և սեղանը խիստ շքեղ զարդարուած էր։ Այս երկարաձև սրահին երկու ծայրը երկու շքեղ արձաններ կային, որոնք գլուխնուն վրայ կողովներ բռնած էին։ Այս կողովներուն մէջ խիստ ընտիր պտուղներ լցուած էին. ինչպէս էին Սիկիլիոյ արքայախնձոր, Մալակայի նուռ, Պալէարեան կղզեայ նարինջ, Գաղղիոյ դեղձ և Թունուզի արմաւ։

Ընթրիքնին էր խորոված փասեան մը, որուն բոլորտիքը Քսրսիքայի կերունեխներ շարած էին, դոնդողով վարազի ապուխտ մը, խորոված ուղէ կտոր մը, դեղեցիկ վահանաձուկ մը և խիստ մեծ խեցգետին մը։

Մեծ սկաւառակներուն անջրպետները աղանդերներով լեցուն փոքր պնակներ դրած էին։

Սկաւառակները արծաթեղէն էին, իսկ պնակները ճարտնի յախճապակեայ։

Ֆրանգ իր աչքը շփեց որպէս զի ապահով ըլլայ թէ երազ չէ՞ տեսածը։

Այս սեղանատան մէջ Ալիէն զատ ծառայող մը չկար, որ իր պարտքը խիստ ճշդութեամբ կը կատարէր և որուն համար Ֆրանգ գովութեամբ խօսեցած ժամանակը՝

— Այո՛, ըսաւ Սէնպատ կրցածին չափ իր հիւրը մեծարելով, խիստ անձնանուէր խեղճ խափշիկ մ՚է որ զիս գոհ ընելու կը ջանայ։ Կ՚երևի թէ կեանքը շատ սիրելի է իրեն, քանզի զայն ազատելուս համար անմոռաց երախտագէտ մնացած է ինձ։

Ալի իր տիրոջը մօտեցաւ և անոր ձեռքը համբուրեց։

— Արդեօք անզգուշութիւն մ՚է հարցնելս, Սէնպատ իշխան, ըսաւ Ֆրանգ, թէ ինչ պարագայի մէջ այդ բարիքը ըրիք անոր։

— Ո՛հ, հիմա պատմեմ ձեզ, պատասխանեց ասպնջականը։ Կ՚երևի թէ այս ողորմելին Թունուզի կառավարչին պալատին խիստ մօտերը գացեր է, որ իր գոյնը ունեցողներուն ներելի չէ եղեր, ուստի կառավարիչը դատապարտեր էր զայն որ լեզուն, ձեռքը և գլուխը կտրեն, առաջին օրը՝ լեզուն, երկրորդ օրը՝ ձեռքը և երրորդ օրը՝ գլուխը։ Ես ալ միշտ կը բաղձայի որ համր ծառայ մը ունենամ. ուստի սպասեցի որ անոր լեզուն կտրեն, այն ատեն կառավարչին գացի առաջարկեցի որ զայն գեղեցիկ երկփող հրացանիս հետ փոխէ, քանզի ինձ այնպէս երևցեր էր որ Նորին Վսեմութիւնը առջի իրիկունը հրացանս դիտած ժամանակը՝ զայն ստանալու բաղձանք մը ունէր։ Բայց այս թշուառը սպաննելու այնպէս հաստատ որոշեր էր որ առաջարկութեանս վրայ վայրկեան մը երկմտեցաւ։ Ուստի այն հրացանին վրայ որսորդի Անգղիական դաշոյն մը ևս աւելցուցի, որով Նորին Վսեմութեան դաշոյնը երկու կտոր ըրեր էի։ Այս առաջարկութեանս վրայ կառավարիչը համոզուեցաւ անոր ձեռքը և գլուխը ազատելու այն պայմանաւ որ այնուհետև Թունուզ ոտք չկոխէ։ Այս հրամանին հարկ չկար, վասն զի խեղճը որչափ հեռուէն որ Ափրիկէի ծովեզերքը տեսնէ, այնչափ նաւուն յատակը կը պահուի և անկէ չեն կրնար զինքը դուրս հանել մինչև որ ծովեզերքը անտեսանելի ըլլայ։

Ֆրանգ վայրկեան մը լուռ և մտախոհ մնաց, և չկրնալով ասպնջականին այս պատմութիւնը պատմած ժամանակը ցուցուցած չափազանց միամտութեան միտքը հասկընալ, խօսակցութիւնը փոխեց.

— Ուրեմն ձեր կրած անուան համեմատ՝ պատուաւոր նաւորդի մը պէս ձեր կեանքը ճանապարհորդութեամբ կ՚անցընէք։

— Այո՛, այնպիսի ժամանակ մը ուխտ ըրեր եմ, որ դրեթէ չէի կարծեր թէ պիտի կարենամ կատարել, ըսաւ անծանօթը ժպտելով։ Ասոր նման քանի մը ուխտեր ևս ըրած եմ, որոնք կը յուսամ թէ հետզհետէ պիտի կատարեմ։

Թէև Սէնպատ այս խօսքերը խիստ մեծ հանդարտութեամբ արտասանեց, սակայն տարօրինակ կատաղութեան նշոյլ մը իր աչաց մէջ փայլեցաւ։

— Կ՚երևի թէ շատ դժբաղդութիւններ կրած էք, պարոն, ըսաւ անոր Ֆրանգ։

Սէնպատ սարսռեցաւ և ապշութեամբ անոր նայեցաւ։

— Ինչէ՞ն կը հասկընաք, հարցուց Սէնպատ։

— Ամեն բանէն, պատասխանեց Ֆրանգ. ձեր ձայնէն, նայուածքէն, դեղնութենէն և ձեր վարած կեանքէն։

— Խիստ երջանիկ կեանք մը կը վարեմ ես, ճշմարիտ փաշայի պէս կ՚ապրիմ, և աշխարհիս թագաւորն եմ. երբ առանձնանալ ուզեմ, հոս կը կենամ, և երբ ձանձրանամ, ասկէ կը մեկնիմ. թռչունի պէս ազատ եմ, անոր պէս թևեր ունիմ, ու բոլորտիքս եղող մարդիկը մէկ նշանովս ինձ կը հնազանդին։ Երբեմն զուարճութիւն մը կ՚ըզգամ մարդկային իշխանութիւնը ծաղրելու անոր փնտռած աւազակը կամ հալածած մեղապարտը անոր ձեռքէն յափշտակելով։ Ասկէ զատ՝ ես ալ իմ մասնաւոր իշխանութիւնս ունիմ, որ ստորին և միանգամայն բարձր է, և առանց յապաղման ու առանց բողոքի կը դատապարտէ կամ կ՚ազատէ, և որուն մարդ մը չկրնար խառնուիլ։ Ո՛հ, եթէ դուք ևս իմ վարած կենացս ճաշակը առած ըլլայիք, ուրիշ կեանք մը պիտի չփնտռէիք, և երբէք մարդոց մէջ պիտի չմտնէիք, միայն թէ կատարելու երևելի խորհուրդ մը ունեցած չըլլայիք։

— Ինչպէս է վրէժխնդրութեան խորհուրդը, ըսաւ Ֆրանգ։

Անծանօթը այնպիսի նայուածքով երկարատրդին նայեցաւ, որով կարծես թէ անոր սրտին և մտքին մէջ թափանցել կ'ուզէր։

— Եւ ինչո՞ւ վրէժխնդրութեան խորհուրդ մը պիտի ըլլայ, հարցուց։

— Վասն զի, կրկնեց Ֆրանգ, ինծ այնպիսի մէկը կ'երեւիք որ մարդոցմէ չարիք տեսնելով, անոնց հետ տեսնելու սոսկալի հաշիւ մը ունիք։

— Սխալ է այդ կարծիքը, ըսաւ Սէնպաս իր անսովոր կերպովը ծիծաղելով, որով իր սպիտակ և սուր ակռաները կը ցուցնէր. ես տեսակ մը մարդատեաց եմ, և գուցէ օր մը Փարիզ երթամ Պ. Արէրի և կապոյտ փոքր վերարկուով մարդուն հետ տուտուրի մէջ մրցիլ։

— Եւ առաջին անգամն է որ այդ ճանապարհորդութիւնը պիտի ընէք։

— Ո՛հ, այո, այնչափ հետաքրքիր չեմ երեւիր, այնպէս չէ՞, բայց հաւատացէք որ ուշանալուս յանցանքը իմս չէ, վաղ կամ անագան պիտի երթամ։

— Կը յուսա՞ք որ մօտերս ընէք այդ ճանապարհորդութիւնը։

— Չեմ գիտեր տակաւին, անորոշ պարագաներէ կախեալ է։

— Ձեր գացած ժամանակը ես ալ հոն ըլլալ կ'ուզէի. Մօնթէ-Քրիսթօ կղզւոյն մէջ ձեր ինծ տուած բարի ընդունելութեան փոխարէնը ընելու պիտի ջանայի ըստ կարի։

— Մեծ հաճութեամբ ձեր առաջարկութիւնը կ'ընդունէի, ըսաւ ասպնջականը. բայց դժբաղդաբար, եթէ երթալու ըլլամ, գուցէ ծպտեալ երթամ։

Այսու ամենայնիւ ընթրիքը կը յառաջանար և կ'երեւէր թէ միայն Ֆրանգի համար պատրաստուած էր, վասն զի Սէնպաս հազիւ հազ իր ակռաներուն ծայրը դպցուցեր էր իր հիւրին տուած մեծապաս խնջոյքին մէկ կամ երկու պնակներուն. զորոնք իր անակնունելի սեղանակիցը կատարելապէս պատուեր էր։

Ալի պտուղները բերաւ և կամ այսպէս ըսենք՝ արձաններուն ձեռքէն կողովները առաւ, սեղանին վրայ դրաւ։

Երկու կողովներուն մէջ տեղը ոսկեզօծ արծաթ բաժակ մը դրաւ՝ նոյնպէս արծաթ խուփով ծածկուած։

Ալիին այս բաժակը բերելու ատեն ըրած յարգանքը Ֆրանգին հետաքրքրութիւնը շարժեց։ Խուփը բացաւ, և մէջը կանաչագոյն զանգուած մը տեսաւ, որ հրուշտակարբայով շինուած կարկանդակի կը նմանէր, բայց իրեն բոլորովին անծանօթ կ'երեւէր։

Առանց անոր ինչ ըլլալը իմանալու՝ խուփը վերստին գոցեց, և իր նայուածքը ասպնջականին վրայ ածելով, իր շփոթութեանը վրայ անոր ժպտիլը տեսաւ։

— Չկրցա՞ք այս փոքր ամանին պարունակութեան ինչ ըլլալը գուշակել, ըսաւ ասպնջականը, և անոր համար շփոթած կ'երեւիք, այնպէս չէ՞։

— Ստոյգ է։

— Այս կանաչագոյն կերակուրը ուրիշ բան չէ, բայց եթէ դից այն անուշակ կերակուրը, զոր Հեբէոս Դիոսի սեղանին վրայ կը մատակարարէր։

— Բայց դից այս անուշակ կերակուրը մարդոց ձեռքէն անցնելով, անտարակոյս իր երկնային անունը կորսնցուցած և երկրային անուն մը առած է. աշխարհիկ լեզուով այս կերակուրին անունը ինչ է, որուն համար մեծ համակրութիւն մը չեմ զգար։

— Ո՛հ, մտիկ ըրէք, ըսաւ Սէնպաս. շատ անգամ երջանկութեան խիստ մօտէն կ'անցնինք առանց զայն տեսնելու և առանց անոր նայելու, և կամ եթէ տեսնենք և նայինք, չենք ճանչնար զայն։ Եթէ ողջամիտ մէկն էք և ոսկին ձեր աստուածն է, ճաշակեցէք զայս, և Բէրուի, Կիւզարաթի, Կոլգոնտի ոսկեհանքերը ձեր առջեւը պիտի բացուին։ Եթէ մտածող մէկն էք, և բանաստեղծ էք, ճաշակեցէք զայս, հնարաւորութեան պատուարները պիտի աներեւութանան ձեր առջեւը, անվերջ դաշտերը պիտի բացուին, և դուք երեւակայութեան անսահման իշխանութեան մէջ ազատ սրտով և ազատ մտօք պիտի շրջագայիք։ Փառասէ՞ր էք, աշխարհային մեծութեանց ետեւէն կը վազէ՞ք, դարձեալ ճաշակեցէք ասկէ, և մէկ ժամէն թագաւոր պիտի ըլ-

լաք, բայց ոչ թէ Գաղղիոյ, Սպանիոյ կամ Անգղիոյ պէս եւրոպիոյ մէկ անկիւնը սահուած փոքր տէրութեան մը, այլ աշխարհիս, տիեզերաց, և արարչութեան թագաւորը պիտի ըլլաք: Ձեր թագաւորութեան դահը այն լերան վրայ պիտի կանգնուի, ուր Սատանան Յիսուսի դիմացն եկաւ. և առանց անոր հպատակելու և անոր ժանիքը համբուրելու ստիպեալ ըլլալու, աշխարհիս բոլոր թագաւորութեանց բացարձակ տէրը պիտի ըլլաք: Այս ըսածիս չէք բաղձար, ըսէք, որ միայն բերաննուդ դպցընելով պիտի ըլլայ:

Այս խօսքերուն վրայ՝ այնչափ դովութեամբ յիշուած այն անուշակը պարունակող ոսկեզօծ արծաթեայ բաժակին խուփը բացաւ, սուրճի դրգռալով այն դիւթական ուտելիքէն առաւ, կամացմը բերանը դրաւ զայն՝ աչքը կիսափակ և գլուխը դէպ 'ի ետև հակած:

Ֆրանզ սպասեց որ Ամենպատ իր սիրելի կերակուրը կլլէ, և երբ տեսաւ զան որ քիչ մը ինքզինքին եկաւ,

— Բայց վերջապէս, հարցուց անոր, այս թանկագին կերակուրը ինչ բան է:

— Լերան Ծերունի ըսուած իշխանին վրայօք խօսելնին լսած էք, հարցուց ասպնջականը անոր, որ Գաղղիոյ Գլխի-Օկիսթ թագաւորը սպաննել տալ ուզեց:

— Այո՛:

— Ուրեմն գիտէք որ այն իշխանը խիստ բարձր լերան մը մօտ բեղմնաւոր հովիտի մը վրայ կ'իշխէր, ուրկից իր զարմանալի անունը կը կրէ: Այս հովիտին մէջ Հասան-պն-Սապահ շքեղ պարտէզներ անկած էր, որոց մէջ առանձին բնակարաններ կային: Այս բնակարաններուն մէջ այս իշխանը իր ընտրեալ երիտասարդները կը ժողվէր, և անոնց այնպիսի խոտ մը կը կերցընէր, կ'ըսէ Մարգօ Բավէօ, որ զանոնք Արքայութեան մէջ կը փոխադրէր, որուն մէջ մշտափթիթ դաշտեր, միշտ հասուն պտուղներ և միշտ կոյս կիներ կը գտնուէին: Բայց այս գերերջանիկ երիտասարդաց ձշմարիտ կարծածը երազ մ'էր, այնպիսի քաղցր, այնպիսի յանկուցիչ և այնպիսի հեշտական երազ մը, որուն պատ-

ճառ եղողին իրենց մարմինը ու հոգին կը նուիրէին, և Ատոծոյ պէս անոր հրամաններուն հնազանդելով, աշխարհիս մէկ ծայրը կ'երթային անոր նշանակած գահը սպաննելու համար, և առանց տրտնջելու տանջանքներ կրելով կը մեռնէին, միայն այն մտածելով որ մահը իրենց այն կենաց հեշտութիւնը պիտի տայ, որուն մէկ ճաշակը արդէն իրենց տուած էր այն սուրբ խոտը, որ ձեր առջևը կը մատակարարուի:

— Ուրեմն, ըսաւ Ֆրանզ, մանրազորն է այս, այո՛, դիտեմ կամ գոնէ անունը լսած եմ:

— Ճիշտ այդ է անոր անունը, Ալայէտտին իշխան. Աղեքսանդրիոյ և Ապուկորի մէջ այս անուշակը շինող ամենէն երևելի բանդակագործին շինածն է, որուն համար այս արձանագրութեամբ պէտք է պալատ մը շինել թէ՝ Աշխարհս պարտէ երախտագէտ ըլլալ երջանկութեան վաճառականին:

— Ձեր գովեստից ձշմարտութիւնը կամ չափազանցութիւնը ես անձամբ պիտի վճռեմ:

— Դուք անձամբ վճռեցէք, պարոն, բայց մէկ փորձով մի բաւականանաք: Ամեն բանի մէջ մեր զգայութիւնները որ և իցէ նոր ազդեցութեան մը սովորեցընել պէտք է, եթէ մեղմ ըլլայ և եթէ սաստիկ, եթէ տխուր և եթէ ուրախալի: Բնութեան մէջ այս գերագոյն զօրութեան դէմ մրցում մը կայ, քանզի բնութիւնը ուրախութեան հակառակ և վշտաց հետ սերտ կապուած է: Պէտք է որ բնութիւնը յաղթուելով պատերազմին մէջ ընկճի, պէտք է որ իրողութիւնը երազին յաջորդէ. և այն ատեն՝ երազը տիրապէս կը թագաւորէ, այն ատեն երազը կեանք կ'ըլլայ և կեանքը երազ. բայց ինչ զարմանալի փոփոխութիւն. ձշմարիտ կենաց վիշտերը անբնական կենաց զուարճութեանց հետ բաղդատելով, այնուհետև ապրիլ պիտի չուզէք, այլ միշտ երազել: Երբ ձեր աշխարհը թողուք և ուրիշ տեղ աշխարհ անցնիք, ձեզ այնպէս պիտի երևի թէ Նաբուղեի դարուն էն Լաբունիոյ ձմեռուան կ'անցնիք, այնպէս պիտի կարծէք թէ արքայութենէն երկրի վրայ և երկինքէն դժոխքը կ'իջնէք: Ճաշակեցէք այս մանրագործէն, սիրելիս, ճաշակեցէք:

Ֆրանց առանց պատասխանելու՝ այն հրաշագործ կերակուրէն դրգալով մը առաւ իր ասպնջականին առածին չափ և բերանը դրաւ։

— Զարմանալի՜ բան, ըսաւ վերջապէս այն հրաշալի խորտիկը կլլելէն ետև, հաստատածնուդ չափ հաճոյական չերևիր ինձ, չեմ գիտեր թէ ըսածնուդ պէս հեշտական հետևանք մը պիտի ունենա՞մ։

— Վասն զի ձեր քիմքը ճաշակած բարձր կերակուրին յարմար չէ տակաւին։ Ըսէք կ՚աղաչեմ, ոստրէն, թէյը, Անգղիական գարեջուրը, գետնասանձը, և ամէն այն բաները որոնք ետքէն սիրեցիք, առաջին անգամին ախորժելի երևցա՞ն ձեզ. Հռոմայեցւոց՝ փասեանները գարշահոտ անուժատով համեմելու, և Չինացւոց՝ ծիծառներուն բոյները ուտելու ինչ զուարճութիւն ունենալնին կը հասկընա՞ք, էհ, անշուշտ ոչ։ Այսպէս է նաև մանրագորը. միայն ութ օր շարունակ կերէք անկէ, ամենևին ասոր համին հաւասար կերակուր մը պիտի չգտնէք, որ գուցէ այսօր անհամ և նողկալի երևի ձեզ։ Սակայն միւս սենեակը անցնինք, և Ալի մեզ սուրճ և ծխափող պիտի բերէ։

Երկուքնին ալ ոտք ելան, և Ֆրանց մերձակայ սենեակն անցաւ, ինչ ատեն իր ծառային քանի մը հրամաններ կ՚ընէր ան որ ինքզինքը Սէնպատ անուաներ էր, և մենք խսկ մերթ ընդ մերթ այսպէս կոչեցինք զինքը, որպէս զի որ և իցէ անուանակոչութեամբ մը զինքը իր սեղանակիցէն տարբերենք։

Այս սենեկին կարասիքը աւելի պարզ էին թէև ոչ նուազ փառաւոր։ Բոլորակ ձև մը ունէր և բոլորտիքը մեծ բազմոց մը կը շրջապատէր։ Սակայն բազմոցը, պատերը, առաստաղը և յատակը խիստ փափուկ օթոցի նման կախուած և շքեղ մորթերով պատած էին, որոնք Ատլաս լերան զօրաւոր բաշերով առիւծներու, Պենկալի կինկեալ գիծերով վագրերու, Տանթէ բանաստեղծին երևցածին նման Բարիկուսոյ Գլխի խայտաբղէտ յովազներու, վերջապէս Սիպերիոյ արջերու, Նորվեկիոյ աղուէսներու մորթեր էին, և բոլորն ալ իրարու վրայ խառն ձգուած էին, այնպէս որ

կարծէիր թէ խիստ թաւարծի խոտերու վրայ կը կոխես և փափուկ անկողնոյ վրայ կը հանգչիս։

Երկուքնին ալ բազմոցին վրայ նստան, և Ալի յասմիկի փայտէ և սաթէ բերանակալով երկու ծխափողեր իւրաքանչիւրին ներկայացնելէն ետև՝ դուրս ելաւ սուրճը բերելու։

Վայրկեան մը լռութիւն եղաւ, ինչ ատեն Սէնպատ իր մտածութեանց մէջ ընկղմեցաւ, որոնք անդադար մինչև անգամ իր խօսակցութեան ժամանակ՝ կարծես թէ իր միտքը գրաւած էին։ Իսկ Ֆրանց այն լռիկ մտախոհութեանց մէջ ընկղմեցաւ, որոց միշտ ենթակայ է ընտիր ծխախոտ ծխող մը, որուն ծուխին հետ մտային բոլոր վիշտերը կ՚անհետին և անոնց հետ հոգւոյն ցնորքները կը ներկայանան։

Ալի սուրճը բերաւ։

— Ինչպէ՞ս կը խմէք, հարցուց անծանօթը. Գաղղիակա՞ն թէ Տաճկական ձևով, թա՞նձր թէ թեթև, շաքարո՞վ թէ անշաքար, պա՞ղ թէ եռացեալ, ո՞րը կ՚ընտրէք. ամէն կերպով պատրաստուած կը գտնուի։

— Տաճկական ձևով կ՚ուզեմ խմել, պատասխանեց Ֆրանց։

— Իրաւունք ունիք, ըսաւ ասպնջականը. այս կը ցուցնէ որ դուք արևելեան կենաց յարմարութիւնն ունիք։ Ո՛հ. ստուգիւ Արևելցիք միայն ապրելու կերպը գիտեն։ Իսկ ես, երբ Փարիզի գործերս կատարեմ, Արևելք պիտի երթամ մեռնելու. և եթէ զիս գտնել ուզէք, Գահիրէ, Պաղտատ կամ Սպահան կրնաք գալ և փնտռել զիս։

— Ստուգիւ, ըսաւ Ֆրանց, խիստ դիւրին բան մը պիտի ըլլայ այդ. վասն զի կարծեմ թէ այս միջոցիս արծիւ թևեր կ՚ըստանամ, որովհետև քսան և չորս ժամուան մէջ աշխարհիս բոլորտիքը պիտի պտտիմ։

— Ո՛հ, մանրագորին արդիւնքն է այդ. բացէք ուրեմն ձեր թևերը, գերմարդկային գաւառներուն մէջ թռչեցէք. ամենևին մի վախնաք, ձեր վրայ կը հսկեն, և եթէ թևերնիդ Իկարոսի թևերուն պէս արևէն հալին, զձեզ ընդունելու պատրաստ կեցած եմք։

Ան ատեն Արաբերէն քանի մը խօսք ըսաւ Ալիին, որ հնազանդութեան շարժում մը ըրաւ և առանց հեռանալու մէկ կողմ քաշուեցաւ։

Իսկ Փրանղ տարօրինակ փոփոխութիւն մը կ'ըզգար իր անձին վրայ։ Օրուան իր յոյնութիւնը և իրիկուան պատահածներուն պատճառաւ իր ունեցած մտատանջութիւնը քնամերձ հանգստութեան այն առաջին վայրկեանին մէջ կ'անհետանային։ Իր մարմինը կարծէր թէ անհիմանական թեթեւութիւն մը կ'ըստանար, իր միտքը զարմանալի կերպով կը լուսաւորէր, իր զգայութեանց կարողութիւնները կը կրկնապատկուէին. հորիզոնը երթալով իր առջևը կ'ընդարձակուէր, բայց այս հորիզոնը իր քնանալէն առաջ անորոշ երկիւղով մը տեսածը չէր, այլ կապուտագոյն, թափանցիկ, լայնածիր հորիզոն մ'էր։ Ծովը իր ամենէն քաղցր գոյնովը, արեգակը իր ամենէն պայծառ ճառագայթներովը, և հողմը իր ամենէն քաղցրասիրտ սղոխովը կ'երևէին. մակոյկի նաւաստիներուն երգերը այնչափ յստակ և քաղցրանուագ էին, որ եթէ խաղերով պրուէին՝ երկնային դաշնակաւոր երգեր կրնային ըլլալ. այս միջոցին Մօնթէ–Քրիսթօ կղզին տեսաւ, բայց այս անամ կոհակներուն վրայ սպառնացող խութի մը կերպարանքը չունէր այն, այլ անապատի մը մէջ տեղը իբր դալարավայր մը կ'երևէր. որչափ իրենց մակոյկը յամաքին կը մօտենար, այնչափ երկերուն ձայները կը շատնային, վասն զի պիւթական և պաղտնի դաշնակութիւն մը այս կղզիիս մէջն երկինք կը բարձրանար, այնպէս որ կարծես թէ Լորէլէյի պէս վհուկ մը կամ Ամֆիոնի պէս պիւթիչ մը կ'ուզէր հոգի մը իրեն քաշել կամ հոն քաղաք մը ինել։

Վերջապէս մակոյկը անխոնջ և անաշխատ ծովափը մօտեցաւ, ինչպէս շուրթերը շրթանց կը մօտենան, և ինքը գմայլելի երաժշտութեան ձայներով քարայրին մէջ մտաւ։ Քանի մը ոտք վար իջաւ կամ պոն իրեն այնպէս երևցաւ, Սիրկէի քարայրին օդին պէս զով և քաղցրաբոյր օդ մը շնչեց, անուշահոտ բուրմունքները այն աստիճան էին, որ մարդուս միտքը կը ցնորէին, և անոնց աստկութենէն՝ զգայութիւնները կը բորբոքէին. իր քնանալէն առաջ ամէն տեսածները, սէնպատ անուշով երևակայական աստղջականէն մինչև Ալի համր ծառան իր աչաց առջև ներկայացան։ Անոնցմէ հետև՝ շիջեալ մոգական լապտերի մը վերջին ստուերին պէս ամէն բան իր աչաց առջևէն անհետացաւ, և ինքը արձաններուն սենեակը վերադարձաւ, որ դիշեր ժամանակ հեշտութեան քունին վրայ հսկող այն նախնական և տժգոյն դրացներուն մէկովը միայն լուսաւորուած էր։

Ան արձանները Փրինէ, Կղէոպատրա և Մեսալինա երեք անանձի չափ կիներն էին, որոնք իրենց մարմնական աչքովը, կաթոտ ժպիտովը և առատ մազերովը խիստ դեղեցիկ կ'երևէին։

Ան ատեն իրեն այնպէս երևցաւ որ այս երեք արձանները միայն մէկ մարդու մը սիրահարած էին, և այն մարդը ինքն էր, և անոնք իր անկողնոյն կը մօտենային՝ ոտքերնին սպիտակ երկար հանդերձներու մէջ ծածկուած, պարանոցնին մերկ, մարերնին ալեաց պէս վէտ վէտ ծածանելով, անդիմադրելի կեցուածքով և անյագ ու բոցավառ աչօք իրեն նայելով, և ինքը այնպիսի նայուածքով անոնց կը նայէր, որ գրկընդխառնութեան ժամանակ տխուր և համբոյրի ժամանակ հեշտական է։

Փրանղին այնպէս երևցաւ թէ իր աչքը կը գոյէ, և իր վերջին նայուածքովը կը տեսնէր որ արձանը ամօթխածութեամբ իր քողովը բոլորովին կը ծածկուէր. այնուհետև՝ իր աչքը ձնհրիտ իրաց համար գոյութեամբ, իր զգայութիւնները անկարելի ազդեցութեանց համար բացուեցան։

Ան ատեն այն Լերան Ծերունին իր ընտրեալներուն խոստացած պէս անվերջ հեշտութենց և անհանգիստ սիրոյ մէջ ընկղմեցաւ։ Ան ատեն այն մարմարեայ բերանները կենդանացան և անոնց կուրծքերը բորբոքեցան, այնպէս զի Փրանղին համար, որ առաջին անգամ մանրագործին զօրութիւնը կ'ըզգար, այն սէրը դրեթէ վիշտ մը կ'երևէր, և հեշտութիւնը՝ տանջանք մը, երբ օձի մը օղակներուն նման այն արձաններուն պաղ և կամակոր շուրթերը իր ծարաւի բերանին մօտենալը կ'ըզգար։ Բայց որչափ իր թևերը կը ջանային այն անծանօթ սէրը մերժելու, այնչափ իր զգայութիւնները այն զարմանալի երազին քաղցրութիւնը կը

վայելէր, վերջապէս երկար մրցումէ մը ետև առանց քաշուելու ինքզինքը անոնց յանձնեց, որով այս մարմարեայ սիրուհիներուն համբոյրներէն և անլուր երազին զուարճութենէն ոգեսպառ, յոգնատանջ, և հեշտութենէն հիւծեալ մնաց։



ԳԼՈՒԽ Թ

ՋԱՐԹՈՒՄԸ

Երբ Փրանղ արթնցաւ՝ արտաքին առարկաները իւր երազին երկրորդ մասը երևցան իրեն. ինքզինքը այնպիսի դերեզմանի մը մէջ կարծեց, ուր արևուն լոյսը պղտութեան հայեցուածքով մը հալիւներս կը թափանցէր. ձեռքովը իւր բոլորտիքը շօշափեց, և քարին դպաւ. պատկած տեղը ելաւ նստաւ և նայեցաւ որ իւր վերարկուին տակը խիստ փափուկ և անուշահոտ չոր հաւամրգիներու վրայ պառկեր էր։

Բոլոր երևոյթը անհետացեր էր, և արձանները դերեզմաններէն ելած ստուերներու պէս՝ իւր արթնցած ժամանակը աներևոյթ եղեր էին։

Քանի մը քայլ դէպ ՚ի լոյսը եկած կողմը յառաջացաւ, և նայեցաւ որ իւր յուղեալ երազին յաջորդեր էր իրողութեան հանդարտութիւնը։ Ինքզինքը քարայրի մը մէջ գտաւ, դէպ ՚ի դուռը յառաջացաւ և կամարաձև ծակէն՝ կապոյտ երկինքը և մանիշակագոյն ծովը տեսաւ։ Օդը և ջուրը առատաձայն արևուն ճառագայթներէն կը շողշողէին. հատատիները ծովեզերքը նստած կը խօսակցէին և կը ձիծաղէին. տասն քայլ հեռու ծովուն մէջ մակոյկը խարսխին վրայ շնորհալի կերպով կը տատանէր։

Քիչ մը ժամանակ արտաքին զով օդը շնչելով ականջ դրաւ ալեայց տկարացեալ ձայնին, որոնք ծովեզերքը կը փխրէին և ժայռերուն վրայ արծաթափայլ փրփուր մը կը ցայտացընէին. քնութեան այս դեղեցկութիւնը, որ ցնորական երազէ մը ետև աւելի կը փայլի, իւր ուշը դրաւեց, սակայն ոչ սակաւ այս խաղաղ, անբիծ և վսեմ երևոյթը իւր քունին անհատանականութիւնը չիշեցուց իրեն, և սկսաւ իւր չիշողութիւնը ամփոփել։

Ան առեն իւր Մօնթէ–Քրիսթօ կղզին հանիլը, մաքսանենգերու պլհատորին հետ ըրած տեսութիւնը, անոր ստորերկրեայ փառազեղ պալատը, իրեն տրուած ընտիր ընթրիքը և մանրագործէն գրդալ մը ուտելը չիշեց։

Միայն թէ յորեկուան լոյսը տեսնելով, իրեն այնպէս կ՚երևէր թէ այն դէպքերէն ետև գրեթէ տարի մը անցեր էր, այնչափ իւր տեսած երազը մտացը մէջ տպաւորուած մնացեր էր։ Իւր երևակայութենէն չափշտակուելով, մերթ նաւատիներուն քովը նստած կը կարծէր ինքզինքը, մերթ ժայռերուն մէջէն կ՚անցնէր, կամ մակոյկին մէջ կը տատանէր, և երբեմն այն ստուերներէն մէկը կ՚երևէր իրեն, որոնք իրենց նայուածքովն ու համբոյրներովը գիշերը զինքը շրջապատեր էին։ Այսու ամենայնիւ՝ այս միջոցիս իւր գլուխը կատարեալ ազատ էր, և մարմինը հանգստացած, ուղեղին մէջ ամենևին ծանրութիւն մը չունէր, այլ իւր անձը ամեն կերպով հանդարտ էր, և օդը իրեն աւելի մաքուր և արևը աւելի մեծ կ՚երևէր։

Ուստի ուրախութեամբ իւր նաւաստիներուն մօտեցաւ, որոնք ղինքը տեմնելնուն պէս ոտք ելան և մակուկապետը իրեն մօտենալով, ըսաւ անոր.

— Սէնպատ իշխանը մեզ պատուիրեց որ իւր ողջոյնը Ձեր Վսեմութեանը տանք՝ բաժնուելու ժամանակ ձեզմէ հրաման խնդրել չկրնալուն համար իւր ունեցած ցաւը իմացընելով. բայց կը յուսայ թէ կը ներէք իրեն երբ իմանաք թէ ստիպողական պործ մը ղինքը Մալակա կը կանչէ։

— Ըսէ, կ'աղաչեմ, սիրելիդ իմ Կաէթանօ, ըսաւ Ֆրանղ, բոլոր այս եղածները ստոյգ իրողութիւն են. իրօք այս կղզւոյս մէջ կայ այնպիսի մարդ մը որ ինձ ընդունելութիւն տայ, թաղարի պէս հիւրընկալութիւն ընէ և քնացած ժամանակս ասկէ մեկնի։

— Այո՛, ստոյգ է. եթէ չէք հաւատար, ահա տեսէք անոր շեղակայմ նաւը, որ բոլոր առագաստները բացած ասկէ կը հեռանայ, և եթէ ձեր հեռադիտակով նայիլ ուզէք, հաւանականաբար ձեր ասպնջականը իւր նաւաստիներովը պիտի ճանչնաք։

Այս ըսելով Կաէթանօ իւր թևովը դէպ 'ի Փորսիքայի հարաւային հրուանդանը առագաստող փոքր նաւ մը ցուցուց։

Ֆրանղ իւր դիտակը ձեռքը առաւ, աչայ տեսութեանը չարմար բացաւ զայն, և իւր նայուածքը նշանակուած կողմը ուղղեց։

Կաէթանօ սխալած չէր։ Նաւուն ետևի կողմը զարմանալի անճանօթը ոտքի վրայ կանգնած դէպ 'ի իրենց կողմը գարձեր, և իրեն պէս ձեռքը հեռադիտակ մը բռնած էր. իր գլեսաները ճիշտ առջի իրիկունը իրեն ընդունելութիւն տուած ժամանակ հագածին պէս էին, և ողջունելու համար թաշկինակ մը կը շարժէր։

Ֆրանղ իսկ իւր կողմէն թաշկինակը ծոցէն հանեց և սկսաւ անոր պէս շարժել։

Մանրերկրորդ մը ետքը՝ նաւուն խելացի կողմը ծուխի թեթև ամպ մը նկարուեցաւ, շնորհալի կերպով նաւէն բաժնուելով, կամաց կամաց դէպ 'ի երկինք բարձրացաւ, անկէ ետև ճայթման տկար ձայն մը մինչև Ֆրանղին քովը հասաւ։

— Լսեցիք, ըսաւ Կաէթանօ, ձեզ ինաք բարեաւ կ'ըսէ։

Երիտասարդը իւր լայնափող հրացանը առաւ և օդին պարպեց զայն, բայց առանց յուսալու որ անոր ձայնը մինչև նաւը հասնի։

— Ձեր Վսեմութիւնը հրաման մը ունի՞ ընելու, հարցուց Կաէթանօ։

— Նախ ջահ մը վառել տուր։

— Ո՛հ, այո՛, կը հասկընամ, կրկնեց մակուկապետը, դիւթեալ բնակութեան մուտքը գտնելու համար, այնպէս չէ՞։ Եթէ ժամանակ անցընել և զբօսնուլ կ'ուզէք, պատրաստ եմ ձեր խնդրած ջահը տալ ձեզ։ Ես իսկ ձեր այդ միտքը ունեցայ, և երեք չորս անգամ փնտռելու ետևէ եղայ, բայց վերջապէս ետ կեցայ։ Ճիօվաննի, յաւելցուց նաւաստիի մը պատնաշով, ջահ մը վառէ և նորին Վսեմութեան բեր։

Ճիօվաննի հնազանդեցաւ. Ֆրանղ ջահը անոր ձեռքէն առաւ և Կաէթանոյին առջևը իյնալով, քարայրին մէջ մտաւ։

Ճնշուած հաւասրպիներէն իւր պահած տեղը ճանչցաւ. բայց պարապ տեղը քարայրին արտաքին մակերևոյթին վրայ իւր ջահը պտըտցուց, քանզի բան մը չտեսաւ, բայ 'ի տեղ տեղ պտնուած մուխի նշաններէն, որոնք իրմէ առաջ նոյն խուզարկութիւնը ընողները ըրած էին։ Սակայն ապաւնիին պէս անթափանց այս կրանիթեայ պատէն ոտք մը տեղ չանցուց առանց քննելու, ծակ մը կամ ճեղքուած մը չտեսաւ, ուր իւր որսի դանակին ծայրը չխոթէ, գուրս ցցուած կէտ մը չնշմարեց, որուն վրայ չկոթնի զայն բանալու յուսով. բայց անօգուտ, և առանց արդիւնք մը քաղելու երկու ժամ այս խուզարկութեամբ անցուց։ Անկէ ետև՝ ետ կեցաւ և Կաէթանօ յաղթող երևցաւ։

Երբ Ֆրանղ ծովեզերը վերադարձաւ, շեղակայմը այնուհետև միայն սպիտակ կէտի մը պէս կ'երևէր հորիզոնին վրայ. շուտով հեռադիտակը ձեռքը առաւ, բայց գործիքին միջոցաւ իսկ անկարելի էր բան մը որոշել։

Կաէթանօ յիշեցուց իրեն թէ այծ որսալու համար եկած էր հոն, զոր ինքը բոլորովին մոռցեր էր։ Ուստի Ֆրանղ հրացանը առաւ և սկսաւ կղզւոյն մէջ շրջապտիլ աւելի պարապ մը կատարող քան թէ զբաղմունքին զգացող մարդու մը կերպարանքով,

և քառորդի մը մէջ այծ մը և երկու ուլեր որսաց ։ Այս այծերը, թէև լեռնայծի նման վայրի և թեթևաշարժ էին, բայց մեր ընտանի այծերուն մեծ նմանութիւն մը ունէին, ուստի և Ֆրանց իբր որս մը չնկատեց զանոնք ։

Այնուհետև աւելի զօրաւոր գաղափարներ իր միտքը զբաղեցնին ։ Նախընթաց իրիկունէն 'ի վեր Հազար և Մէկ գիշերներուն պատմութեանց մէկուն ճշմարիտ դիւցազնը եղեր էր, և առանց ընդդիմութեան վերստին դէպ 'ի քարայրը եկեր էր ։

Թէև իր առաջին խուզարկութենէն օգուտ մը չկրցեր էր քաղել, սակայն Կաէթանոյին պատուիրելէն ետև որ ուլերէն մէկը խորովել տայ, երկրորդ խուզարկութիւն մը սկսաւ ընել ։ Այս երկրորդ այցելութիւնը բաւական երկար ժամանակ տևեց, քանզի երբ վերադարձաւ, ուլը խորոված և նախաճաշիկը պատրաստուած էր ։

Ֆրանց նոյն տեղը նստաւ, ուրկից առջի իրիկունը այն զարմանալի ասպնջականին կողմէն զինքը ընթրիքի հրաւիրեր էին, և ալեաց գագաթը ծփող որորի նման փոքր շեղակայմը տեսաւ, որ դէպ 'ի Քորսիքա իր ճամբան կը շարունակէր ։

— Սէնպատ իշխանը, ըսաւ Ֆրանց Կաէթանոյին, Մալակա պիտի երթայ ըսեր, բայց կարծեմ թէ ուղղակի Բօրթօ-Վէքիօ կ'երթայ ։

— Բայց չէ՞ք յիշեր, կրկնեց մակոյկապետը, որ ըսի ձեզ թէ իր նաւաստիներուն հետ երկու Քորսիքացի ծովահէններ կը գտնուէին ։

— Ստոյգ է, ըսաւ Ֆրանց, ուրեմն զանոնք ծովեզրը ձգելու կ'երթայ ։

— Ճիշդ այդպէս է. այնպիսի մարդ մ'է այս իշխանը, որուն համար կ'ըսեն թէ ոչ Աստուծմէ կը վախնայ և ոչ սատանայէն, և թշուառ մարդու մը ծառայութիւն մը ընելու համար յիսուն մղոն իր ճանապարհէն կը շեղի ։

— Բայց այս կերպ մարդասիրական ծառայութիւնները կրնան այն երկրին կառավարութեան հետ դժուարութիւն ծագեցնել ։

— Ո՛հ, անոր հո՞գն է, ըսաւ Կաէթանօ ծիծաղելով, ինչ կրնայ ընել կառավարութիւնը իրեն, ինքը կը ծաղրէ զայն ։ Միայն կրնայ

կառավարութիւնը իր ետևէն իյնալ ։ Բայց իր շեղակայմը նաւ մը չէ այլ թռչուն մը, և կրկնայարկ նաւ մը երեք մղոն առած ժամանակը այն երկոտասան մղոն կ'առնու. բաց յայսմանէ՝ ինքը որ ծովեզրը որ ելնէ, ամեն կողմ միթէ բարեկամներ չունի՞ ։

Այս պատմութենէն յայտնի կ'երևէր որ Սէնպատ իշխանը Միջերկրականի բոլոր ծովեզերաց մաքսաննենգներուն և ծովահէններուն հետ յարաբերութեան պատիւն ունէր, որով այնպիսի սարօրինակ դիրք մը բռնելու ստիպուած էր ։ Իսկ Ֆրանց Մօնթէ-Քրիսթօ կղզւոյն մէջ ամենևին գործ մը չունենալով, հոն մնալու պէտք չունէր. քարայրին գաղտնիքը գտնելու յոյսը սպառած էր. ուստի հրամայելով իր մարդոց որ մակոյկը պատրաստեն, շուտով իր նախաճաշիկը կատարեց ։

Կէս ժամէն ետև՝ մակոյկը մտաւ ։

Վերջին անգամ շեղակայմին նայեցաւ. Բօրթօ-Վէքիոյ ծոցին մէջ աներևոյթ ըլլալու վրայ էր այն ։

Մեկնելու հրամանը տուաւ ։

Մակոյկը կղզիէն բաժնուելու ատեն՝ շեղակայմը աներևոյթ եղեր էր ։

Անոր հետ նախընթաց գիշերուան բոլոր դէպքերը կ'անհետանային, որով ընթրիք, Սէնպատ, մանրագոր և արձաններ, ամեն բան նոյն երազին մէջ ձուլուեցան Ֆրանցին համար ։

Մակոյկը բոլոր օրը և բոլոր գիշերը յառաջանալով, հետևեալ առտուն երբ արևը ծագեցաւ, Մօնթէ-Քրիսթօ կղզին ևս նոյնպէս աներևոյթ եղեր էր ։

Ֆրանց ցամաքը ելնելուն պէս, տեղի ունեցած դէպքերը մոռնէ առ ժամանակ մի մոռցաւ Ֆլորէնցայի մէջ իր զուարճութեան և քաղաքային գործերը կատարելու և միայն իր ընկերին քովը հասնելու մտածութեամբ, որ Հռոմ իրեն կ'սպասէր ։

Ուստի դէպ 'ի իր նպատակը ճամբայ ելաւ, և շաբաթ իրիկուն սուրհանդակի կառքով Մաքսի հրապարակը հասաւ ։

Ինչպէս որ ըսինք՝ սենեակները արդէն վարձած էին, և հիմա կը մնար միայն Բասթրինիին պանդոկը երթալ, որ խիստ դիւրին բան չէր, քանզի փողոցները անհամար բազմութեամբ լցուած

էին, և Հռոմի մէջ արդէն սկսեր էր այն խաւն և շփոթ յեղափոխութիւնը, որ երեսելի տօնախմբութեանց ժամանակ կ'ըլլայ: Հռոմի մէջ տարին չորս երեսելի տօնախմբութիւններ կ'ըլլան, որոնք են բարեկենդանի, աւագ շաբթու, Տեառն մարմնոյ և սուրբ Պետրոսի տօնախմբութիւնները:

Տարւոյն մնացեալ ժամանակները՝ քաղաքը վերստին իւր տրտում հանդարտութեան այսինքն կենաց և մահուան միջին վիճակին մէջ կ'իյնայ, որ այս և միւս աշխարհիս մէջ տեղը կայարանի մը կը նմանեցընէ զայն, այնպիսի վսեմ և բարձր կայարանի, ուր աղնուականութիւնը և բարուց նկարագիրը յայտնի կը տեսնուին, և Ֆրանզ արդէն հինգ վեց անգամ ներկայ գտնուելով, ամեն անգամին աւելի սքանչացած էր:

Վերջապէս խուռն ամբոխին մէջէն անցնելով, որ երթալով աւելի կը բազմանար, և աւելի կը խռնէր, պանդոկը հասաւ: Իւր առաջին հարցման վրայ պատասխան տուին այն ամբարտաւանութեամբ, որ յատուկ է կառքը վարձած կառավարներուն, և պարապ սենեակ չունեցող պանդոկապետներուն, թէ պանդոկին մէջ տեղ չկայ: Այն ատեն իւր տոմսը Բասթրինիին ղրկեց ինքզինքը Ալպէր տը Մորսէրֆի բարեկամը կոչելով: Այս կերպը յաջողեցաւ և Բասթրինի անձամբ վազեց՝ զինքը սպասեցընել տալուն համար ներուճն խնդրելով, իւր սպասաւորները յանդիմանելով, և աշտանակը Ճանապարհորդին առջևը ինկնող առաջնորդին ձեռքէն առնելով, ու պատրաստուելով Ալպէրին սենեակը տանիլ զան, երբ Ալպէր իսկ անոր առջևն ելաւ:

Պանդոկին մէկ դասիկոնի միայն երկու փոքր սենեակները և մէկ դահլիճը իրենց ձեռքը կը պտնուէին: Սենեակները փողոցին վրայ էին, որոց Բասթրինի մեծ արժանաւորութիւն մը կ'ընծայէր: Դասիկոնին մնացեալ մասը խիստ հարուստ մարդ մը վարձած էր, որ Սիկիլիացի կամ Մալթայի կը կարծուէր, բայց պանդոկապետը ձշդիւ չկրցաւ ըսել թէ այն Ճանապարհորդը այն երկուքէն ո՞ր ազգին կը վերաբերի:

— Շատ աղէկ, ըսաւ Ֆրանզ, բայց հիմա այս իրիկուան համար ո՛ր և իցէ ընթրիք մը կ'ուզենք, և վաղուան ու հետևեալ օրերուն համար բաց կառք մը:

— Ընթրիքը պատրաստ է, պատասխանեց պանդոկապետը, բայց կառքը . . . :

— Ինչո՞ւ երկմտեցար, պարոն Բասթրինի, պոռաց Ալպէր. կատակ չէ ըրածնիս, մեզ կառք պէտք է, կը հասկընաս:

— Պարոն, ըսաւ պանդոկապետը, մէկ հատ գտնել տալու համար ամեն ջանք՝ի գործ կը դնեմ:

— Եւ ե՞րբ պիտի բերես պատասխանը, հարցուց Ֆրանզ:

— Վաղը առտու, պատասխանեց պանդոկապետը:

— Զարմանալի բան, ըսաւ Ալպէր, եթէ խնդիրը գնոյն վրայ է, աւելի կը վճարենք. պիտենք որ Տրէյք և Ահարոն հասարակ օրեր քսան և հինգ ֆրանք կ'առնուն, և կիրակի ու տօն օրեր երեսուն կամ երեսուն և հինգ ֆրանք, ասոր վրայ դիր հինգ ֆրանք միջնորդութեան համար, քառասուն կ'ընէ, ուրիշ ըսելիք ունի՞ս:

— Շատ կը վախնամ որ կրկինը վճարելով իրենք պիտի չկրնան գտնել:

— Ուրեմն իմ կառքիս ձիեր լծել տուր. թէև Ճանբորդութենէն քիչ մը խորտակուած է, բայց հոգ չէ:

— Ձի չկայ:

Ալպէր Ֆրանզին երեսը նայեցաւ այնպիսի մարդու մը դէմքով, որուն տրուած պատասխանը անհասկանալի կ'երևի իրեն:

— Հասկըցա՞ր ըսածը, Ֆրանզ, ձի չկայ կ'ըսէ. բայց սուրհանդակի ձիերը իսկ չկան:

— Տասն ու հինգ օրէ՝ի վեր ամենքն ալ վարձուած են, և միայն ծաւալութեան պէտք եղածները մնացած են:

— Ասոր ի՞նչ կ'ըսես, հարցուց Ֆրանզ:

— Ես կ'ըսեմ որ երբ խնդիր մը խելքիս դուրս է, անոր վրայ յամառեալ մնալու սովորութիւն չունիմ: Ընթրիքը պատրաստ է, պարոն Բասթրինի:

— Այո՛, տէր իմ:

— Ուրեմն նախ ընթրենք:

— Բայց կառքը և ձիերը, ըսաւ Ֆրանզ:

— Հոգ մի՛ ըներ, սիրելիս, անոնք ինքնին պիտի գան, խնդիրը անոնց գնոյն վրայ է:

երէկ սարակուսելու, տէր իմ, երբ չէի ուզեր ձեզ խօսք տալ՝ շատ ուշ հասաք, և Հռոմի մէջ միայն կառք մը անգամ չկայ՝ այսինքն վերջին երեք օրերուն համար ըսել կ՚ուզեմ։

— Այո՛, կրկնեց Ֆրանզ, ամենէն կարևոր եղած օրերուն համար։

— Ի՞նչ լուր, հարցուց Ալպէր ներս մտնելով, կառք չկա՞յ։

— Այո՛, բարեկամ, պատասխանեց Ֆրանզ, աղէկ դուշակեցիր։

— Ստուգիւ ձեր մշտնջենաւոր քաղաքը պեղեցիկ քաղաք մ՚է, ըսաւ Ալպէր պանդոկապետին։

— Ըսել կ՚ուզեմ, տէր իմ, կրկնեց Բասթրինի ուղեղով իր ճանապարհորդներուն քովը Հռոմէական եկեղեցւոյ մայրաքաղաքը ջատագովել անոր արժանաւորութեանցը նկատմամբ, ըսել կ՚ուզեմ թէ կիրակի առաւօտէն մինչև երեքշաբթի իրիկունը կառքերը բռնուած են, բայց անկէ ետև յիսուն կառք կրնայ դտնուիլ եթէ ուզէք։

— Ո՛հ, այդ իսկ մեծ բան է, ըսաւ Ալպէր, այսօր հինգշաբթի է, ով պիտի գիտնայ մինչև կիրակի ինչեր կը պատահին։

— Տասն կամ տասն երկու հազար ճանապարհորդներ պիտի դան, պատասխանեց Ֆրանզ, որոնք աւելի մեծ դժուարութիւն պիտի պատճառեն։

— Բարեկամ, ըսաւ Մորսէրֆ, ներկայիս արժէքը դիտնանք և ապառնին չտխրացընենք։

— Գոնէ, հարցուց Ֆրանզ, պատուհան մը պիտի կրնանք ունենալ։

— Ո՞ւր տեղ։

— Անշուշտ Գորսօ փողոցին վրայ։

— Է՛հ, անկարելի է, բոլորովին անկարելի, ըսաւ Բասթրինի. Տորիա պալատին հինգերորդ դասիկոնը միայն մէկ պատուհան մը մնացած էր, այն ալ Ռուս իշխան մը վարձեց օրը քսան ոսկիի։

Երկու երիտասարդները ապշութեամբ իրարու երես նայեցան։

— Ուրեմն, սիրելիս, ըսաւ Ֆրանզ Ալպէրին, դիտե՞ս ինչ ը-

Եւ Մորսէրֆ այնպիսի մարդու մը զարմանալի իմաստասիրութեամբը, որ ամենևին չկարծեր թէ անկարելի բան մը ըլլայ, քանի որ իր քսակը կլոր և թղթադարանը լեցուն կ՚ըզգայ, ընթրեց, պառկեցաւ, հանգիստ քնացաւ և երազ տեսաւ թէ վեց ձիերէ լծեալ կառք մը հեծած էր։



ԳԼՈՒԽ Ժ

ՀՌՈՄԱՑԵՑԻ ԱԽԱԶԱՆՆԵՐ

Հետևեալ առտու Ֆրանզ իւր ընկերէն առաջ արթննալով, իսկոյն զանպակը հնչեցուց։

Զանպակին հնչիւնը դեռ դադրած չէր երբ Բասթրինի անձամբ ներս մտաւ։

— Ըսի՞, ըսաւ պանդոկապետը յաղթութեան կերպարանքով և առանց սպասելու որ իրեն հարցում մը ընեն, իրաւունք ունէի

նել պէտք ենք․ երթանք բարեկենդանը Վենետիկ անցընենք, գոնէ հոն եթէ կառք չգտնենք, նաւակներ կրնանք գտնել։

— Ո՛հ, ո՛չ, ըսաւ Ալպէր, ես որոշած եմ բարեկենդանը Հռոմ անցընել․ եթէ ոտնացուպերու վրայ կենալու խիկ ստիպուած ըլլամ, ասկէ պիտի չմեկնիմ։

— Աղէկ միտքս ձգեցիր, պոռաց Ֆրանց, մենք ալ կը ծպտինք կամ խեղկատակ ձիաւորներ կ'ըլլանք և կամ Լանտ քաղաքին բնակիչներ և խիստ կը յաջողինք։

— Պարոններ, ըսաւ պանդոկապետը, մինչև կիրակի միշտ կառք մը կ'ուզէ՞ք։

— Անշուշտ, ըսաւ Ֆրանց, կը կարծես որ դռնապաններու և սուրհանդակներու պէս Հռոմի փողոցները ոտքով պիտի չափե՞նք։

— Երթամ շուտով ձեր հրամանը կատարելու, ըսաւ Բաստրինի, միայն թէ այժմէն կ'իմացընեմ որ օրը վեց թալեր պիտի վճարէք կառքին համար։

— Ես ալ քեզ կ'իմացընեմ, սիրելի՛ իմ պարոն Բաստրինի, որ ես մեր դրացի միլիոնատէրը չեմ, և Հռոմ գալս չորրորդ անգամը ըլլալուն՝ կիրակի, տօն և հասարակ օրերու համար կառքերուն գիները գիտեմ, ուստի այսօրուան, վաղուան և միւս օրուան համար միայն տասն ու երկու թալեր պիտի տանք, և դուն այս գործէն բաւական մեծ շահ կ'ունենաս։

— Սակայն, պարոններ . . . ըսաւ Բաստրինի անոնց խօսքին դէմ դնել ուզելով։

— Գնա՛, բարեկամ, գնա՛, ըսաւ Ֆրանց, եթէ ոչ՝ ես անձամբ կ'երթամ սակարկութիւն ընելու գործակատարիդ հետ, որ իմս ալ է․ ան իմ հին բարեկամս է, որ իր կենացը մէջ քիչ սակ չգողցաւ ինձմէ, և ուրիշ գտնալու յուսով քեզ առաջարկած գինէս աւելի վար գնով գոհ կ'ըլլայ․ ուստի տարբերութիւնն ալ պիտի կորսընցընես և յանցանքը քուկդ պիտի ըլլայ։

— Այդ նեղութիւնը մի՛ կրէք, պարոն, ըսաւ Բաստրինի՝ իր պարտութիւնը խոստովանող Իտալացիի մը շահադէտ ժպիտով, ես բոլոր ջիգս կը թափեմ և կը յուսամ թէ գոհ պիտի ըլլաք։

— Ահա՛ այդպէս խօսէ մեզի հետ։

— Կառքը ե՞րբ կ'ուզէք։

— Մէկ ժամէն։

— Մէկ ժամէն կառքը դրան առջև ձեզ պիտի սպասէ։

Իրօք ժամ մը ետքը՝ կառքը դրան առջև երկու երիտասարդներուն կ'ըսպասէր։

Ֆրանց և Ալպէր վար իջան և անոր մէջ մտան, և առաջնորդը ետևի կողմի նստարանին վրայ ցատկեց։

— Ո՞ւր կ'ուզէք երթալ, հարցուց կառավարը։

— Նախ Ս․ Պետրոս եկեղեցին, և ետքը Գոլոսէ ամփիթատրոնը, ըսաւ Ալպէր ճշմարիտ Փարիզցիի նման։

Բայց Ալպէր կ'անգիտանար որ Ս․ Պետրոս եկեղեցին տեսնելու համար օր մը պէտք է, բայց զայն աղէկ զննելու համար՝ ամիս մը․ ուստի բոլոր օրը եկեղեցին տեսնելով անցուցին։

Յանկարծ երիտասարդները նայեցան որ իրիկուն եղեր է։

Ֆրանց ժամացոյցը նայեցաւ․ ժամը չորս ու կէս էր։

Շուտով պանդոկը վերադարձան․ Ֆրանց պատուիրեց կառավարին որ ժամը ութին պատրաստ ըլլայ․ ամփիթատրոնը կ'ուզէր լուսնին լուսովը Ալպէրին ցուցընել, ինչպէս որ եկեղեցին ցերեկուան լուսովը ցուցուցեր էր։ Երբ մարդ իր արդէն տեսած քաղաքը իր բարեկամին ցուցընել կ'ուզէ, զայն հաճելի երևցընել կը ջանայ, ինչպէս ժամանակաւ իր սիրուհին եղող կինը նոյնպէս կ'ուզէ երևցընել։

Ֆրանց յայտնեց կառավարին թէ ո՛ր ճամբով զիրենք պիտի տանէր․ տէլ Բօբօլօ ըսուած դռնէն պիտի ելնէր, արտաքին պատին երկայնութեանը պիտի անցնէր և Սան Ճիօվաննի դռնէն ներս պիտի մտնէր վերստին։

Սեղանը նստան․ Բաստրինի ընտիր կերակուրներ խոստացեր էր, չափաւոր ընթրիք մը ներկայացուց իրենց, որուն ըսելու խօսք չկար։

Ընթրիքէն ետև՝ ինքն ալ ներս մտաւ․ Ֆրանց 'ի սկզբան կարծեց թէ կերակուրներուն գովութիւնը լսելու կու գայ և կը պատրաստուէր խօսիլ, երբ Բաստրինի իր խօսքը ընդմիջեց։

— Ուրախ եմ զձեզ գոհ ընելուս համար․ բայց այս բանին համար ես հոս չեկայ։

— Արդեօք մեզ իմացընելու եկար որ ուրիշ կամք մը դատ, հարցուց Ալպէր իւր պլանիկը վաւերով։

— Ըլլալէն զատ, տեարք իմ, աւելի աղէկ կ'ընէք եթէ միա. քերնէդ իսկ չհանցընէք։ Հոսումի մէջ գործերը կամ կարելի են կամ ոչ. երբ ձեզ կ'ըսենք թէ անկարելի է, ամեն բան կը լմընայ։

— Փարիզի գործերը աւելի դիւրին են. երբ ուզածնիս չենք կրնար ձեռք ձգել, կրկինը կը վճարենք, և անմիջապէս ուզածնիս կ'ըստանանք։

— Այս խօսքը բոլոր Գաղղիացւոյմէ լսած եմ, ըսաւ Բասթրինի քիչ մը վիրաւորուած, և չեմ հասկընար թէ ինչպէս ձանբորդութեան կ'ելլեն։

— Մեզի պէս խենթերը և անմիտներն են որ ձանբորդութեան կ'ելլեն, ըսաւ Ալպէր անտարբերութեամբ իւր մուխը դէպ 'ի առաստաղը փչելով, և իւր թևաթոռին ետևի երկու ոտից վրայ օրօրուելով. խելացի մարդիկը Հէլտէր փողոցի իրենց բնակարանը, կանի ծառուղին և Փարիզի սրճարանը չեն թողուր և չեն մեկնիր։

Ասկէ յայտնի կ'երևէր որ Ալպէր վերոյիշեալ փողոցը կը բնակէր, ամեն օր նոյն ծառուղւոյն մէջ կը շրջապտէր, և յիշեալ սրճարանին մէջ կը ճաշէր, ուր անոր սպասաւորայ հետ բարեկամութիւն ունեցողը միայն կրնայ ճաշել։

Բասթրինի վայրկեան մը լուռ կեցաւ. յայտնի կ'երևէր որ ընդունած պատասխանին վրայ կը մտածէր, որ անտարակոյս իրեն մութ կ'երևէր։

— Բայց վերջապէս դուն նպատակ մը ունէիր հոս գալու, ըսաւ Ֆրանզ՝ պանդոկապետին աշխարհագրական խորհրդածութիւնները ընդմիջելով, քու այցելութեանդ պատճառը պիտի իմացընես մեզ։

— Ո՛հ, այո՛, պատուիրեր էք որ կառքը ժամը ութին պատրաստ ըլլայ։

— Այո՛։

— Գոլոսէօն տեսնելու դիտաւորութիւն ունիք։

— Այսինքն Գոլիղէն։

— Երկոքն ալ մի և նոյն խօսքն է։

— Շատ աղէկ։

— Կառավարին ըսեր էք որ զձեզ տէր Բորոլօ դունէն հանէ, և պատերուն քովէն անցընելով Ճիօվաննի դունէ՞ն վերադարձընէ։

— Ճիշտ այդպէս հրամայեցի։

— Գիտցիք ուրեմն որ այդ ձանապարհորդութիւնը անկարելի է։

— Ի՞նչպէս անկարելի է։

— Կամ դոնէ խիստ վտանգաւոր։

— Եւ ինչո՞ւ վտանգաւոր պիտի ըլլայ։

— Անուանի Լուիճի Վանբայնին պատճառաւ։

— Նախ ըսէ մեզ, ո՞վ է այդ անուանի Լուիճի Վանբան, հարցուց Ալպէր. կրնայ Հոսումի մէջ խիստ անուանի ըլլալ, բայց կ'իմացընեմ քեզ որ մենք վինքը Փարիզի մէջ չենք ճանչնար։

— Ի՞նչպէս, Լուիճի Վանբան չէ՞ք ճանչնար։

— Այս պատիւը ունեցած չեմ։

— Անոր անունը ամենևին լսած չէ՞ք։

— Ամենևին։

— Ուրեմն դիտցէք որ աւազակապետ մ'է ան, որուն քով Տէչէզարի և Կասբէրօնի ոչինչ են։

— Լսեցի՛ր, Ալպէր, ըսաւ Ֆրանզ, ահա քեզի վերջապէս աւազակապետ մ'ևս։

— Գիտցած ըլլաս, սիրելի պանդոկապետ, որ լսած խօսքերէդ մէկուն պիտի չհաւատամ։ Մենք մեր որոշումը ըրած ենք, և դուն որչափ կ'ուզես խօսէ, մենք ալ մտիկ կ'ընենք, սկսէ. «Մէկ կայ եղեր, մէկ չկայ եղեր...»։

— Բայց ինչո՞ւ չես սկսիր։

Բասթրինի Ֆրանզին կողմը դարձաւ, որ միսէն աւելի խօսք հասկըցող կ'երևէր իրեն. բարեմիտ մարդը իրաւունք ունէր. իր կենացը մէջ խիստ շատ Գաղղիացիներ ընդուներ էր իւր պանդոկը, բայց անոնց ինչ մտքի տէր ըլլալնին չհասկըցեր էր։

— Տէր իմ, ըսաւ խիստ ծանրութեամբ՝ ինչպէս որ ըսինք իւր խօսքը Ֆրանզին ուղղելով, եթէ զիս սատիսս կը կարծէք, իմ

խօսքերս ձեզ օդուտ մը պիտի չընեն. այսու ամենայնիւ կրնամ հաստատել ձեզ թէ ձեր շահուն համար էին անոնք:

— Ալպէր բարեկամս քեզ չըսաւ թէ դուն տոհմօս ես, սիրելի իմ պարոն Բասթրինի, կրկնեց Ֆրանզ, այլ թէ քու խօսքիդ պիտի չհաւատայ: Բայց ես կը հաւատամ, անհոգ եղիր ու խօսէ:

— Սակայն, տէր իմ, երբ իմ խօսքերուս անկեղծութեանը վրայ տարակուսի մէկը . . . :

— Սիրելիս, կրկնեց Ֆրանզ, դուն կասանդրայէն աւելի դիւրագրգիռ ես եղեր, որ թէև դուշակուհի մ'էր, բայց ամենևին մէկը չէր հաւատար իրեն. իսկ դուն դոնէ քու ունկնդիրներուդ կէսին վրայ վստահ ես: Աղէ, նստիր և ըսէ մեզ, ո՞վ է այդ Պ. Վանբան:

— Արդէն ըսի ձեզ, տէր իմ, թէ աւազակապետ մ'է, որուն նմանը համբաւաւոր Մասթրիլլայէն ետքը տեսնուած չէ:

— Բայց այդ աւազակապետը ի՞նչ յարաբերութիւն ունի կառավարին իմ ըրած հրամանիս, որ տէր Բորոլօ գունէն եկնելով Սան Ճիօվաննի գունէն վերադառնայ:

— Ան յարաբերութիւնը ունի, պատասխանեց Բասթրինի, որ դուք պիտի կրնաք մէկ գունէն դուրս եկնել, բայց միւս գունէն վերադառնալնուդ վրայ կը տարակուսիմ:

— Ի՞նչ պատճառաւ, հարցուց Ֆրանզ:

— Վասն զի գիշեր ըլլալուն պէս՝ գուներէն յիսուն քայլ անդին ալ ոպահով չէ մարդ:

— Ճշմարի՞տ կ'ըսես, պոռաց Ալպէր:

— Պարոն կոմս, ըսաւ Բասթրինի՝ իր խօսքերուն վրայ Ալպէրի տարակուսելէն սաստիկ վիրաւորուելով, ձեզի համար չէ ըսածս, այլ ձեր ճանապարհորդակցին, որ Հռոմը կը ճանչնայ և գիտէ որ այսպիսի գործերու մէջ կատակ չըլլար:

— Բարեկամ, ըսաւ Ալպէր խօսքը Ֆրանզին ուղղելով, նորահնար արտաքէպ մ'է պատմածը. մենք մեր կառքը ատրճանակներով, լայնաբերան և երկփող հրացաններով կը լեցընենք. թող Լուիճի Վանբան դայ զմեզ բռնելու, մենք զինքը կը բռնենք, Հռոմ կը բերենք, և նորին Սրբութեան կը նուիրենք, որ մեր

այնպիսի մեծ ծառայութեանը փոխարէն մեզ կը հարցընէ թէ ինչ երախտիք կրնայ ընել: Պարզապէս միայն կառք մը և իւր ախոռէն երկու ձի կը խնդրենք, և բարեկենդանը կառքով կ'անցընենք, առանց հաշուի դնելու որ Հռովմայեցիք հաւանականաբար երախտագիտութեամբ Կապիտոլի մէջ մեր գլուխը պսակներ պիտի դնեն և զմեզ Կուրտիոսի ու Ռէգրատիոս Կոկղէսի նման հայրենեաց ազատիչ պիտի հռչակեն:

Ալպէրին այս խօսակցութեան ժամանակ Բասթրինիին իւր դիմաց վրայ ըրած շարժուձեները նկարագրելը անկարելի է:

— Բայց ո՞ւրկից պիտի գանենք, հարցուց Ֆրանզ Ալպէրին, այն ատրճանակները, լայնափող և երկփող հրացանները. որոյմով կառքը լեցընել կ'ուզես:

— Իրօք ամենևին ղէնք չունինք. քանզի Թէրաչինայի մէջ մինչև դաշոյնս վրայէս առին. դուն ի՞նչ ըրիր:

— Ինձ ալ նոյնը ըրին Ոպտաբէնտէնթէի մէջ:

— Ստուգիւ, պարոն պանդոկապետ, յարմար միջոց մ'է այս՝ դողերուն համար, ըսաւ Ալպէր ուրիշ պլանիկ մը վառելով, և ինծի այնպէս կ'երևի որ անոնց շահուն մասնակից եղող կայ:

Անտարակոյս այս կատակը Բասթրինիին ծանր երևցաւ, վասն զի ամենևին պատասխան չտուաւ անոր, և իւր խօսքը Ֆրանզին ուղղեց իբր խօսք հասկըցող մէկու մը:

— Գիտէք որ այն աւազակներուն ձեռքը ընկնողը անկարելի է որ ինքզինքը կարենայ պաշտպանել:

— Ինչպէս, պոռաց Ալպէր, որ չէր կրնար համբերել որ ճանապարհորդ մը այնպէս անարգել կողոպտել կարենան. ինչպէս անկարելի է:

— Որովհետև անօգուտ տեղը ինքզինքը պիտի պաշտպանէ. ինչ կրնաք ընել երկոտասնեակի չափ աւազակներու դէմ, որոնք փոսի մը, աւերակի մը կամ ժայռի մը մէջէն կ'ելնեն, ու ամենքը մէկէն իրենց հրացանները ձեզի կ'ուղղեն:

— Ինչ պիտի ընեմ, թող զիս սպաննեն, ըսաւ Ալպէր:

Պանդոկապետը Ֆրանզին կողմը դարձաւ այնպիսի դէմքով մը, որով ըսել կ'ուզէր թէ՝ Ստուգիւ, պարոն, ընկերդ խենթեցեր է:

— Սիրելիդ իմ Ալպէր, կրկնեց Ֆրանց, պատասխանդ վսեմ է, և ծերունի Կոռնէյլիոսին ըսած Թող մեռնէրին արժէքը ունի. միայն թէ՝ երբ Ոռացիոս այս պատասխանը տուաւ, Հռովմայ ազատութիւնը անկէ կախեալ էր, և պարագան կը վերցնէր: Բայց մեր մտային հաճոյք մ՚է միայն, և ծաղրական բան մը կ՚ըլլայ երբ մտային հաճոյից համար մեր կեանքը վտանգի մէջ դնենք:

— Կեցցե՛ս, պոռաց Բասթրինի, ահա՛ խելացի խօսք մը:

Ալպէր բաժակ մը ազնիւ գինի լեցուց և փոքր ումպերով խմեց զայն՝ քանի մը անիմաց խօսքեր մրմռալով:

— Հիմա որ ընկերդ համոզարուեցաւ, պարոն Բասթրինի, ըսաւ Ֆրանց, և իմ քեզ մտադիր ըլլալուս վրայ ապահով ես, պատմէ հիմա, ո՛վ է այդ Լուիճի Վամբան: Հովի՞ւ է թէ ազնուական, երիտասա՞րդ է թէ ծեր, կարճ է թէ բարձրահասակ: Նկարագրէ մեզ, որպէս զի եթէ աշխարհիս մէջ դիպուածով անոր պատահինք, Ժան Սպոկարի կամ Լարայի պէս գոնէ կարենանք ճանչնալ զան:

— Անոր վրայօք ինձմէ աղէկ տեղեկութիւն մը մէկը չկրնար տալ, տէր իմ, քանզի Լուիճի Վամբան իր մանկութենէն կը ճանչնամ, և օր մը Ֆէրէնթինոյէն Ալաթրի երթալու ժամանակս անոր ձեռքը իյնալով, բարեբաղդաբար մեր վաղեմի բարեկամութիւնը յիշեց, և զիս ազատ թողուց ոչ միայն առանց փրկանք մը վճարել տալու, այլ և խիստ գեղեցիկ ժամացոյց մը ինծի նուիրելէն և իր պատմութիւնը ինծի պատմելէն ետև:

— Տեսնենք՝ ո՞ւր է անոր տուած ժամացոյցը, ըսաւ Ալպէր:

Բասթրինի իր գրպանէն պատուական ժամացոյց մը հանեց, որ Պրէկէ ժամագործին անունը, Բարիզի դրոշմը և կոմսի պսակի մը պատկերը կը կրէր:

— Ահա՛ այս է, ըսաւ:

— Զարմանալի՜ բան, ես ալ գրեթէ ասոր նոյնը ունիմ, ըսաւ Ֆրանց իր բաճկոնին ծոցէն ժամացոյցը հանելով, որ երեք հազար ֆրանք արժողութիւն ունի:

— Պատմէ՛ ուրեմն անոր պատմութիւնը, կրկնեց Ֆրանց աթոռ մը յառաջցնելով, և Բասթրինիին նշան ընելով որ նստի:

— Կը ներէք ուրեմն, ըսաւ պանդոկապետը:

— Ի՞նչ ըսել է, ըսաւ Ալպէր, քարոզիչ մը չես որ ոտքի վրայ խօսիս:

Պանդոկապետը իր ունկնդիրներուն իւրաքանչիւրին յարգական շարժումներ ընելէն ետև նստաւ:

— Ուրեմն, ըսաւ Ֆրանց Բասթրինիին բերանը բանալու ատեն զան ընդմիջելով, Լուիճի Վամբան դեռ երիտասարդ մ՚է. քանզի քիչ մը առաջ կ՚ըսէիր թէ անոր մանկութենէն կը ճանչնայիր զան:

— Դեռ երիտասարդ անգամ չէ, հազիւ քսաներկու տարեկան է. ճշմարիտ, այս պատանին շատ պիտի յառաջանայ, կը տեսնէք:

— Ասոր ի՞նչ կ՚ըսես, Ալպէր, ըսաւ Ֆրանց. աղէկ բան է քսան երկու տարեկան հասակին մէջ համբաւ ստանալ:

— Այո՛, անշուշտ, Աղեքսանդր, Կեսար և Նաբոլէոն, որոնք աշխարհիս մէջ այնչափ մեծագործութիւններ ըրին, այս հասակին մէջ անոր չափ յառաջացած չէին:

— Ուրեմն, կրկնեց Ֆրանց խօսքը պանդոկապետին ուղղելով, այդ դիւցազունը որուն պատմութիւնը պիտի ընես, քսան երկու տարեկա՞ն է:

— Հազիւ թէ, ինչպէս որ պատիւ ունեցայ արդէն ըսելու:

— Բարձրահասա՞կ է թէ կարճ:

— Միջակ հասակաւ, գրեթէ Նորին Վսեմութեան հասակին չափ, ըսաւ պանդոկապետը Ալպէրը ցուցնելով:

— Շնորհակալ եմ ըրած բաղդատութեանդ համար, ըսաւ Ալպէր խոնարհութիւն մը ընելով:

— Շարունակէ՛, բարեկամ, կրկնեց Ֆրանց իր բարեկամին դիւրագրգռութեանը վրայ ժպտելով. և ըսէ մեզ թէ ի՞նչ աստիճանի կը վերաբերէր այն:

— Բալէսթրինայի և Կապրի լճին մէջ տեղը գտնուած Սան-Ֆէլիչէ կոմսին ագարակին նորատի հովիւն էր, որ Բամբինարա ծնած և հինգ տարեկան հասակին մէջ կոմսին ծառայութեանը մտեր էր: Իր հայրը, որ նոյնպէս հովիւ մ՚էր, ոչխարներու հօտ մը ունէր, որոնք իր ստացուածն էին, և որոց բուրդը և կաթը Հռոմ բերելով կը ծախէր և անոնց ստակովը իր ապրուստը կը հոգար:

Փոքր Վամբան իր մանկութենէն զարմանալի բնութիւն մը ու-

Լուիձի այս ստակով գրքեր և մատիաներ կը դնէր։

Նմանեցընելու այնպիսի յաջողակութիւն մ՚ունէր, որ իւր քաբեղէն տախտակներուն վրայ իւր ոչխարները, ծառեր և տուներ կը նկարէր՝ ձիօթօ պատկերահանին պզտիկութեան մէջ ըրածին պէս։

Եարը իւր զմելինովը սկսաւ փայտերը տաշել և անոնց ամեն տեսակ ձևեր տալ։ Այսպէս սկսած էր Բինեէլլի քանդակագործը։

Վեց կամ եօթն տարեկան, այսինքն Վանբայէն աւելի փոքր նորատի աղջիկ մը նոյնպէս Բալէսթրինայի մօտակայ ագարակի մը մէջ ոչխարներու պահպանութիւն կ՚ընէր. Վալմոնթոն ձնած՝ որը աղջիկ մ՚էր Թէրէզա անունով։

Այս երկու ծաղկահաս հովիւները իրարու հանդիպելով, իրարու քով կը նստէին, կը խօսակցէին և Թող տալով որ իրենց հօտերը իրարու խառնուին, միատեղ կը խաղային և կ՚ըղբօսնուին, և իրիկունը Սան-Ֆէլիչէ կոմսին ոչխարները Չէրվէթրի սեպուհին ոչխարներէն կը զատէին, և իրարմէ կը բաժնուէին իւրաքանչիւր ոք իւր ագարակը վերադառնալու՝ իրարու խօսք տալէն ետև որ հետեւեալ օրը վերստին տեսնուին։

Հետևեալ առտու վերստին դիրար կը տեսնէին և այսպէս միատեղ կը մեծնային։

Վանբա տասներկու տարեկան եղաւ, և Թէրէզա տասնուվեց։ Սակայն իրենց բնազդումներն ևս քիչ քիչ կը զարգանային։

Լուիձի իւր առանձնութեան մէջ կրցածին չափ արուեստները յառաջացուցած միջոցին՝ տխուր կ՚երևէր, և դիւրագրգիռ, բարկացկոտ և միշտ ծաղր ընող էր։ Բամբինարայի, Բալէսթրինայի և Վալմոնթոնի տղոցմէ և ոչ մէկը ոչ միայն չկրցեր էր իւր վրայ աղդուութիւն ունենալ, այլ և ոչ իսկ իւր ընկերն ըլլալ։ Իւր կամապաշտ բնութեանը և առանց զիջանելու միշտ իւր կամքը կատարել ուզելուն համար՝ իւր բարեկամները իրմէ կը հեռանային և հակակրութիւն մը կը ցուցընէին։ Միայն Թէրէզա իւր մէկ խօսքովը, մէկ նայուածքովը և մէկ շարժումովը կ՚իշխէր այն ամեն բնութեանը, որ կնոջ մ՚առջև կ՚ընկճի, բայց որ և իցէ մարդու առջև կը բորբոքի։

նէր. եօթն տարեկան էր երբ օր մը Բալէսթրինայի ժողովրդապետին դնայ աղաչելու որ իրեն կարդալ սորվեցընէ։ Այս բանս շատ դժուար էր, քանի նորատի հովիւը չէր կրնար իւր հօտը թողուլ և քաղաքը գալ. բայց բարի ժողովրդապետը ամեն օր կ՚երթար պատարագ մատուցանելու մօտակայ աղքատ գիւղ մը, որ խիստ փոքր ըլլալով չէր կրնար քահանայի մը ապրուստը հոգալ. ուստի ժողովրդապետը առաջարկեց անոր որ պատարագ մատուցանելէն ետև ամեն օր գիւղէն դառնալու ատենը՝ Լուիձի Ճանբուն վրայ դտնուի և իւր դասը առնու, բայց առաջուց իմացընելով որ այս դասերը կարճ պիտի ըլլան, և հետևաբար աղեկ մտադրութիւն պիտի ընէ անոնց։

Տղան այս առաջարկութիւնը ընդունեց։

Ամեն օր Բալէսթրինայէն գիւղը երթալու Ճանբուն վրայ Լուիձի իւր հօտը արածելու կը տանէր, ու ամեն առտու ժամը իննին ժողովրդապետը անկէ անցնելու ատեն՝ իւր ժամադրքին մէջ անոր դաս կու տար։

Երեք ամիսէն Լուիձի կատարեալ կարդալ սորվեցաւ։

Բայց ասով բաւական չեղաւ, այլ ուզեց գիր գրել ևս սորվիլ։

Քահանային Հռոմի գրի վարժապետի մը երեք այբուբենի օրինակներ գրել տուաւ՝ խոշոր, միջակ և մանր տեսակ. և սորվեցուց անոր որ երկաթի մը սուր ծայրովը քարեղէն տախտակի մը վրայ անոնց նայելով գրէ։

Վանբա իւր առջևը ունեցած օրինակներուն հետևելով, երեք ամիսէն գիր գրել սորվեցաւ։

Ժողովրդապետը անոր ուշիմութեանը և յաջողակութեանը վրայ զարմանալով, քանի մը տրցակ թուղթ, տուփ մը գրիչ և զմելին մը պարգևեց անոր։

Թէև նոր ուսում մ՚էր այս իրեն համար, սակայն ութ օր աշխատելով, երկաթի ծայրով քարեղէն տախտակի վրայ գրածին պէս սկսաւ թղթի վրայ իսկ դրչով գրել։

Ժողովրդապետը հովիւին այս ջանքը Սան-Ֆէլիչէ կոմսին պատմեց, որ իւր առջևը կանչեց ղան, կարդացուց և գիր գրել տուաւ անոր, ու հրամայելով իւր տեսուչին որ ծառաներուն հետ կերակուր կերցընէ, ամիսը երկու թալեր տուաւ անոր։

Ընդ հակառակն՝ Թէրէզա առոյգ, կայտառ և զուարթ էր, բայց և չափազանց հպարտ էր. Լուիզի Սան-Ֆէլիչէի տեսուչէն առած երկու թալերով, և իր ձեռօքը շինած խաղալիկները Հռոմ խանութպաններու ծախելով՝ անոնց սակաւը մարգարտեայ օղեր, ապակեայ մանեակներ և ոսկի ասեղներ կը գնէր, և այս զարդերով Թէրէզա Հռոմի շրջակայից ամենէն գեղեցիկը և ամենէն փայլունն էր։

Երկու նորատի հովիւները ամեն օր միատեղ անցընելով, և առանց ընդդիմութեան իրենց բնութեան նախնական աղդմանց անձնատուր ըլլալով կը մեծնային։ Բայց իրենց խօսակցութեանց, իրենց բաղձանաց և իրենց ցնորից մէջ Վանրա միշտ իշխող կ'երևէր և ինքզինքը նաւապետ մը, զօրագլուխ մը կամ նահանգի կուսակալ մը կը կարծէր, իսկ Թէրէզա ինքզինքը հարուստ, ամենէն գեղեցիկ զգեստները հագած, և համազգեստ ծառաներէ շրջապատեալ կը կարծէր. և երբ բոլոր օրը այսպիսի քիմէրական և գեղեցիկ երևակայութիւններով իրենց ապառնին կը շքեղացընէին, իրիկունը իրարմէ կը բաժնուէին իրենց ոչխարները փարախը տանելու և ցնորքներուն բարձրութենէն իրենց ճշմարիտ վիճակին նուաստութեանը իջնելու համար։

Օր մը Լուիզի տեսուչին ըսաւ թէ գայլ մը Սաբինացւոց լեռներէն ենելով իր հօտին մօտերը եկեր էր։ Այն ատեն տեսուչը իրեն հրացան մը տուաւ, Վանրայի ուզածն ալ այն էր։

Բարեբաղդաբար այս հրացանը Պրէշիա շինուած ընտիր զէնք մ'էր՝ Անգղիական լայնաբերան հրացանի գնտակով. միայն թէ օր մը կոմսը վիրաւորեալ աղուէս մը սպաննելու ատեն՝ անոր փայտեայ բունը խորտակեր էր, այս պատճառաւ իբր անպիտան հրացան մը մէկ կողմ նետած էին զայն։

Վանրայի պէս քանդակագործի մը դժուար չէր զայն շինելը։ Առաջինին տեղ ուրիշ բուն մը շինեց, որուն վրայ այնպիսի գեղեցիկ զարդեր աւելցուց, որ եթէ փայտը միայն քաղաքը տանէր ծախելու համար, անտարակոյս տասն և հինգ կամ քսան թալեր կրնար շահիլ։

Բայց Վանրա զայն ծախելու պէտք չունէր. երկար ժամանակէ

՚ի վեր երիտասարդը հրացան մը երազեր և հիմա ստացեր էր։ Բոլոր այն երկիրներուն մէջ, ուր անկախութիւնը ազատութեան կը փոխուի, աներկիւղ սրտի մը և զօրաւոր գործողութեան մը զգացած առաջին պէտքը զէնքն է, որ միանգամայն յարձակելու և պաշտպանելու կը ծառայէ, և զէնքը կրողը զօրացընելով, շատ անգամ զարհուրելի կ'ընէ։

Այն ժամանակէն Վանրա իր բոլոր պարապոյ ժամանակները հրացանին կրթութեամբը կ'անցընէր. վառօդ և գնտակներ գնեց, և ամեն բան նպատակ կ'առնուր. Սաբինացւոց լերան զառիվայրին վրայ աճող տխուր, անմեղ և մոխրագոյն կաճղը, գիշերային որսորդութեան սկսելու համար իր որջէն դուրս ելնող աղուէսը, և օդին մէջ թռչող արծիւը իր նշանէն չէին ազատեր։ Հրացանը գործածելու այնչափ վարժեցաւ, որ Թէրէզա՝ վառօդի ճայթման ձայնէն ՚ի սկզբան ունեցած երկիւղին յաղթելով, զուարճութիւն մը կ'ըզգար երբ կը տեսնէր իր նորատի ընկերը, որ ձեռօքը նետածին պէս ուզած տեղը հրացանին գնտակը կը հասցընէր։

Իրիկուն մը՝ այս երկու ծաղկահասակ հովիւներուն սովորաբար կեցած անտառին մէջէն իրօք գայլ մը դուրս ելաւ, բայց տասն քայլ չյառաջացած՝ արիւնաշաղախ գետինը ինկաւ։

Վանրա իր ըրած որսին վրայ ուրախանալով, ուսերուն վրայ առաւ զայն և ագարակը տարաւ։

Այս ամեն գործերով ագարակին շրջակայից մէջ Լուիզին համբաւը կը տարածուէր. արժանաւոր մարդը՝ ուր որ ըլլայ, իր գործոց վրայ հիացողներ կը գտնէ։ Ամեն կողմ անոր համար կ'ըսէին թէ Ագարակէն տասն մղոն հեռու անոր պէս աշխոյժ, ճարտար և քաջ հովիւ մը չկայ. թէև միւս կողմէն ալ Թէրէզա իսկ աւելի հեռու տեղեր Սաբինացւոց ամենէն գեղեցիկ աղջիկներէն մէկը սեպուած էր, բայց մէկը անոր հետ սիրոյ խօսք մը ընելու չէր համարձակեր, քանզի գիտէին որ Վանրա կը սիրէ զան։

Այսու ամենայնիւ այս երկու նորատի հովիւները ամենևին իրարու ըսած չէին թէ զիրար կը սիրեն. երկուքնին մէկտեղ մեծցեր էին այնպիսի երկու ծառերու պէս, որոնք հողին մէջ իրենց արմատները, օդին մէջ իրենց ոստերը և երկնից մէջ իրենց անուշ հո-

տերը իրարու կը խառնեն . միայն թէ զիրար տեսնելու փափաքնին նոյն էր . այս փափաքը պէտք մը եղած էր , և մահը նախապատիւ կը համարէին քան օրուան մը բաժանումը :

Թէրէզա տասն ու վեց տարեկան եղեր էր և Վանբա տասն ու եօթն :

Այս ժամանակներս Լէբինի լեռներուն վրայ երևցած գողերու խումբի մը վրայ խօսքեր կ'ըլլային : Հռոմի շրջականները աւազակները ամենևին պակաս եղած չեն . երբ աւազակներու գլխաւոր մը ներկայանայ , անմիջապէս խումբ մը կը կազմուի :

Գուգումէթթօ անուն հռչակաւոր աւազակապետը Աբրուզզոյէ շրջապատուելով , ու Նաբոլիի մէջ ստոյգ պատերազմ մը ընելէն ետև՝ Նաբոլիի տէրութենէն հալածուելով , Մանֆրէտի նման Կարիլեանօ գետին միւս կողմը անցեր , և Սօնինոյի ու Ճիւբէրնոյի մէջ տեղը Ամազէնայի եզերքը ապաստաներ էր :

Այս տեղ վերստին խումբ մը կազմեց , և Տէչէզարի ու Կամբէրոնի աւազակապետներուն հետևեցաւ , որոց շուտով պիտի գերազանցէր : Բալէսթրինայէն , Ֆրասգաթիէն և Բամբինարայէն շատ երիտասարդներ աներևոյթ եղան , և 'ի սկզբան անոնց ինչ ըլլալնին չգիտնալով՝ ամեն մարդ անոնց կորստեանը համար կը ցաւէր , բայց շուտով իմացուեցաւ որ անոնք Գուգումէթթոյի խումբին հետ միացեր էին :

Քիչ մը ժամանակ ետքը՝ Գուգումէթթօ ամենուն ուշադրութեանը առարկայն եղաւ . ամեն կողմ անոր տարօրինակ աներկիւղութեան և անգթութեան գործերը կը պատմուէին :

Օր մը՝ Ֆրոզինոնի քաղաքին անդաչափին ծաղկահաս աղջիկը գողցաւ : Աւազակներուն օրէնքը յայտնի է . նորատի աղջիկ մը նախ զան գողցողին կը վերաբերի , ետքը միւսները մէջերնին վիճակ կը ձգեն , և թշուառ աղջիկը բոլոր խումբին զուարճութեանց կը ծառայէ մինչև որ կամ աւազակները զան ազատ թողուն և կամ աղջիկը մեռնի :

Եթէ աղջկան ծնողքը անոր փրկանքը վճարելու կարող են , աւազակները պատգամաւոր մը կը ղրկեն և անոր փրկանքը կը պահանջեն . գերի աղջկան կեանքը նուիրակին բերած պատասխանէն

կախեալ է . եթէ փրկանքը մերժուի , գերին անշուշտ կը դատապարտուի :

Անդաչափին աղջիկը Գուգումէթթոյի խումբին մէջ սիրահար մը ունէր , որ Գարլինի կը կոչուէր :

Աղջիկը իւր սիրահարը տեսածին պէս՝ թևերը բանալով անոր վրայ վազեց և ինքզինքը ազատած կարծեց , բայց Գարլինի իւր սիրուհին տեսնելով յուսահատ երևցաւ . վասն զի աղջկան գլուխը գալիքը կը գուշակէր :

Սակայն , ինքը Գուգումէթթոյին մտերիմը ըլլալուն , որովհետև երեք տարիէ 'ի վեր անոր հետ բազմաթիւ վտանգներու դիմադրաւեր , և անգամ մը անոր կեանքը ազատեր էր՝ ատրճանակի մէկ հարուածով գետինը փռելով հրացանակիր զինուոր մը , որ սուրը վերցուցած աւազակապետին գլխին պիտի իջեցնէր , յուսաց որ Գուգումէթթօ գթայ իրեն :

Ուստի աւազակապետը մէկ կողմ տարաւ , ինչ ատեն նորատի աղջիկը բարձր սոճիի մը տակ նստելով , Հռոմայեցի դեղջկական գլխի գեղեցիկ զարդը քակեր , քօղ մը ըրեր և աւազակներուն շուայտ նայուածքէն իւր երեսը գոցեր էր :

Գարլինի գերի աղջկան իւր սիրուհին ըլլալը , հաւատարիմ մնալու համար իրարու ըրած երդումնին , և այն կողմերը գալէրնէն 'ի վեր , ամեն իրիկուն աւերակի մը մէջ իրարու ժամադիր ըլլալնին պատմեց անոր :

Նոյն իրիկունը՝ Գուգումէթթօ Գարլինին մօտակայ գիւղը ղրկեր էր , որով սիրահար աւազակը իւր ժամադիր եղած տեղը չկրցեր էր գտնուիլ , ու դիպուածով Գուգումէթթօ աղջիկը տեսնելով յափշտակեր էր :

Գարլինի աւազակապետին աղաչեց որ իրեն համար բացառութիւն մը ընէ և իւր Ռիթա սիրուհւոյն պատիւը պահէ , ըսելով որ անոր հայրը հարուստ է և աղէկ փրկանք մը կրնայ վճարել :

Գուգումէթթօ իւր բարեկամին թախանձանաց զիջում ցուցուց , և հրամայեց անոր որ հովիւ մը գտնէ ու Ֆրոզինոն ղրկէ Ռիթայի հօրը իմացընելու :

Այն ատեն՝ Գարլինի ուրախութեամբ նորատի աղջկան մերձե-

յաւ , իմացուց անոր որ ազատած է և առաջարկեց որ իւր հօրը նամակ մը գրէ , որուն մէջ իւր գլուխը եկածը պատմէ և իմացընէ որ իւր փրկանքը երեք հարիւր թալեռի որոշուած է ։

Տասներկու ժամ միայն ժամանակ կու տային հօրը , այսինքն մինչև հետևեալ առտուան ժամը ինն ։

Նամակը գրելուն պէս՝ Գարլինի անմիջապէս առաւ զայն և մօտակայ դաշտը վազեց որ մէկը գտնէ զայն Ռիթայի հօրը տանելու ։

Երիտասարդ հովիւ մը տեսաւ որ իւր հօտը կը մակաղէր ։ Աւազակներուն պատգամաւորները հովիւներն են , որոնք քաղաքին և լերանց մէջ , այսինքն վայրի և քաղաքակրթեալ կենաց մէջ տեղը կ՚ապրին ։

Հովիւը խոստանալով որ ժամէ մը Ֆրոզինոն կը հասնի՝ անմիջապէս մեկնեցաւ ։

Գարլինի ուրախութեամբ ետ դարձաւ իւր սիրուհւոյն իմացընելու որ նամակը ղրկեց ։

Խումբը նոյն սոճիին տակը նստած՝ ուրախ և զուարթ կ՚ընթրէին ։ Աւազակները իրենց ուտելիքը գիւղացիներէն կ՚առնուն իբր հարկ մը ։ Այս զուարթադէմ սեղանակիցներուն մէջ Գուգումէթթօ և Ռիթա չկային ։

Գարլինի անոնց ուր ըլլալը հարցուց . աւազակները փոխանակ պատասխանելու՝ սկսան քրքջաձայն ծիծաղիլ ։ Պաղ քրտինք մը Գարլինիի ճակատէն վար կը հոսէր , իւր ճգնաժամը հասած կը կարծէր և մազերը կը քստմնէին ։

Իւր հարցումը կրկնեց . բայց աւազակներէն մէկը բաժակ մը գինի լեցուց և անոր ներկայացընելով ըսաւ .

— Խմէ՛ մեր քաջ Գուգումէթթոյին և գեղեցիկ Ռիթային կենացը ։

Նոյն վայրկենին՝ կնոջ մը ձայնը լսեց , ու ամեն բան հասկցաւ ։ Բաժակը առաւ ու իրեն ներկայացընողին երեսին զարնելով խորտակեց , և ձայնը ելած կողմը վազեց ։

Հարիւր քայլի չափ յառաջանալով , մացառներու ետին Ռիթան տեսաւ , որ Գուգումէթթոյի գրկացը մէջ նուաղեր էր ։

Գուգումէթթօ Գարլինին տեսնելով ոտք ելաւ և երկու ձեռքը մէկ մէկ ատրճանակ բռնած անոր ուղղեց ։

Երկու աւազակները վայրկեան մը իրարու երես նայեցան՝ մէկը յաղթութեան ժպիտով , միւսը մահատիպ դեղնութեամբ ։

Այս երկու մարդիկը տեսնողը սոսկալի դէպք մը պիտի գուշակէր . բայց Գարլինի իւր ահագնատեսիլ դէմքը փոխեց , և իւր մէջքի ատրճանակներէն մէկուն տարած ձեռքը վար առաւ ։

Ռիթա երկուքնուն մէջ տեղը գետինը պառկած էր ։

Լուսինը այս տեսարանը կը լուսաւորէր ։

— Ի՞նչ ըրիր , հարցուց անոր Գուգումէթթօ , հրամանը կատարեցի՞ր ։

— Այո՛ , տէր իմ , պատասխանեց Գարլինի , և վաղը ժամը իննէն առաջ Ռիթայի հայրը պահանջուած գումարով հոս պիտի գայ ։

— Շատ աղէկ . այսու ամենայնիւ ուրախ գիշեր մը պիտի անցընենք ։ Այս ծաղկահաս աղջիկը խիստ գեղեցիկ է , և ստուգիւ աղէկ ճաշակողութիւն ունիս եղեր , բարեկամ ։ Եւ որովհետև ես ինքնասէր չեմ , դառնանք մեր ընկերներուն քով ու վիճակահանութիւնը ՚ի գործ դնենք ։

— Ուրեմն սովորական օրինաց պիտի ենթարկե՞ս զան ։

— Բայց ինչ պատճառաւ բացառութիւն ընենք ։

— Կարծեցի թէ աղաչանացս . . . . ։

— Եւ ինչ առաւելութիւն ունիս դուն միւսներէն ։

— Ստոյգ է ։

— Սակայն հոգ մի՛ ըներ , կրկնեց Գուգումէթթօ ծիծաղելով , վաղ կամ անագան կարգդ պիտի գայ ։

Գարլինին ակռաները սեղմուելէն պիտի փշրուէին ։

— Քալէ՛ , ըսաւ Գուգումէթթօ դէպ ՚ի սեղանակիցները քայլ մը յառաջանալով , չե՞ս գար ։

— Ետևէդ կու գամ . . . ։

Գուգումէթթօ առանց իւր աչքը Գարլինիին վրայէն վերցընելու իւր ընկերներուն մօտեցաւ , վասն զի անտարակոյս կը վախնար որ իւր հակառակորդը զէնքը իւր ետևէն չզարնէ ։ Բայց Գարլինի ամենևին թշնամական դիտաւորութիւն չունէր ։

Թևերը խաչաձև դրած՝ նուաղեալ Ռիթային առջևը կանգներ էր ։

Վայրկեան մը Գուգումէթթօ այնպէս կարծեց թէ երիտասարդը աղջիկը առնելով պիտի փախչի . սակայն հիմա իւր հոգը չէր , քանզի իւր կամքը կատարեր էր , և երեք հարիւր թալեռը խումբին հետ

բաժնուելով, իրեն այնպիսի խեղճ բաժին մը պիտի իյնար, որուն կորուստը իրեն մեծ բան մը չէր երևեր ։

Ուստի իւր ընկերներուն քովը մօտեցած ատենը մեծ զարմանքով նայեցաւ որ Գարլինի գրեթէ նոյն վայրկենին իւր հետը անոնց քովը հասաւ ։

Վիճակահանութիւն, վիճակահանութիւն, կը պոռային բոլոր աւազակները իրենց գլխաւորը տեսնելով ։

Եւ ամենուն աչքը արբեցութենէ և շուայտութենէ փայլեցան, ինչ ատեն կրակին բոցը իրենց բոլոր անձին վրայ կարմրագոյն լոյս մը կ'արձակէր, և զիրենք դևերու կը նմանեցընէր ։

Պահանջածնին իրաւացի էր . ուստի աւազակապետը գլխովը նշան մը ընելով իմացուց որ իրենց խնդրոյն կը հաւանի ։

Ամենուն անունը, ինչպէս նաև Գարլինիինը գլխարկի մը մէջ դրին, և խումբին փոքրագոյնը անոր մէջէն տոմսակ մը հանեց ։

Այս տոմսակը Տիավոլաչիոյին անունը կը կրէր ։

Տիավոլաչիօն այն անձն էր որ աւազակապետին կենացը գինի խմել առաջարկեր էր Գարլինիին, և Գարլինի բաժակը անոր երեսին վրայ խորտակելով պատասխաներ էր ։

Քունքէն մինչև բերանը մեծ վէրք մը բացուեր էր և արիւնը յորդութեամբ կը վազէր ։

Տիավոլաչիօ իւր բաղդին յաջողիլը տեսնելով սկսաւ բարձրաձայն ծիծաղիլ ։

— Տէր իմ, ըսաւ, քիչ մը առաջ Գարլինին չուզեց կենացդ համար գինի խմել, հիմա դուն առաջարկէ որ իմ կենացս համար խմէ, գուցէ ինձմէ աւելի քեզ զիջանի ։

Իւրաքանչիւր ոք կ'ըսպասէր որ Գարլինի կռիւի նետուի . բայց 'ի մեծ զարմանս ամենուն՝ մէկ ձեռքով բաժակ մը և միւսովը շիշ մը առաւ և բաժակին մէջ գինի լեցուց .

— Կենացդ, Տիավոլաչիօ, ըսաւ անոր կատարեալ հանդարտ ձայնով մը, և առանց ձեռքը դողալու գինին խմեց ։

Ետքը կրակին քովը նստելով,

— Ընթրիքի բաժինս, ըսաւ, վասն զի ըրած ճանապարհորդութիւնս ախորժակս բացաւ ։

— Կեցցէ Գարլինի, պոռացին աւազակները ։

Եւ ամենքնին ալ կրակին բոլորտիքը շրջանակ մը կազմեցին, ինչ ատեն Տիավոլաչիօ կը հեռանար անկէ ։

Գարլինի այնպէս կ'ուտէր և կը խմէր, որ կարծես թէ ամենևին բան մը պատահած չէր ։

Աւազակները ապշութեամբ անոր կը նայէին, և այս անհոգութեան պատճառը չէին հասկընար, երբ իրենց ետևին ծանր քայլերու ձայնը առին ։

Դէպ 'ի այն կողմը դարձան և Տիավոլաչիօն տեսան որ աղջիկը իւր գրկաց մէջ վերցուցած կը յառաջանար ։

Աղջկան գլուխը կախուած էր և մազերը մինչև գետինը կը քսուէին ։

Որչափ Տիավոլաչիօ կը յառաջանար և կրակին լուսին շրջանին մէջ կը մտնէր, այնչափ աղջկան և աւազակին դիմաց գեղնութիւնը յայտնի կ'երևէր ։

Այս երևոյթը այնպէս զարմանալի և տարօրինակ երևցաւ, որ ամենքն ալ ոտք ելան բաց 'ի Գարլինիէն, որ իւր տեղը նստած շարունակ կ'ուտէր և կը խմէր, որպէս թէ ամենևին բան մը պատահած չէ հոն ։

Տիավոլաչիօ խորին լռութեամբ յառաջանալով, Ռիթան աւազակապետին ոտից առջևը դրաւ ։

Այն ատեն ամեն մարդ հասկըցաւ աղջկան և աւազակին դիմաց գեղնութեան պատճառը ։

Ռիթայի ձախ ստինքին տակովը դանակ մը մտուած էր մինչև բռնատեղը ։

Ամենքնին ալ իրենց նայուածքը Գարլինիին վրայ դարձուցին . անոր մէջքի պատեանը դատարկ էր ։

— Ո՛հ, այո, ըսաւ աւազակապետը, հիմա հասկըցայ թէ ինչու Գարլինի ետ մնաց ։

Որ և իցէ վայրի բնութիւն մը կարող է երևելի գործի մը յարգը գիտնալ . գուցէ աւազակներէն և ոչ մէկը Գարլինին ըրածը ընէր, սակայն ամենքնին ալ այս գործին պատճառը հասկըցան ։

— Ըսէք հիմա, ըսաւ Գարլինի նոյնպէս ոտք ելնելով և ձեռքը

իւր ատրճանակներուն մէկին բունին վրայ դրած՝ դիակին մօտենալով, այս կնոջ համար ինծի հետ կռուող մը կայ ձեր մէջը։

— Ոչ, ըսաւ աւազակապետը, քուկդ է ան։

Ան ատեն Գարլինի գրկացը մէջ առաւ զայն, և կրակին լուսին շրջանէն հեռացուց։

Գուգումէթթօ ըստ սովորութեան պահնորդներ կարգեց և աւազակները իրենց վերարկուին մէջ փաթթուած կրակին բոլորտիքը պառկեցան։

Կէս գիշերին պահնորդը արթննալու նշանը տուաւ, և անմիջապէս աւազակապետն ու իր ընկերները ոտքի վրայ եղան։

Ռիթայի հայրը իւր աղջկան փրկանքը բերեր էր։

— Ահա, ըսաւ ծերունին Գուգումէթթոյին՝ քսակ մը ներկայացընելով անոր, ահա երեք հարիւր թալէռը, ու զաւակս ինձ վերադարձուր։

Բայց աւազակապետը առանց քսակը առնելու՝ նշան մը ըրաւ անոր որ իւր ետևէն գայ։

Ծերունին հնազանդեցաւ. երկուքնին ալ դէպ՝ի ծառերը յառաջացան և անոնց մինչև գետինը տարածուած ոստերուն մէջէն անցան, որոց մէջէն լուսնին լոյսը կը թափանցէր։ Վերջապէս Գուգումէթթօ կեցաւ, ձեռքը երկնցուց և ծառի մը ստորոտը նստած երկու անձերը ծերունիին ցուցուց։

— Գնա՛, ըսաւ անոր, Գարլինիէն ուզէ աղջիկդ և անոր հետ հաշիւդ տես։

Այս ըսելով իւր ընկերներուն քովը վերադարձաւ։

Ծերունին անշարժ և ակնապիշ մնաց. կ'ըզգար որ անծանօթ, անպայման և անլուր դժբաղդութիւն մը պատահած էր իւր աղջկան։

Վերջապէս քանի մը քայլ յառաջացաւ դէպ՝ի մարդոց անձև կոյտ մը երևցած կողմը, որուն ինչ ըլլալը չկրցաւ իմանալ։

Ծերունւոյն ոտից ձայնէն Գարլինին գլուխը վերցուց, այն ատեն երկու անձանց ձևերը աւելի որոշ սկսան երևիլ ծերունիին աչաց։

Պին մը գետինը պառկած էր գլուխը մարդու մը ծնգաց վրայ կռթնած, և մարդը անոր վրայ հակած կ'երևէր. Գարլինիին գլուխը վերցուցած ժամանակը՝ ծերունին անոր գրկաց մէջ սեղմած կինը ճանչցաւ, որ իւր աղջիկն էր։

Ծերունին իւր աղջիկը ճանչցաւ և Գարլինի՝ ծերունին։

— Կ'ըսպասէի որ գաս, ըսաւ աւազակը Ռիթայի հօրը։

— Թշուառական, ինչ ըրիր, ըսաւ ծերը։

Եւ երկիւղով Ռիթային կը նայէր, որ գունատեալ, անշարժ, արիւնաշաղախ գետինը տարածուած էր, և կուրծքին վրայ դանակ մը կար։

Լուսնին լոյսը աղջկան վրայ զարկեր էր և ահագին լուսովը զան կը լուսաւորէր։

— Գուգումէթթօն քու աղջիկդ բռնաբարեց, ըսաւ աւազակը, և որովհետև ես կը սիրէի, սպաննեցի զան, վասն զի իրմէ ետքը բոլոր խումբին զբօսանաց սիւտի ծառայէր։ Ծերը ամենևին խօսք մը չկրցաւ բերանէն, և ուրուականի մը պէս գունատեալ մնաց։

— Հիմա, ըսաւ Գարլինի, եթէ ես յանցաւոր եմ, լուծէ վրէժդ։

Այս ըսելով աղջկան կուրծքէն դանակը խլեց, և ոտք ելնելով մէկ ձեռքով զայն ծերին ներկայացուց ու միւսովը իւր բաճկոնը բացաւ և իւր կուրծքը մերկացուց։

— Աղէկ ըրիր, զաւակս, ըսաւ ծերը ցած ձայնով մը. եկիր գրկացս մէջ։

Գարլինի հեծկլտալով իւր սիրուհւոյն հօրը գրկաց մէջ նետուեցաւ։ Ան ատեն այս արիւնռուշտ մարդը իւր կենացը մէջ առաջին անգամ արտասուք թափեց։

— Հիմա, ըսաւ ծերը Գարլինիին, օգնէ ինձ որ աղջիկս թաղենք։

Գարլինի գնաց երկու բահ բերաւ, և աղջկան հայրն ու սիրահարը սկսան փոս մը փորել կաղնիի մը տակ, որուն թանձրախիտ ոստերը նորատի աղջկան գերեզմանը պիտի հովանաւորէին։

Երբ փոսը փորեցին, նախ հայրը համբուրեց զան, ետքը Գարլինի. ետքը՝ մէկը ոտքերէն և միւսը ուսերուն տակէն բռնելով փոսին մէջ իջեցուցին։

Անկէ ետքը գերեզմանին երկու կողմը ծունր դրին և մեռելոց աղօթքը ընելէն ետև՝ դիակին վրայ հող լեցուցին։

Ան ատեն ծերը իւր ձեռքը անոր երկնցընելով,

— Շնորհակալ եմ, զաւակս, ըսաւ. հիմա գիս առանձին թող։
— Սակայն կ'ուզէի .... ըսաւ Գարլինի։
— Կը հրամայեմ քեզ, գիս առանձին թո՛ղ ու գնա։

Գարլինի հնազանդեցաւ, իր ընկերներուն քովը վերադարձաւ, ինքն ալ իր վերարկուին մէջ փաթթուելով, շուտով միւսներուն պէս խորունկ քնացածի պէս երևցաւ։

Նախընթաց իրիկունը որոշեր էին որ իրենց բնակութիւնը փոխեն։

Լուսնալէն ժամ մը առաջ՝ Գուգումէթթօ իր մարդիկը արթնցուց, և մեկնելու հրամանը տուաւ։

Բայց Գարլինի առանց Ռիթայի հօր ինչ ըլլալը գիտնալու չուզեց նոյն անտառէն հեռանալ։

Զան թողուցած տեղը վերադարձաւ։

Ծերունին իր աղջկան գերեզմանին վրայ հովանացեալ կաղնիի ոտերուն մէկէն կախուեր էր։

Ան ատեն՝ մէկուն գիակին ու միւսին գերեզմանին վրայ երդում ըրաւ որ երկուքին ալ վրէժը լուծէ։

Բայց այս երդումը չկրցաւ՝ գործ դնել. վասն զի երկու օր ետքը՝ Հուռմայեցի հրացանակիր զօրաց հետ կռուելու ժամանակ՝ Գարլինի զարնուելով մեռաւ։

Միայն թէ ամեն մարդ զարմացաւ թէ ինչպէս Գարլինի թշնամեաց կողմը դարձած ժամանակ՝ իր ոտերուն մէջ տեղը գնտակ մը ընդուներ էր։

Այս զարմանքը փարատեցաւ երբ աւազակներէն մէկը իր ընկերներուն յայտնեց որ Գարլինիին ընկած ժամանակը՝ Գուգումէթթօ անորմէ տասն քայլ դէպ՝ ի ետև կանգնած տեսեր էր։

Գրոզինոն անտառէն մեկնելու առտուն՝ Գուգումէթթօ մուխին Գարլինիին ետևէն գացեր, անոր ըրած երդումը լսեր, և զգուշութեամբ անոր առաջն առեր էր։

Այս սոսկալի աւազակապետին վրայ ասկէ ոչ նուազ հետաքրքրական տասնի չափ պատմութիւններ կը պատմուին։

Ուստի Ֆօնտիէն մինչև Բէրուզա Գուգումէթթոյի միայն անունէն ամեն մարդ կը սարսափէր։

Այս պատմութիւնները Լուիձիի և Թէրէզայի խօսակցութեանց առարկայն եղած էին։

Նորատի աղջիկը կը սոսկար անոր պատմութիւնները լսելով, բայց Լուիձի ժպիտով մը կ'ապահովցնէր զան՝ ձեռքը իր ընտիր հրացանին զարնելով, որուն գնտակը այնպէս ճշդութեամբ ուզած տեղը կը հասցնէր. բայց եթէ աստղ ալ Թէրէզայի սիրտը չհանդարտեր, Լուիձի իրմէ հարիւր քայլ հեռու ոստի մը վրայ թռած ագռաւը կը զարնէր, և թռչունը անշուշտ գետինը կ'իյնար։

Սակայն ժամանակը կը յառաջանար. երկու ծաղկահաս հովիւները որոշեր էին որ երբ Վանբա քսան տարեկան և Թէրէզա տասն ու ինն տարեկան ըլլան, իրարու հետ ամուսնանան։ Երկուքնին ալ որբ ըլլալով, միայն իրենց սիրոյն հետևիլն պիտի ընդունէին, զոր խնդրելով ստացան։

Օր մը երբ իրենց հասարակին վրայ կը խօսակցէին, երկու կամ երեք հրացանի ձայն առին. յանկարծ մարդ մը մօտակայ անտառին մէջէն եկնելով դէպ՝ ի իրենց կողմը կը վազէր։

Երբ ձայնը հասնելու չափ մարդը մօտեցաւ։

— Ետևէս ընկած են գիս պիտի բռնեն, պոռաց. կրնա՞ք գիս պահել։

Երկու խաշնարածները հասկցան որ փախստականը աւազակ մ'է. բայց գիւղացւոց և Հուռմայեցի աւազակաց մէջ այնպիսի բնածին հակութիւն մը կայ, որ առաջինները միշտ պատրաստ են վերջիններուն ծառայութիւններ ընել։

Ուստի Վանբա առանց խօսք մը խօսելու՝ իրենց մօտակայ գաղտնի քարայրին մօտեցաւ, անոր բերանը եղած քարը մէկ կողմ քաշեց, փախստականին նշան ըրաւ որ անոր մէջ ապաստանի, ետքը վերստին անոր առջևը հռեց, և դարձաւ Թէրէզային քովը նստաւ։

Գրեթէ անմիջապէս ետքը՝ չորս ձիաւոր գինուորներ անտառին ծայրը երևցան. անոնցմէ երեքը փախստականին ետևէն ընկած կ'երևէին, և չորրորդ աւազակ մը գերի բռնած պարանոցէն կը քաշէր։

Երեք ձիաւորները ամեն կողմ քննեցին, և երկու հովիւները տեսնելով, ձիարշաւ անոնց քովը հասան և հարցուփորձ ըրին։

Հովիւները խմայուցին թէ մարդ չտեսան։

— Ափսո՛ս, ըսաւ գինուորներուն գլխաւորը, քանզի փնտռածնիս աւազակապետն էր։

— Գուգումէթթօն, պուապային Լուիձի և Թէրէզա չկրնալով ինքզինքնին զսպել։

— Այո՛, պատասխանեց զինուորը, և որովհետև անոր գլուխը բերողին հազար Հռոմայեցի սկուտ վարձք խոստացուած է, եթէ զան բռնելու համար մեզ օգնելու ըլլաք, այն գումարին կէսը ձեզ կու տանք։

Երկու հովիւները իրարու երես նայեցան. զինուորը վայրկեան մը յոյս ունեցաւ։ Հինգ հարիւր Հռոմայեցի սկուտը երեք հազար ֆրանք կ'ընէ, և երեք հազար ֆրանքը ամուսնանալ ուզող երկու աղքատ որբերու համար հարստութիւն մ'է։

— Ափսոս որ չտեսանք զինքը, ըսաւ Վամբա։

Այնատեն զինուորները անկէ հեռանալով, պարապ տեղը ամեն կողմ փնտռեցին։

Վերջապէս հետզհետէ անհետացան եղան։

Այն ատեն Վամբա գնաց քարը մէկ կողմ քաշեց և Գուգումէթթօ դուրս ելաւ։

Կրանիթեայ դրան ձեղքերէն զինուորներուն հետ երկու հովիւներուն խօսիլը տեսեր էր. անոնց խօսակցութեան պատճառը շատ աղէկ գիտեր. սակայն Լուիձիի և Թէրէզայի դիմաց վրայ գինքը չմատնելու հաստատ դիտաւորութիւննին տեսեր էր, ուստի իր ծոյէն քսակ մը ոսկի հանեց և անոնց նուիրել ուզեց։

Բայց Վամբա մեծանձնութեամբ մը մերժեց զայն, իսկ Թէրէզայի աչաց մէջ ստանալու փափաք մը երևցաւ, անշուշտ մտածելով որ այս քսակ մը ոսկւով օրչափ փառաւոր դոհարներ և գեղեցիկ զգեստներ կրնար գնել։

Գուգումէթթօ խիստ հանճարեղ սատանայ մ'էր. փոխանակ օձի՝ աւազակի կերպարանքն ունէր. Թէրէզայի նայուածքէն ճանչցաւ որ Եւայի արժանի աղջիկ մ'էր այն, և անտառին մէջ անհետացած եղաւ՝ շատ անգամ իր եղին գառնալով իր ազատիչները բարեւելու պատրուակաւ։

Օրեր անցան և Գուգումէթթոյին երեսը չտեսան, և ոչ իսկ անոր վրայօք խօսելնին լսեցին։

Բարեկենդանի եղանակը մօտեցեր էր. Սան-Ֆէլիչէ կոմսը ծպտեալ

մեծ պարահանդէս մը ստաւ, ուր Հռոմի ամենէն երևելի ազնուականները հրաւիրուած էին։

Թէրէզա խիստ մեծ փափաք մը ունէր այն պարահանդէսը տեսնելու։ Ուստի Լուիձի կոմսին տեսուչէն հրաման խնդրեց իրեն և Թէրէզայի համար որ տան ծառաներուն մէջ պահուելով այն պարահանդէսին ներկայ գտնուին, և հրամանը ստացաւ։

Կոմսը այս պարահանդէսը աւելի իր Գարմէլա աղջկան համար կու տար, զոր չափազանց կը սիրէր։

Գարմէլա ձիշդ Թէրէզայի հասակն ունէր, և Թէրէզա գոնէ Գարմէլայի չափ գեղեցիկ էր։

Պարահանդէսին իրիկունը՝ գեղջկուհին իր ամենէն մեծ զարդերովը, խիստ փառաւոր ասեղներովը և ամենէն փայլուն ապակեղէններովը զարդարուեցաւ. իր զգեստները Փրասպաթիի կանանց հագուստին ձևն ունէր։

Լուիձի Հռոմայեցի գիւղացւոց տօնի գեղեցիկ զգեստներ հագած էր։

Երկուքնին ալ՝ ինչպէս որ հրաման ստացեր էին՝ ծառաներուն մէջ խառնուեցան։

Հանդէսը խիստ շքեղ կատարուեցաւ։ Ո՛չ միայն ամարանոցին մեծ սրահները չափազանց լուսաւորուած էին, այլ և անհամար գունաւոր լապտերներ պարտէզին ծառերէն կախուած էին։ Ինչպէս որ բազմութիւնը սակաւ առ սակաւ ձեմանոյներուն և անկէ մինչև ծառուղիներուն մէջ տարածուեցան։

Իւրաքանչիւր քառաւաջ ծառուղիին վրայ երաժշտաց խումբ մը կար, և լսպելեաց և շաքարեղինաց կայան մը գետեղած էին. անոնց մէջ ձեմողները ուզած տեղերնին կը կենային, քառեակներ կը կազմէին և կը պարէին։

Գարմէլա Սոնինոյի կանանց պէս հագուած էր. գլխանոցը մարգարիտով բանուած էր, գլխի ասեղները ոսկեղէն և ադամանդեայ էին, գօտին ոսկենկար Տաճկի մետաքսով շինուած էր, իր զգեստները խիստ ընտիր կերպասէ էին, և կոճակները թանկագին քարերէ։

Երկու ուրիշ աղջիկներ Գարմէլայի ընկերացեր էին՝ մէկը Նեթունոյի և միւսը Ռիչիայի կանանց հագուստը հագած։

Հուսկի ամենէն հարուստ և խիստ աղնուական չորս երիտասարդներ ալ զանոնք շրջապատեր էին այն Իտալական համարձակութեամբ, որուն նմանը աշխարհիս ուրիշ երկրի մը մէջ տեսնուած չէ. ատոնք ալ Ըլպանոյի, Վէլէթրիի, Չիվիթթա-Գասթէլլանայի և Սորայի դիւղացւոյ հպարտոտը հպած էին:

Այս ծպտեալ դիւղացւոյ, ինչպէս նաև դեղջկուհեայ զգեստները ոսկիէն և թանկագին քարերէն կը փայլէին:

Գարմէլային փափաք մը եկաւ հասազդեստ կրներէ քառեակ մը կազմել, բայց կին մը պակաս էր:

Ուստի իւր նայուածքը բոլորտիքը շրջեց, բայց իւր և ընկերուհիներուն հպարտոտին նման հպարտ կին մը չտեսաւ:

Սան-Ֆէլիչէ կոմսը Թէրէզան յուսոյ, որ դեղջկուհեայ մէջ Լուիճիի թևին կռթնած էր:

— Կը ներես որ զան հրաւիրեմ, հայր իմ, ըսաւ Գարմէլա:

— Անշուշտ, պատասխանեց կոմսը, բարեկենդանի մէջ չենք:

Գարմէլա իրեն ընկերացող երիտասարդի մը քանի մը խօսք ըսաւ մատովը Թէրէզան յուշընելով:

Երիտասարդը իւր նայուածքը այն դեղեցիկ ձեռքին յուսուցած կողմը տանելով, հնազանդութեան շարժում մը ըրաւ, և կոմսին աղջկան քառեակը ամբողջացընելու համար դնաց Թէրէզան հրաւիրելու:

Թէրէզա կարծեց թէ բոյ մը իւր դիմաց վրայ բորբոքեցաւ. Լուիճիին երեսը նայեցաւ. մրժելը անկարելի էր. Լուիճի Թողուց որ Թէրէզայի թևը իւր թևին տակէն մեղմով մը սահի, և Թէրէզա իւր աղնուական պարակցին ընկերութեամբը հեռանալով, դնաց ազնուապետական քառեակին մէջ իւր տեղը բռնեց:

Անշուշտ Թէրէզայի ձիշդ և անաչառ հպարտոտը Գարմէլայի և իւր ընկերուհիներուն հպարտոտէն տարբեր պիտի երևէր արհեստաւորի մը աչքին. բայց Թէրէզա թևթևամիտ և հպարտասէր աղջիկ մ'էր. իւր պարակիցներուն զգեստուց փառաւորութիւնը, շափիւղաներուն և ադամանդներուն ցոլացումը իւր ուշը կը մոդեին և գինքը կը խենթեցընէին:

Իսկ Լուիճի իւր սրտին մէջ անծանօթ զգացման մը խլրտիւը կ'ըզ-

դար. պաղտնի անհանգստութիւն մը նախ իւր սիրտը վեր ի վայր կը յուզէր, անկէ իւր երակներուն մէջ կ'անցնէր և բոլոր անձին վրայ կը տիրանար: Թէրէզայի և անոր պարակցին ամենափոքր շարժումներն անդամ իւր աչքէն չէր փախցըներ. երբ անոնց ձեռքը իրարու կը դպչէին, Լուիճի շլացում մը կ'ըզգար, իւր ընչերակներն սաստկութեամբ կը բաբախէին, և կարծէր թէ զանգակի հնչման պէս իւր ականջները կը հնչէին: Երբ իրարու հետ կը խօսակցէին, թէև Թէրէզա երկչոտութեամբ և ակնկոր իւր պարակցին խօսքերը մեկ կ'ընդունէր, Լուիճի աղնուական երիտասարդին սիրավառ աչքերէն դուշակելով որ անոր խօսքերը աղջկան վրայ գովեստներ էին, իրեն այնպէս կ'երևէր թէ երկիրս իւր ոտից տակ կը դղրդէր, և սանդարամետական ձայները սպառնութեան խորհուրդներ կ'ապրէին իրեն: Այն ատեն՝ իւր կիրքէն չշփոթուելու համար՝ մէկ ձեռքով իւր կռթնած ծառը կը բռնէր, և միւսովը իւր մէջքը խօթած դաշոյնը դողդողալով կը սեղմէր, զոր երբեմն առանց դիտնալու բոլորովին պատեանէն դուրս կը հանէր:

Լուիճի նախանձոտ էր. կարծէր թէ Թէրէզա իւր հպարտասէր և փառասէր բնութեամբը իւր ձեռքէն պիտի կորսուի:

Սակայն նորատի պեղջկուհին, որ ի սկզբան վեհերոտ կ'երևէր և դրեթէ կը դողար, սակաւ առ սակաւ ոգի առեր էր: Ըրդէն ըսինք որ Թէրէզա պեղեցիկ էր, ասկէ զատ շնորհալի իսկ էր, և իւր շինական դեղեցկութիւնը մեր պաճուճեալ և սեթևեթեալ դեղեցկութենէն շատ գերազանց էր: Քառեակին մէջ պատիւը դրեթէ ինքը ստացաւ, և եթէ Սան-Ֆէլիչէ կոմսին աղջկան վրայ նախանձեցաւ, Գարմէլա իսկ անոր վրայ նախանձեցաւ ըսելու չենք համարձակիր:

Ուստի իւր վայելուչ պարակիցը մեծ յարգանօք գինքը իւր տեղը բերաւ, ուր Լուիճի իրեն կ'ըսպասէր:

Պարին ժամանակը երկու երեք անգամ նորատի աղջիկը իւր նայուածքը անոր վրայ դարձուցեր էր, և ամեն անգամին զան գունատեալ և գէմքը կնճռած տեսեր էր: Անգամ մը իսկ՝ անոր գաշոյնը պատեանէն մերկանալով աղետալի փայլակի մը պէս իւր աչքը շլացուցեր էր:

Ուստի դրեթէ դողալով վերստին իւր սիրահարին թևը մտաւ:

Քառեակը շատ յաջող երթալով, զայն կրկնել կ'ուզէին. միայն Գարմէլա դէմ դրաւ, բայց Սան-Ֆէլիչէ կոմսը այնպիսի սիրով իր աղջիկը աղաչեց որ վերջապէս համոզուեցաւ։

Անմիջապէս երիտասարդներէն մէկը վազեց Թէրէզան հրաւիրելու, աւանց որոյ անկարելի էր պարը տեղի ունենալ. բայց նորատի աղջիկը արդէն աներեւոյթ եղեր էր։

Իրօք՝ Լուիճի զգացեր է որ երկրորդ անգամին համբերելու ոյժ պիտի չունենայ, ուստի կէս մը համոզելով և կէս մը բռնի Թէրէզան պարտէզին ուրիշ մէկ անկիւնը տարեր էր։ Թէրէզա ակամայ անոր խնդրոյն զիջեր էր, բայց երիտասարդին այլայլեալ դիմաց վրայ յայտնի կը տեսնէր որ անոր սրտէն տարօրինակ բան մը կ'անցնի, քանզի ջղային սարսուռներով ընդհատեալ անոր լուռթենէն կը հասկրնար։ Ինքն իսկ ներքին այլայլութենէ մը ազատ չէր, և թէպէտ ամենևին յանցանք մը ըրած չէր, սակայն կը հասկրնար որ Լուիճի իրաւունք ունէր գինքը մեղադրելու, բայց ի'նչ բանի համար, ինքն ալ չէր գիտեր, բայց կ'ըզգար որ այս մեղադրանքը իրաւացի էին։

Սակայն՝ մեծ զարմանքի մէջ մնաց Թէրէզա, երբ Լուիճի բոլորովին լուռթիւն պահեց, և բոլոր այն գիշերը բերանը չբացաւ։ Միայն՝ երբ գիշերուան ցուրտը բազմութիւնը պարտէզէն ներս կը մղէր և ամարանոցին դռները գոցուեցան, Թէրէզան իր տունը տարաւ, և ներս մտնելու ատենը՝

— Թէրէզա, ըսաւ, Սան-Ֆէլիչէ կոմսուհւոյն դիմացը պատած ժամանակդ ի՞նչ կը մտածէիր։

— Կը մտածէի, պատասխանեց նորատի աղջիկը իր սրտին բոլորը պարզութեամբը, թէ կեանքս կէսը կու տայի, եթէ անոր հագած զգեստները ունենայի։

— Եւ ի՞նչ կ'ըսէր քեզ երիտասարդը։

— Կ'ըսէր թէ իմ ձեռքս էր զանոնք ստանալը, բաւական էր որ ես ուզէի։

— Իրաւունք ունէր, պատասխանեց Լուիճի, և դուն ըսածիդ չափ կը փափաքի՞ս ստանալ զանոնք։

— Այո՛։

— Ուրեմն պիտի ստանաս։

Աղջիկը զարմանքով գլուխը վերցուց որ զան հարցափորձ ընէ, բայց անոր դէմքը այնպէս տխուր և սոսկալի երևցաւ իրեն որ ընելու հարցումը իր շրթանց վրայ սառեցաւ, մանաւանդ որ այն վերջին խօսքերէն ետև Լուիճի իր քովէն հեռացեր էր։

Թէրէզա մտածին զան տեսնել կրցածին չափ անոր ետևէն նայեցաւ, և երբ աներևոյթ եղաւ, հառաչանքով մը աղջիկը իր տունը մտաւ։

Նոյն գիշերը մեծ դիպուած մը պատահեցաւ անշուշտ ծառանեռուն անզգուշութեամբը, որունք Շրագները անցունելու հոգ չտարեր նին. Սան-Ֆէլիչէի ամարանոցը հրդեհ մը պատահեր էր Շիշդ դեղեցիկ Գարմէլային սենեկին քովերը։ Մութ ժամանակ բոցերուն լոյսէն աղջիկը ընդոստ արթննալով, անկողնէն վար ցատկեր, իր ցայգազգեստը հագեր, և դուռէն փախչելու փորձ փորձեր էր. բայց դահլիճը ուրկից պիտի անցնէր, արդէն բոցերով ծածկուած էր։ Ան ատեն վերստին ներս մտնելով բարձր ձայնով օգնութեան կը կանչէր, երբ գետնէն քսան ոտք բարձր իր պատուհանը յանկարծ բացուելով, երիտասարդ գիւղացի մը սենեկին մէջ նետուեցաւ, գինքը իր գրկացը մէջ առաւ, և գերմարդկային ուժով և Շարտարութեամբ զալարի խոտերուն վրայ իջեցուց, ուր Գարմէլա նուաղեալ ձնաց։ Երբ աղջկան խելքը գլուխը եկաւ, իր հայրը առջևը կանգնած էր. բոլոր ծառաները զան շրջապատելով անոր օգնութեան կը հասնէին։ Ամարանոցին ամբողջ մէկ թևը այրեր էր. բայց Սան-Ֆէլիչէի ամենևին հոգը չեղաւ, վասն զի Գարմէլա անվնաս ազատեր էր։

Ամեն կողմ Գարմէլայի ազատիչը փնտռեցին, բայց աներևոյթ եղած էր ան. ամենուն հարցափորձ ըրին, բայց մէկը տեսած չէր զան։ Իսկ Գարմէլա կրակին երկիւղէն այնչափ շփոթած էր որ զան չէր Շանչցեր։

Եւ որովհետև կոմսը չափազանց հարուստ էր, հրդեհին պատճառած կորուստը իրեն ոչինչ բան մը երևցաւ, այլ միայն իր աղջկան կը մտածէր, որուն զարմանալի կերպով ազատիչը աւելի նախախնամութեան մէկ նոր հրաշքը կը համարէր։

Հետեւեալ առտու սովորական ժամուն՝ երկու հովիւները անտառին բերանը իրարու հանդիպեցան ։ Լուիզի անորմէ առաջ հոն հասնելով մեծ ուրախութեամբ աղջկան դիմացն ելաւ. Կ'երեւի թէ նախընթաց գիշերուան տեսարանը բոլորովին մոռցեր էր ։ Թէրէզա յայտնի մտմտուքի մէջ կ'երեւէր, բայց Լուիզին այնպէս ուրախ տեսնելով, ինքն ալ ծիծաղկոտ անհոգութիւն մը կերպարանեց, որ հիմն էր իր բնութեան երբ սիրտը բոլորովին հանդարտ կ'ըլլար ։

Լուիզի Թէրէզային բազուկը իր թեւին տակը առաւ, եւ մինչեւ քարայրին դուռը տարաւ զան. Նորատի աղջիկը հասկընալով որ տարօրինակ բան մը կայ, ապշութեամբ անոր երեսը նայեցաւ ։

— Թէրէզա, ըսաւ Լուիզի, երէկ իրիկուն ինձ ըսիր թէ կոմսին աղջկան զգեստներուն նման հագուստի մը համար ունեցածդ կու տաս ։

— Այո՛, ըսաւ Թէրէզա զարմանքով, բայց յիմարական բաղձանք մ'էր այն ։

— Ես ալ քեզ ըսի թէ պիտի ստանաս ։

— Այո՛, կրկնեց աղջիկը, որուն զարմանքը Լուիզիի իւրաքանչիւր խօսքին կ'աւելնար. բայց այն խօսքը ինձ հաճելի ըլլալու համար խօսեցար ։

— Ես քեզ բան մը խօսք տուած չեմ զոր անմիջապէս չկարենամ կատարել, Թէրէզա, ըսաւ Լուիզի հպարտութեամբ. քարայրին մէջ մտիր եւ հագուէ ։

Այս ըսելով քարը մէկ դի քաշեց եւ քարայրը Թէրէզային ցուցուց, որուն մէջ շքեղ հայելիի մը երկու կողմը երկու մոմ վառուած էին. Լուիզիէն շինուած դեղջկական սեղանի մը վրայ մարգարտեայ մանեակ մը եւ ադամանդեայ ասեղներ շարուած էին. եւ անոր քով աթոռի մը վրայ հագուելու ուրիշ պէտք եղածները դրուած էին ։

Թէրէզա ուրախութեան ձայն մը հանեց, եւ առանց հարցընելու թէ այս զգեստները ուրկէց են, եւ առանց Լուիզիէն շնորհակալ ըլլալու համար ժամանակ կորսընցընելու՝ զարդարանքի փոխուած այն քարայրին մէջ մտաւ ։

Լուիզին քարը վերստին իր տեղը հրեց, վասն զի Բալէսթրինայի ուղղութեամբը եղած բլրակին գագաթը ձիու վրայ Ճանապարհորդ մը տեսեր էր, որ իր բռնելու ճանապարհին վրայ ապահով չըլլալով, վայրկեան մը կեցեր ամեն կողմ կը դիտէր, քանզի ինչպէս յայտնի է հարաւային երկիրներուն՝ շրջակայից հարթութեամբը հորիզոնը խիստ հեռաձիգ տեղեր կը տարածուի ։

Ձիաւորը Լուիզին տեսնելով, արշաւանօք անոր քովը հասաւ ։

Լուիզի աղէկ գուշակեր էր. Ճանապարհորդը Բալէսթրինայէն Թիվոլի երթալու ժամանակ՝ իր բռնելու ճամբուն վրայ տարակոյս ունէր ։

Երիտասարդ հովիւը անոր երթալու կողմը ցուցուց, բայց որովհետեւ քառորդ մը մղոն անդին ճամբան երեք փողոցներու կը բաժնուէր, Ճանապարհորդը հոն հասած ժամանակը՝ վերստին կրնար մոլորիլ, ուստի աղաչեց Լուիզիին որ զինքը ճամբայ հանէ ։

Լուիզի իր վերարկուն վրայէն հանեց գետինը նետեց, իր լայնափող հրացանը ուսին կռթնցուց, եւ այնպէս ծանր զգեստէն թեթեւնալով, Ճանապարհորդին առջեւէն քալեց լեռնականի մը այնպիսի արագ ընթացքով, որուն հազիւ կրնայ հասնիլ ձիուն քալուածքը ։

Տասն վայրկենէն՝ Լուիզի եւ Ճանապարհորդը յիշուած քառառաջ ճամբուն վրայ հասան ։

Նորատի հովիւը կայսեր մը պէս վեհ շարժումով իր ձեռքը դէպ 'ի Ճանապարհորդին բռնելու ճամբան երկնցընելով,

— Ահա՛ ճամբանիդ, տէր իմ, ըսաւ, հիմա ալ չէք սխալիր ։

— Ա՛ռ զայս քու ծառայութեանդ փոխարէն, ըսաւ Ճանապարհորդը հովիւին քանի մը մանր ստակ ներկայացընելով ։

— Շնորհակալ եմ, ըսաւ Լուիզի ձեռքը քաշելով, ծառայութիւն մը կ'ընեմ, բայց չեմ ծախեր ։

— Բայց, ըսաւ Ճանապարհորդը, որ քաղաքացիի մը նուաստութիւնը եւ գիւղացիի մը հպարտութիւնը աղէկ ճանչցած կ'երեւէր, եթէ վարձ մը չես ընդունիր, գոնէ նուէր մը կ'ընդունիս ։

— Ո՛հ, այո՛, այդ ուրիշ բան է ։

— Ուրեմն առ այս երկու Վենետկեան ոսկիները, եւ նշանածիդ տուր որ զոյգ մը օղ շինել տայ ։

— Դուք ալ այս դաշոյնը ընդունեցէք, ըսաւ հովիւը, Ալպա-

նոյէն մինչև Զիլիթա-Գասթէլանօ ասոր նման գեղեցկաշէն գաստա-
պանով դաշոյն մը չէք կրնար գտնել :

— Կ՚ընդունիմ, ըսաւ Ճանապարհորդը, սակայն հիմա ես քեզ պարտաւոր մնացի, վասն զի այս դաշոյնը տասն ոսկի կ՚արժէ :

— Վաճառականի մը համար կարելի է այդպէս է, բայց ինծի համար հազիւ թէ թալեռ մը կ՚արժէ, վասն զի ես ձեռքովս շի-
նած եմ :

— Անունդ ինչ է :

— Լուիճի Վանբա, պատասխանեց Հովիւը այնպիսի կերպարան-
քով որ կարծես թէ այս պատասխանը տուած ըլլար. Աղեքսանդր, Մակեդոնիոյ : — Հաճեցէք ձեր անունն ալ ինձ ըսելու :

— Իմ անունս Սէնպատ Նաւաստի է :

Ֆրանզ տ՚Էբինէ զարմացման ձայն մը հանեց :

— Սէնպատ Նաւաստի, ըսաւ :

— Այո՛, կրկնեց պատմիչը, Ճանապարհորդը ինքզինքը այսպէս կոչեր էր :

— Ինչ եղար, Ֆրանզ, հարցուց Ալպէր, շատ դեղեցիկ անուն մ՚է այս, և մեր պարոն պանդոկապետին պատմութիւնները ստուգիւ զիս խիստ կը զուարճացընեն :

Ֆրանզ չուզեց նոյն խօսքին վրայ կենալ : Ինչպէս դիւրաւ կը հասկըցուի՝ Սէնպատ նաւաստիին անունը իւր մտաց մէջ յիշատա-
կաց աշխարհ մը բացեր էր, ինչպէս որ նախընթաց իրիկունը Մօն-
թէ-Քրիսթոյ կոմսին անունը նոյնը պատճառեր էր :

— Շարունակէ, ըսաւ պանդոկապետին :

— Վանբա երկու ոսկիները արհամարհանօք իւր ծոցը դրաւ և իւր եկած կողմէն յամրաքայլ ետ դարձաւ : Քարայրին երկու ե-
րեք հարիւր քայլ մօտեցած ատենը իւր ականջին ձայն մը եկաւ : Անմիջապէս կեցաւ ականջ դնելով թէ ձայնը ո՞ր կողմէն կու գայ : Մանրերկրորդ մը ետքը՝ որոշակի իւր անուան արտասանուիլը լսեց :

Այս ձայնը քարայրին կողմէն կու գար :

Լեռնայծի պէս ցատկելով և վազելու ատեն իւր հրացանը լեցը-
նելով՝ մէկ վայրկեանի մէջ բլրակին գագաթը ելաւ :

Հոն հասնելով, « Օգնութի՛ւն, հասի՛ր » ձայները աւելի որոշ լսեց :

Իւր նայուածքը դէպ՚ի այն կողմը շրջեց. մարդ մը Թէրէզան յափշտակեր կը տանէր, ինչպէս Նեսոս յուշկապարիկը զՏէժանիր :

Այս մարդը դէպ՚ի անտառը կը փախչէր, և Ճանբուն երեք քա-
ոորդը առեր էր :

Վանբա հեռաւորութիւնը չափեց. մարդը իրմէ գոնէ երկու հա-
րիւր քայլ աւելի յառաջ էր, և անտառը մտնելէն առաջ անոր հասնելու բաղդաւորութիւնը սլիտի չունենար :

Հովիւը կեցաւ, հրացանին բունը իւր ուսին կռթնցուց, փողը յափշտակչին կողմը ուղղեց, մանրերկրորդ մը պտըտցուց զայն և կրակ տուաւ :

Յափշտակիչը իսկոյն կեցաւ, ծունկերը կորացան, և գետինը ըլ-
րեցաւ Թէրէզան ալ իւր հետ գետինը նետելով :

Բայց աղջիկը անմիջապէս ոտք ելաւ, իսկ փախստականը իւր Ճղնաժամին մէջ գետինը տարածուած մնաց :

Վանբա սլացաւ Թէրէզայի քովը հասաւ. բայց ոգեվարէն տասն քայլ հեռու ոտքը սահելով ծնկան վրայ ընկաւ. երիտասարդը խիստ վախցեր էր որ չըլլայ թէ իւր թշնամին զարնող դնտակը մի և նոյն ժամանակը իւր նշանածն ալ վիրաւորած ըլլայ : Բարեբաղդաբար Թերէզային ձեռաս մը եղած չէր, միայն վախցեր էր : Երբ Լուիճի ապահով եղաւ որ իւր նշանածը ողջ առողջ է, վիրաւորեալին քովը դարձաւ, որ արդէն մեռեր էր իւր բունքը սեղմած, բե-
րանը կարկամած, ոգեվարքի քրտանց մէջ թաթխուած և մազերը քստմնած :

Աչքերը բաց և սալաւնալից մնացեր էին :

Վանբա դիակին մօտենալով՝ Գուդումէթթէն Ճանչցաւ :

Երկու հովիւներուն գինքը ազատած օրէն՚ի վեր աւազակապե-
տը Թէրէզայի սիրահարեր և երգում ըրեր էր որ զան յափշտակէ : Այն օրէն՚ի վեր կը հսկէ եղեր, և Ճանապարհորդին Ճանբան ցու-
ցընելու համար Վանբայեն անկէ հեռանալը տեսնելով, զան յա-
փշտակեր էր և փախչիլ կ՚ուզեր, երբ երիտասարդ հովիւին ան-
վրէպ դնտակը իւր սրտին զարկեր էր :

Վանբա առանց իր դիմաց վրայ այլայլութիւն մը յայտնելու, վայրկեան մը անոր նայեցաւ, ընդ հակառակն՝ Թէրէզա տակաւին կը դողդողար և չէր համսրձակեր մեռեալ աւազակին մօտենալ, այլ միայն քայլերով կը յառաջանար, և նշանածին ուսին վրայէն երկմտելով մը դիակին կը նայէր:

Վայրկեան մը եաքը Վանբա իր սիրուհւոյն մօտեցաւ.

— Ո՛հ, հազուագ պատրաստ ես, ուրեմն ես ալ երթամ հագուիմ:

Իրօք Թէրէզա պլուխէն մինչև ոտքը Սան-Ֆէլիչէ կոմսին աղջկան զգեստները հագեր էր:

Վանբա Գուգումէթթոյի մարմինը վերցընելով քարայրը տարաւ, իսկ Թէրէզա դուրսը սպասեց:

Եթէ ուրիշ ճանապարհորդ մը այս միջոցիս անկէ անցնէր, մեծ զարմանքով պիտի տեսնէր որ ոչխարներու պահպանութիւն ընող հովուուհի մը թանկագին զգեստներ հագած, օղերով, մարգարտեայ մանեակով, ադամանդեայ ասեղներով և շափիւղայէ, զմրուխտէ և սուտակէ կոճակներով զարդարուած էր:

Անտարակոյս ինքզինքը Ֆլօրիանի ժամանակը պիտի կարծէր, և փարիզ դարձած ատենը պիտի հաստատէր թէ Սաբինայուոյ լերան ստորոտը նստած հովուուհեայ թագուհին տեսեր էր:

Քառորդ մը ետքը՝ Վանբա իսկ քարայրէն դուրս ելաւ. իր հագուստը Թէրէզայի հագուստէն նուազ վայելուչ չէր իր տեսակին մէջ:

Ոսկի կոճակներով նռնագոյն թաւշեայ թիկնոց մը, բոլորովին բանուած մետաքսեայ բաճկոն մը, պարանոցը Հռոմայեցի փողկապ մը, կանաչ և կարմիր մետաքսով և ոսկի թելով զարդարուած դնդակնոց մը, ադամանդեայ կոճակներով ծունկերուն կապած երկնակապոյտ թաւիշէ վարտիք մը, գոյնզգոյն Արաբացի ձևով նկարուած այծեամի մորթէ կոշկապատներ, և երփներանգ ժապաւէններով գլխարկ մը հագած էր. իր գօտիէն երկու ժամացոյց կախուած էին, և գեղեցիկ գաշոյն մը իր գնդանոցին խօթեր էր:

Թէրէզա զարմացման ձայն մը հանեց: Վանբա այս հագուստով Լէոբոլա Ռօպէրի կամ Շնէյդի նկարած մէկ պատկերին կը նմանէր:

Գուգումէթթոյի ամբողջ հագուստը ինքը հագեր էր:

Երիտասարդը տեսաւ որ հագուստի փոփոխութիւնը մեծ ազդեցութիւն պատճառեր էր իր նշանածին, և իր շրթանց վրայ հպարտութեան ժպիտ մը երեցաւ:

— Հիմա, ըսաւ Թէրէզային, պատրաստ ես ինչ որ է բաղդիս մասնակից ըլլալու:

— Ո՛հ, այո՛, պռուայ Նորատի աղջիկը եռանդեամբ:

— Ո՛ւր որ երթամ՝ հետս պիտի դաս:

— Մինչև աշխարհիս ծայրը:

— Ուրեմն թևս մտիր և մեկնինք, վասն զի կորսընցընելու ժամանակ չունինք:

Նորատի աղջիկը իր սիրահարին թևը մտաւ՝ առանց հարցընելու թէ ո՛ւր պիտի տանի զինքը. վասն զի այս միջոցիս իրեն պլուզաղնի մը պէս գեղեցիկ, մեծ և զօրաւոր կ'երևէր ան:

Երկուքնին մէկտեղ անտառին մէջ յառաջացան:

Հարկ չէ ըսել թէ լերան բոլոր ճանբաները Վանբային ծանօթ էին. ուստի առանց վայրկեան մը երկմտելու անտառին մէջ յառաջացաւ. թէև բացուած ճանբայ մը չկար, այլ միայն ծառերը և մացառները դիտելով կը յառաջանար. այսպէս գրեթէ ժամ ու կէս քալեցին:

Ա՛յն ատեն անտառին ամենէն թանձրախիտ կողմը հասեր էին: Ջուրը քաշուած ջրանցքի մը մէջէն խորունկ կիրճի մը մէջ կ'երթուէր: Վանբա այս զարմանալի ճամբուն մէջ մտաւ, որ երկու ափանց մէջ խորցած և սոճիներուն թանձր ստուերէն մթնցած ընդերնոյի լեռնային ճանապարհին կը նմանէր, որուն վրայօք Վիրգիլիոս կը խօսի:

Թէրէզա այս վայրի և անբնակ տեղերը տեսնելով, սկսաւ վերստին երկնչիլ, և առանց խօսք մը խօսելու իր առաջնորդին պոդցես կը կցուէր. բայց անոր հաւասար քայլերով միշտ քալելը և կատարեալ հանդարտութիւնը տեսնելով, ինքն ալ իր սրտին յուզմունքը զսպելու կը ջանար:

Ցանկարծ իրենցմէ տասն քայլ հեռու՝ մարդ մը ծառի մը ետեւէն դուրս ելնելով, հրացանը Վանբային ուղղեց,

— Եթէ քայլ մը աւելի առնուս, պոռաց, մեռած ես։

— Կամաց եկու, ըսաւ Վանըա արհամարհական շարժմամբ ձեռքը վեր վերցնելով, իսկ Թէրէզա չկրնալով իր սարսափը պահել՝ անոր աւելի կը յարէր, — միթէ գայլերը զիրար կը պատառեն։

— Ո՞վ ես դուն, հարցուց պահանորդը։

— Լուիճի Վանըան եմ, Սան-Ֆէլիչէի ազարակին հովիւը։

— Ի՞նչ կ'ուզես։

— Ռօզա-Պիանգա գտնուող ընկերներուդ հետ խօսիլ կ'ուզեմ։

— Ուրեմն ետեւէս եկու, ըսաւ պահանորդը, և կամ առջեւէս քալէ եթէ ուր ըլլալնին գիտես։

Վանըա նախատական կերպարանքով աւազակին այս զգուշութեան վրայ ժպտեցաւ, Թէրէզայի հետ անոր առջեւը ընկաւ և առաջուան պէս հանդարտ և համարձակ քայլերով իր ճամբան շարունակեց։

Հինգ վայրկեան ետքը աւազակը նշան ըրաւ որ կենան։

Երկու հովիւները հնազանդեցան։

Աւազակը երեք անգամ ագռաւի ձայն հանեց։

Այս կոչման պատասխանեց ուրիշ ագռաւի կռինչ մը։

— Հիմա կրնաս ճամբադ շարունակել, ըսաւ աւազակը։

Լուիճի և Թէրէզա սկսան յառաջանալ։

Բայց որչափ կը յառաջանային, այնչափ Թէրէզա իր սիրահարին կը յարէր. խօք ծառերուն մէջէն հրացանի փողերու փայլիլը կը տեսնէին։

Ռօզա-Պիանգա փոքր լեռի մը գագաթն է, ուր ժամանակաւ անտարակոյս հրաբուղխ մը եղած պիտի ըլլայ, որ Հռեմոսի և Հռոմուլոսի Հռոմ քաղաքը շինելու համար Ալպեան լեռներէն անցնելէն առաջ մարած պիտի ըլլայ։

Թէրէզա և Լուիճի այս լեռնակին գագաթն ելնելով անմիջապէս քանի չափ աւազակներու դիմացը գտնուեցան։

— Այս երիտասարդը ձեզ կը փնտռէ և ձեզի հետ խօսիլ կը փափաքի, ըսաւ պահանորդը։

— Եւ ի՞նչ կ'ուզէ ըսել, հարցուց աւազակապետին բացակայութեան ժամանակ գլխաւորութեան պաշտօնը վարող աւազակը։

— Ըսել կ'ուզեմ որ հովուութիւն ընելէն ձանձրացած եմ, ըսաւ Վանըա։

— Ո՛հ, կը հասկընամ, ըսաւ տեղակալը, [մեր խումբին մէջ մտնել կ'ուզես։

— Բարի եկար, պոռացին Ֆէրուզինոյի, Սամբինարայի և Անակնիյի բազմաթիւ աւազակներ, որոնք Լուիճի Վանըան ճանչցեր էին։

— Այո, միայն թէ ձեր ընկերը ըլլալէն ուրիշ բան է խնդրածս։

— Եւ ի՞նչ է ուրեմն խնդրածդ, հարցուցին աւազակները զարմանքով։

— Եկայ որ ձեր գլխաւորութիւնը խնդրեմ, ըսաւ երիտասարդը։

Աւազակները սկսան բարձրաձայն ծիծաղիլ։

— Եւ այս պատուոյն արժանանալու համար ի՞նչ ըրած ունիս, հարցուց տեղակալը։

— Ձեր Գուգումէթթօ գլխաւորը սպաննեցի, որուն զգեստները ահա ես հագած եմ, ըսաւ Լուիճի, և Սան-Ֆէլիչէի ամարանոցը այրեցի նշանածիս հարսանեկան զգեստ մը տալու համար։

Մէկ ժամ ետքը՝ Լուիճի Վանըա Գուգումէթթոյի տեղ աւազակապետ անուանեցաւ։»

— Ըսէ նայինք, սիրելիդ իմ Ալպէր, ըսաւ Ֆրանց իր բարեկամին կողմը դառնալով, Լուիճի Վանըայի վրայ ի՞նչ կարծիք ունիս։

— Ես կ'ըսեմ թէ առասպել մ'է այս, պատասխանեց Ալպէր, և այսպիսի մարդ մը չկայ։

— Առասպել ի՞նչ կը նշանակէ, հարցուց Բասթրինի։

— Քեզ բացատրելը երկար կ'ըլլայ, սիրելիդ իմ պանդոկապետ, պատասխանեց Ֆրանց։ Ուրեմն Վանըա այս միջոցիս Հռոմի շրջակաները իր պաշտօնը 'ի գո՞րծ կը դնէ։

— Եւ այնպիսի համարձակութեամբ մը, որուն օրինակը մինչեւ ցարդ աւազակ մը տուած չէ։

— Ուրեմն ոստիկանութեան զան բռնելու համար ըրած ջանքերը պարապը ելած են։

— Ի՞նչ կ'ուզէք որ ըլլայ. ոստիկանութիւնը դաշտերու հովուաց, Տիբերի ձկնորսաց և ծովեզերքի մաքսանենգաց հետ համաձայն կ'երևի։ Քանզի լերան վրայ կը փնտռեն զան, և գետին վրայ կը տեսնեն. գետին վրայ անոր ետեւէն կ'իյնան, ծովուն բացերը կ'ել-

նէ. և երբ տէլ Ճիլիօ, տէլ Կուանտնթի, կամ Մօնթէ-Քրիսթօ ապաստանուած կը կարծէն գինքը, յանկարծ Ալպանօ, Թիվօլի կամ Ռիչիա երեան կ'ելնէ։

— Եւ ինչ կերպով Ճանապարհորդաց հետ կը վարուի։

— Ո՛հ, յայտնի է. քաղաքին հեռաւորութեան համաձայն՝ անոնց փրկանքին համար ութ, տասնեւհինգ կամ քսան և չորս ժամ կու տայ. այս ժամադրութենէն ետքը ժամ մը ևս կը շնորհէ։ Այս ժամուն վերադարձողը վայրկենին՝ երբ ստակը չընդունի, հրացանի հարուածով մը գերին ուղեղը ցրուել կու տայ, և կամ իր դաշոյնը անոր սիրտը կը խօթէ, որով ամեն բան կը լմընայ։

— Ինչ կ'ըսես, Ալպէր, հարցուց Ֆրանզ իր ընկերին, միշտ որոշած ես արտաքին ծառուղիներուն մէջէն անցնելով Գոլիզէն երթալու։

— Անշուշտ, ըսաւ Ալպէր, եթէ այն Ճանբան աւելի զուարճալի է։

Այս միջոցիս՝ ժամացոյցը լինն զարկաւ, դուռը բացուեցաւ և կառավարը ներս մտաւ։

— Տէր իմ, ըսաւ, կառքը ձեզ կ'ըսպասէ։

— Ուրեմն, ըսաւ Ֆրանզ, երթանք Գոլիզէն տեսնելու։

— Տէր Բորոլօ դռնէն պիտի ելնենք, տէր իմ, թէ փողոցներէն։

— Անշուշտ փողոցներէն, պատասխ Ֆրանզ։

— Ո՛հ, սիրելիս, ըսաւ Ալպէր ոտք ելնելով և իր երբորդ գլանիկը վառելով, ստուգիւ գքեզ աւելի սրտոտ կը կարծէի։

— Երկու երիտասարդները ծանդուխէն վար իջան և կառքը մտան։



ԳԼՈՒԽ ԺԱ

ԵՐԵՒՈՅԹԸ

Ֆրանզ միջին Ճանբայ մը գտեր էր ամենևին հին աւերակի մը առջևէն չանցնելով Ալպէրը Գոլոսէոն տանելու և ամեն բան միանոր ցուցընելու։ Քանի մը երկար փողոցներէ դառնալով միևչև իրենց նպատակը անվնաս պիտի հասնէին։

Այս Ճանբան բռնելով ուրիշ օգուտ մը ևս պիտի ունենար Ֆրանզ, որ Բասթրինիին պատմած պատմութեան իրեն պատճառած տպաւորութեան վրայ իր միտքը պիտի չզբաղեցընէր, և որուն մէջ Մօնթէ-Քրիսթոյի ղարմանալի ասպնջականը խառնուած էր։ Ուստի կառքին անկիւնը լրիւ նստած և գլուխը արմկան վրայ կռթնցուցած՝ ինքն իրեն անհամար և անվերջ հարցումներ կ'ընէր, որոց և ոչ մէկուն հաճոյական պատասխան մը կրցեր էր տալ։

Սակայն իր Սէնպատ նաւաստի բարեկամին՝ աւազակներու և նաւաստիներու հետ ունեցած ղարմանալի յարաբերութիւնները չէր կրնար մոռնալ։ Չինորներու և մաքսանենգներու մակոյկներուն մէջ վանբային ապաստան գտնելը Ֆրանզին միտքը կը ձգէր այն երկու Քորսիքացի աւազակները, որոց՝ շեղակայմին նաւաստեայ հետ ընթերելը տեսեր էր, և զանոնք յամաք հանելու համար՝ նաւը իր Ճանբէն շեղեր և Բորթօ-Վէքիօ դացեր էր։ Մօնթէ-Քրիսթոյ կղզւոյն ասպնջականին ինքզինքը կոչած անունը Հռոմի պանդոկապետէ մը ևս արտասանուիլը յայտնի կը ցուցընէր որ Քորսիքայի, Թոսկանայի, Սպանիոյ, և մինչև Թունուզի և Բալէարմայի ծովեզերաց վրայ Սէնպատ նաւաստիին ըրած մարդասիրական գործերը՝ Բիոմպինոյի, Զիվիթա-Վէքիայի, Օսթիայի և Պայէթայի ծովեզերաց վրայ ևս կը տարածուէին, և այս՝ իր խիստ ընդարձակ յարաբերութեանց մէջ գանուիլը կ'ապացուցանէր։

Բայց այս խորհրդածութիւնները ուրչափ և երիտասարդին մտաց վրայ զօրացեր էին, սակայն Գոլիզէի տխուր և հսկայաձև երևոյ-

Թին առջև վայրկեան մը անհետացան, որուն Ձեղքուածներուն մէջէն լուսինը ուրուականներու աչքէն ցայտող լուսին նման երկար և ժժդոյն Ճառագայթներ կը տարածէր: Կառքը Մէթա Սուտան կոչուած տեղէն քանի մը քայլ անդին կեցաւ. կառավարը դռնակը բացաւ, երկու երիտասարդները կառքէն վար ցատկեցին, և դիմացին առաջնորդ մը տեսան որ կարծես թէ պետնին տակէն դուրս ելաւ:

Ըրդէն սանդուկին առաջնորդն ևս հետերնին եկած ըլլալով, երկու առաջնորդ ունէին:

Հռոմի մէջ այս առաջնորդներու բազմութեանը ձեռքէն ազատիլը անկարելի է. սանդուկին դրան սեմը կոխած վայրկեանէդ ղեկը շրջապատող դլխաւոր առաջնորդէն զատ, որ քաղաքէն մեկնած օրդ միայն քեզմէ կը բաժնուի, ամեն մէկ երեւելի շէնքին, և կը համարձակիմ ըսել, շէնքի մը իւրաքանչիւր մասին համար առաջնորդ մը կայ: Հետևաբար անշուշտ առաջնորդ մը պիտի ելներ դիմացնին իրենց Գոլոսէոն մտնելու ատեն, այն երեւելի յիշատակարանին մէջ, որուն համար Մարսիալ ըսած է.

«Թող դապրի Մեմիիս իւր հրաշալի բուրդերը հռչակելէն, և «թող Բաբելոնի հրաշալեաց վրայ երգեր չշինուին. կեսարաց ամ«ֆիթատրոնին անբաւ աշխատութեան առջև ամեն բան պէտք է «խոնարհի և համբաւին բոլոր ձայները պէտք ին միանալ այս յի«շատակարանը հռչակելու»:

Եւ որովհետև միայն առաջնորդները արտօնութիւն ունին ջահերով շէնքին մէջ պտըտիլ, ուստի Ֆրանղ և Ալպէր անոնց դէմ չկեցան, այլ բոլորովին անձնատուր եղան:

Ֆրանղ արդէն տասն անդամ այս շրջապայութիւնը ըրած էր. բայց ըստ որում իւր ընկերը առաջին անդամ Ֆլավիոս Վէսպասիանոսին յիշատակարանին մէջ կը մտնէր, պէտք եմ դովութեամբ խոստովանիլ որ այն շրջապայութիւնը սաստիկ ազդեցութիւն ըրեր էր Ալպէրի սրտին, թէև առաջնորդայ տդէտ շատախօսութիւններէն զզուած կ'երևէր: Իրօք երբ տեսած չէ զայն մէկը՝ ամենևին գաղափար մը չկրնար ունենալ այնպիսի աւերակի մը շքեղութեանը վրայ որ լուսնին լուսովը աւելի վեհ կ'երևէր:

Ֆրանղ մտածութեանց մէջ ընկղմած ըլլալով չուզեց իւր ընկերին հետ պտըտիլ, այլ հազիւ հարիւր քայլի չափ յառաջանալէն ետև՝ Ալպէրը առաջնորդներուն հետ առանձին թողլով, որոնք Ռոմուլոսի փոսը, Ըմբշամարտից օթեակը, Կեսարաց կայանը մի առ մի ցուցընելու յամառեալ կ'երևէին, ինքը կիսաւեր սանդուխէ մը վեր ելաւ և գնաց սիւնի մը ստորոտը նստաւ աղեղնաձև շէնքի մը դիմացը, ուր կրանիթեայ հսկայն իւր բոլոր շքեղ տարածութեամբը իւր աչաց առջև կը ներկայանար:

Գրեթէ քառորդ մը՝ի վեր Ֆրանղ սիւնի մը ստուերին տակը, ինչպէս որ ըսինք, գրեթէ աներևութացած էր՝ իւր նայուածքը Ալպէրի վրայ յարած, որ երկու ջահակիրներուն առաջնորդութեամբը Գոլիզէի միւս ծայրի դլխաւոր դռնէն դուրս կ'ելնէր, և առաջնորդները շրջմոլի հուրին ետևէն վազող ստուերներու նման յառաջանալով աստիճան աստիճան Վեստեան կուսանաց սեպհականուած կողմերը կ'իջնէին: Յանկարծ իւր վեր ելած կողմին դիմացը եղած ուրիշ սանդուխէ մը քար մը անջատուելով շէնքին խորերը գլորելու ձայնը լսուեցաւ: Անշուշտ անօրինակ բան մը չէր որ ժամանակին ոտից տակէն քար մը անջատուելով անդունդին մէջ գահավիժի. բայց այս անգամ իրեն այնպէս երևցաւ որ այս քարը մարդու մը ոտից տակէն սահեր էր, և ոտնաձայն մը իւր ականջին կը հասնէր, թէև զայն պատճառողը կը ջանար ձայն չհանելու:

Իրօք վայրկեան մը ետքը՝ մարդ մը երևցաւ, որ աստիճանաբար սանդուխէն վեր կ'ելնէր. լուսինը այս սանդուխին վերի մասը լուսաւորած էր. բայց ստորին մասերը մութին մէջ կը գտնուէին:

Այս մարդը կրնար իրեն պէս ճանապարհորդ մը ըլլալ, որ առաջնորդներուն անօգուտ շատախօսութենէն առանձին մտածութիւնը նախամեծար կ'ընտրէր, ուստի անոր հոն երևիլը զինքը զարմացընելու պատճառ մը չէր տար. բայց սանդուխին վերջին ոտքերը կոխելու ատեն՝ անոր ցուցուցած երկմտութիւնը, և վեր հասած ժամանակ կեցնալով ամեն կողմ ականջ դնելը յայտնի կը ցուցընէին որ մասնաւոր նպատակաւ մը եկած էր հոն և մէկուն կ'ըսպասէր:

Ֆրանղ բնազդական շարժմամբ մը ըստ կարի սիւնին ետևէն անհետացաւ եղաւ:

Իրենցմէ տասն քայլ անդին շէնքին գմբէթը փլած էր, և հորի նման բոլորակ բացուածք մը աստղներով ծածկուած երկինքը կ'երևէր։

Այս բացուածքին բոլորտիքը, ուրկից արդէն դուրս հարիւրաւոր տարիներէ 'ի վեր լուսնին լոյսը ներս կը թափանցէր, մացառներ աճած էին, որոց կանաչ և դիւրաթեք ծայրերը երկնից աղօտ կապոյտին վրայ կը նկարուէին, իսկ զօրաւոր և ուռճացեալ բաղեղներուն ծայրերը շէնքին վերնագոյն մասերէն կախուած էին, և ծփող չուաններու նման օդին մէջ կը ճօճէին։

Փրանզին ուշադրութիւնը գրաւող անձը գրեթէ ստուերին մէջ կեցեր էր, ուր անկարելի էր անոր դիմաց գծագրութիւնը որոշել, սակայն իր զգեստները որոշելու չափ խիկ մութ չէր. մեծ սև վերարկուի մը մէջ փաթթուած էր, որուն մէկ ծայրը ձախ ուսին վրայ նետելով երեսին ստորին մասը կը ծածկէր, իսկ լայնածիր գլխարկը անոր երեսին վերին մասը կը ծածկէր։ Իր զգեստուց միայն ծայրը գմբէթին բացուած կողմէն եկած քովընտի լոյսէն լուսաւորուած էր, որով անոր փայլուն կօշկաց վրայ իջած ձևաւոր սև սանդղեսար կ'որոշուէր։

Յայտնի կ'երևէր որ այս մարդը եթէ ոչ ազնուական՝ գոնէ երևելի անձ մ'էր։

Քանի մը վայրկենէ 'ի վեր հոն կեցեր էր և կ'ըսկսէր անհամբերութեան յայտնի նշաններ ցուցընել, երբ շէնքին վերին գաւիթին վրայ շշուկ մը լսուեցաւ։

Նոյն միջոցին լուսին դիմաց ստուեր մը երևցաւ. մարդ մը հոն կենալով՝ վայրկեան մը իր նայուածքը մութ կողմը պտըտցուց և վերարկուով փաթթուած օտարականը տեսաւ. անմիջապէս կախուած բաղեղները բռնելով՝ դէպ 'ի վար սահեցաւ, և երբ գետնէն երեք կամ չորս ոտք բարձրութեամբ հասաւ, յուշիկ կերպով ցատկեց։ Այս նոր եկողը Թրասթէվէրինոյի հագուստը ունէր։

— Ներէ ինձ եթէ զքեզ սպասեցուցի, տէր իմ, ըսաւ գաւառական Հռոմայեցի լեզուով վերարկուով մարդուն մօտենալով. սակայն միայն քանի մը վայրկեան ուշացած եմ. ժամը հիմա դեռ տասն զարկաւ։

— Ես ժամանակէն առաջ եկայ և դուն ուշացած չես, պատասխանեց օտարականը խիստ մաքուր Թոսկաներէն լեզուով. ուստի՝ քաղաքավարութեան ձևերը ձգէ. ասկէ զատ՝ եթէ զիս սպասեցընէիր իսկ, աղէկ համոզուած եմ որ քու ազատ կամքովդ պիտի չըլլար։

— Իրաւունք ունիս, տէր իմ. հիմա Ս. Անճէլօ դղեակէն կու գամ, և խիստ մեծ դժուարութիւն կրեցի մինչև որ Պէբբոյին հետ խօսեցայ։

— Ո՞վ է Պէբբոն։

— Պէբբոն բանտերու գործակալ մ'է, որուն փոքրիկ վարձ մը կը հատուցանեմ Նորին Սրբութեան պալատին մէջ պատահածները իմանալու համար։

— Սիրելիս, կը տեսնեմ որ շատ զգուշացող մարդ մ'ես։

— Ինչ ըսեմ, տէր իմ, մարդ իր գլուխը գալիքը չգիտեր. գուցէ ես ալ օր մը այն ողորմելի Բէբբինոյին պէս որոգայթի մէջ բռնուիմ, և բանտիս շղթաները կրծող մուկի մը պէտք ունենամ։

— Կարճօրէն ըսէ, ինչ իմացար։

— Չորեքշաբթի օրը՝ ժամը երկուքին՝ երկու հոգի պիտի սպաննուին, ինչպէս որ սովորութիւն է Հռոմի մէջ երբ երևելի տօնախմբութիւնները կ'ըսկսին։ Դատապարտեալ մը լախտահար պիտի սպաննուի. այս թշուառականը զինքը մեծցընող քահանայ մը սպաններ է, և ամենևին գթութեան արժանի չէ. միւսը խեղճ Բէբբինոն է որ պիտի գլխատուի։

— Կը տեսնե՛ս, սիրելիս, այնպիսի մեծ սարսափ կ'ազդես ոչ միայն քահանայապետական կառավարութեան, այլ և դրացի տէրութեանց, որ անպատճառ կ'ուզեն օրինակ մը տալ։

— Բայց Բէբբինոն իմ խումբիս մէջ չէ. խեղճ հովիւ մ'է, որ մեզ ուտելիք ճարելէն ուրիշ յանցանք մը գործած չէ։

— Որով կատարեալ քու մեղսակիցդ կ'ըլլայ։ Սակայն կը տեսնես որ անոր շնորհք մը կ'ընեն. քանզի փոխանակ տանջանօք սպաննելու, ինչպէս որ քեզ պիտի ընեն՝ եթէ երբեք անոնց ձեռքը իյնաս, բաւական կը համարին անոր գլուխը կտրելու։ Այսու ամենայնիւ այս բանս ժողովուրդին զուարճութիւնները պիտի տարբերէ, ամեն քմաց համաձայն տեսարաններ պիտի ունենան։

— Բայց չեմ գիտեր թէ ես ինչ միջոցներ կը բանեցնեմ։

— Սիրելի բարեկամ, ինծի այնպէս կ'երեւի թէ անմտութիւն մը մը ընելու դիտաւորութիւն ունիս։

— Ինծի ծառայութիւն ընելուն համար դժբաղդութեան մէջ եղող ողորմելի անձին գլխատուիլը արգիլելու համար ամեն բան ընելու աչքս առած եմ։ Վատ պիտի համարուիմ եթէ այն թշուառ անձին օգնութեան չհասնիմ։

— Եւ ինչ պիտի ընես։

— Գլխատութեան բեմին բոլորտիքը քսան հոգւոյ չափ պիտի կեցընեմ, և զան հոն բերած միջոցին, նշան մը ընելուս պէս պահապանաց վրայ պիտի յարձակինք և զան պիտի յափշտակենք։

— Խիստ վտանգաւոր կ'երեւի ինծի այդ, կարծեմ թէ իմ որոշումս քուկինէդ լաւագոյն է։

— Ինչ է քու ըրած որոշումդ։

— Այնպիսի մէկը կը ճանչնամ, որուն երկու հազար թալեր վճարելով կրնամ Բէրբինոյի գլխատութիւնը հետեւեալ տարուոյն թողուլ, և եօթը տարուոյն ընթացքին մէջ, հազար թալեր մ'ալ այնպիսի ուրիշ մէկու կու տամ, զոր նոյնպէս կը ճանչնամ, և բանտէն կը փախցընեմ զան։

— Ստոյգ գիտես որ պիտի յաջողիս։

— Անշուշտ, ըսաւ Գաղղիարէն լեզուաւ վերարկուով մարդը։

— Ինչ ըսիր, հարցուց Թրասթէվէրինոյին։

— Ըսի թէ ես իմ ոսկւովս աւելի գործ կը տեսնեմ քան թէ դուն և քու մարդիկդ ձեր դաշոյններովը, ատրճանակներովը և լայնաբերան հրացաններովը. ուստի գործը իմ վրաս ձգէ։

— Երանի թէ, բայց եթէ չյաջողիս, մենք միշտ պատրաստ պիտի կենանք։

— Եթէ կ'ուզէք, պատրաստ կեցէք. բայց ստոյգ գիտցիր որ անոր ազատութիւնը պիտի ստանամ։

— Վաղը չէ միւս օրը չորեքշաբթի է, աղէկ ուշ դիր, միայն վաղը ժամանակ ունիս։

— Այո, բայց չես գիտեր որ օրը քսան և չորս ժամերէ, և մէկ ժամը վաթսուն վայրկեաններէ, իւրաքանչիւր վայրկեանը վաթսուն

մանրերկրորդներէ կը բաղկանայ. ութսուն և վեց հազար մանրերկրորդի մէջ շատ գործեր կրնան կատարուիլ։

— Բայց մենք ինչպէս պիտի գիտնանք, տէր իմ, որ դուն յաջողեր ես։

— Շատ դիւրին է, Ռոսբոլիի սրճարանին երեք վերջին սենեակները ես վարձած եմ. եթէ գլխատութեան յապաղման շնորհքը ընդունիմ, ծայրի երկու պատուհաններուն վարագոյրները դամասկեան դեղին կերպասէ պիտի ըլլան, բայց մէջ տեղի պատուհանինը ճերմակ կերպասէ և վրան կարմիր խաչ մը պիտի տեսնես։

— Շատ աղէկ. բայց ընդունած շնորհացդ հրամանագիրը որո՞ւ ձեռօք պիտի ներկայացընես։

— Մարդոցդ մէկուն քահանայի զգեստ հագցընելով ինծի ղրկէ, և անոր կը յանձնեմ. այն հագուստով կրնայ գլխատութեան բեմին մօտենալ ու հրամանագիրը քահանայից գլխաւորին յանձնել, ան ալ դահճին կը ներկայացընէ։ Սակայն դուն գնա այս բանս Բէրբինոյին իմացուր, որպէս զի չըլլայ թէ սարսափէն փաս մը կրէ և կամ խենթենայ, որով մեր ըրած ծախքը անօգուտ տեղը կ'երթայ։

— Մտիկ ըրէ, տէր իմ, ըսաւ գիւղացին, քեզի համար ունեցած անձնանուիրութիւնս կը ճանչնաս, այնպէս չէ։

— Գոնէ կը յուսամ։

— Ուրեմն՝ եթէ Բէրբինոն ազատես, այնուհետեւ անձնանուիրութենէ աւելի պիտի ընեմ, պիտի հնազանդիմ քեզ։

— Ըսածիդ ուշ դիր, սիրելիս. դուցէ օր պիտի գայ որ յիշեցընեմ քեզ զայն, քանզի դուցէ օր մը ես ալ քեզի պէտք ունենամ . . . ։

— Ինչ ժամանակ որ ինծի պէտք ունենաս՝ անմիջապէս պիտի հասնիմ. եթէ աշխարհիս միւս ծայրն ալ ըլլաս, միայն ինծի գիր մը գրէ ըսելով թէ՝ «Ըրէ այս ինչ բանը» և ես կը կատարեմ, կ'երդնում . . . ։

— Լռէ, ըսաւ օտարականը, ձայն մը կը լսեմ։

— Ճանապարհորդներ են որոնք ջահերով Գոլոսէոյին մէջ կը պտըտին։

— Պէտք չէ որ զմեզ միասին տեսնեն. այն լրտես առաջնորդ-

ները կրնան ճանչնալ զքեզ, և որչափ ալ պատուաւոր ըլլայ բարեկամութիւնդ, եթէ մեր իրարու հետ ունեցած յարաբերութիւնը գիտնան, կը վախնամ որ վարկս քիչ մը կը կորսնցնեմ:

— Ուրեմն՝ եթէ յապաղման շնորհքը ընդունիս . . . :

— Մէջ տեղի պատուհանի վարագոյրը սպիտակ գոյնով պիտի ըլլայ կարմիր խաչով:

— Բայց եթէ չընդունիս:

— Երբեք պատուհանաց վարագոյրներն ալ դեղին պիտի ըլլան:

— Այն ատեն ի՞նչ պիտի ընենք . . . :

— Այն ատեն, սիրելիս, ուզածնուդ չափ սուրերնիդ խաղցուցէք, կը ներեմ ձեզ, և ես հոն պիտի գտնուիմ զձեզ տեսնելու:

— Մնաս բարեաւ, տէր իմ. քեզ կը վստահիմ, և դուն վստահ եղիր ինձ:

Այս խօսքերուն վրայ՝ Թրասթէվէրնոյին սանդուխէն վար իջնելով անհետացեալ եղաւ, իսկ օտարականը առաջուանէն աւելի երեսը վերարկուովը ծածկելով, Ֆրանզին երկու քայլ քովէն անցաւ և արտաքին աստիճաններուն վրայէն ասպարէզը իջաւ:

Մանրերկրորդ մը ետքը՝ Ֆրանզ դիրեթներուն տակէն իր անուան արձագանքը լսեց. Ալպէրն էր որ զինքը կը կանչէր:

Ֆրանզ պատասխան չտուաւ, այլ սպասեց որ երկու մարդիկը անկէ հեռանան, որպէս զի չըլլայ թէ իմանան անոնք թէ զիրենք տեսնող մը կար, որ թէև իրենց դէմքը տեսած չէր, բայց իրենց խօսակցութենէն բառ մը անգամ չկորսնցուցեր էր:

Տասն վայրկեան ետքը, երկու ճանապարհորդները դէպ 'ի պանդոկը կը վերադառնային. Ճանբան Ալպէր Գոլոսէոյի և մանաւորապէս վայրենի անասնոց՝ հանդիսականաց վրայ յարձակիլը արգիլող երկաթներով պատսպարուած վանդակներուն վրայ Պլինիոսի և Կալբուռնիոսի վկայութեամբը հանճարեղ նկարագրութիւն մը կ'ընէր և Ֆրանզ անձայն ըմբռնութեամբ մտիկ կ'ընէր և առանց ընդդիմութեան կը թողուր որ խօսի, քանզի ինքը իր առջևը պատահածին վրայ անթարթափ մտօք խորհելու կը շտապէր:

Իր այն տեսած մարդոց մէկը անշուշտ օտարական մ'էր, և առաջին անգամն էր որ զան տեսեր և անոր ձայնը լսեր էր, բայց

միւսը իրեն անծանօթ չէր երևեր, և թէպէտ Ֆրանզ բացորոշ տեսած չէր զան, քանզի իր երեսը միշտ ստուերին մէջ պահեր և վերարկուին մէջ ծածկեր էր, բայց անոր ձայնին հնչումը առաջին անգամ լսած ատենը՝ այնչափ ազդեր էր իրեն որ անկարելի էր զայն ուրիշ անգամ լսել և չճանչնալ: Իր զուարթ ձայնը այնպիսի խիստ և ազդու էր որ Մօնթէ-Քրիսթոյի քարայրին մէջ ըրածին պէս Գոլոսէոյի աւերակաց մէջ ալ զինքը սարսեր էր. ուստի ամենևին տարակոյս չկար, այս մարդը ուրիշ մէկը չէր, բայց եթէ Սէնպատ Նաւաստին:

Այս մարդը այն աստիճան իր հետաքրքրութիւնը շարժեր էր, որ ուրիշ պարագայի մէջ անշուշտ ինքզինքը անոր պիտի ճանչցընէր. բայց այս անգամ ըրած խօսակցութիւննին մտերմական ըլլալուն՝ ինքզինքը զսպեր էր իրաւամբ խորհելով որ իր յայտնուիլը անոր հաճելի պիտի չըլլայ: Ուստի թողուցեր էր որ այս անգամ հեռանայ, ինչպէս որ տեսանք, հաստատ միտքը դնելով որ եթէ ուրիշ անգամ անոր հանդիպի՝ առջի անգամուան պէս զան չթողու:

Ֆրանզին միտքը խիստ զբաղեալ ըլլալուն, չկրցաւ աղէկ քնանալ. բոլոր գիշերը քարայրին մարդուն և Գոլոսէոյի անծանօթին վերաբերող ամեն պարագաները իր մտաց մէջ կը յեղյեղէր, և կը ջանար թէ Մօնթէ-Քրիսթոյի ասպնջականը և թէ Գոլոսէոյի անծանօթը մի և նոյն անձի ածանցել, և որչափ Ֆրանզ կը մտածէր, այնչափ իր կարծիքին վրայ կը հաստատուէր:

Լուսցեր էր երբ քունը տարաւ, և այս պատճառաւ խիստ ուշ արթնցաւ: Ալպէր ճշմարիտ Բարիզցիի պէս գիշերուան համար իր պատրաստութիւնը տեսեր էր. Արժէնթինա թատրոնին մէջ օթեակ մը վարձելու համար մարդ ղրկեր էր:

Ֆրանզ Գաղղիա գրելու շատ նամակներ ունէր, ուստի բոլոր օրը կառքը Ալպէրին թողուց:

Ալպէր ժամը հինգին վերադարձաւ. իր յանձնարարական նամակները տեղերնին տալով, բոլոր պարահանդէսներէն հրաւիրուեր էր և Հռոմի մէջ բաւական տեղ պտըտեր էր:

Այս ամեն գործը տեսնելու համար օր մը բաւական եղեր էր Ալպէրին:

Անկէ զատ՝ ներկայացուած խաղին և դերասաններուն անունները իմանալու ժամանակ ունեցեր էր ։

Խաղին անունն էր՝ Բարիզինա, իսկ երևելի դերասանաց՝ Գոզէլլի, Մորիանի և Լա Սբէք ։

Ինչպէս կը տեսնուի՝ մեր երկու պարոնները այնչափ ապերջանիկ չէին․ Լուչիա տի Լամերմուրէ հեղինակին ամենէն ընտիր դուսանական խաղերէն մէկուն ներկայացման ներկայ պիտի գտնուէին, զոր Իտալիոյ ամենէն անուանի երեք դերասանները պիտի ներկայացընէին ։

Ալպէր երբէք չկրցեր էր ինքզինքը անդրալեռնեաններուն թատրոններուն սովորեցընել, որոց առջի բազմարանները մարդ չերթար, և բաց օթեակ կամ պատշգամ չունին․ Բարիզի Կատակերգութեան թատրոնին մէջ իրեն սեպհական բազմոց մը և Օբէրայի թատրոնին մէջ օթեակ ունեցողի մը խիստ էր այս ։

Սակայն Ալպէր Ֆրանզին հետ ամեն անգամ Օբէրա գացած ժամանակը իր զարդարանքը պակաս չէր ձգեր․ անօգուտ զարդարանք․ վասն զի պէտք է խոստովանիլ յամօթ մեր նորաձևութեան ամենէն արժանաւոր ներկայացուցչաց մէկուն, որ չորս ամսէ 'ի վեր Իտալիոյ ամեն կողմը մաղելով ամենևին բաղդաւորութիւն մը չէր ունեցեր ։

Ալպէր կը ջանար երբեմն այս մասին կատակներ ընել․ բայց իրօք չափազանց վիրաւորուած էր, վասն զի ինքը ամենէն աշխոյժ երիտասարդներէն մէկն ըլլալով՝ չկրցեր էր յաղթութիւն մը ընել ։ Անտանելին այն էր, որ մեր սիրելի հայրենակցաց համեստ սովորութեան համաձայն՝ Ալպէր Բարիզէն մեկնած ժամանակ այնպէս համոզուած էր որ Իտալիա գացած առենը մեծ յաջողութիւններ պիտի գտնէ և իր բարեբաղդութեանց պատմութիւնը պատմելով, իր Բարիզի բարեկամները պիտի զուարճացընէ ։

Բայց աւաղ, բան մը չկրցեր էր ընել․ Ճենովացի, Ֆիորէնցացի և Նէապոլսեցի հրաշագեղ կոմսուհիները իրենց սիրահարները գտած էին, և Ալպէր համոզուեր էր որ Իտալացիք իրենց անհաւատարմութեանը հաւատարիմ մնալու դերադանցութիւնը ունին Գաղղիացւոցմէ ։

Ըսել չեմ ուզեր թէ Իտալիոյ մէջ, ինչպէս նաև ուրիշ տեղեր բացառութիւններ չկան ։

Ալպէր ոչ միայն վայելուչ այլ և խիստ մտացի երիտասարդ մ'էր․ անկէ զատ՝ դերակոմսութիւն ունէր․ իրաւ՝ թէև այս տիտղոսը նոր ստացած էր, բայց հոգ չէ, այս տեսակ պատուանունները եթէ 1399էն սկսած ըլլան և եթէ 1815էն, տարբերութիւննին դիտող չկայ ։

Անոնցմէ զատ՝ յիսուն հազար ֆրանք հասոյթ ունէր ։ Բարիզի մէջ ըստ հաճոյից կեանք մը վարելու համար ասկէ աւելի բան հարկաւոր չէր ։ Ուստի քիչ նուաստութիւն չէր իրեն՝ որ իր պտըտած բոլոր քաղաքներուն մէջ իրեն ուշադրութիւն չընեն ։

Սակայն Ալպէր կը յուսար որ բարեկենդանին օգուտ մը քաղէ․ քանզի աշխարհիս ամեն երկիրներուն մէջ, ուր այս տօնախմբութիւնը կը կատարեն, բարեկենդանը ազատութեան եղանակ մ'է, որու մէջ ամենէն անաչառներն անգամ յիմարութիւն մը կ'ընեն ։ Եւ որովհետև բարեկենդանի տօնախմբութիւնը հետևեալ օրը պիտի սկսէր, հարկաւոր էր որ Ալպէր տօնախմբութենէն առաջ ինքզինքը ճանչցընէ ։

Այս նպատակաւ թատրոնին ամենէն երևելի օթեակներէն մէկը վարձեր էր, և այն իրիկունը խիստ վայելուչ կերպով հագուեր էր ։ Կռնակը դերասաններուն կողմը դարձուցած և կիսով չափ օթեակէն դուրս հակած՝ վեց մատնաչափ երկայնութեամբ կրկնադիտակով գեղեցիկ կիները կը զննէր ։ Սակայն ասոնցմէ և ոչ մէկը իր մէկ նայուածքովը զան չէր վարձատրեր գոնէ հետաքրքրութեամբ ։

Քանզի իւրաքանչիւր ոք իր գործոց, սիրահարութեանց, զուարճութեանց և հետևեալ օրուան տօնախմբութեան վրայ խօսքեր կ'ընէր՝ առանց ուշադրութիւն ընելու ո՛չ դերասաններուն և ոչ երաժշտութեան, բաց 'ի երևելի կտոր մը երգուած ժամանակէն, որ ատեն ամեն մարդ կը դառնար կամ Գոզէլլին երգած երգը լսելու, կամ Մորիանին ընտիր հատուածին համար ծափահարելու և կամ Լա Սբէքին կեցցէ պոռալու․ ետքը վերստին մասնաւոր խօսակցութիւնները կ'ըսկսէին ։

Առաջին արարուածին վերջը՝ մինչև այն միջոցին պարապ մնացած օթեակի մը դուռը բացուելով, կին մը ներս մտաւ, զոր Ֆրանզ տեսնելով զարմացաւ, քանզի զան Բարիզ տեսեր և անոր ներկա-

'յանալու պատիւն ունեցեր էր ։ Ալպէր իւր բարեկամին ըրած շարժումը տեսնելով,

— Այս կինը կը Ճանչնա՞ս, ըսաւ անոր ։

— Այո՛, ինչպէս կը գտնես ։

— Հրաշագեղ է և խարտեաշ. ո՛հ, ինչպէս սիրուն մազեր ունի ։ Գաղղիացի՞ է ։

— Վենետիկցի ։

— Եւ ի՞նչ է անունը ։

— Կ . . . կոմսուհի ։

— Ո՛հ, այս անունը լսած էի, ըսաւ Ալպէր. անոր խելացիութիւնը և գեղեցկութիւնը շատ կը գովեն. Ճշմարիտ ո՜րչափ ապուշ եմ եղեր որ տիկին Վիլըֆօրի տուած վերջին պարահանդէսին մէջ, ուր ան ալ կը գտնուէր, կրնայի զինք անոր ներկայացընել տալ, և հոգ չըրի ։

— Կ'ուզե՞ս որ սխալմունքդ ես ուղղեմ, հարցուց Ֆրանց ։

— Միթէ այդչափ մտերմութեամբ կը Ճանչնա՞ս զան որ զիս անոր օթեակը տանիս ։

— Կենացս մէջ երեք կամ չորս անգամ անոր հետ խօսելու պատիւն ունեցած եմ. ուստի կրնաս իմանալ որ անպատեհութիւն մը չէ՞նք ըներ եթէ երթանք ։

Այս միջոցիս կոմսուհին Ֆրանցը տեսաւ և ձեռքովը շնորհալի նշան մը ըրաւ, որուն Ֆրանց գլխովը յարգական խոնարհութիւն մը ընելով պատասխանեց ։

— Կը տեսնեմ որ գործը յարմարցուցեր էք, ըսաւ Ալպէր ։

— Սխալմունք ունիս, և ահա այս պատՃառաւ Գաղղիացիները անթիւ յիմարութիւններ կ'ընեն. ահա այս է մեր Բարիզեան տեսութեան կէտը. Սպանիոյ և մանաւանդ Իտալիոյ մէջ՝ յարաբերութեանց ազատութեամբ մարդոց մտերմութիւնը երբէք չդատուիր ։ Կոմսուհւոյն հետ իրարու լոկ համակրութիւն ունեցանք և ոչ ուրիշ բան ։

— Սրտի՞ համակրութիւն, հարցուց Ալպէր ծիծաղելով ։

— Ո՛չ, մտքի համակրութիւն, պատասխանեց Ֆրանց ծանրութեամբ ։

— Եւ ի՞նչ առթիւ ։

— Քեզի հետ գացածիս պէս անոր հետ ալ Գոլիզէ երթալու առթիւ ։

— Բայց անո՞ր հետ ալ լուսնի լուսով գացիր ։

— Այո՛ ։

— Առանձի՞ն ։

— Գրեթէ ։

— Եւ ի՞նչ բանի վրայ խօսակցեցաք ։

— Մեռեալներուն վրայ ։

— Ուրեմն սաստիկ աղէկ զբօսեր էք. բայց եթէ ես այնպիսի շրջագայութեան մը մէջ գեղեցիկ կոմսուհւոյ մը ընկերանալու պատիւն ունենայի, իրօք կենդանեաց վրայ պիտի խօսէի ։

— Եւ գուցէ իրաւունք չունենայիր ։

— Բայց խօստումդ պիտի կատարե՞ս և զիս անոր պիտի ներկայացընե՞ս ։

— Վարագոյրը իջնելուն պէս ։

— Ո՛րչափ երկար է այս առաջին արարուածը ։

— Վերջնուագը մտիկ ըրէ, ինչպէս գեղեցիկ է, և Գոզէլլի սքանչելի կերպով կ'երգէ ։

— Այո՛, բայց ինչ շարժումներ կ'ընէ ։

— Թատերգութեան մէջ լա Սբէքին հաւասարող չկայ ։

— Երբ Սոնթակը և Մալիպրանը լսած է մարդ . . . ։

— Բայց Մորիանիին ձևերը սքանչելի չե՞ն ։

— Ինքզինքը սեղմելով երգողը չեմ սիրեր ։

— Ստուգիւ, սիրելիս, ըսաւ Ֆրանց, ինչ ատեն Ալպէր շարունակ դիտակովը ամեն կողմ կը զննէր, ամենևին բան մը չես հաւնիր ։

Վերջապէս վարագոյրը իջաւ 'ի մեծ գոհունակութիւն դերակոմսին, որ գլխարկը առաւ, ձեռքովը մազերը, փողկապը և թեզանիքը արտորնօք շտկեց, և Ֆրանցին իմացուց որ պատրաստ իրեն կ'ըսպասէ ։

Ֆրանց՝ իւր կոմսուհւոյն ըրած աչքով հարցմանը հաՃոյական պատասխան մը ընդունելով, Ալպէրի շտապումը գոհ ընելու չյապաղեց. այլ իսկոյն ոտք ելաւ և իւր ընկերին առջևը ինկաւ, որ ա-

նոր ետեւէն քալելու ժամանակ իր շալիկը և գլեսը կը շտկէր ։ Ֆրանդ Թիւ 4դ. օթեակին դրան առջեւը կենալով ղրկաւ, որուն մէջ կը գտնուէր կոմսուհին ։

Անմիջապէս կոմսուհւոյն քովը նստող երիտասարդը ոտք ելաւ՝ իր տեղը Իտալական սովորութեան համաձայն նոր եկողին ներկայացնելով, որ նոյնպէս ուրիշ նոր այցելուի մը տալու պարտաւորեալ է ։

Ֆրանդ Ալպէրը կոմսուհւոյն ներկայացուց՝ իբր Բարիզի երեւելի ընտանիքէ՝ և հանճարեղ երիտասարդ մը. Թէեւ ստոյգ էր այս, քանզի Ալպէր անստգիւտ երիտասարդ մ'էր ։ Ֆրանդ աւելցուց նաեւ թէ կոմսուհւոյն Բարիզ ըրած ճանապարհորդութեան միջոցին անոր ներկայացուելու առիթը կորսնցընելուն համար անյոյս մնալով, Ալպէր իրեն առաջարկեր էր որ այս պակասութիւնը լեցնէ ։ Ֆրանդ այս յանձնարարութիւնը կոմսուհւոյն աղաչելով մը կը կատարէր, բայց ինքն ալ իր անխոհեմութեանը համար կոմսուհիէն ներում խնդրելու առաջնորդի մը պէտք ունէր ։

Կոմսուհին Ալպէրին շնորհալից ողջոյն մը տալով և Ֆրանդին ձեռքը թօթուելով պատասխանեց ։

Կոմսուհւոյն հրաւիրանօքը Ալպէր օթեակին առջի կողմի աթոռը նստաւ, և Ֆրանդ կոմսուհւոյն ետին երկրորդ կարգը նստաւ ։

Ալպէր խօսակցութեան գեղեցիկ նիւթ մը գտեր էր. Բարիզի մէջ զիրար ճանչնալու դիւրութեանց վրայ կոմսուհւոյն կը խօսէր ։ Ֆրանդ Ալպէրի խոշոր կրկնադիտակը ուզեց, և սկսաւ բոլոր սրահը աչքէ անցընել ։

Իրենց դիմացը երրորդ կարգի օթեակի մը առջի կողմը հիանալի գեղեցկութեամբ կին մը նստած էր Յոյնի հագուստով, որուն վայելուչ ձեւէն յայտնի կ'երեւէր թէ իր բնական հագուստն էր ։

Անոր ետին մութին մէջ մարդու մը ձեւը կը նկարուէր, որուն դէմքը որոշելը անկարելի էր ։

Ֆրանդ Ալպէրի և կոմսուհւոյն խօսակցութիւնը ընդմիջելով, վերջինին հարցուց թէ արդեօք կը ճանչնա՞յ այն Ալբանացի գեղեցիկ կինը, որ ո՛չ միայն մարդոց, այլ և կանանց ուշադրութիւնը գրաւելու արժանի էր ։

— Ո՛չ, ըսաւ կոմսուհին. բայց այն գիտեմ միայն որ եղանակին սկիզբէն 'ի վեր Հռոմ կը գտնուի, վասն զի թատրոնին բացուելէն 'ի վեր ամէն ներկայացումներուն կը տեսնեմ զան՝ երբեմն իրեն հետ եղող մարդուն ընկերութեամբը և երբեմն միայն սեւ ծառայի մը հետ ։

— Ինչպէս կը գտնէք զան, կոմսուհի ։

— Վերջին աստիճանի գեղեցիկ. Մետորան այս կնոջ նմանիլ պէտք է ։

Ֆրանդ և կոմսուհին իրարու հետ ժպիտ մը փոխեցին ։ Այնուհետեւ կոմսուհին վերստին Ալպէրին հետ խօսիլ սկսաւ, և Ֆրանդ կրկնադիտակով նայիլ ։

Վարագոյրը բացուեցաւ համբաւաւոր Հէնրիին հնարած Իտալական ընտիր պարերէն մէկը պարելու համար, որուն մէջ իւրաքանչիւր պարող իր դերը այնպիսի ճարպկութեամբ 'ի գործ կը դնէր, որ հարիւր յիսուն անձինք մի և նոյն շարժումը կ'ընէին՝ միատեղ կամ թեւերնին վերցընելով և կամ սրունքնին ։ Այս պարին անունը Բօլետօ էր ։

Ֆրանդ Յոյն կնոջ գեղեցկութեանը այնչափ զբաղուեր էր, որ պարը դիտելու ժամանակ չունէր ։ Իսկ կինը այն տեսարանին վրայ յայտնի զուարճութիւն մը կ'զգար՝ իր հետը ընկերացող անձին հակառակ, որ բոլորովին անտարբեր մնալով՝ բոլոր պարին ժամանակը շարժում մը անգամ չըրեր էր, և փողերուն, ծնծղաներուն և զինական գլխարկ ըսուած երաժշտական գործիներուն դժոխային ձայներուն ժամանակը կ'երեւէր թէ հանդարտ և քաղցր քունի մէջ ընկղմած էր ։

Վերջապէս պարը աւարտելով, հանդիսականաց եռանդալի ծափահարութիւններով վարագոյրը իջաւ ։

Գուսանական խաղերը պարով մը բաժնելու սովորութիւն ըլլալէն 'ի վեր՝ Իտալիոյ մէջ միջնարարուածները խիստ կարճատեւ են. վասն զի պարողներուն շնչապարը և խաչապարը կաքաւելու միջոցին՝ երգեցիկները հանգչելու և հագուստնին փոխելու ժամանակ կ'ունենան ։

Երկրորդ արարուածին նախնուագը սկսելու ժամանակ՝ մութին

մէջ նստող անձը կամաց մը ոտք ելաւ և Ցոյն կնոջ մօտեցաւ, որ անոր կողմը դառնալով խօսք մը ըսաւ, և վերստին իւր արմուկը օթեակին եզրին կռթնցուց։

Այս մարդը միշտ ստուերին մէջ դտնուելով Ֆրանզ չէր կրնար անոր դիմաց գծագրութիւնը որոշել։

Վարագոյրը բացուելով՝ ի հարկէ Ֆրանզին նայուածքն ալ պղեղիկ Ցոյն կնոջ վրայէն տեսարանին վրայ դարձաւ։

Ցայտնի է որ երկրորդ արարուածը երազի կրկնուագով մը կ'ըսկսի, Բարիզինա քնացած ժամանակը իւր Ածօ էրկան առջև Ուկոյի վրայ ունեցած իւր սիրոյն դաղտնիքը բերանէն կը փախցընէ. խաբուած ամուսինը նախանձութենէ շարժեալ այնչափ կը կատղի որ իւր կնոջ անհաւատարմութեանը վրայ համոզուելէն ետև՝ կ'արթընցընէ զան և իւր վաղահաս վրիժառութիւնը կ'իմացընէ անոր։

Այս կրկնուագը Տոնիձէթթիի արդիւնաւոր գրչէն ելած ամենէն գեղեցիկ, ազդու և սոսկաւիթ եղանակներէն մէկն էր։ Երրորդ անդամն էր որ Ֆրանզ կը լսէր զան, և թէպէտ ինքը նուագամոլ մը չէր, սակայն խորին ազդեցութիւն մը ըրեր էր իւր սրտին։ Հետեւաբար կը պատրաստուէր սրահին ծափահարութեանց մասնակից ըլլալ, երբ իւր ձեռքերը՝ իրարու զարնելու ժամանակ՝ իրարմէ անջատեալ մնացին, և իւր բերանէն ելած կեցցէի ձայնը իւր շրթանց վրայ սառեցաւ։

Օթեակին մարդը ոտք ելեր և անոր դէմքը լոյսին մէջ կը դտնուէր, Ֆրանզ Մօնթէ-Քրիսթոյի զարմանալի ասպնջականը վերստին դտեր էր, այն անձը, որուն հասակը և ձայնը նախընթաց իրիկունը Գոլիզէի աւերակաց մէջ իրեն անծանօթ չերևցեր էին։

Տարակոյս չկար, զարմանալի ճանապարհորդը Հռոմի մէջ կը դտնուէր։

Ընդուշտ այս մարդը տեսնելով՝ Ֆրանզին մտայնին յուզմանց նշանները իւր դիմաց վրայ ևս ցոյցուցած պիտի ըլլար. քանզի կռմսուհին անոր երեսը նայելով չկրցաւ իւր ծիծաղը զսպել, և հարցուց երիտասարդին թէ ինչ պատահեցաւ։

— Տիկին կոմսուհի, պատասխանեց Ֆրանզ, քիչ մը առաջ ձեզ հարցուցի թէ այն Ալպանացի կինը կը ճանչնաք, բայց հիմա կը հարցընեմ թէ անոր ամուսինը կը ճանչնաք։

— Կինը ճանչցածիս չափ, պատասխանեց կոմսուհին։

— Ամենևին հարցուփորձ ըրած չէք։

— Ահա Գաղղիական հարցում մը. դիտէք աղէկ որ մեզ Իտալացւոց համար աշխարհիս մէջ մեր սիրածէն զատ ուրիշ մարդ չկայ։

— Ստոյգ է, պատասխանեց Ֆրանզ։

— Այսու ամենայնիւ, ըսաւ կոմսուհին՝ Ալպերի կրկնադիտակը իւր աչաց մօտեցընելով և դէպ ի նշանակուած օթեակը ղննելով, կարծես թէ դերեզմանէ նոր ելած մահաղերձ մէկն է, քանզի սոսկալի ժպտոյն կ'երևի ինձ։

— Միշտ այսպէս է, պատասխանեց Ֆրանզ։

— Ուրեմն դուք կը ճանչնաք զան, հարցուց կոմսուհին. այն ատեն՝ անոր ո՛վ ըլլալը ես պիտի հարցընեմ ձեզ։

— Կարծեմ թէ զան տեսած և ճանչցած պիտի ըլլամ։

— Իրօք, ըսաւ կոմսուհին՝ իւր երակներուն մէջ սարսուռ մը մտածի պէս իւր դեղեցիկ ուսերովը շարժում մը ընելով, երբ անդամ մը այսպիսի մարդ մը տեսնէ մէկը, ամենևին չկրնար մնալ։

— Ի՞նչ կարծիք ունիք այս մարդուն վրայ, հարցուց Ֆրանզ կոմսուհւոյն, որ երիտասարդին զգացած սրտի յուզմունքէն ազատ չէր երևեր։

— Ինձ այնպէս կ'երևի թէ լորտ Ռիւթվէնն է։

Իրօք Պայրընի այս նոր յիշատակը Ֆրանզի մեծ ազդեցութիւն ըրաւ, եթէ մէկը ուրուականներուն գոյութիւնը իրեն հաւատացընել կարենար, այս մարդը պիտի ըլլար այն։

— Կ'ուզեմ անոր ո՛վ ըլլալը գիտնալ, ըսաւ Ֆրանզ ոտք էկնելով։

— Ո՛հ, ո՛չ, ըսաւ կոմսուհին, դիս առանձին մի թողուք, տուն դառնալու համար ձեր ընկերութեանը պէտք ունիմ, ուստի կ'ուզեմ որ կենաք։

— Ինչպէս, ստուգիւ կը վախնաք, ըսաւ Ֆրանզ անոր ականջին։

— Մտիկ ըրէք, ըսաւ կոմսուհին. Պայրըն երդում ըրած է ինձ թէ ուրուականներու կը հաւատայ, մինչև անդամ ըսաւ ինձ թէ տե-

սած է զանոնք. և անոնց դէմքը ինծի նկարագրեց. ահա ճիշդ ես ալ դիմացս սև մազերով և տարօրինակ փայլունութեամբ մեծ աչքերով ուրուական մը կը տեսնեմ. աղէկ ուշ դրէք՝ հետը եղած կինն ալ հասարակ կին մը չէ, այլ օտարական մը . . . Յոյն մը . . . հերետիկոս մ'է . . . անտարակոյս ան ալ իրեն պէս կախարդ մ'է . . . ։ Կ'աղաչեմ, մի՛ երթաք, վաղը առտու եթէ կ'ուզէք՝ անոր տանէն ընկէք, բայց այս իրիկուն կ'իմացընեմ ձեզ որ պիտի չթողում որ երթաք։

Ֆրանզ խիստ աղաչեց որ ներէ իրեն։

— Ահա, ըսաւ կոմսուհին ոտք ելնելով, ահա ես ալ կ'երթամ, մինչև ներկայացման վերջը չեմ կրնար սպասել, քանզի տունս հիւրեր ունիմ, և կը յուսամ թէ ձեր ընկերութիւնը ինծի մերժելու անգթութիւնը պիտի չունենայ։

Ֆրանզ իր գլխարկը առնելէն, դուռը բանալէն և իր թևը կոմսուհւոյն ներկայցնելէն ուրիշ բան չէր կրնար ընել, ինչպէս որ ըրաւ։

Կոմսուհւոյն սիրտը իրօք յուզուեր էր, նոյն իսկ ինքը Ֆրանզ աւելի բնական աւելորդապաշտութեան մը ենթակայ եղած էր. քանզի կոմսուհւոյն բնազդական զգացումը իր սրտին մէջ յիշողութեան մը հետևութիւնն էր։

Ֆրանզ տեսաւ որ կոմսուհին կառքը մտնելու ժամանակ կը դողար. մինչև տունը անոր ընկերացաւ, բայց հոն մարդ մը չտեսնելով կոմսուհւոյն երեսը տուաւ։

— Ճշմարիտ, ըսաւ կոմսուհին, անհանգիստ եմ, և առանձին մնալու պէտք ունիմ, այն մարդուն երևոյթը գլխս տակն ու վրայ ըրաւ։

Ֆրանզ ծիծաղիլ ուզեց։

— Մի՛ ծիծաղիք, ըսաւ անոր. նախ որ ախորժակ չունիք, երկրորդ՝ խօսք տուէք ինծի որ ըսածս պիտի կատարէք։

— Ի՞նչ բան։

— Խօսք տուէք որ ըսեմ։

— Խօսք կու տամ ամէն ուզածնիդ ընելու, բայց 'ի նոյն մարդուն ով ըլլալը փնտռելէն ետ կենալու։ Անոր ով ըլլալը, ուր-

կից գալը և ուր երթալը գիտնալ ուզելու այնպիսի պատճառներ ունիմ որ չեմ կրնար ձեզ ըսել։

— Ուրկից գալը չեմ գիտեր. բայց կրնամ ուր երթալը ըսել. ապահովապէս դժոխք կ'երթայ։

— Բայց ինչ է ինծմէ պահանջած խոստումնիդ, կոմսուհի, ըսաւ Ֆրանզ։

— Խօսք տուէք ինծի որ ուղղակի պանդոկնիդ վերադառնաք և այս իրիկուն այն մարդը տեսնելու չաշխատիք։ Տեսակ մը յարակցութիւն կայ այն մարդոց մէջ, որոց մէկուն քովէն բաժնուելով միւսին քովը կ'երթաք, և դուք իմ և այն մարդուն մէջ տեղը հաղորդիչ մի՛ ըլլաք։ Վաղը եթէ կ'ուզէք՝ անոր տանէն ընկէք, բայց չըլլայ թէ ինծի ներկայացընէք զան, եթէ չէք ուզեր երկիւղէ մեռցընել զիս։ Ուստի, գիշեր բարի. հանգիստ քուն կը մաղթեմ ձեզ, իսկ ես աղէկ գիտեմ որ պիտի չկրնամ քնանալ։

Այս ըսելով կոմսուհին Ֆրանզէն բաժնուեցաւ՝ երկմտութեան մէջ թողլով զան թէ արդեօք զինքը ծաղրե՞ր էր, եթէ իրօք յայտնած երկիւղը զգացեր էր։

Ֆրանզ պանդոկը վերադառնալով տեսաւ որ Ալպէր ցայգազգեստով, լայն սռնազգեստով և թևաթոռի մը վրայ փափկասիրութեամբ տարածուեր՝ իր գլանիկը կը ծխէր։

— Ինչպէս, եկա՞ր, ըսաւ անոր. ճշմարիտ ես վաղը կ'սպասէի քեզ։

— Սիրելիդ իմ Ալպէր, պատասխանեց Ֆրանզ, շատ ուրախ եմ որ Իտալիոյ կանանց վրայ խիստ սխալ գաղափար մ'ունենալդ քեզ ցուցընելու առիթը գտայ. ինծի այնպէս կ'երևի որ դուն սիրահարութեամբդ ըրած հաշուիդ մէջ սխալեր ես։

— Մի՛ զարմանար, բարեկամ, այս նենգամիտ կանանց գործին մարդու խելքը չհասնիր։ Ձեռքդ կը բռնեն, կը սեղմեն, կամաց մը հետդ կը խօսին, և զքեզ մինչև իրենց տունը կը տանին. եթէ այս վարմունքին մէկ քառորդը Բարիզուհի մը ունենալու ըլլայ՝ իր վարկը կը կորսնցընէ։

— Պատճառը այն է որ անոնք ամենևին գաղտնի գործ մը չեն ըներ, և լոյսին մէջ կ'ապրին, որուն այնչափ ուշադրութիւն չեն

ընէր si (այո) բառը հնչուած գեղեցիկ երկրին մէջ բնակող կիները, ինչպէս կ՚ըսէ Տանթէ ։ Ասկէ զատ՝ չանսամ՝ ինչպէս կոմսուհին ստուգապէս վախցաւ ։

— Բայց ինչ բանէ․ գեղեցիկ Ցոյն կնոջ հետ մեր դէմ եղող այն պարկեշտ պարոնէ՞ն վախցաւ ։ Ուզեցի դուրս ելած ժամանակնին աղէկ մը տեսնել զանոնք, ուստի դալիթին մէջ անոր ճամբան կտրեցի ։ Չեմ գիտեր թէ այս անդրաշխարհային գաղափարները ուրկէց ձեր սրտին մէջ ծագեցան ։ Խիստ գեղեցիկ երիտասարդ մ՚է, և իր հագուստին ձեւը այնչափ վայելուչ է որ կարծես թէ Գաղղիոյ Պլէն կամ Հիւմանն դերձակներուն շինել տուած է ։ Իրաւ՝ քիչ մը դեղնած է, բայց յայտնի է որ դեղնութիւնը ազնուականութեան դրոշմն է ։

Ֆրանզ ժպտեցաւ, վասն զի Ալպէր դեղնութեան վրայ մեծ համարում ունէր ։

— Ես իսկ, ըսաւ Ֆրանզ, այնպէս համոզուած եմ որ կոմսուհւոյն այն մարդուն վրայ ունեցած գաղափարները հասարակ կարծիք մը չեն կրնար ըլլալ ։ Բայց ան քովդ խօսեցա՞ւ, և անոր խօսքերէն բառ մը լսեցի՞ր ։

— Այո՛, խօսեցաւ․ անոր արտասանած աղճատեալ բառերէն գաւառական Յունարէն լեզուով խօսիլը հասկցայ ։ Պէտք ես գիտնալ, սիրելիս, որ դպրոցը Յունարէնի մէջ խիստ քաջ էի ։

— Ուրեմն Յունարէ՞ն կը խօսէր ։

— Հաւանականաբար ։

— Տարակոյս չկայ, մրմնջեց Ֆրանզ, ան է ։

— Ի՞նչ ըսիր . . . ։

— Ոչինչ․ դուն ինչ ըրիր ։

— Ես այնպիսի գիւտ մը գտայ, որուն վրայ պիտի զարմանաս ։

— Ի՞նչպէս ։

— Կառք կամ ձի գտնելը անկարելի եղաւ, այնպէս չէ՞ ։ Բայց անշուշտ սայլ մը և զոյգ մը եզ պիտի կրնանք գտնել․ սայլը զարդարել պիտի տամ, մենք Նէապոլսեցի հնձողներու հագուստը կը հագնինք, և Լէոբոլտ Ռոպէրի բնական և շքեղ պատկերը կը ներ-

կայացնենք ։ Եթէ կոմսուհին ալ Բուծծօլիի կամ Սորէնթոյի կնոջ հագուստը հագնիլ ուզէ՝ մեր խաղը կատարեալ կ՚ըլլայ․ խիստ գեղեցիկ ըլլալո՛ւն՝ բուն պատկերը պիտի ներկայացրնենք ։ Այս գիւտաւորութիւնս մեր պանդոկապետին իմացուցի, որ ապահովցուց զիս թէ շատ դիւրին բան է ուզուածները գտնելը․ ուստի այս գործը իր վրայ առաւ, և այս իրիկուն պատասխան պիտի բերէ ։

Այս միջոցին դուռը բացուեցաւ, և Բասթրինի գլուխը ներս մտուց ։

— Permesso? ըսաւ (այսինքն՝ ներելի՞ է ներս մտնել) ։

— Անշուշտ, պոռաց Ֆրանզ ։

— Ի՞նչ ըրիր, հարցուց Ալպէր, սայլը և եզերը գտա՞ր ։

— Ասոնցմէ աղէկը գտայ, պատասխանեց պանդոկապետը խիստ գոհ կերպարանքով մը ։

— Աղէկ զգուշացիր, բարեկամ, ըսաւ Ալպէր, աւելի աղէկը աղէկին թշնամին է ։

— Թող իմ տէրերս իմ վրաս վստահ ըլլան, պատասխանեց Բասթրինի ապահով ձայնով մը ։

— Բայց վերջապէս ինչ կայ, հարցուց Ֆրանզ ։

— Գիտէ՞ք, ըսաւ պանդոկապետը, որ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ձեր բնակած դասիկոնը կը բնակի ։

— Անշուշտ, ըսաւ Ալպէր, քանզի անոր շնորհիւ մենք հոս սենեակ գտանք ։

— Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ձեր կրած նեղութիւնները իմանալով՝ Ռոսբոլիի պալատին իր ձեռքը եղած պատուհաններուն և իր կառքին մէջ երկու տեղ կը շնորհէ ձեզ ։

Ալպէր և Ֆրանզ իրարու երես նայեցան ։

— Բայց պէ՞տք ենք ընդունիլ օտարականի մը շնորհքը, հարցուց Ալպէր, այնպիսի մարդու մը, զոր մենք չենք ճանչնար ։

— Ի՞նչ մարդ է այս Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, հարցուց Ֆրանզ պանդոկապետին ։

— Խիստ մեծ մարդ մ՚է, ճիշդ չեմ գիտեր թէ Սիկիլիացի՞ է եթէ Մալթացի, սակայն Պօրկէզի մը պէս ազնուական և ոսկեհանքի պէս հարուստ մէկն է ։

— Եթէ մեր պանդոկապետին ըսածին պէս այս մարդը այնչափ երևելի մարդ մ'է, ըսաւ Ֆրանզ Ալպերին, իր հրաւէրը ուրիշ կերպով ղրկել պէտք էր, կամ դրելով, և կամ. . . :

Այս միջոցիս դուռը զարնուեցաւ :

— Ներս մտիր, ըսաւ Ֆրանզ :

Խիստ վայելուչ միջոցեստով ծառայ մը սենեկին սեմին վրայ երևցաւ :

— Մօնթէ-Քրիսթոյ կոմսին կողմանէ մէկը Ֆրանզ տ'Էպինէի և միւսը դերակոմս Ալպեր տը Մորսէրֆի համար է, ըսաւ ու երկու այցատոմս ներկայացուց պանդոկապետին, որ երկու երիտասարդներուն յանձնեց. Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, շարունակեց ծառան, վաղը առտու այս պարոններուն այցելութիւն ընելու հրաման կը խնդրէ, և պատիւ ունի հարցնելու թէ ժամը քանիին ընդունելութիւն կրնան տալ :

— Ասոր ի՞նչ կրնանք ըսել, ըսաւ Ալպեր Ֆրանզին, կոմսը իր սխալմունքը կ'ուղղէ :

— Ըսէ կոմսին, պատասխանեց Ֆրանզ, որ մենք պէտք ենք իրեն այցելութիւն ընելու պատիւն ունենալ :

Ծառան դուրս ելաւ :

— Սառպիս, ըսաւ Ալպեր, կոմսը իւր ազնուութիւնը վերջին ծայրը կը տանի. իրաւունք ունիս եղեր, Պ. Բասթրինի, Մօնթէ-Քրիսթոյ կոմսը խիստ արժանաւոր անձ մ'է եղեր :

— Ուրեմն անոր առաջարկութիւնը կ'ընդունիք, ըսաւ պանդոկապետը :

— Անշուշտ, պատասխանեց Ալպեր, այսու ամենայնիւ մեր այցելին ու եղերուն վրայ խակ կը ցաւիմ, և եթէ Ռոսբոլիի պալատին պատուհանը չբլլար այս կորստեան փոխարէն, սառպիս պիտի չհամրուէի. ինչ կ'ըսես, Ֆրանզ :

— Ռոսբոլիի պալատին պատուհանը կորսընդունելը խելք չէ, պատասխանեց Ֆրանզ :

Իրօք, Ռոսբոլիի պալատին մէկ պատուհանին մէջ երկու նստարան շնորհելու առաջարկութիւնը Ֆրանզին միտքը ձգեր էր Գոլիզէի աւերակաց մէջ այն անծանօթ մարդուն և Թրասեամէրնոցիին

ըրած խօսակցութիւնը, որուն մէջ վերարկուով մարդը խոստացեր էր դատապարտեալի մը ազատութիւնը ընդունելու :

Արդ՝ ինչպէս որ հաւանականապար Ֆրանզ կը կարծէր, եթէ այն վերարկուով մարդը Արձէնթինա թատրոնին մէջ տեսած մարդն էր, անշուշտ պիտի ճանչնար զայն, և այն ատեն իր հետաքրքրութիւնը կատարեալ պիտի յագեցնէր :

Գիշերուան մէկ մասը Ֆրանզ այս խորհրդածութիւններով անցուց և անձկանօք կը փափաքէր որ առտու ըլլայ :

Հետևեալ օրը ամեն բան պիտի յայտնուէր, և այս անգամ ամեն բան պիտի իմանար, միայն թէ Մօնթէ-Քրիսթոյի ասպնջականը Վիկէսի մատանին չունենար, որուն զօրութեամբը կարենար աներևոյթ ըլլալ :

Ուստի ժամը ութէն առաջ արթնցաւ :

Իսկ Ալպեր, որ կանխապարոյց ըլլալու Ֆրանզի պէս պատճառներ չունէր, հանգարտ կը քնանար տակաւին :

Ֆրանզ պանդոկապետը կանչեց, որ իր սովորական յարգական ձևերովը անոր ներկայացաւ :

— Պ. Բասթրինի, ըսաւ, դէխատութիւն մը տեղի պիտի ունենայ այսօր, այնպէս չէ՞ :

— Այո՛, տէր իմ, բայց եթէ պատուհան մը վարձելու համար կը խօսիք, շատ ուշ է :

— Ո՛չ, բայց անոնց վրայ տեղեկութիւն մը ստանալ կ'ուզէի :

— Ինչ տեղեկութիւն :

— Դատապարտեալներուն թիւը, անունը և ի՛նչ կերպ սպանումըը կ'ուզեի իմանալ :

— Շատ դիւրին բան է. դեռ հիմա ստացայ այն ազդարիրներէն օրինակ մը, որոնք բոլոր փողոցներուն անկիւնները կը փակցնեն՝ դատապարտեալներուն անունը, անոնց դատապարտութեան պատճառը և ընդունելու մահուան եղանակը հասարակութեան իմացընելու համար :

— Կը փափաքիմ այդ ազդարիրը տեսնել :

— Հիմա կը բերեմ :

Պանդոկապետը դուրս ելաւ և ազդագիրը բերելով Ֆրանցին ներկայացուց ։

Ահա մահազդոյժ ազդագրին բառական թարգմանութիւնը ․

«Կը ծանուցուի բոլոր հասարակութեան որ չորեքշաբթի, փետրուար 22ին, բարեկենդանի առջի օրը, Ռոմայի ատեանին դատավճռովը պիտի սպաննուին Տէլ Բօբօլօ հրապարակին մէջ Անտրէա Ռոնտոլօ, որ Հռոմի վերապատուելի կրօնաւոր տօն Սէզար Թօրլինին սպաննելուն համար յանցաւոր ճանչցուած է, և Բէբբինօ՝ մականուանեալն Ռոգգա Բրիօրա, որուն Լուիճի Վանբա անուն գարշելի աւազակապետին և անոր խումբին մարդոցը մեղսակից ըլլալը ապացուցուած է ։

«Առաջինը լախտահար պիտի սպաննուի ։

«Իսկ երկրորդը պիտի գլխատուի ։

«Մարդասէր անձերը կը խնդրուին, որ այս երկու դատապարտելոց ՚ի սրտէ զղջման համար աղօթք ընեն »։

Ինչ որ Ֆրանց Գոլիզէի աւերակաց մէջ նախընթաց իրիկունը լսեր էր, նոյնը ազդագրին մէջ կը կարդար․ դատապարտելոց անունը, անոնց մահուան պատճառը և կերպը ճիշդ նոյնն էին ։

Ուստի հաւանականաբար Թրասթէվէրցին ուրիշ մէկը չէր, բայց եթէ Լուիճի Վանբան, և վերարկուով մարդը՝ Սէնպատ Նաւասարին, որ Բօրթօ-Վէքիօ և Թունուզ ըրածին պէս Հռոմի մէջ իսկ մարդասիրական գործեր կը կատարէր ։

Ժամը ինն զարկեր էր երբ Ալպէր բոլորովին հագուած ներս մտաւ ։

— Հիմա որ երկուքնիս ալ պատրաստ ենք, սիրելիդ իմ Պ․ Բասթրինի, ըսաւ Ֆրանց, կը կարծես որ կարենանք Մօնթէ-Քրիսթոյ կոմսին ներկայանալ ։

— Անշուշտ, պատասխանեց պանդոկապետը․ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը սովորութիւն ունի խիստ կանուխ արթննալու, և ապահով եմ որ երկու ժամ առաջ արթնցած է ։

— Եւ կը կարծես որ անվայելուչ բան մը չենք ըներ եթէ հիմա անոր այցելութիւն ընենք ։

— Ամենևին ։

— Ուրեմն, Ալպէր, եթէ պատրաստ ես . . . ։

— Ես բոլորովին պատրաստ եմ, ըսաւ Ալպէր ։

— Ուրեմն երթանք իւր մարդասիրութենէն շնորհակալ ըլլալու ։

— Երթանք ։

Պանդոկապետը Ֆրանցին և Ալպէրին առջևը անցաւ և կոմսին սենեակներուն քով հասնելով՝ զանգակը հնչեցուց․ ծառայ մը դուռը բացաւ ։

— Գաղղիացի պարոնները, ըսաւ պանդոկապետը ։

Ծառան խոնարհութեամբ նշան ըրաւ անոնց որ ներս մտնեն ։

Երիտասարդները երկու սենեակներու մէջէ անցան, որոնք այնպիսի փառաւոր կարասիներով զարդարուած էին որ Բասթրինիի պանդոկին մէջ չէին յուսար գտնելու, և վերջապէս կատարեալ վայելուչ սրահ մը մտան ։

Տաճկաստանի օթոց մը գետինը փռուած էր և սրահը խիստ շքեղ կարասիներով զարդարուած էր ։ Խիստ գեղեցկանկար պատկերներ պատերէն կախուած էին, ու անոնց մէջ տեղերը մեծագին զէնքեր շարուած էին, և դռներուն առջևը խորդեղէն վարագոյրներ կը ծփային ։

— Եթէ կը հաճիք նստիլ, ըսաւ ծառան անոնց, երթամ Պ․ կոմսին ձեր գալուստը իմացընեմ ։

Այս ըսելով դռներուն մէկէն աներևոյթ եղաւ ։

Այն ատեն Ֆրանց և Ալպէր իրենց աչքը կարասեաց, պատկերներուն և զինուց վրայ պտըտցուցին ։

Ամեն բան առջի անգամէն աւելի շքեղ երևցաւ իրենց ։

— Ի՞նչ կ՚ըսես ասոնց, հարցուց Ֆրանց իւր բարեկամին ։

— Ես այնպէս կարծեմ որ մեր դրացին կամ ծպտեալ ճանապարհորդ մ՚է և կամ լումայափոխ վաճառական մը, որ Սպանիական արժէթղթոյ իջնելու ժամանակ աղէկ գործ տեսած է ։

— Լռէ, ըսաւ Ֆրանց, հիմա կ՚իմանանք, ահա՛ եկաւ ։

Իրօք՝ ծխնիներուն վրայ դրան մը դառնալու ձայնը առին, և գրեթէ անմիջապէս ետքը՝ վարագոյրը բացուելով այս հարստութեանց տէրը ներս մտաւ ։

Ալպէր դէպ 'ի անոր յառաջացաւ, բայց Ֆրանց իւր տեղը բեւեռեալ մնաց։

Այս ներս մտնողը ուրիշ մէկը չէր, բայց եթէ Գօլիզէի վերարկուով մարդը, օթեակին մէջի անծանօթը, Մօնթէ-Քրիսթօյի զարմանալի ասպնջականը։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԼԱԽՏԱՄԱՀ

— Ներեցէք, պարոններ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօյ կոմսը ներս մտնելով, ձեզ սպասեցընելուս համար. բայց աւելի կանուխ ձեր սենեակը գալով կը վախնայի որ վայելչութեան դէմ չընեմ. մանաւանդ որ իմացուցիք ինծի թէ դուք պիտի գաք, և ես ձեզ ընդունելու կը պատրաստուէի։

— Ֆրանց և ես անսահման շնորհակալութիւններ ունինք ձեզ մատուցանելու, պարոն կոմս, ըսաւ Ալպէր. քանզի սաստիկ մեծ տառապանքէ մը ազատեցիք զմեզ, և մենք կը մտածէինք ծաղրական կառք մը հնարել՝ երբ մարդասիրաբար մեզ հրաւէր ղրկեցիք։

— Այնչափ երկար ժամանակ անձկութեան մէջ մնալնուդ պատ-

ճառը այն անմիտ Բասթրինին է, ըսաւ կոմսը նշան ընելով երկու երիտասարդներուն որ բազմոցին վրայ նստին — որ ձեր կրած նեղութեանց վրայ ամենեւին խօսք մը չըրաւ ինծի, ես որ առանձին և միայնակ ըլլալով դրացիներուս հետ ծանօթանալու առիթ կը փնտռէի։ Երբ իմացայ որ պիտի կարենամ ձեզ օգտակար ըլլալ, տեսա՛ք ինչպէս փութացի այս առիթը չփախցընելով իմ ողջոյս ձեզ մատուցանելու։

Երկու երիտասարդները խոնարհութիւն ըրին։

Ֆրանց դեռ խօսք մը չկրցեր էր գտնել որ անոր ըսէ, և ինչ ընելիքը ինքն ալ չէր գիտեր. և որովհետև կոմսը՝ ճանչնալու կամք կամ ճանչցուելու փափաք մը չէր ցուցըներ, չէր գիտեր թէ ո՛ր և իցէ խօսքով մը անցեալին ակնարկութիւն մը ընել պէտք էր, եթէ՝ թողուլ որ ժամանակը ապառնիին մէջ իրեն նոր ապացոյցներ ներկայացընէ։

Տարակոյս չունէր որ նախընթաց իրիկունը օթեակին մէջ եղողը ան էր, սակայն հաստատապէս չէր գիտեր թէ անկէ առջի իրիկուան Գօլիզէի մէջ տեսածն ալ նոյնն էր։

Այսու ամենայնիւ որոշեց որ ամենեւին ուղղակի չյայտնուի անոր։ Մանաւանդ որ ինքը անոր գաղտնիքը իմանալով անոր վրայ գերազանցութիւն մը ունէր, իսկ ընդ հակառակն՝ կոմսը Ֆրանցին վրայ ամենեւին ազդեցութիւն չունէր, քանզի Ֆրանց պահելու բան մը չունէր։

Այսու ամենայնիւ ջանաց խօսակցութիւնը այնպիսի կէտի մը վրայ տանիլ, ուրկից իւր տարակոյսները պարզելու լոյս մը առնայ։

— Պ. կոմս, ըսաւ, ձեր կառքին և Ռոսբոլիի պալատին պատուհաններուն մէջ մեզի տեղեր շնորհեցիք. հիմա կրնա՞ք ըսել մեզ թէ ինչ կերպով կրնանք տէլ Բօբօլօ ըսուած հրապարակին մէջ ո՛ր և իցէ տեղ մը գտնել։

— Ա՛հ, այո՛, ստոյգ է, անմտադիր կերպով ըսաւ կոմսը և ուշադրութեամբ Մորսէրֆը դիտելով, կարծեմ թէ տէլ Բօբօլօ հրապարակին մէջ սպանութեան պէս բան մը տեղի պիտի ունենայ։

— Այո՛, պատասխանեց Ֆրանց՝ տեսնելով որ կոմսը ինքնին իւր բաղձացած խօսքը կը բանայ։

— Կեցի՛ք, կեցի՛ք, կարծեմ թէ երէկ իմ գործակատարիս ըսի՛ որ այս բանիս ետևէն ըլլայ, գուցէ այս փոքր ծառայութիւնն ալ ձեզ ընելու կարող ըլլամ։

Ձեռքը զանգակի մը չուանին երկնցուց և երեք անգամ քաշեց։

Անմիջապէս՝ քառասուն և հինգ կամ հիսուն տարեկան մարդ մը ներս մտաւ, որ Փրանզը քարայրին մէջ մտցընող մաքսանենգին կատարելապէս կը նմանէր, բայց գլինքը ձանձնալը ամենևին յայտնի չէր ըներ. անշուշտ այնպէս որոշած էին։

— Պ. Պէրթուչիո, ըսաւ կոմսը, երէկուան հրամանիս համեմատ՝ տէլ Բոքոչո հրապարակին վրայ պատուհան մը պտնելու ետևէ եղար։

— Այո՛, տէր իմ, պատասխանեց գործակատարը, բայց շատ ուշ էր։

— Ինչպէս, ըսաւ կոմսը յօնքը կիտելով, չըսի՞ քեզ որ հոն պատուհան մը կ'ուզեմ ունենալ։

— Ձեր Վսեմութեան պատուհանը պատրաստ է. Լոպանիէֆ իշխանին վարձածը ձեռք ձգեցի. բայց պարտաւորեցայ անոր համար վճարել հարիւր . . . ։

— Շատ աղէկ, շատ աղէկ, պ. Պէրթուչիո, խնայողութեանդ համրամասն պատմութիւններով պարոնները մի՛ ձանձրացըներ. պատուհանը ձեռք ձգեր ես, բաւական է այնչափը։ Տան հասցէն կառավարին տուր, և դուն սանդուխին վրայ սպասէ զմեզ տանելու համար։ Գնա՛ հիմա։

Գործակատարը խոնարհութիւն ըրաւ և քայլ մը առաւ մեկնելու համար։

— Կեցի՛ր, կրկնեց կոմսը, Բասթրինիին ըսէ՝ եթէ ծանուցագիր մը ստացած է, սպաննուելու անձանց ցուցակը թող ղրկէ մեզ։

— Հարկ չէ, կրկնեց Փրանզ ծոցէն իր չիշողատետրը հանելով. ես արդէն ծանուցագիրը տեսայ և օրինակեցի հոս, ահա տեսէք։

— Ուրեմն հարկ չէ, պարոն Պէրթուչիո, կրնաս մեկնիլ, բանի մը պէտք չունիմ։ Միայն թէ նախաճաշիկը պատրաստ ըլլալուն պէս՝ մեզ իմացուցէք։ Պարոններ, շարունակեց երկու բարեկամաց

հողմը դառնալով, լինձի հետ նախաճաշելով կ'ուզէք գիս պատուել։

— Բայց ստուգիւ, պարոն կոմս, ըսաւ Ալպէր, մեր կողմանէ զեղծում մ'է այս . . . ։

— Ոչ, ընդհակառակն, գիս խիստ կ'ուրախացընէք. ասոնց փոխարէնը օր մը մէկերնիդ կամ գուցէ երկուքնիդ ալ Բարիզի մէջ կը հատուցանէք լինձ։ Պարոն Պէրթուչիո, սեղանը երեք հոգւոյ համար դնել տուր։

Փրանզին ձեռքէն չիշողատետրը առաւ և կարդաց.

«Այսօր փետրուար 22ին, պիտի սպաննուին Անտրէա Ռոնտոլօ, որ Հռումի վերապատուելի Տօն Սէզար Թորլոնի կրօնաւորը սպաննելուն համար յանցաւոր ձանչցուած է, և Բէբբինօ՝ մականուանեալն Ծոզգա Բրիւորա, որուն Լուիճի Վանբա անուն գարշելի աւազակապետին և անոր խումբին մարդոցը մեղսակից ըլլալը ապացուցուած է . . . ։»

— Հըմ— ։ «Առաջինը լախտահար պիտի սպաննուի, և երկրորդը պիտի գլխատուի»։ Այո՛, կրկնեց կոմսը, իրօք առաջ ասանկ պիտի ըլլար, բայց կարծեմ թէ երէկուանէ՝ ի վեր արարողութեան ընթացքին մէջ փոփոխութիւն մը եղած պիտի ըլլայ։

— Ձեմ կարծեր, ըսաւ Փրանզ։

— Այո՛, երէկ իրիկուն Ռոսբիլիոզի կարգինալին տունն էի, որ դատապարտեալներէն մէկուն մահը յապաղելու խօսք կ'ըլլար։

— Անտրէա Ռոնտոլոյին, հարցուց Փրանզ։

— Ո՛չ . . . կրկնեց կոմսը անհոգութեամբ, միւսին . . . (և իր նայուածքը չիշողատետրին վրայ տարաւ՝ իբր թէ միւս բանտարկեալին անունը չիշելու համար) Բէբբինոյին՝ Ծոզգա Բրիւորա մականուանելոյն, որով գլխատութեան հանդէսը տեսնելէն պիտի զրկուիք, բայց լախտասպանութիւնը կը մնայ տեսնել, որ առաջին և երկրորդ անգամին խսկ խիստ հետաքրքրական հանդէս մ'է, խսկ միւսը, որ անշուշտ ձանչցած ըլլալու էք, խիստ պարզ և միօրինակ է, ամենևին անակնկալ բան մը չկայ։ Լախտակիրը չվրիպիր, չդողար, սխալ հարուած չիջեցըներ, երեսուն անգամ իր հարուածները չկրկներ, ինչպէս որ Շալէ կոմսին գլուխը կարող գինուորը ըրաւ, թէև Ռիշըլիէօ կարգինալը գոյէ մասնաւոր ատպարեր էր

քերն որ մէկ հարուածով ընկղմէ։ Ո՛հ, յաւելցուց կոմսը նախատական կերպով, ստուգիւ Եւրոպացիք իրենց անգթութեանցը մէջ դեռ տղայ տղայ են և կամ ծերացած, քանզի տանջանաց եղանակները դեռ չեն գիտեր։

— Ստոյգ է, պարոն կոմս, պատասխանեց Ֆրանց, կ'երևի թէ աշխարհիս զանազան ժողովրդոց մէջ գործածուած տանջանաց կերպերուն վրայ բաղդատական տեղեկութիւն մը ստացած էք։

— Գոնէ շատ քիչը տեսած չեմ, կրկնեց կոմսը պաղութեամբ։

— Եւ այս սոսկալի տեսարաններուն ներկայ գտնուելով զուարճութիւն կ'ըզգայք։

— Իմ առաջին զգացումս զզուանքն եղաւ, երկրորդը՝ անտարբերութիւն, և երրորդը՝ հետաքրքրութիւն։

— Հետաքրքրութիւն ըսիք, այդ ինչ սոսկալի խօսք էր։

— Ինչու. մարդս իր կենացը մէջ միայն մէկ մտածելու բան ունի, այն է մահը. ուրեմն չարժեր հետաքրքրութեամբ գիտնալ թէ ինչ զանազան կերպերով հոգին մարմինէն կրնայ բաժնուիլ, և ինչպէս՝ երկիրներուն բարուց, յօժարութեանց և մինչև սովորութեանց համեմատ՝ մարդիկ գոյութենէն ոչնչութեան տանող այս գերագոյն ճամբան կ'անցնին։ Ինծի համար մեծ օգուտ մը կը տեսնեմ այս բանիս մէջ. որչափ մեռեալներ տեսնէ մարդ, այնչափ մեռնելու երկիւղը կը վերնայ։ Ըստ իմ կարծեացս՝ մահը տանջանք մ'է և ոչ քաւութիւն։

— Ըսածնիդ աղէկ չհասկըցայ, ըսաւ Ֆրանց, պարզ խօսեցէք, կ'աղաչեմ, վասն զի ստուգիւ ձեր խօսքերը չափազանց հետաքրքրութիւնս կը շարժեն։

— Մտիկ ըրէք, ըսաւ կոմսը՝ իր դիմաց վրայ ատելութեան նշոյլ մը երևցընելով, այսպիսի պարագայի մէջ ուրիշի մը դէմքը արիւնով պիտի ներկուէր։ Եթէ մարդ մը անլուր տանջանքներով և անվերջ նեղութիւններով սպաննէ ձեր հայրը, մայրը, սիրուհին կամ այնպիսի մէկը, որուն մահը ձեր սրտին մէջ մշտնջենաւոր դատարկութիւն մը և արիւնալի վէրք մը կը թողու, կը կարծէք որ գլխատութեան մեքենային երկաթը մարդասպանին ծոծրակին և ուսի գլխաւոր գնդերին մէջ տեղէն անցնելով, և ձեզ տարիներով բարոյա-

կան վիշտեր պատճառողին քանի մը մանրերկրորդ ընական ցաւեր տալով՝ ոստիկանութեան ձեզ ըրած հատուցումը բաւական կրնա՞յ ըլլալ։

— Այո, գիտեմ, կրկնեց Ֆրանց, մարդկային արդարութիւնը անբաւական է մէկու մը կրած վշտացը մխիթարիչ ըլլալու. փոխանակ արեան՝ արիւն թափել կարող է, և ոչ ուրիշ բան. պէտք է հարցընել թէ անկէ զատ ինչ հատուցում կրնայ ընել։

— Ասկէ զատ՝ ձեզ ուրիշ էական պարագայ մը յառաջ բերեմ, կրկնեց կոմսը. մարդկային արդարութիւնը իր օրինաց համաձայն՝ մարդասպանը մահուամբ կը պատժէ. բայց աշխարհիս մէջ մարդուս աղիքը գալարող անթիւ եղեռնագործութիւններ չկա՞ն, որոց մարդկային արդարութիւնը ամենևին հոգը չըներ դէթ իր վրէժխնդրութեան այն անբաւական միջոցը 'ի գործ դնելու, որուն վրայ հիմա կը խօսէինք։ Մի՞թէ չկա՞ն այնպիսի յանցանքներ, որոց համար Տաճկաց ցիցերը, Պարսից կոշկոճը, Հնդկաց գալարեալ արջառաջիլերը խիստ թեթև պատիժներ ըլլան, և սակայն մարդկային արդարութիւնը անտարբերութեամբ անպատիժ կը թողու զանոնք . . . ։ Պատասխանեցէք, մի՞թէ այսպիսի յանցանքներ չկա՞ն։

— Այո, կրկնեց Ֆրանց, և զանոնք պատժելու համար է որ մենամարտութեան թոյլտուութիւն եղած է։

— Ո՛հ, յիրաւի, մենամարտութիւնը ծաղրելի միջոց մ'է մեր նպատակին հասնելու համար, եթէ մեր նպատակը վրէժխնդրութիւնն է։ Մարդ մը սիրուհիդ կը յափշտակէ, մարդ մը կինդ կը հրապուրէ, մարդ մը աղջիկդ կ'անպատուէ. վիշտերով, տառապանօք և թշնամանօք կը վարակէ ձեր բոլոր կեանքը, որ իրաւունք ունի սպասել երջանկութեան իր բաժնին, զոր Աստուած խոստացած է բոլոր մարդկային էակներու, և կը կարծէք թէ վրէժնիդ լուծա՞ծ էք, երբ ձեր միտքը տագնապեցընող և ձեր սիրտը յուսահատեցընող մարդուն կուրծքին սրոյ հարուած մը կամ գլխին գնտակ մը տեղաւորէք։ Է՛հ, ո՞ւր թողունք որ շատ անգամ հակառակորդնիդ մենամարտութեան մէջ յաղթող հանդիսանալու բաղդը կ'ունենայ, որով ժողովրդեան առջև կ'արդարանայ, և կերպով մը Աստուծոյ առջև կը քաւուի։ Ո՛չ, ո՛չ, շարունակեց կոմսը,

եթէ երբեք ես վրէժ մը ունենամ լուծելու, այդ կերպով չպիտի լուծեմ։

— Ուրեմն մենամարտութիւնը օրինաւոր չէ՞ք համարիր, ուրեմն դուք մենամարտութեան չէ՞ք ըներ, հարցուց Ըլպէր՝ կոմսին այսպիսի տարօրինակ դատողութեանը վրայ զարմանալով։

— Ինչո՛ւ չէ. իրարու միտքը հասկընանք. ստոր պատճառի մը համար, զոր օրինակ նախատինքի, սուտ հանելու, կամ ապտակի մը համար կը մենամարտիմ, և այն՝ բոլորովին անհոգութեամբ, քանզի մարմնամարզութեան յաջողութեամբս, և վտանգի մէջ ունեցած անհոգ սովորութեամբս հակառակորդս սպաննելու գրեթէ ապահով եմ։ Ո՛հ, ինչո՞ւ պիտի չմենամարտիմ. այսպիսի պատճառներու համար կը մենամարտիմ. բայց ծանր, խորունկ, անվերջ և մշտնջենաւոր վշտի մը փոխարէնը ճշգիւ կը հատուցանեմ, եթէ կարելի է՝ աչքի տեղ աչք և ակռայի տեղ ակռայ հանելով, ինչպէս կ'ըսեն Արևելցիք, որոնք ամեն բանի մէջ մեր ուսուցիչներն են։

— Բայց, ըսաւ Ֆրանց, ձեր դատին դատաւորն ու դահիճը դուք ինքնին ըլլալովնիդ դժուար կ'ըլլայ որ ամեն անգամ վտանգէ ազատիլ կարենաք։ Ատելութիւնը կոյր է, բարկութիւնը անխորհուրդ և վրիժառուն դառն ըմպանակ մը խմելու վտանգին մէջ կը գտնուի։

— Ստոյգ է այդ եթէ վրիժառուն ողորմելի և անյաջող մէկն է, բայց միլիոնատէր և յաջող մէկուն համար չէ ըսածնիդ։ Համարեցէք թէ վրիժառուն վտանգէ չազատի, բայց չէ՞ որ իր պատիժը այն տանջանքն է, որուն վրայ քիչ մը առաջ կը խօսէինք, և զոր Գաղղիոյ մարդասէր յեղափոխութիւնը քառաձիաձգութեան և անուայօշութեան փոխանակեց։ Վրէժը լուծող մարդուն համար ինչ է մահը։ Ստուգիւ գրեթէ կը ցաւիմ որ հաւանականաբար այն թշուառ Բէբբինոյին գլխատման հանդէսը, ինչպէս որ կ'ըսուի, տեղի պիտի չունենայ, որով գոնէ գլխատութեան տևողութիւնը կը տեսնէիք, և դուք ինքնին պիտի հաստատէիք ինձ թէ իրաւունք ունիմ եղեր։ Բայց ճշմարիտ կ'ըսեմ, պարոններ, բարեկենդանի առջի օրուան համար զարմանալի խօսակցութիւն մը ըրեր ենք. ո՞ւրկից բացուեցաւ այս խօսքը. ո՛հ, կը յիշեմ, պատուհանիս մէջ

տեղ մը խնդրեցիք, և ես ալ կը շնորհեմ ձեզ. բայց նախ սեղան նստինք, վասն զի ահա կերակուրին պատրաստ ըլլալը կ'իմացընեն մեզ։

Այս միջոցիս ծառայ մը սրահին չորս դռներէն մէկը բացաւ և զանոնք ճաշի հրաւիրեց։

Երկու երիտասարդները ոտք ելան և կերակուրի սենեակը անցան։

Սեղանին վրայ, որ խիստ ընտիր կերակուրներով զարդարուած էր, Ֆրանց իւր աչքը Ըլպէրին վրայ դարձուց, որպէս զի տեսնէ թէ ասպնջականին խօսքերը ինչ ազդեցութիւն ըրին անոր։ Սակայն կամ իւր սովորական անհոգութեամբը անոնց աղէկ ուշադրութիւն ըրած չէր, կամ մենամարտութեան համար կոմսին ցուցուցած զիջումին վրայ անոր հետ հաշտուած կ'երևէր, և կամ վերջապէս նախընթաց պատմութիւնները Ֆրանցին միայն ծանօթ ըլլալով կոմսին խօսքերը միայն անոր ազդեր էին և Ըլպէր ամենևին անոնց մտադրութիւն չըրեր էր, այլ ընդ հակառակն՝ չորս կամ հինգ ամսէ 'ի վեր Իտալական այսինքն աշխարհիս ամենէն գէշ կերակուրներու դատապարտուած մարդու մը պէս խնջոյքը կը պատուէր։

Իւր կոմսը իւրաքանչիւր պնակին կերակուրներէն հազիւ թէ իւր բերանին կը դպցընէր. իւր հիւրերուն հետ սեղան նստելով կարծես թէ միայն քաղաքավարութեան պարտք մը կատարելու համար էր, և անոնց մեկնելուն կ'սպասէր, որպէս զի տարօրինակ կամ մասնաւոր կերակուրներ բերել տայ իրեն համար։

Այս բանս ակամայ Ֆրանցին կը յիշեցընէր կոմսին՝ Կ... կոմսուհւոյն ազդած երկիւղը, և այս վերջինին անոր ուրուական մը ըլլալուն համար յայտնած համոզումը։

Նախաճաշէն ետև՝ Ֆրանց իւր ժամացոյցը նայեցաւ։

— Ի՞նչ կ'ընէք, ըսաւ կոմսը անոր։

— Ներեցէք մեզ, պարոն կոմս, պատասխանեց Ֆրանց, քանզի շատ գործեր ունինք կատարելու։

— Ի՞նչ գործ։

— Ծպտելու համար տակաւին զգեստ հոգացած չենք, և այսօր դիմակաւորութիւնը ստիպողական է։

— Հոգ մի՛ ընէք. կարծեմ թէ՝ տեղ Բոբոլօ հրապարակին վրայ

ժամեաւոր սենեակ մը ունինք. հոն ձեր ուզած հաղուստները բե-
րել կու տամ, և միատեղ կը դիմակաւորինք:

— ՍպանուԹեան հանդէսէն եաև, հարցուց Ֆրանղ:

— Անշուշտ. ինչպէս որ կ'ուզէք, առաջ, եաքը, կամ հանդէ-
սին ժամանակը:

— ՍպանուԹեան բեմի՞ն դիմացը:

— Անտարակոյս:

— Շնորհակալ եմ ձեր բարեբարուԹենէն, պարոն կոմս, ըսաւ
Ֆրանղ. ձեր կառքին և Ռոսբոլիի պալատին պատուհանին մէջ ձեր
շնորհած տեղերը կ'ընդունիմ, սակայն տէլ Ռոբոլօ հրապարակին
պատուհանին մէջ ինձի համար պատրաստած տեղերնիդ մերժելու
պիտի համարձակիմ:

— Բայց Ձշմարիտ կ'ըսեմ՝ խիստ հետաքրքրական հանդէս մը պի-
տի կորսընցընէք:

— Եաքը կը պատմէք ինձ, կրկնեց Ֆրանղ. ապահով եմ որ
ձեր բերանովը պատմուած պատմուԹիւնը հանդէսը տեսածիս չափ
ազդեցուԹիւն պիտի ընէ ինձ: Մանաւանդ որ արդէն շատ անգամ
սպանուԹեան հանդէսներու ներկայ գտնուելու ջանք ըրեր եմ, և
չեմ կրցած միաքս՝ի գործ դնել, և գուն, Ալպէր:

— ԳասԹէնի պլխատուԹիւնը տեսած եմ ես, պատասխանեց դե-
րակոմսը, սակայն գպրատունէն ելած օրս ըլլալուն՝ այն օրը քիչ մը
գինիէն գուարԹացած էի:

— Բարիզի մէջ այսպիսի հանդէս մը չտեսնելնիդ արդեօք չկրնար
ըլլալ որ օտար երկրի մէջ ալ չտեսնէք. մարդս բան սորվելու
համար կը Ճանապարհորդէ, և բան տեսնելու համար իւր տեղը կը
փոխէ: Մտածեցէք ուրեմն ԹէՀ ի՛նչ պիտի պատասխանէք երբ ձեզ
հարցընեն ԹէՀ՝ Հռոմի մէջ սպանուԹեան հանդէսը ի՛նչպէս կը կա-
տարուի, միԹէ չէ՞նք գիտեր պիտի ըսէք: Ասկէ զատ՝ կ'ըսեն ԹէՀ
դատապարտեալը անօրէն սրիկայ մ'է, որ գինքը զառիլի պէս մեծ-
ցընող բարի եկեղեցական մը կրակարանի երկաԹի հարուածներով
սպաններ է: Ի՛նչ զարմանալի բան, երբ եկեղեցական մը սպան-
նել ուզէ մարդ, կրակարանի երկաԹէ աւելի վայելուչ զէնք մը
կ'առնու ձեռքը, մանաւանդ երբ այս եկեղեցականը դուցէ մեր

հայրն է: ԵԹէ Սպանիա ՃանապարհորդուԹիւն ընէիք, դուք երբ
մրցումը պիտի տեսնէիք, այնպէս չէ՞: Ուրեմն համարեցէք ԹէՀ մեր
տեսնելու հանդէսը մրցում մի է. նախնի Հռոմայեցւոց կրկէսը կը
յիշէք, որու մէջ երկու հարիւր աւուրց և հարիւրի չափ մարդիկ
կ'ըսպանուէին. կը յիշէք այն ծափահարուԹիւն ընդող ուԹսուն հա-
զար հանդիսականները, այն Հռոմայեցի տիկիններըը, որոնք իրենց
աղջիկները ամուսնացընելու կը բերէին, և այն հրաշագեղ վեստա-
եան կուսանները, որոնք իրենց սպիտակ ձեռաց բոլԹովը նշան
մը կ'ընէին, որ կը նշանակէր ԹէՀ՝ Աղէ, ծուլուԹիւնը մէկդի Թո-
ղուցէք, և բերէք մեզ այն կիսամեռ անձը:

— Դուն պիտի երԹաս, Ալպէր:

— Ձշմարիտ ես պիտի երԹամ, սիրելիս. ես ալ քեզի պէս երկ-
մտուԹեան մէջէն, սակայն կոմսին պերձախօսուԹենէն համոզուեցայ:

— ԵրԹանք ուրեմն, քանի որ կ'ուզես, ըսաւ Ֆրանղ. սակայն
տէլ Ռոբոլօ հրապարակը երԹալու ժամանակնիս՝ Գորսօ փողոցէն
անցնելու կը փափաքիմ. միԹէ կարելի է այս բանս, պարոն կոմս:

— Ոտքով կարելի է, բայց կառքով՝ ոչ:

— Ուրեմն ես ոտքով կ'երԹամ:

— Գորսօ փողոցէն անցնելնիդ անհրաժեշտ պէտք է:

— Այո՛, բան մը նայելու եմ:

— Ուրեմն՝ Գորսօ փողոցէն կ'անցնինք. կառքը Պալուինօ փո-
ղոցէն տէլ Ռոբոլօ հրապարակը կը ղրկենք, որ հոն մեզ սպասէ.
ես ալ շատ գոհ եմ Գորսօ փողոցէն անցնելնուս, որպէս զի տես-
նեմ ԹէՀ տուած հրամաններս՝ի գործ դրուեցա՞ն:

— Ցէր իմ, ըսաւ ծառան դուռը բանալով, քահանայի զգես-
տով մէկը եկեր ձեզի հետ խօսիլ կ'ուզէ:

— Ո՛հ, այո՛, գիտեմ ի՛նչ կ'ուզէ, ըսաւ կոմսը: Պարոններ,
կը բաւեհաՃի՛ք սրահը անցնիլ. հոն սեղանին վրայ Հալանայի ըն-
տիր գլանիկներ պիտի գտնէք, ու ես վայրկենէ մը ձեր քովը կը
վերադառնամ:

Երկու երիտասարդները սրահը անցան, իսկ կոմսը վերստին ա-
նոնցմէ ներուժն խնդրելէն եաև՝ ուրիշ դուռէ մը աներևոյԹ եղաւ:

Ալպէր, որ մեծ ծխամոլ մ'էր, և Իտալիա գտնուելէն՝ի վեր բա-

ինծի սրճարանին գլանիկներէն զրկուիլը փոքր զոհողութիւն մը չէր համարեր, սիգարին մօտեցաւ և ընտիր գլանիկները տեսնելով ուրախութեան ձայն մը հանեց:

— Ըսէ, Ալպէր, հարցուց Փրանց, Մօնթէ-Քրիսթոյ կոմսին վրայ ի՞նչ կարծիք ունիս:



— Ի՞նչ կարծիք պիտի ունենամ, պատասխանեց Ալպէր՝ որ իր ընկերին այսպիսի հարցմանը վրայ յայտնի զարմացած կ'երևէր. կոմսը աննման անձ մ'է, իր տանը մէջ խիստ մեծ պատուով ընդունելութիւն կու տայ, շատ բան տեսած, շատ բան սորված է և ամեն բան աղէկ մտածելով կ'ընէ. Պրուտոսի պէս Ստոյիկեան դպրոցէն ելած է, և աւելցուց Ալպէր բերանէն դուրս ծուխի մրրիկ մը փչելով, որ ոլորելով դէպ 'ի առաստաղը ելաւ, ազնիւ գլանիկներ ունի:

— Բայց զարմանալի բան մը գիտցի՞ր:

— Ի՞նչ բան:

— Դիտեցի՞ր որ ուշադրութեամբ քեզ կը նայէր:

— Ինծի՞:

— Այո՛, քեզի:

Ալպէր մտածեց:

— Ո՛հ, ինչու կը զարմանաս, ըսաւ հառաչանք մը հանելով. գրեթէ տարի մ'է որ Բարիզէն բացակայ կը գտնուիմ, և զգեստներուս նայելով կոմսը զիս գաւառական մը կը կարծած է. կ'աղաչեմ, ուղղէ անոր սխալմունքը և առաջին առթիւ ըսէ թէ ըրած կարծիքը շիտակ չէ:

Փրանց ժպտեցաւ, և վայրկեան մը ետքը կոմսը ներս մտաւ:

— Ահա՛ եկայ, պարոններ, ըսաւ, և բոլորովին ձերն եմ. հարկ եղած հրամանները տուի. կառքը տէլ Բօբօլօ հրապարակը մեզ պիտի սպասէ, և մենք Գօրսօ փողոցէն անցնելով հոն պիտի երթանք: Այս գլանիկներէն առէք քանի մը հատ, պարոն տը Մօրսէրֆ:

— Շիտա՛կը՝ մեծ հաճութեամբ պիտի ընդունիմ, ըսաւ Ալպէր. քանզի ձեր Իտալական գլանիկները շատ անպիտան են: Բարիզ եկած ժամանակնիդ ատոնց փոխարէնը կը հատուցանեմ ձեզ:

— Եւ ես չեմ մերժեր ձեր առաջարկութիւնը. օր մը Բարիզ երթալու դիտաւորութիւն ունիմ, և որովհետև կը ներէք ինձ, նախ պիտի գամ ձեր դուռը զարնեմ: Քալեցէ՛ք, պարոններ, երթա՛նք, կորսընցնելու ժամանակ չունինք. կէսօրը կէս ժամ անցեր է:

Երեքնին ալ վար իջան:

Կառավարը իր տիրոջ վերջին հրամանները ընդունելով, Պապուլինօ փողոցէն աներևոյթ եղաւ, իսկ կոմսը և երկու երիտասարդները Սպանիոյ հրապարակէն և Ֆրաթինա փողոցէն անցան և ուղղակի Ֆիանոյի պալատին և Ռուսբոլիի պալատին հրապարակը մտան ։

Ֆրանց իր բոլոր նայուածքը այն վերջին պալատին պատուհաններուն վրայ տարաւ. Գոլիզէի վերարկուով մարդուն և Թրասթէվէրինոյին մէջ որոշուած նշանը չմոռցեր էր ։

— Որո՞նք են ձեր պատուհանները, հարցուց Ֆրանց կրցածին չափ բնական ձայնիւ մը ։

— Երեք վերջինները են, պատասխանեց կոմսը անհոգութեամբ մը, վասն զի այս հարցման ինչ նպատակ ունենալը չէր կրնար գուշակել ։

Ֆրանց անմիջապէս իր նայուածքը երեք պատուհաններուն վրայ դարձուց ։

Կողմնակի պատուհաններուն վարագոյրները Դամասկեան դեղին կերպասէ էին, իսկ մէջ տեղինը ճերմակ կերպասէ և վրան կարմիր խաչ մը կար ։

Վերարկուով մարդը Թրասթէվէրինոյին տուած խոստումը կատարեր էր, և այլ տարակոյս չկար, վերարկուով մարդը կոմսէն ուրիշ մէկը չէր ։

Երեք պատուհաններուն մէջ մարդ չկար ։

Սակայն ամեն կողմ պատրաստութիւններ կ'ըլլային. աթոռներ կը տեղաւորէին, օթեակներ կը կանգնէին, և պատուհաններ կը ձևացնէին ։

Մինչև որ Կապիտոլի զանգակին ձայնը չլսուէր, ամենէն դիմակաւոր մը պիտի չկրնար դուրս ելնել, և կառքերը պիտի չկրնային շրջագայիլ. սակայն յայտնի կ'երևէր որ ամեն պատուհաններու ետին դիմակաւորները և ամեն դռներու ետին կառքերը պատրաստ կեցած էին ։

Ֆրանց, Ալպէր և կոմսը շարունակ Գորսօ փողոցէն վար իջան ։

Ո՛րչափ տէլ Բոբոլօ հրապարակին կը մօտենային, այնչափ ժողովուրդը կը խռնէր, և այս բազմութեան գլխուն վրայէն երկու բարձր բաներ կ'երևէին, որոց մէկն էր հրապարակին կեդրոնը նշա-

նակող կոթողը, որուն վրայ խաչ մը կար, և անոր առջևը ճիշդ Պապուլինօ, Գորսօ և Ռիբէթթա փողոցներուն հաղորդակցութեան միջնատեղին՝ գլխատութեան բեմին երկու գլխաւոր գերանները կանգնեցուցած էին, որոց մէջ տեղը լախտին բոլորակ երկաթը կը շողար ։

Փողոցին անկիւնը՝ կոմսին գործակատարին պատահեցան որ իր տիրոջը կ'ըսպասէր ։

Պատուհանը, որուն բարձր գնով վարձուած ըլլալը կոմսը չուզեց իր հրաւիրեալներուն յայտնել, Պապուլինօ փողոցին և Մօնթէ Բինչիոյին մէջ տեղը եղած մեծ պալատին երկրորդ դստիկոնը կը գտնուէր ։

Կոմսը և երիտասարդները իրենց դահլիճը մտան. աթոռներուն վրայ խեղկատակի սպիտակ և կապոյտ ատլասէ վայելուչ հագուստներ դրած ։

— Ըստ որում հագուստներուն ընտրութիւնը ինծի թողուցիք, ըսաւ անոնց կոմսը, ես ալ ասոնք պատրաստել տուի ձեզի համար. վասն զի այս տարի ասկէ աւելի գեղեցիկ հագուստ չկայ ։

Ֆրանց կոմսին խօսքերուն անկատար կերպով ականջ դրաւ, և գուցէ այս նոր մարդասիրութեան յարգն ալ չճանչցաւ. վասն զի իր բոլոր ուշադրութիւնը տէլ Բոբոլօ հրապարակին ներկայացուցած տեսարանը և այս ժամուս անոր գլխաւոր զարդն եղող սոսկալի գործիքը գրաւեր էին ։

Գլխատութեան բեմին վրայ երկու մարդիկ իրենց նախաճաշիկը կը կատարէին, և որչափ որ Ֆրանց կրցաւ տեսնել՝ կերածնին հաց և խոզի երշիկ էր. ասոնցմէ մէկը գինիի շիշ մը առաւ և խմելէն ետև՝ իր ընկերին ներկայացուց զայն. այս երկու մարդիկը դահիճին օգնականներն էին ։

Ֆրանց անոնց այս ըրածը տեսնելով, զգաց որ իր քրտինքը հերոյ արմատներէն դուրս կը ծորէին ։

Նախընթաց իրիկունէն՝ դատապարտեալները Գարչէրի Նուօվէն Ս. Մարիա տէլ Բոբոլօ փոքր եկեղեցին փոխադրուելով, իւրաքանչիւր ոք երկու քահանաներէ շրջապատեալ՝ բոլոր գիշերը մատուռին մէջ անցուցին, որուն առջև պահնորդները ժամէ 'ի ժամ փոխուելով երթևեկութիւն կ'ընէին ։

Նիկոլեցիին դուռէն մինչև սպանութեան բեմը երկու կարգ հրացանակիրներ շարուած էին, և գրեթէ տասն ոտք լայնութեամբ ճամբայ մը բացեր էին. իսկ բեմին բոլորտիքը հարիւր քայլի չափ պարապ միջոց թողլով զինուորներով շրջապատած էին։

Հրապարակին մնացեալ կողմը մարդու և կնոջ գլուխներով կարծես թէ յատակուած էին։

Շատ կիներ իրենց զաւակները ուսերնուն վրայ բարձրացուցած էին։

Մօնթէ Բինչիօ հանդիսականներով խռնուած ընդարձակ ամֆիթատրոնի մը երևոյթը կ'ընծայէր։

Տէլ Պապուինօ և Ռիբէթթա փողոցներուն անկիւնը եղած եկեղեցիներուն պատշգամները առանձնաշնորհ հետաքրքիրներով լցուած էին, և գաւիթին սանդուխները՝ մակընթացութենէ դէպ 'ի վեր ծփող և գոյնզգոյն ալիքներու կը նմանէին։

Մարդ մը կանգնելու չափ պատերուն անհարթ մասերուն վրայ կենդանի արձաններ կանգնած էին։

Ուրեմն կոմսին ըսածը շիտակ էր. կենաց մէջ ամենէն հետաքրքրական բանը մահուան հանդէսն է։

Այս ահաւոր տեսարանին պահանջած լռութեան տեղ՝ ընդհանուր շշունչ մը կը լսուէր ժողովրդեան մէջ, այս շշունչը ծիծաղելու, ծաղրելու և ուրախութեան ձայներ էին։

Կոմսին ըսածին պէս՝ յայտնի կ'երևէր որ այս սպանութեան հանդէսը բոլոր ժողովրդեան համար ուրիշ բան չէր, բայց եթէ բարեկենդանի սկզբնաւորութիւնը։

Յանկարծ՝ իբր դիւթութեամբ բոլոր այս շշունչը դադրեցաւ, վասն զի Նիկոլեցիին դուռը բացուեցաւ ու կարգ մը քահանաներ, որոց առջևէն գլխաւորնին կը քալէր, ձեռքերնին վառուած մոմեր բռնած և մոխրագոյն հաստ կտաւէ երկար վերարկուներ հագած դուրս ելան, որոց միայն աչքերնուն տեղերը ծակուած էին։

Անոնց ետևէն բարձրահասակ մերկ մարդ մը կու գար, որ միայն կտաւէ վարտիք մը հագած էր, որուն ձախ կողմէն պատեանին մէջ պահուած մեծ դանակ մը կախուած էր, և աջ ուսին վրայ երկաթեայ ծանր լախտ մը կը կրէր։

Այս մարդը դահիճն էր։

Իր ոտքերը չուանով սրունքին կապուած էին։

Դահիճին ետևէն՝ կարգաւ կը քալէին նախ Բէբբինօ, և ետքը Անտրէա, որոց իւրաքանչիւրին երկու քահանայ ընկերացած էին։

Դատապարտելոց աչքը կապած չէին։

Բէբբինօ բաւական համարձակ քալուածքով կը յառաջանար. անտարակոյս իրեն համար եղած պատրաստութիւնը իմացած էր։

Իսկ Անտրէային իւրաքանչիւր թևէն մէկ մէկ քահանայ բռնած էին։

Երկուքնին ալ մերթ ընդ մերթ իրենց խոստովանահօր ներկայացուցած խաչելութիւնը կը համբուրէին։

Ֆրանց այս դատապարտեալները տեսնելով, իր սրնքայ ոյժը կորսնցուցեր էր։ Ալպէրին երեսը նայելով տեսաւ որ ան ալ իր շապիկին պէս դեղներ էր, և մեքենական շարժմամբ իր գլանիկը ձեռքէն նետեց, թէև դեռ անոր կէսը ծխած էր։

Միայն կոմսը անզգայ կ'երևէր, բայց իր այտերուն կապարագոյն դեղնութեանը վրայ կարծես թէ թեթև կարմրութիւն մը պատեր էր, և արիւնը հոտոտող վայրագ անասունի մը պէս՝ իր քթին ծակերը կը բացուէին. իր շրթունքը քիչ մը իրարմէ անջատուելով, սպիտակ ակռաները կ'երևցընէին, որոնք շնագայլի ակռաներուն պէս փոքր և սուր էին։

Սակայն՝ իր դիմաց վրայ այնպիսի ժպտախառն քաղցրութեան նշաններ կ'երևէին, որ Ֆրանց երբէք անոր վրայ տեսած չէր. և իր սև աչքերը քաղցրահայեաց և փայլուն կ'երևէին։

Այսու ամենայնիւ՝ երկու դատապարտեալները կառափնարանին կը մօտենային, և որչափ կը յառաջանային, այնչափ անոնց դիմաց գծագրութիւնը աւելի որոշ կը տեսնուէր։

Բէբբինօ քսան և հինգ կամ քսան և վեց տարեկան, արեգակնակէզ գոյնով, համարձակ և վայրենի նայուածքով գեղեցիկ պատանի մ'էր։

Գլուխը վեր բռնած էր և կարծես օդը կը հոտոտէր, որպէս զի տեսնէ թէ ո՛ր կողմէն իր ազատիչը պիտի գայ։

Անտրէա գէր և կարճ մարդ մ'էր. իր վատ անգութ դէմքէն

քանի տարեկան ըլլալը յայտնի չէր. սակայն գրեթէ երեսուն տարեկան ըլլալ պէտք էր։

Բանտին մէջ թողուցեր էր որ մօրուքը մեծնայ։ Գլուխը իր ուսերուն մէկուն հակած էր. սրունքները կը կորանային. իր բոլոր անձը մեքենական շարժման մը կը հնազանդէր, որուն մէջ կամելու ոյժը կորսնցուցած էր։

— Կարծեմ, ըսաւ Ֆրանց կոմսին, մեզ այնպէս ըսին թէ միայն մէկ հոգի պիտի սպաննուի։

— Սուտ ըսած եմ, պատասխանեց կոմսը պաղութեամբ։

— Սակայն դատապարտեալները երկու հոգի են։

— Այո՛. բայց այս դատապարտեալներէն մէկը մահուան կը մօտենայ, և միւսը տակաւին երկար տարիներ ունի ապրելու։

— Ինծի այնպէս կ'երևի որ եթէ ազատութեան հրաման մը պիտի գայ՝ մինչև հիմա հասնիլ պէտք էր։

— Ահա՛ կու գայ. տեսէ՛ք, ըսաւ կոմսը։

Իրօք՝ Բէբբինոյի գլխատուայրին առջևը հասած միջոցին, քահանայ մը որ ուշացած կ'երևէր, անարգել զինուորներուն շարքը ճեղքեց անցաւ, և մինչև քահանայից գլխաւորին քովը յառաջանալով չորս ծալլուած թուղթ մը ներկայացուց անոր։

Բէբբինոյի հրավառ նայուածքը այս եղածներէն բան մը անգամ կորսնցուցած չէր. աւագերէցը թուղթը բացաւ, կարդաց զան և ձեռքը վերցնելով,

— Օրհնեա՜լ ըլլայ Աստուած, փառաբանեալ ըլլայ Աստուած, պոռաց բարձր և յստակ ձայնիւ։ Դատապարտելոց մէկը պիտի ազատուի։

— Ազատութի՜ւն, պոռաց ժողովուրդը միաբերան, դատապարտելոց մէկը ազատ է։

Այս ազատութեան խօսքին վրայ Անտրէա կարծես թէ կենդանութիւն առաւ և գլուխը բարձրացուց։

— Ո՞վ պիտի ազատուի, պոռաց։

Բէբբինօ անշարժ, անմռունչ և ոգեսպառ կ'ըսպասէր։

— Ռոգգա Բրիօրա մականուանեալ Բէբբինոյին կենաց ազատութիւն կը շնորհուի, պոռաց աւագերէցը և տոմսակը հրացանակրաց

հրամանատար հարիւրապետին տուաւ, որ կարդալէն ետև՝ վերադարձուց զայն աւագերէցին։

— Բէբբինօն ազատուի՜, պոռաց Անտրէա իր թմրութենէն բոլորովին սթափելով. ինչո՞ւ համար ան պիտի ազատուի ու ես պիտի չազատուիմ. մենք միատեղ պիտի մեռնէինք. ինծի խոստացան որ ան ինձմէ առաջ պիտի մեռնի, զիս առանձին սպաննելու իրաւունք չունիք. ո՛չ, չեմ ուզեր առանձին մեռնիլ, չեմ ուզեր։

Այս ըսելով երկու քահանաներուն ձեռքէն ինքզինքը ազատեց, և իր ձեռաց կապերը կտրտելու համար ինքզինքը կը սեղմէր և անօգուտ ջանքեր կ'ընէր։

Դահճին երկու օգնականներուն նշան ըրաւ, որոնք բեմէն վար ցատկեցին և դատապարտեալը բռնեցին։

— Ի՞նչ կայ հոն, հարցուց Ֆրանց կոմսին։

Վասն զի բոլոր այս խօսքերը գաւառական Հռոմայեցի լեզուով ըլլալով, շատ աղէկ չհասկցեր էր։

— Չհասկցա՞ք, ըսաւ կոմսը. մեռնելու դատապարտեալ մարդկային արարածը կատղեր է տեսնելով որ իր նմանը իր հետը պիտի չմեռնի, և եթէ զինքը ազատ թողուին, իր եղունգներովն ու ակռաներովը պիտի պատառէր զան, որպէս զի իր ընդունելու մահուան զան ալ մասնակից ընէ։ Ո՜վ մարդիկ, վատ մարդիկ, ազգ կոկորդիլոսաց, ինչպէս կ'ըսէ Գարլ Մօր, պոռաց կոմսը՝ իր երկու բռունքը բոլոր ժողովրդեան ցուցնելով, ձեր ընթացքը անծանօթ չէ ինծ, և ամեն ժամանակ դուք ձեզի արժանի էք։

Անտրէա և դահճին երկու օգնականները աւազին մէջ գլորեր էին, և դատապարտեալը անդադար կը պոռար թէ՝ «Պէտք է որ ան ալ մեռնի, այո՛, կ'ուզեմ որ մեռնի. զիս առանձին սպաննելու իրաւունք չունիք»։

— Նայեցէք, նայեցէք, շարունակեց կոմսը երկու երիտասարդաց ձեռքէն բռնելով, նայեցէք, ճշմարիտ շատ զարմանալի անցք մ'է, այն մարդը իր բաղդին հնազանդելով գլխատուայրը կը յառաջանար և թէպէտ իբրև վատ բայց վերջապէս առանց ընդդիմութեան և առանց ձայն մը հանելու՝ մեռնելու կ'երթար. գիտէ՞ք ինչ բան էր զինքը քաջալերողը, գիտէք վերջապէս թէ ինչ պատճա-

ռաւ իւր տանջանաց կը համբերէր. վասն զի ուրիշ մը իւր օրհասին մասնակից պիտի ըլլար, վասն զի ուրիշ մը իւր հետը պիտի մեռնէր, ըստ որում ուրիշ մէկը իրմէ առաջ պիտի մեռնէր: Երկու սչխար կամ երկու եզ սպանդանոցը տարէք, և անոնց մէկուն իմացուցէք որ իւր ընկերը պիտի չմեռնի, սչխարը ուրախութենէն պիտի մայէ, և եզը զոհունակութենէն պիտի բառաչէ. բայց մարդս, մարդս՝ զոր Աստուած իւր պատկերին նման ստեղծեց, մարդս՝ որուն Աստուած իրրև առաջին, միայնակ և դերագոյն օրէնք՝ ընկերասիրութիւն պատուիրեց, մարդս՝ որուն Աստուած ձայն տուած է որ իւր միտքը յայտնէ, երբ իւր ընկերին աղատութիւը լսէ, ինչ պիտի ըլլայ իւր առաջին աղաղակը. — Հայհոյութիւն: Ուրեմն կեցցէ մարդս, որ բնութեան հրաշալիքը և արարածոց թագաւորն է:

Այս ըսելով կոմսը սկսաւ բարձրաձայն ծիծաղիլ, բայց այնպիսի սոսկալի կերպով, որ այսպէս ծիծաղելուն պատճառը իւր շատ նեղութիւններ կրած ըլլալը կը յայտնէր:

Այսու ամենայնիւ գլխատավայրին մրցումը կը շարունակուէր, և ստուգիւ սոսկալի տեսարան մը կ'ընծայէր:

Երկու օդնականները Ընտրէան գլխատութեան բեմին վրայ հանելու կը ջանային, և բոլոր ժողովուրդը միաձայն «Ի մահ, ի մահ» կը պոռային:

Ֆրանց դէպ ի ետև քաշուեցաւ, բայց կոմսը անոր թևէն բռնեց և պատուհանին առջևը բերաւ:

— Ինչ կ'ընէք, կ'աղաչեմ, ըսաւ կոմսը. ալ տեղը հասաւ, վախ չկայ: Եթէ ձայն մը լսէիք թէ «Սպաննեցէք կատաղի շունը» միթէ ձեր հրացանը առնելով փողոցը պիտի չվազէիք և գնտակը անոր ուղղելով անխնայ պիտի չսպաննէիք այն թշուառ անասունը որ վերջապէս ուրիշ յանցանք չունի, բայց եթէ ուրիշ շունէ մը խածուած ըլլալը և իւր ընդունածը հատուցանել ուզելը. և դուք հիմա կը մեղքընաք այնպիսի մարդ մը, որ ուրիշ մարդէ մը խածուած չէ, այլ ընդ հակառակն ինքը իւր բարերարը սպաններ է, և այս վայրկենիս իսկ ուրիշը սպաննել չկրնալով, ըստ որում ձեռքերը կապուած են, իւր դերութեան և թշուառութեան ընկերին մահը բռնութեամբ տեսնել կ'ուզէ: Բայց այսպէս չպիտի ըլլայ, նայեցէք, նայեցէք:

Ֆրանց այս սոսկալի տեսարանին վրայ այլ յայտնուած էր:

Դահիճին երկու օգնականները դատապարտեալը գլխատութեան բեմին վրայ հաներ էին, և անոր հանած ձայներուն, ջանքերուն և խածուածոյը ընդդիմանալով պարտաւորեր էին զան որ ծնկան վրայ պայ:

Այն միջոցին՝ դահիճը իւր լախտը վեր բարձրացուցած անոր մէկ կողմը կանգներ էր. նշան մը ընելով՝ երկու օգնականները մէկ կողմ քաշուեցան:

Դատապարտեալը ուզեց ոտք ելնել, բայց լախտը անոր ձախ քունքին վրայ իջնելով ժամանակ չտուաւ:

Հարուածեալը կամաց և խորունկ ձայն մը հանելով՝ եղան պէս երեսն ի վայր դետինը իյնալէն ետև՝ ընդհարմամբ կռնակին վրայ դարձաւ:

Այն ատեն՝ դահիճը լախտը ձեռքէն թողուց, և մէջքէն դանակը հանեց, մէկ հարուածով պարանոցը ծակելէն ետև՝ փորին վրայ ելաւ կանգնեցաւ և ոտքերովը սկսաւ կոխկռտել:

Իրաքանչիւր ձնշման՝ դատապարտեալին պարանոցէն արեան ցայտում մը կը բխէր:

Այս անգամ Ֆրանց չկրցաւ ինքզինքը զսպել. ետ քաշուեցաւ, և կէս նուաղեալ թևաթոռին վրայ ընկաւ:

Ալեր աչքերը գոց հոն կեցաւ, բայց ան ալ պատուհանին վարագոյրները գրկեր էր, եթէ ոչ՝ անշուշտ գետինը պիտի իյնար:

Իսկ կոմսը ոտքի վրայ կեցաւ և չար հրեշտակին պէս յաղթող կ'երևէր:



ԳԼՈՒԽ ԺԳ

ՀՌՈՄԻ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Երբ Ֆրանց իր զգայութիւնը ամփոփեց, տեսաւ որ Ըլպէր բաժակ մը ջուր կը խմէր, որուն խիստ պէտք ունենալը իր դեղնութիւնը կը յայտնէր, և կոմսը սկսեր էր խեղկատակի հագուստը հագնիլ։

Իր նայուածքը մեքենայէս հրապարակին վրայ դարձուց։

Գլխատութեան բեմը, դահիճներն ու զոհերը աներևոյթ եղեր էին, միայն ժողովուրդը մնացեր էր հոն, որ ուրախ և գործի մէջ կ'երևէր և բարձր ձայներ կը հանէր։

Մոնթէ-Չիթօրիոյի զանգակը, որ միայն Պապին մահուան և դիմակաւորութեան սկսելուն համար կը զարնուի, բոլոր ուժգնութեամբ կը հնչեցնէին։

— Ինչ կայ, հարցուց Ֆրանց կոմսին, ինչ պատահեցաւ։

— Ոչինչ, ամենևին բան մը պատահած չէ, ըսաւ կոմսը. այլ ինչպէս որ կը տեսնէք, բարեկենդանի սկզբնաւորութեան նշանը կը տրուի. հագուինք ուրեմն։

— Ստուգիւ, պատասխանեց Ֆրանց, այն ահռելի տեսարանէն միայն երազի մը հետքը մնացեր է։

— Իրօք երազ էր տեսածնիդ և կամ ցնորքի մը մտատանջութիւնը։

— Այո, բայց դատապարտեալը։

— Ան ալ երազ մ'էր, միայն թէ քնացած մնաց, իսկ դուք արթնցաք, և ով կրնայ ըսել թէ ձեր երկուքէն ով աղատած է։

— Բայց Բէբբինօն ինչ եղաւ, հարցուց Ֆրանց։

— Բէբբինօն խելացի բայց ամենևին անձնասիրութիւն չունեցող երիտասարդ մ'է, որ մարդոց սովորութեան հակառակ՝ որոնք կը նեղանան երբ իրենց ուշադրութիւն չըլլուիր, գոհ ըլլալով որ ամենուն ուշադրութիւնը իր ընկերին վրայ դարձած է, անոնց այս

զբաղման միջոցին՝ բազմութեան մէջ մտաւ և աներևոյթ եղաւ, առանց իրեն ընկերացող քահանաներէն շնորհակալ ըլլալու։ Ստուգիւ մարդս խիստ ապերախտ և խիստ եսասէր կենդանի մ'է . . . ։ Բայց հագուեցէք, պարոն. ահա Պ. տը Մորսէրֆ ձեզ օրինակ կ'ըլլայ։

Իրօք՝ Ըլպէր իր սև սռնազգեստին և փայլուն կօշկաց վրայէն մեքենայէս մետաքսէ սռնազգեստը կը հագնէր։

— Համարձակ ըսէ, Ըլպէր, հարցուց Ֆրանց, խենթութիւններ ընելու յօժարութիւն ունի՞ս։

— Ո՛չ, ըսաւ, բայց ստուգիւ այնպիսի տեսարանի մը ներկայ գտնուելուս գոհ եմ, և հիմա կը հասկընամ թէ Պ. կոմսը ինչ ըսել կ'ուզէր ասկէ առաջ, իրօք երբ այնպիսի տեսարան մը տեսնելու սովորի մարդ, իր սիրտը ուրիշ կը յուզուի։

— Մանաւանդ որ միայն այն ժամանակը կրնանք մարդոց բարքը ճանչնալ, ըսաւ կոմսը. կառափնարանի սանդուղին առաջին աստիճանին վրայ մահը մեր բոլոր կենաց մէջ կրած դիմակնիս վար կ'առնու, և մեր ճշմարիտ դէմքը երևան կ'ելնէ։ Ստոյգը խոստովանելով Անդրէա հաճոյական դէմք մը չունէր . . . այլ ժանտատեսիլ սրիկայի մը կը նմանէր . . . ։ Բայց հագուինք, պարոններ, հագուինք։

Ծաղրելի բան մը պիտի ըլլար եթէ Ֆրանց կնոջ մը պէս քծնէր և իր երկու ընկերներուն օրինակին չհետևէր։ Ուստի իրեն համար պատրաստուած հագուստը հագաւ, և դիմակը երեսը անցուց։

Երեքնին ալ վար իջան. շաքարեղէններով և ծաղկի փունջերով լեցուն կառքը դրան առջև կ'ըսպասէր, որուն մէջ մտնելով կառքերուն կարգը մտան։

Դժուար է այս տօնախմբութեան և ասկէ քիչ մ'առաջ տեղի ունեցած հանդէսին մէջ եղած ընդդիմապատկերին վրայ կատարեալ գաղափար մը ունենալ։

Մահուան սխուր և լռիկ տեսարանին տեղ՝ տէլ Բօբօլօ հրապարակը սպանդարամետական տօնախմբութեան խեղկատակ և աղմկայոյզ տեսարանը կը ներկայացնէր։

Խումբ խումբ դիմակաւորներ ամեն կողմերէն կը յորդէին, ամեն դռներէն դուրս կ'ելնէին և ամեն պատուհաններէն կ'իջնէին։

Ամէն փողոցներուն անկիւններէն խեղկատակներով, հապիտներով, կնքղաւոր միազգեստներով, մարքէզներով, Թրասմէլվէրնոցիներով, ծաղրածուներով, ասպետներով և գիւղացիներով լցուած կառքեր դուրս կ՚ելնէին։ Ամէն կողմ ուրախութեան ձայներ կը լսուէին, և իրարու ալիւրով լեցուն հաւկիթներ, շաքարեղէններ և ծաղկի փունջեր կը նետէին. խօսքերով և շարժումներով իրարու կատակներ կ՚ընէին, հոգ չէր եթէ իրենց դիմացինը բարեկամ ըլլար և եթէ օտարական, եթէ ծանօթ և եթէ անծանօթ, և ամենևին մէկը չէր նեղանար, այլ ծիծաղելէն ուրիշ բան չէր ըներ։

Ֆրանց և Ալպէր այնպիսի մարդիկ էին, որոնք զգացած սաստիկ վիշտերնին սփոփելու և զիրենք զբօսցնելու համար տօնախմբութեան մը կը տարուէին, և մինչև որ չխմեն և չարբենան՝ անցեալին և ներկային մէջ ստուար վարագոյր մը ըլլալը չեն զգար։

Քիչ մը առաջ տեսածնին միշտ աչքերնուն առջին կը տեսնէին և սրտերնուն մէջ կ՚ըզգային։

Մերձակայ կառքէ մը Մորսէրֆին նետուած բուռ մը շաքարեղէնները զինքը և իր ընկերները փոշիով ծածկելէն ետև՝ հարիւրաւոր դնդասեղներու հարուածի պէս իր պարանոցը և երեսին դիմակէն չպատսպարուած մասը հարուածելով, զրգռեցին զինքը դիմակաւորներուն ընդհանուր մրցման մէջ մտնիլ։

Ուստի կառքին մէջ ելաւ կանգնեցաւ, ձեռքը պարկերուն մէջ խոթեց, ու լիաբուռն դուրս հանելով, իր յաջողութեամբը և բոլոր ուժովը հաւկիթներ և շաքարեղէններ նետեց իր դրացիներուն։ Այն ատեն՝ մրցումը սկսաւ։

Այս տարօրինակ, աղմկալի և յիմարական տեսարանը երկու երիտասարդներուն այնչափ ազդեր էր, որ կէս ժամ առաջ տեսածնուն յիշատակը բոլորովին մտքերնէն ջնջուեցաւ։

Իսկ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, ինչպէս ըսինք, ամենևին տպաւորութիւն մը զգացած չէր երբեք։

Իրօք՝ ընթերցողը կրնայ հանդիսիս շքեղութեանը վրայ գաղափար մը ունենալ եթէ միտքը բերէ այն մեծ և գեղեցիկ Գորսօ փողոցը, որուն մէկ ծայրէն միւսը զարդարեալ պատշգամներով և պատուհաններով քառայարկ կամ հնգայարկ պալատներ պատած են։

Այն պատշգամներուն և պատուհաններուն մէջ աշխարհիս չորս կողմերէն եկած երեք հարիւր հազար Հռոմայեցի, Իտալացի և օտարական հանդիսականներ կային. թէ ծննդեամբ, թէ հարստութեամբ և թէ տաղանդով ազնուականները հոն գումարուած էին։ Հրաշագեղ կիներ այս հանդիսին ազդեցութենէն շարժեալ՝ պատշգամներէն և պատուհաններէն դուրս կը հակէին, և իրենց նուիրուած շաքարեղէններու փունջերէն կարկուտի նման անցնող կառքերուն վրայ կը թափէին։ Մթնոլորտը թափուած շաքարեղէններէն և վեր նետուած ծաղիկներէն ծածկուած էր։ Փողոցներուն քարայատակին վրայ՝ զուարթ, խեղկատակ և անվերջ բազմութիւն մը զանազան խելայնոր հագուստներ հագած էին. ժուռ եկող մեծայաղթ կաղամբներ, մարդու մարմնի վրայ գոմէշի մռնչող գլուխներ, և առջևի ոտից վրայ քալող շուներ կ՚երևէին։

Կառքը երկրորդ անգամ դառնալուն՝ կոմսը կեցընել տուաւ զայն, և իր ընկերներէն բաժնուելու ներումն խնդրելով կառքը անոնց հրամանին յանձնեց։

Ֆրանց բոլորտիքը դիտելով տեսաւ որ Ռոսբոլիի պալատին դիմացը կը գտնուէին, և կարմիր խաչով Ճերմակ կերպասէ վարագոյր ունեցող միջին պատուհանին մէջ կապոյտ զգեստով դիմակաւոր մը կը գտնուէր, զոր Ֆրանցին երևակայութիւնը Արժէնթինա թատրոնի գեղեցիկ Յոյն կինը կը ներկայացընէր։

— Պարոններ, ըսաւ կոմսը կառքէն վար իջնելով, երբ շրջագայութենէ ձանձրանաք, և վերստին հանդիսատես ըլլալ ուզէք, գիտէք որ պատուհաններուս մէջ տեղ ունիք։ Այսու ամենայնիւ իմ կառավարս, կառքս և ծառաներս ձեր հրամանին կը յանձնեմ։

Մոռցանք ըսելու որ կոմսին կառավարը սև արջի մորթ հագած էր, և կառքին ետևը կանգնող երկու սպասաւորները կանաչ կապիկի Ճիշդ կերպարանքը մտած էին ու դէմքերնին անցնողներուն ծումկելու համար ձգտալար դիմակներ կը կրէին։

Ֆրանց կոմսին մարդասիրական առաջարկութենէն շնորհակալ եղաւ. իսկ Ալպէր սիրահարական շարժումներ ընելու և ծաղկի փունջեր նետելու զբաղած էր կառքի մը մէջ լցուած Հռոմայեցի գեղջկուհիներու, որոնք կառքերուն կարգին հնազանդելով իրենց կառքն ալ կեցուցած էին։

Դժբաղդաբար՝ կառքերը իրենց ձանրան շարունակեցին, և երկու երիտասարդներուն կառքը դէպ ’ի տէր Բոբոլօ հրապարակը իջած ժամանակը՝ Ալպէրի ուշադրութիւնը պրատող կառքը դէպ ’ի Վենետիկի պալատը կ’ուղղուէր։

— Ո՛հ, բարեկամ, ըսաւ Ալպէր Ֆրանզին, չտեսար . . . ։

— Ի՞նչ բան, հարցուց Ֆրանզ։

— Հռոմայեցի գեղջկուհիներով լցուած կառքը։

— Ո՛չ։

— Ճշմարիտ, հրաշագեղ կիներ պիտի ըլլան։

— Ափսոս որ դիմակաւորեալ ես, սիրելիդ իմ Ալպէր, սիրահարական ձախողութեանդ վրէժը լուծելու ժամանակն էր։

— Ո՛հ, պատասխանեց Ալպէր կէս մը ծիծաղելով և կէս մը համոզուելով, կը յուսամ թէ բարեկենդանը չանցած վրէժս պիտի լուծեմ։

Ալպէրի այս յուսոյն հակառակ՝ բոլոր օրը առանց ուրիշ բան մը պատահելու անցաւ. միայն երկու կամ երեք անգամ նոյն հռոմայեցի գեղջկուհիներուն կառքին հանդիպեցան։

Այս հանդիպմանց մէկուն մէջ՝ կամ դիպուածով և կամ դիտմամբ Ալպէրի դիմակը երեսէն ընկաւ, և այս առիթը չփախցընելով, երիտասարդը մնացեալ ծաղիկները անոնց կառքին մէջ նետեց։

Գեղջկուհիներու սիրաբոյր հպարտութիւն տակէն Ալպէրի դուշակած հրաշագեղ կիներէն մէկը անտարակոյս այն սիրահարական շարժմանց վրայ ’ի դուխ շարժեր էր. քանզի երկու երիտասարդաց կառքը անցնելուատեն՝ մանիշակի փունջ մը նետեց։

Ֆրանզ թողուց որ Ալպէր յափշտակէ զայն, քանզի իրեն համար նետուած կարծելու պատճառ մը չունէր։

Ալպէր անարգել զայն իւր կոճակին օղակին մէջ տեղաւորեց, և կառքը յաղթութեամբ իւր ճանբան շարունակեց։

— Ազէկ, ըսաւ Ֆրանզ, կը տեսնեմ որ դուրծդ յարմարցուցիր։

— Ուղածիդ չափ ծիծաղէ, պատասխանեց Ալպէր. բայց տուր դիւ կարծեմ թէ իրօք յաջողեցայ, ուստի այս փունջը միշտ վրաս պիտի պահեմ։

— Անշուշտ, կրկնեց Ֆրանզ ծիծաղելով. չէ որ ծանօթանալու նշան մ’է։

Սակայն կատակը շատով տուգութեան կերպարանք մը առաւ, վասն զի Ֆրանզ և Ալպէր գեղջկուհիներուն կառքին դիմացը վերստին եկած ատեննին՝ Ալպէրին փունջը նետող կինը զայն անոր կոճակներուն օղակին վրայ տեսնելով՝ սկսաւ ձեռքերը իրարու զարնել։

— Կեցցէս, բարեկամ, կեցցէս, ըսաւ Ֆրանզ. գործդ սքանչելի կերպով կը յաջողի. ես երթամ, և դուն միայնակ մնալ կ’ուզես։

— Ո՛չ, պատասխանեց Ալպէր, շատ չշատպինք. չեմ ուզեր անխոհեմ ընթացք մը բռնել, և դիւրութեամբ խարուիլ։ Եթէ պզեցիկ գեղջկուհին մեզ ծանօթանալու փափաք ունի, վաղը կրնանք դինքը դտնել և կամ ինքը կրնայ զմեզ դտնել. այնատեն գիւրաձանձնալով՝ ինչ ընթացք բռնելիքս կ’որոշեմ։

— Ստուգիւ, սիրելիդ իմ Ալպէր, Մենատորի չափ խոհեմ, և Ոդիսևսի չափ հանճարեղ ես եղեր. և եթէ Պրիէոտ գքեզ որ և է կենդանիի մը կերպարանափոխէ, խնդստ յաջողակ և զօրաւոր մէկը պիտի ըլլայ։

Ալպէր իրաւունք ունէր։

Գեղանի անծանօթ կինը իւր խորամանկութիւնը նոյն օրը յառաջ տանելու դիտաւորութիւն չունէր. քանզի թէև երիտասարդները իրենց կառքովը քանի մը շրջան ալ ըրին, սակայն գեղջկուհիներուն կառքը չտեսան. անտարակոյս կողմնակի փողոցներուն մէկէն աներևոյթ եղեր էր։

Այն ատեն՝ Ռոսբոլիի պալատը վերադարձան, բայց կոմսը այն կապոյտ զգեստով դիմակաւորին հետ աներևոյթ եղեր էր։

Գեղին վարագոյրով պատուհաններուն մէջ դեռ նստած էին այն անձերը, որոնք անշուշտ կոմսը հրաւիրած էր։

Այս միջոցիս՝ բարեկենդանի սկզբնաւորութեան համար հնչուած զանգակը վերստին հնչուեցաւ, որպէս զի իւրաքանչիւր ոք իւր տունը վերադառնայ։

Դորսօ փողոցին մէջ կառքերուն բռնած կարգը խանգարեցաւ, և մէկ վայրկեանի մէջ ամեն կառքերը կողմնակի փողոցները մտնելով աներևոյթ եղան։

Երկու երիտասարդներուն կառքը Բիթիի պալատին առջևէն

անցնելով, Սպանիոյ հրապարակը մնաւ և իրենց պանդոկին առջևը կեցաւ։

Բասթրինի պանդոկապետը դուռը վազելով իւր հիւրերը ընդունեց։

Ֆրանզին առաջին հոգն եղաւ կոմսին ուր ըլլալը հարցնել, և աւելի կանուխ չհասնելուն համար իւր ցաւը յայտնել. բայց Բասթրինի ապահովցուց զանոնք ըսելով թէ Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ուրիշ կառք մը ապսպրած էր, և այն կառքը ժամը չորսին Ռոսբոլիի պալատը գացեր էր զինքը առնելու։

Ասկէ զատ՝ կոմսը Արճէնթինա թատրոնի իւր օթեակին բանալին պանդոկապետին յանձներ էր որ երկու բարեկամաց տայ։

Ֆրանզ Ալպէրի միտքը հասկընալ ուզեց, բայց Ալպէր թատրոն երթալու մտածելէն առաջ կ'երևէր թէ՝ ի գործ դնելու ուրիշ աւելի կարևոր գործեր ունէր։

Ուստի փոխանակ պատասխան տալու՝ Բասթրինիին հարցուց թէ դերձակ մը կրնա՞յ գտնել։

— Ինչ ընելու համար դերձակ մը կ'ուզէք, հարցուց պանդոկապետը։

Վաղուան համար կարելի եղածին չափ վայելուչ երկու հագ Հռոմայեցի դեղջկական զգեստ շինելու համար։

Պանդոկապետը գլուխը շարժեց։

— Վաղուան համար երկու հագ զգեստ շինել, պուռայ Բասթրինի, թողութիւն կը խնդրեմ Ձեր Վսեմութենէն, ահա գաղղիական առաջարկութիւն մը. ասկէ մինչև ութ օր՝ ոչ երկու հագ զգեստ, այլ բաճկոնի մը վեց կոճակ կարելու համոզելն իսկ անկարելի է՝ եթէ իւրաքանչիւր կոճակին համար թալեռ մը անզամ վճարել ուզէք։

— Ուրեմն պահանջած զգեստներս հոզալը անկարելի է։

— Ո՛չ, վասն զի պատրաստ կարուած զգեստներ կրնանք գտնել. ասոր հոգը իմ վրաս թողուցէք, և վաղը արթնցած ժամանակնիդ գեղջկական հագուստները կ'ընդունիք։

— Սիրելիս, ըսաւ Ֆրանզ Ալպէրին, զգեստները գտնելու հոգը պանդոկապետին յանձնենք. արդէն փորձով մեզ ցուցուց թէ շատ յաջողակ մէկն է. ուստի հանգիստ ձաշենք և այնուհետև թատրոն երթանք։

— Շատ աղէկ, բայց պէտք է գիտնաս, պ. Բասթրինի, որ ես և պարոնը, յաւելցուց Ալպէր Ֆրանզը ցոյցընելով, վաղուան համար այս զգեստներուն խիստ պէտք ունինք։

Պանդոկապետը վերջին անգամ ապահովցուց իւր հիւրերը որ անհոգ ըլլան և իրենց հրամանը ուղածնուն պէս պիտի կատարէ. ասոր վրայ Ֆրանզ և Ալպէր իրենց սենեակը ելան որ խեղկատակի զգեստնին վրանէն հանեն։

Ալպէր հանուելու ժամանակը՝ իւր մանիշակի փունջը զգուշութեամբ պահեց. վասն զի հետևեալ օրը զիրար ծանօթանալու նշանը պիտի ըլլար այն։

Երիտասարդները սեղան նստան. բայց ձաշելու ժամանակ՝ Ալպէր Մօնթէ-Քրիսթոյ կոմսին և Բասթրինի պանդոկապետին խոհարաններուն մէջ ինչ մեծ տարբերութիւն ըլլալը նշմարեց։

Ճշմարտութիւնը ստիպեց Ֆրանզը որ այս տարբերութիւնը ինքն ալ խոստովանի, թէև չէր ցոյցներ որ կոմսին վրայ նպաստաւոր դաղափար մ'ունեցած ըլլայ։

Պատուղ ուտելու ժամանակ ծառան ներս մտնելով հարցուց թէ ժամը քանիին կ'ուզեն որ կառքը պատրաստուի։

Ալպէր և Ֆրանզ իրարու երես նայեցան վախնալով որ չըլլայ թէ անբաղաքավարութիւն մ'ըրած ըլլան։

Ծառան անոնց միտքը հասկըցաւ։

— Նորին Վսեմութիւն Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, ըսաւ, հրամայած է որ բոլոր օրը իւր կառքը ձեր հրամանին տակը ձգեմ. ուստի Ձեր Վսեմութիւնները առանց քաշուելու կրնան հրամայել։

Երիտասարդները որոշեցին որ կոմսին ծայրայեղ մարդասիրութիւնը չմերժեն, և հրաման ըրին որ կառքը անմիջապէս պատրաստեն, ինչ ատեն իրենք զգեստնին փոխելու զբաղեցան, քանզի յորեկուան տեղի ունեցած մրցմանց մէջ իրենց վրայ եղած զգեստնին քիչ շատ ձնաուած էին։

Այս պատրաստութենէն ետև՝ Արճէնթինա թատրոնը գացին և կոմսին օթեակը նստան։

Առաջին արարուածին մէջ՝ կ . . . կոմսուհին իւր օթեակը մտաւ։ Իւր առաջին նայուածքը նախընթաց իրիկունը կոմսին գտնուած

օթեակին վրայ ուղղելով, զարմանքով տեսաւ որ Ֆրանզ և Ալպէր կը դանուին այն օթեակին մէջ, որուն սիրոջ վրայ քսան և չորս ժամ առաջ իւր տարօրինակ դաղափար մը ունենալը Ֆրանզին յայտներ էր։

Իւր կրկնադիտակը այնչափ երկար ժամանակ իրեն ուղղեր էր, որ Ֆրանզ հասկըցաւ որ անոր հետաքրքրութիւնը յագեցնելու յարդելը անպատեհութիւն մ'է։

Ուստի Իտալական թատրոններուն հանդիսականաց ունեցած առանձնաշնորհութեամբը, որոնք թատրոնի օթեակները ընդունելութեան սրահներ կը ձևացընեն, երկու բարեկամները օթեակնէն ելնելով, իրենց յարդանքը կոմսուհւոյն մատուցանելու դացին։

Օթեակը մտնելնուն պէս՝ կոմսուհին նշան ըրաւ Ֆրանզին որ պատուոյ աթոռը նստի։

Իսկ Ալպէր ետևի աթոռը նստաւ։

— Կ'երևի թէ, ըսաւ կոմսուհին՝ հաղիւ Ֆրանզին նստելու ժամանակ տալով, խիստ ստիպեալ էիք նոր լուրս Ռիւթվէնին հետ ծանօթութիւն ընելու, և կը տեսնեմ որ սերտ բարեկամութիւն մը հաստատեր էք մէջերնիդ։

— Փոխոխակի սերտ բարեկամութիւն մը հաստատեցնէս առաջ, ինչպէս որ կ'ըսէք, չեմ կրնար ուրանալ, տիկին կոմսուհի, որ բոլոր օրը իւր մարդասիրութեան չափը անցուց։

— Ինչպէս, բոլո՞ր օրը։

— Այո՛, ստուգիւ. այս առտու իւր նախաճաշիկը ընդունեցինք. դիմակաւորութեան բոլոր միջոցին իւր կառքովը Գոլոսոյի մէջ շրջագայեցանք, վերջապէս այս իրիկուն ալ թատրոն իւր օթեակը եկած ենք։

— Ուրեմն առաջէն կը ճանչնա՞իք զան։

— Այո՛ և ոչ։

— Ինչպէս։

— Երկար պատմութիւն մ'է այս։

— Զոր պիտի պատմէք ինձ։

— Բայց կրնա՞ս սոսկում պատճառել ձեղ։

— Լսելու աւելի մեծ դրդիռ մը կու տաք։

— Ապահովեցէք զոնէ որ այս պատմութիւնը վախճան մը ստանայ։

— Շատ աղեկ, կատարեալ պատմութիւնները կը սիրեմ։ Սակայն՝ ըսէք ինձ թէ ի՛նչպէս իրարու ծանօթացաք, և ո՛վ ղձեղ անոր ներկայացուց։

— Եւ ոչ մէկը, ընդ հակառակն ինքզինքը մեզ ներկայացուց։

— Երբ։

— Երէկ իրիկուն ձեզմէ բաժնուելէս ետև։

— Ի՞նչ միջոցաւ։

— Մեր պանդոկապետին միջոցաւը։

— Ուրեմն ա՛ն ալ Լոնտոնի պանդոկը կը բնակի։

— Ոչ միայն նոյն պանդոկը՝ այլ և նոյն դասիկոնը։

— Ընտնը ի՞նչ է. անտարակոյս անոր անունը դիտէք։

— Անշուշտ. անունը կոմս Մոնթէ-Քրիսթոյ է։

— Ի՞նչ անուն է այդ. աղգատոհմի անուն մը չերևիր ինձ։

— Ո՛չ, իւր դնած կղզւոյն անունն է։

— Եւ ինքը կոմս է։

— Թոսկանայի կոմս։

— Վերջապէս առ ալ միտներուն պէս պիտի կլլենք, կրկնեց կոմսուհին, որ Վենետիկի շրջակայից ամենէն հին ընտանիքէ էր. բայց ի՞նչ մարդ է այս կոմսը։

— Դերակոմս տը Մորսէրֆին հարցուցէք։

— Կը լսէք, պարոն, ձեր դատողութեանը կը յանձնէ, ըսաւ կոմսուհին։

— Ապերախտ պիտի համարուինք եթէ անոր ազնուութիւնը չճանչնանք, տիկին, պատասխանեց Ալպէր. տասն տարուան բարեկամ մը անոր մեզ ըրածը չէր ըներ, և այն՝ այնպիսի շնորհքով, ազնուութեամբ և քաղցրութեամբ, որոնք ստուգիւ իւր քաղաքավար մարդ մը ըլլալը կը յայտնեն։

— Պիտի տեսնէք որ այն ուրուական կոչածս պարզապէս նոր հարստացած մէկը պիտի ըլլայ, ըսաւ կոմսուհին ծիծաղելով, որ իւր շահած միլիոններուն համար ինքզինքը արդարացընել կ'ուզէ։ Բայց կինը տեսա՞ք։

— Ո՞ր կինը, հարցուց Ֆրանզ ժպտելով։

— Երէկուան դեղեցիկ Ցոյն կինը։

— Ո՛չ. կարծեմ անոր ձայնը լսեցինք, բայց ամենևին չերեցաւ մեզ։

— Այս չերևիլը անշուշտ գաղանիք մը կը պարունակէ, սիրելիդ իմ Ֆրանզ, ըսաւ Ալպէր։ Սպիտակ վարագոյրով պատուհանին կապոյտ ղեստով դիմակաւորը ըմբռ կը կարծես։

— Եւ ո՞ր էր այդ սպիտակ վարագոյրով պատուհանը, հարցուց կոմսուհին։

— Ռոսբոլիի պալատը։

— Ուրեմն կոմսը Ռոսբոլիի պալատին երեք պատուհանները դրաւած էր։

— Այո՛, Գորսօ փողոցէն անցած։

— Անշուշտ։

— Դեղին վարագոյրներով երկու պատուհան և կարմիր խաչով ու սպիտակ վարագոյրով պատուհան մը տեսած հոն. այն երեք պատուհանները կոմսինն էին։

— Բայց ըսէք ինձ. միթէ այս մարդը նապատ մի է. պիտէք ինչ կ'արժէ անոնց պէս երեք պատուհաններ բարեկենդանի ութ օրուան համար, և այն՝ Ռոսբոլիի պալատին մէջ, այսինքն Գորսոյի ամենէն երևելի կողմը։

— Երկու կամ երեք հարիւր Հռոմայեցի սկուտ։

— Երկու կամ երեք հաղար ըսէք։

— Ինչ կ'ըսէք։

— Եւ իւր կղզիէն կ'ընդունի իւր հասոյթը։

— Իւր կղզին ստակ մը անպամ չբերեր։

— Ուրեմն ինչ բանի համար գնած է զայն։

— Մտային հաճոյից համար։

— Ուրեմն տարօրինակ մէկն է այդ կոմսը։

Այս միջոցին՝ այցելու մը գալով ըստ սովորութեան Ֆրանզ իւր տեղը նոր եկողին տուաւ։

Այս այցելութիւնը տեղափոխութենէ զատ խօսակցութեան նիւթն ալ փոխեց։

Ժամ մը ետքը՝ երկու բարեկամները պանդոկը կը վերադառնային։

Հետևեալ առտու ժամը լսելին՝ Բասթրէնի հետը ութ կամ տասն հաղ պեղացիի հագուստներով բեռնաւորեալ դերձակ մը առած Ֆրանզին սենեակը մտաւ։

Երկու բարեկամները իրենց հասակնուն համեմատ երկու համանման հագուստներ որոշեցին, և հրամայեցին պանդոկապետին որ իրենց իւրաքանչիւրին դլխարկին վրայ քսանական մէթր ժապաւէններ կարել տայ և պայծառ դոյներով ու խոտորնակ երիզներով երկու շքեղ դօտիներ գտնէ իրենց, որոցմով հասարակ ժողովուրդը տօն օրեր իրենց մէջքը սեղմելու սովորութիւն ունի։

Ալպէր շուտով ուզեց տեսնել թէ ինչպէս պիտի վայելէին այն նոր ղեստները, որոնք էին կապոյտ թաւշեայ թիկնոց մը և սունդեստ մը, բանեցած դուլպաներ, կոճակներով մուճակներ և մեծաքսեայ բաճկոնակ մը։

Իրօք երբ Ալպէր իւր վայելուչ մէջքը դօտիով սեղմեց, դլխարկը քիչ մը մէկ կողմին վրայ ծռեց, ու անկէ կախուած ժապաւէնի երիզները իւր ետին ձդեց, Ֆրանզ ստիպուեցաւ խոստովանիլ որ այս դդեստներով աղէկ դործ պիտի տեսնէ, և շատ ժողովուրդներու մէջ հագուստին ձևը դլխաւորութեան ազդեցութիւն ունի։

Արևելեան ժողովուրդները, որոնք ժամանակաւ իրենց դոյնզդոյն երկար պատմուճանովը խիստ վայելուչ կ'երևէին, հիմա տգեղ չեն երևիր իրենց կոճկաց կապոյտ վերարկուով և Յունական դդակով, որոնք կարմիր կնիքով դինիի շիշերու կը նմանեցընեն զիրենք։

Ֆրանզ իւր գոհունակութիւնը Ալպէրին յայտնեց, որ հայելիին առջևը անցած գոհ դէմքով իւր յաջողութեանը վրայ կը ժպտէր։

Այս միջոցին Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ներս մտաւ,

— Պարոնայք, ըսաւ անոնց, ղբօսանայ բարեկամ մը որչափ ալ հաճելի ըլլայ, աղատութիւնը նախապատիւ է. ուստի եկայ ձեզ իմացընելու թէ այսօրուանէ մինչև ութ օր ձեր երէկուան հեծած կառքը ձեր հրամանին տակը պիտի ըլլայ։ Ննտարակոյս մեր պանդոկապետը ըսած է ձեզ որ ես երեք կամ չորս ուրիշ կառքեր ունիմ վարձած, որոնք պատրաստ իւր պանդոկին մէջ կը գտնուին. այս առաջարկութիւնս ընդունելով դիս բանէ մը դրկած չէք ըլլար. աղատութեամբ դործածեցէք զայն թէ ձեր զուարճութեանց և թէ

գործոյդ համար։ Եթէ իրարու ըսելու խօսք մը ունենանք, մեր ժամադրութեան տեղին Ռոսբոլիի պալատը պիտի ըլլայ։

Երիտասարդները ուզեցին դիտողութիւններ ընել, բայց իրօք մեծ պատճառ մը չունէին մերժել այնպիսի առաջարկութիւն մը, որ միանգամայն հաճելի էր իրենց։ Ուստի ընդունեցին զայն։

Մօնթէ-Քրիսթոյ կոմսը քառորդի մը չափ անոնց քովը մնաց՝ ամեն նիւթի վրայ մեծ դիւրութեամբ խօսելով։

Կառքը իրենց հրամանին յանձնելուն համար Ալպէր խիստ ուրախացեր էր. վասն զի այն շնորհատեսիլ գեղջկուհիները իր սիրտը գրաւած էին, և որովհետև նախընթաց իրիկունը անոնք խիստ շքեղ կառքով մը կը շրջագայէին, ուրախ էր որ այս մասին անոնց հաւասար պիտի կարենար երևիլ։

Ժամը մէկ ու կէսին՝ երիտասարդները վար իջան։

Կառավարը և սպասաւորները մտածեր էին որ անասունի մորթերուն վրայէն իրենց միապաղեստը հագնին, որով առջի իրիկունէն աւելի ծաղրաշարժ երևոյթ մը պիտի ընծայէին, և Ֆրանցին ու Ալպէրին գոհունակութիւնը ստացան։

Ալպէր իր մանիշակի փունջը թոռոմանոց իր կոճակայ օղակին մէջ զետեղեր էր։

Զանգակին հնչիւնը առնելուն պէս՝ Ճամբայ ելան և Վիթթորիա փողոցէն Գորսօ փողոցը եկան։

Իրենց երկրորդ շրջանին՝ թարմ մանիշակներու փունջ մը խեղկատակուհիներով լցուած կառքէ մը ելնելով և իրենց կառքին մէջ իյնալով իմացուց Ալպէրին որ նախընթաց օրուան գեղջկուհիները իրենց պէս հագուստնին փոխած էին, և կամ պատահմամբ, և կամ փոխադարձ զգացմամբ, երիտասարդները անոնց հագուստը հագած էին և անոնք իրենցը։

Ալպէր թարմ փունջը միւսին տեղը դրաւ, բայց թառամածը ձեռքը բռնեց. և երբ վերստին անոնց կառքին հանդիպեցան՝ սիրով իր շրթանց մօտեցուց զայն. այս բանս ոչ միայն փունջը նետողին այլ և իր խենթ ընկերուհիներուն զուարճութեան եռանդը բորբոքեց։

Նախընթաց օրուան պէս բազմութեան յուզմունքը սաստիկ էր։

Հաւանական էր սա որ նոյն օրը աղմուկին և ուրախութեան ձայները աւելի էին։

Անգամ մը կոմսը իր պատուհանին մէջ տեսան, բայց երբ կառքը վերստին պալատին առջևէն անցաւ, աներևոյթ եղեր էր անկէ։

Աւելորդ է ըսել թէ Ալպէրին և մանիշակի փունջերուն խեղկատակուհին փոխադարձ սիրահարութիւնները մինչև իրիկուն տևեց։

Իրիկունը երբ պանդոկը վերադարձան, Ֆրանց դեսպանէն ուղղուած նամակ մը գտաւ որ կ'իմացընէր իրեն թէ հետևեալ օրը Նորին Սրբութենէն ընդունուելու պատիւը պիտի ունենայ։

Ամեն անգամ Հռոմ գալուն՝ նոյն շնորհքը խնդրեր և ստացեր էր. քանզի թէ բարեպաշտութեամբ և թէ ծանօթութիւն ունենալուն համար՝ չէր ուզեր այն մայրաքաղաքէն ոտքը դուրս նետել առանց իր յարգանքը Նորին Սրբութեան մատուցանելու։

Ուստի նոյն օրը բարեկենդանը մտքէն անգամ չէր անցներ. վասն զի Նորին Սրբութեան գահին բոլորտիքը թէև մարդասիրութիւնը պատած է, սակայն ամեն մարդ խորին ակնածութեամբ կը պատրաստուի Գրիգոր ԺԶ կոչուած այն ազնիւ և սուրբ ծերունւոյն առջևը խոնարհելու։

Վատիկանէն դուրս ելնելով Ֆրանց ուղղակի պանդոկը եկաւ Գորսօ փողոցէն անցնելէն անգամ զգուշանալով։

Իր սիրտը բարեպաշտ խորհուրդներով ամբարուած կը վերադառնար, որոց առջև բարեկենդանի խելառ ուրախութիւնները զեղծում մը կը համարուէին։

Ժամը հինգը տասն վայրկեան անցեր էր երբ Ալպէր վերադարձաւ։

Իր ուրախութիւնը վերջին ծայրը հասեր էր։

Խեղկատակուհին վերստին իր գեղջկական հագուստը հագեր էր, և Ալպէրի կառքին առջևէն անցնելու ատենը՝ իր դիմակը վար առնելով իր հրաշագեղ կերպարանքը անոր ցուցուցեր էր։

Ֆրանց անկեղծութեամբ իր գոհունակութիւնը յայտնեց, և Ալպէր շնորհակալ եղաւ անոր։

Երիտասարդ սիրահարը կ'ուզէր հաստատել թէ գեղանի անծանօթ կնոջ աննման ազնուութեան նշանները անոր խիստ ազնուական ընտանիքէ ըլլալը կը ցուցնէր։

Ուստի որոշեր էր որ հետևեալ օրը անոր նամակ մը գրէ։

Ֆրանզ այս մտերմական պատմութիւնը լսած ատենը՝ դիտեց որ Ալպէր իրեն ընելու խնդիրք մը ունէր և կ՚երկմտէր։ Ուստի ստիպեց զան որ իւր միտքը յայտնէ՝ իմացընելով անոր որ իւր բարօրութեան օգտին համար կարելի եղած զոհողութիւնները ընելու պատրաստ է։

Բարեկամական քաղաքավարութեան պահանջածին չափ ժամանակ Ալպէր թողուց որ Ֆրանզ ղինքը ստիպէ. այն ատեն՝ խոստովանեցաւ անոր որ եթէ հետևեալ օրը կառքը միայն իրեն թողու՝ մեծ շնորհք մը ըրած պիտի ըլլայ։

Գեղանի գեղջկուհւոյն իւր դիմակը վերցընելուն վերջին աստիճանի մարդասիրութեան պատճառը Ալպէր իւր բարեկամէն բացայայտութիւնը կը համարէր։

Ցայտնի էր որ Ֆրանզ այնչափ ինքնասէր չէր որ Ալպէրի յաջողութեանը արդելք ըլլալ ուզէր, որ միանգամայն իւր հետաքրքրութիւնը կը շարժէր և իւր անձնասիրութիւնը կը շողոքորթէր։

Իւր աղնիւ բարեկամին անխորհրդապահ բնութիւնը աղէկ ճանչնալուն համար՝ ապահով էր որ Ալպէր իւր յաջողութեան մանրամասն տեղեկութիւնը իրեն պիտի հաղորդէր. և որովհետև ինքը երկու կամ երեք տարիէ ՚ի վեր Իտալիոյ ամեն կողմերը կը ճանապարհորդէր, այնպիսի սիրահարութեան մը հանդիպելու բաղդատութիւնը ունեցած չէր՝ ուստի հետաքրքրութեամբ կ՚ուզէր դիտնալ թէ այսպիսի պարագայի մէջ գործերը ինչ վախճան կ՚ունենան։

Այս պատճառաւ խօսք տուաւ Ալպէրին որ հետևեալ օրուան հանդէսը Ռոսբոլիի պալատին պատուհաններէն տեսնելու զոհ պիտի ըլլայ։

Իրօք հետևեալ օրը՝ Ալպէրին կառքին երթևեկութիւնը տեսաւ։

Ձեռքը խիստ մեծ փունջ մը բռնած էր, որուն մէջ անտարակոյս իւր սիրահարական նամակը ղետեղած էր։

Այս հաւանականութիւնը ստուգութեան փոխուեցաւ երբ Ֆրանզ այն սպիտակ դամէլիաներով շրջապատած նոյն դեղեցիկ փունջը վարդագոյն մեղուսէ հագուստով շնորհալի խեղկատակուհիի մը ձեռքը տեսաւ։

Բայց իրիկունը Ալպէրի համար ոչ եթէ ուրախութիւն այլ սրտի անձկութիւն էր. ըստ որում տարակոյս չունէր որ գեղանի անծանօթ կինը նոյն միջոցով իրեն պիտի պատասխանէ։

Ֆրանզ անոր բաղձանքը լսելուց ըսելով թէ ինքը տօնախմբութեան աղմուկէն ձանձրացած է և որոշած է հետևեալ օրն ալ իւր ձանապարհորդութեան տետրը աչքէ անցընել և ծանօթութիւնները գրել։

Սակայն Ալպէր իւր դուշակութեանց մէջ սխալած չէր. հետևեալ իրիկունը Ֆրանզ անոր մէկ ոստումով մը իւր սենեակը մտնելը տեսաւ՝ ծայրէն բռնած քառակուսի թուղթ մը յաղթութեամբ շարժելով։

— Ահա, տես, ըսաւ, միթէ սխալէր եմ։

— Նամակիդ պատասխանն է, հարցուց Ֆրանզ։

— Ահա, կարդա։

Ֆրանզ առաւ զայն և կարդաց.

«Երեքշաբթի իրիկուն ժամը եօթնին՝ Բօնթէֆիչի փողոցը կառքեդ իջիր, և Սան-Ճիաղօմօ եկեղեցւոյն սանդուղին առջին հասած ժամանակդ՝ ձեռքեդ մոմդ յափշտակող Հռոմայեցի դեղջկուհւոյն հետևէն դնա։

«Պէտք ես խեղկատակի հագուստիդ ուսին վրայ վարդագոյն ժապաւէն մը կապես որ զքեզ ճանչնայ։

«Մինչև այն օրը ղինքը պիտի չտեսնես։

«Անյողդողդութիւն և խոհեմութիւն։»

— Ասոր ի՞նչ կ՚ըսես, բարեկամ, ըսաւ Ալպէր երբ Ֆրանզ նամակը վերջացուց։

— Ըստ իս՝ դործը պոհացուցիչ կերպարանք մը կ՚առնու։

— Իմ կարծիքս ալ այդ է, և շատ կը վախնամ որ Պրաչիանօ կոմսին պարահանդէսին մինակդ պիտի երթաս։

Նոյն առտու Ֆրանզ և Ալպէր Հռոմայեցի անուանի սեղանաւորէն հրաւիրանաց տոմսակները ընդունած էին։

— Զգուշացիր, սիրելիդ իմ Ալպէր, բոլոր աղնուականները դուք-

սին պարահանդէսին մէջ պիտի դանուին, և եթէ դեղանի դեղջկուհիդ իրօք աղնուական մ'է, չկրնար նոյն հանդէսին ներկայ ըլլալէն ետ կենալ:

— Կ'ուզէ դայ կ'ուզէ չդայ. ես անոր վրայ ունեցած կարծիքս չեմ կրնար փոխել: Նամակը կարդացիր:

— Այո՛:

— Իտալիոյ մէջ քաղաքացի կանանց ընդունած խելք դաստիարակութիւնը գիտես:

— Այո՛:

— Ուրեմն նամակը վերստին կարդա, դիրը աղեկ քննէ, և լեղուի կամ ուղղագրութեան սխալ մը գտիր ինձ:

Իրօք գիրը խիստ դեղեցիկ էր և ուղղագրութիւնը կատարեալ:

— Քու ձակատագիրդ է ուրեմն, ըսաւ Ֆրանզ Ալպէրին երկրորդ անգամ նամակը վերադարձընելով:

— Ուզածիդ չափ ծիծաղէ, բարեկամ, և ուզածիդ պէս ծաղրէ, կրկնեց Ալպէրը. ինչ ընեմ, սիրահարած եմ անոր:

— Ո՛հ, կը սոսկացընես զիս, և կը տեսնեմ թէ ոչ միայն Պրաչիանօ դուքսին պարահանդէսը առանձին պիտի երթամ, այլ կարծեմ թէ Փիորէնցա իսկ մինակ պիտի վերադառնամ:

— Եթէ անծանօթ սիրուհիս իւր դեղեցկութեանը հաւասար սիրելի ըլլայ ինձ, կ'իմացընեմ քեզ որ գոնէ վեց շաբաթ Հռոմ պիտի կենամ: Այս քաղաքը խիստ սիրելէս զատ՝ անոր նախնեաց պատմութեանը վրայ մեծ համակրութիւն ունիմ:

— Ուրեմն ասոր նման երբ ուրիշ մէկ կամ երկու առիթներ ևս առջեդ ներկայանան, կարծեմ թէ արձանագրութեանց և դեղեցիկ ուսմանց Հեմարանին անդամ պիտի տեսնեմ զքեզ:

Անտարակոյս Ալպէրը այս նիւթիս վրայ առանց կատակի վիճաբանելու էր, երբ սեղանին պատրաստ ըլլալը իմացուցին: Ալպէրը ուտելու մեծ ախորժակ ունենալով իւր բարեկամին հետ սեղան նստաւ, միտքը դնելով որ ճաշէն ետև վիճաբանութեան սկսի:

Ճաշէն ետև Մոնթէ-Քրիսթոյի գալուստը իմացուցին:

Երկու օրէ՝ի վեր երիտասարդները զան տեսած չէին:

Բասթրինի ըսեր էր իրենց թէ գործի մը համար կոմսը Չիվիթա-Վէքքիա գացեր էր:

Նախընթաց իրիկունը կոմսը նոյն քաղաքը երթալով հազիւ ժամ մը առաջ Հռոմ հասեր էր:

Կոմսը կամ զգուշութեան համար և կամ մէկ քանի պարագայէ մէջ երկու կամ երեք անգամ արտասանած դառն խօսքերուն առիթը չներկայանալուն համար՝ այս անգամ ուրիշ մարդու մը պէս վարուեցաւ անոնց հետ:

Այս մարդը Ֆրանզին համար ստոյգ հանելուկ մը եղած էր:

Կոմսը տարակոյս չունէր որ երիտասարդ ձանձացած էր. սակայն զան ուրիշ տեղ տեսնելը յիշելուն համար բերանէն ամենևին խօսք մը հանած չէր:

Նոյնպէս Ֆրանզ, թէև իրենց առաջին տեսակցութեան վրայ ակնարկութիւն ընելու մեծ փափաք ունէր, սակայն զինքը և իւր բարեկամը այնչափ ինքնայօժար մեծարանօք պատուող մարդու մը տհաճելի երևելու երկիւղը զինքը կ'արգիլէր. ուստի ինքն ալ անոր պէս նոյն զգուշութեամբ վարուեցաւ:

Երկու բարեկամայ Արձէնթինա թատրոնին մէջ օթեակ մը վարձել ուզելնին և պարապ օթեակ չգտնելնին կոմսը իմանալով իւր օթեակին բանալին անոնց բերեր էր, գոնէ իւր այցելութեան դլխաւոր պատճառը այս կ'երևէր:

Ֆրանզ և Ալպէր զայն չընդունելու դժուարութիւններ ցուցուցին՝ մէջ բերելով թէ զինքը անկէ զրկելէ կը վախնան. բայց կոմսը պատասխանեց թէ նոյն գիշերը ինքը Բալլէ թատրոնը երթալով՝ Արձէնթինա թատրոնին իւր օթեակը դատարկ պիտի ձնայ եթէ իրենք չերթան:

Այս ապահովութիւնը երկու բարեկամները համոզեց որ առաջարկութիւնը ընդունին:

Ֆրանզ սկսեր էր քիչ քիչ սովորիլ կոմսին դեղնութեանը, որ առջի անգամ զան տեսնելուն այնչափ զարմացուցեր էր զինքը:

Պայրընի ձշմարիտ դիւցազնին նմանելով Ֆրանզ, չըսենք անոր երեսը նայիլ, այլ անոր վրայ մտածել չէր կրնար առանց Մանֆրէդի ուսերուն վրայ այն տխուր դէմքը և կամ Լարայի դլխարկով մարդը իւր մտաց առջև ներկայացընելու:

Անոր ձակատին վրայ կ'երևէր այն կնճիռը, որ դառն խորհուրդէ

մը մշտակայ ներկայութիւնը կը ցուցնէր. բոցավառ աչքերը իր դիմացինին սրտին խորը եղածը կը կարդար. բարձր և այպանող շրթունքը իր արտասանած խօսքերը ունկնդիրներուն մտքը մէջ խիստ խորունկ քանդակելու յայտարար նշանները կը կրէր։

Կոմսը երիտասարդ չէր. գրեթէ քառասուն տարեկան կար, սակայն յայտնի կ'երևէր որ իր երիտասարդ բարեկամներուն վրայ առաւելութիւն մը ունէր։

Իրօք՝ Անգղիացի բանաստեղծին երեւակայական դիւցազներուն վերջին նմանութեամբ մը կոմսը կարծես թէ կախարդութեան ձիրքն ունէր։

Ալպէր ուրախ էր որ իր ընկերին հետ այսպիսի մարդու մը հանդիպելու բաղդաւորութիւնը ունեցեր էր։

Իսկ Ֆրանզ թէև անտարբեր կ'երևէր, սակայն գերագոյն մարդու մը իր բոլորտիքը եղողներուն մտքը պատճառած ազդեցութենէն ազատ չէր։

Կոմսին Բարիզ երթալու համար երկու կամ երեք անգամ յայտնած դիտաւորութեանը կը մտածէր և տարակոյս չունէր որ իր տարօրինակ բնութեամբը, յայտարար դէմքովը և անբաւ հարստութեամբը մեծ ազդեցութիւն պիտի պատճառէր հոն ալ։

Ուստի չէր ուզեր որ անոր Բարիզ եկած ժամանակը ինքն ալ հոն գտնուի։

Իտալիոյ թատրոններուն սովորութեան համեմատ նոյն գիշերն ալ անցաւ, այսինքն ոչ եթէ դուսանները մտիկ ընելով, այլ իրարու այցելութիւն ընելով և խօսելով։

Կ․․․ կոմսուհին խօսքը կոմսին վրայ դարձընել կ'ուզէր, բայց Ֆրանզ իմացուց անոր թէ աւելի նոր բան մը ունի պատմելու, և Ալպէրին ցուցուցած կեղծ ընդդիմութեանը ականջ չդնելով, երեք օրուանէ 'ի վեր երկու երիտասարդներուն գլխովանց տարօրինակ եղող երևելի դէպքը պատմեց կոմսուհւոյն։

Եւ որովհետև Իտալիոյ այս կերպ սիրահարութիւնները շատ կը պատահին, գէթ եթէ ճանապարհորդաց խօսքին հաւատանք, կոմսուհին ամենևին չհաւատալ չցուցուց, և իր գոհունակութիւնը յայտնեց Ալպէրին որ բարեբաղդութեան մը սկզբնաւորութեան մէջ կը գտնուի։

Բաժնուելու ժամանակ խօսք տուին իրարու որ Պրաչիանօ դուքսին պարահանդէսին ներկայ գտնուին, որուն գրեթէ բոլոր Հռոմ հրաւիրուած էր։

Փունջերու տիկինը իր խօսքին վրայ կեցաւ. ոչ հետևեալ օրը և ոչ միւս օրը Ալպէրի չերևցաւ։

Վերջապէս երեքշաբթի՝ բարեկենդանի վերջին և ամենէն աղմկալից օրը հասաւ։

Երեքշաբթի օրը՝ թատրոնները առտուան ժամը տասնին կ'ըսկսին. քանզի իրիկուան ժամը ութէն ետև մեծ պահոց մէջ կը մտնեն։

Մինչև այն օրը՝ ժամանակի, ստակի կամ դրդիչի պէտք ունենալով՝ նախընթաց տօնախմբութեանց մասնակից ըլլալ չկրցողները երեքշաբթի օրը վերջին սպանդարամետական հանդէսին մէջ կը խառնուին, գինիէն կը զուարթանան և ընդհանուր աղմուկին և շարժումին մասնակից կ'ըլլան։

Ժամը երկուքէն մինչև հինգը՝ Ֆրանզ և Ալպէր կառքերուն կարգին հնազանդեցան՝ կարգաւ դիմացէն եկող կառքերուն, և ձիերուն ոտից ու կառքերուն անուաց քովերը խռնող հետևակ դիմակաւորներուն հետ լիաբուռն շաքարեղէններ փոխելով. բայց այս սոսկալի խառնակութեան մէջ ամենևին արկած մը, կռիւ մը կամ վէճ մը չծագեցաւ։

Իտալացիք այս մասին ամենէն ընտիր ազգն են։

Տօնախմբութիւնները անոնց մէջ ճշմարիտ տօնախմբութիւններ են։

Պատմութեանս հեղինակը, որ հինգ կամ վեց տարի Իտալիա բնակած է, ամենևին չյիշեր որ մեր տօնախմբութեանց հետևութիւնն եղող կռիւ մը իրենց տօնախմբութիւնը շփոթէ։

Ալպէր իր խեղկատակի հագուստովը շքեղ կ'երևէր։

Իր ուսին վրայ վարդագոյն ժապաւէնի հանգոյց մը կը կրէր, որուն ծայրերը մինչև ծունկը կը հասնէին։

Իր և Ֆրանզին մէջ շփոթութեան տեղի չտալու համար՝ Ֆրանզ Հռոմայեցի գեղջուկի հագուստը հագած էր։

Ո՛րչափ օրը կը յառաջանար, այնչափ աղմուկը կը մեծնար. ամեն քարայատակներուն վրայ, ամեն կառքերուն և ամեն պատուհաններուն մէջ բերան մը չկար որ լուռ կենար, ձեռք մը չկար որ

անդորձ մնար, ստուգիւ այս տօնախմբութիւնը մարդկային մրրկի մը կը նմանէր, որ ձայներու որոտումներ կը հանէր, և շաքարեղէններու, փունջերու, հաւկիթներու, նարինջներու և ծաղիկներու կարկուտներ կը տեղացընէր։

Ժամը երեքին՝ Բոբոլզի և Վենետիկի հրապարակներուն մէջ նետուած փոքր թնդանօթներուն ձայնը ձիարշաւի սկզբնաւորութիւնը իմացուց, այս նշանին վրայ բազմախուռն ամբոխը մեծ դժուարութեամբ սկսաւ երկու կողմը քաշուիլ։

Բարեկենդանի վերջին օրերուն տօնախմբութեանց յարակից են նաև ձիարշաւի և մոմերու հանդէսները։

Թնդանօթներուն ձայնին վրայ՝ կառքերը անմիջապէս իրենց կարգը շփոթեցին և մօտակայ կողմնակի փողոցներուն մէջ քաշուեցան։

Ասոնք ամեն շարժումները անխմանալի յաջողութեամբ և զարմանալի արագութեամբ կը կատարուին՝ առանց ոստիկանութեան անոնց քաշուելու տեղերնին և կամ երթալու ձանբանին ցուցընելու համար միջամտութիւն ընելու։

Հետևակ ժողովուրդը պալատներուն պատերուն տակը քաշուելէն ետև՝ ձիերու և սուրի պատեաններու ձայներ լսուեցան։

Տան ու հինգ հոգի մէկ կառքի վրայ հրայանակրայ խումբ մը Գորսօ փողոցին լայնութեամբը շատ արագ անցնելով ձանբայ կը բանար ձիարշաւին։

Երբ խումբը Վենետիկի պալատին քովը հասաւ, ուրիշ թնդանօթի ձայն մը լսուեցաւ որ փողոցը ազատ էր։

Գրեթէ անմիջապէս եաքը՝ եօթն կամ ութ ձիերու ստուերի պէս անցնիլը տեսնուեցաւ, որոնք երեք հարիւր հազար հոգւոյ ընդհանուր, անպայման և անլուր աղաղակներէն, և կանանցմէն վրայ ոստոստող երկաթեայ խթաններէն գրգռուած էին. այն առեն՝ Ս. Անձէլօ աշտարակէն երեք թնդանօթ արձակուելով՝ իմացուեցաւ որ թիւ երեքը մրցանակը վաստկեր է։

Գոպցես այս նշանին վրայ՝ կառքերը վերստին սկսան խլրտիլ, դէպ 'ի Գորսօ խառնիլ և ամեն փողոցներէն դուրս յորդել այնպիսի հեղեղներու պէս, որոց ընթացքը վայրկեան մը արգիլուելով միահամուռ դետին մէջ կը թափուին, և բազմութեան յորձանքը կրա-



Նիթեայ երկու եղերայ մէջ տեղը առաջուանէ աւելի սաստկութեամբ իւր ընթացքը շարունակեց։

Բազմութեան աղաղակներուն վրայ ուրիշ նոր ձայներու և շարժմանց պատճառ եղաւ մոմ վաճառողներուն հանդէսին մէջ մտնելը։

Հաւմի բարեկենդանը վերջացնող մոմերու մեծ հանդէսին դերասանները երկու ներհակ գրգռմունք ունէին․

Ա․ Իրենց մոմը վառ պահել․

Բ․ Ուրիշներուն մոմը մարել։

Մարդկային կեանքը այս մոմերուն խիստ մեծ նմանութիւն մը ունի։ Մարդս սահմանեալ ժամանակին միայն Աստուծոյ պիտի աւանդէ իւր կեանքը․ բայց որչափ միջոցներ կը գործածուին իրարու կեանքը կարճեցընելու կամ խլելու համար․ ստոյգ է՝ որ այս դեբաղոյն գործողութեան մէջ սատանան մարդոց օգնութեան կը հասնի։

Մոմը որ և է վառուած ճրագի մը մօտեցընելով կը վառեն․ բայց ո՞վ կրնայ նկարագրել այն հազարաւոր միջոցները, որոնք մոմը մարելու համար կը հնարուին․ ինչպէս են՝ հսկայաձև փուքերը, ահագին խաբուսիչ գործիները և երկար հովահարները։

Ուստի ամեն մարդ, ինչպէս նաև Ֆրանց և Ալպէր, փութային մոմ գնելու։

Գիշերը արագութեամբ կը մօտենար․ բազմութեան գլխին վրայ աստղերու պէս երկու կամ երեք ճրագներ փայլիլ սկսելով, ամեն կողմ «Վառեցէք» ձայնը լսուեցաւ։

Գրեթէ տասն վայրկենի մէջ յիսուն հազար լոյսեր շողալ սկսան, որոնք Վենետիկի պալատէն Բոբոլօ հրապարակը կ՚իջնէին, և Բոբոլօ հրապարակէն Վենետիկի պալատը կ՚ելնէին։

Կարծես թէ շրջմոլի հուրերն տօնախմբութիւնը կը կատարուէր։

Անկարելի է այս տեսարանը չտեսած՝ անոր վրայ գաղափար մը ստանալ։

Պէտք է ենթադրել բոլոր աստղերը երկինքէն անջատուած, որոնք երկրի վրայ իջած են յիմարական խաղի մը մէջ խառնուելու այնպիսի աղաղակներով, որոյ նմանը մարդկային ականջը լսած չէ երկրագունտիս մակերևութին միւս մասերուն մէջ։

Գլխաւորաբար այս միջոցիս ընկերային խտրութիւն չկայ։

Ծառան իշխանին հետ կը միանայ, իշխանը Թրասթէվէրինոյին, Թրասթէվէրինոյն քաղաքացիին, և իւրաքանչիւր ոք իրարու մոմը կը փչէր, կը մարէր և կը վառէր։

Եթէ ծերունին Եւոլոս այն միջոցին երևէր, մոմերուն թագաւոր պիտի հռչակուէր, և Ակիլոնէ անոր մերձաւորագոյն թագաժառանգը։

Այս յիմարական և լուսավառ խաղը գրեթէ երկու ժամ տևեց․ Գորսօ փողոցը օրուան պէս լուսաւորուած էր․ պալատներուն մինչև երրորդ և չորրորդ դստիկոնը գտնուող հանդիսատեսներուն դիմաց գծագրութիւնը կ՚որոշուէր։

Հինգ վայրկենէ հինգ վայրկեան Ալպէր իւր ժամացոյցը կը նայէր․ վերջապէս ժամը եօթն եղաւ։

Երկու բարեկամները այս միջոցին Բօնթէֆիչիի առջևը կը գտնուէին․ Ալպէր իւր մոմը ձեռքը բռնած կառքէն վար ցատկեց։

Երկու կամ երեք դիմակաւորներ ուզեցին իրեն մօտենալ իւր մոմը մարելու կամ ձեռքէն յափշտակելու համար․ բայց Ալպէր քաջ կռփամարտ ըլլալով զանոնք մի առ մի իրմէ տասն քայլ անդին գլորեց, ու իւր ճամբան շարունակեց դէպ ՚ի Սան-Ճիագօմօ եկեղեցին։

Սանդուղին վրայ բազմաթիւ հետաքրքիրներ և դիմակաւորներ լցուած էին, որոնք իրարու ձեռքէ մոմը յափշտակելու կը մրցէին։

Ֆրանց իւր նայուածքը Ալպէրի վրայէն չվերցընելով տեսաւ որ սանդուղին առաջին ոտքը կոխած ժամանակ՝ դիմակաւոր մը, որ փունջերու գեղջկուհւոյն զգեստները հագած էր, իւր ձեռքը երկընցուց և գրեթէ առանց ընդդիմութեան անոր մոմը յափշտակեց։

Ֆրանց անոնց իրարու հետ ըրած խօսքերը լսելու համար շատ հեռու կը գտնուէր․ բայց անտարակոյս անոնք բարեկամական էին, վասն զի Ալպէր և գեղջկուհին թևակցելով անկէ հեռացան։

Քիչ մը ժամանակ նա բազմութեան մէջ անոր ետևէն նայեցաւ, մինչև որ Մաչէլլոյի առջև հասան, ուր կորսնցուց զանոնք։

Յանկարծ՝ բարեկենդանի վերջաւորութեան նշանը տուող զանգակը հնչուեցաւ, և նոյն վայրկենին բոլոր մոմերը գոգցես մոգութեամբ մարեցան։

Կարծես թէ հովի մէկ և զօրաւոր յորձանք մը զանոնք ամենը մէկէն ջնջեց։

Ֆրանց խորին մթութեան մէջ մնաց։

Ցանկարծ ձայները դադրեցան. մոմերը մարող հողմի զօրաւոր շնչին պոպջաց ձայներն ալ միատեղ մարեր էր:

Այնուհետեւ կառքերուն ձայնէն զատ ուրիշ ձայն չէր լսուեր, որոնք պիմակաւորները իրենց տունը կը տանէին. այնուհետեւ պատուհաններուն եւթին շողացող քանի մը լոյսերէն զատ լոյս մը չէր տեսնուէր:

Քանդի բարեկենդանը վերջացեր էր:



ԳԼՈՒԽ ԾԴ

ՍԱՆ ՍԻՊԱՍՓԻԱՆՈՑ ՍՏՈՐԵՐԿՐՉԱՑ ԳԵՐԶԱՄԱՆԱՏՈՒՆԸ

Գուցէ Ֆրանղ իւր կենացը մէջ այնպիսի յանկարծական տպաւորութիւն մը, ուրախութենէ՝ ի տխրութիւն վաղանցիկ փոփոխութիւն մը զգացած չէր, որչափ այն վայրկենին մէջ, կարծես թէ դիշերային դևի մը կախարդական շունչովը Հռոմ ընդարձակ դերեզմանի մը փոխուեր էր: Պատահմամբ լուսինը իւր վերջին քառորդին մէջն ըլլալով իրիկուան ժամը տասն ու մէկէն առաջ չպիտի ծագէր, որով և մթութիւնը գոգյես աւելի կը սաստկացընէր:

Հետևաբար երիտասարդին անցնելու փողոցները խորին մթութիւն մը պատած էր, թէև իւր երթալու տեղը հեռու չէր:

Տասն վայրկենէն՝ իր կամ թէ ըսենք՝ կոմսին կառքը իրենց պանդոկին առջևը կեցաւ:

Ընթրիքը պատրաստուած էր. և որովհետև Ալպէր խմացուցեր էր թէ շուտով վերադառնալու յոյս չունէր, ուստի Ֆրանղ առանձին սեղան նստաւ:

Թասթրինի պանդոկապետը, որ սովորաբար անոնց միատեղ ընթրելնին տեսեր էր, Ալպէրի բացակայութեան պատճառը հարցուց. բայց Ֆրանղ բաւական համարեց ըսելու անոր թէ Ալպէր առջի իրիկունը հրաւէր մը ընդունելով հոն պացեր էր:

Մոմերուն յանկարծ շիջումը, լոյսին տեղ փոխանակած մթութիւնը և աղմկին յաջորդած լռութիւնը Ֆրանղին մտաց այնպիսի տխրութիւն մը պատճառեր էին, որ անհանգստութենէ ազատ չէր:

Հետևաբար խորունկ լռութեամբ իւր ընթրիքը կատարեց, թէև պանդոկապետը մտադիւր հոգատարութեամբ երիու կամ երեք անդամ ներս մտնելով՝ հարցուց թէ բանի մը պէտք ունի՞:

Ֆրանղ որոշեր էր որ Ալպէրին սպասէ ութ չափ ուշ որ կարելի ըլլար:

Ուստի ապսպրեց որ կառքը ժամը տասն ու մէկին պատրաստեն և պատուիրեց պանդոկապետին որ եթէ Ալպէր ուր և է պործի համար պանդոկը դայ՝ իրեն իմաց տան:

Ժամը տասն ու մէկին Ալպէր չվերադարձաւ:

Ֆրանղ հագուելով մեկնեցաւ և իմացուց պանդոկապետին որ պիշերը Պրաչիանօ դուքսին տունը պիտի անցընէ:

Պրաչիանօ դուքսին տունը Հռոմի ամենէն պեղեցիկ տուներէն մէկն էր. իւր կինը, որ Վոլոննա գերդաստանէն իջած էր, իւր տան պատիւը կ'աւելցընէր. հետևաբար իւր տուած պարահանդէսները մեծ համբաւ ունէին:

Ֆրանղ և Ալպէր Հռոմ հասած ժամանակնին՝ անոր վրայ յանձնարարական նամակներ ունէին. ուստի դուքսը ամենէն առաջ հարցուց Ֆրանղին թէ իւր Ճանապարհորդակից ընկերը ինչու չեկաւ:

Ֆրանղ պատասխանեց թէ մոմերը մարելու ժամանակ իրմէ բաժնուելով Մաչէլլոյի առջև անհրաժեշտ եղեր էր:

— Ուրեմն այս իրիկուն չվերադարձաւ, տարցուց դուքսը:

— Մինչև այս ժամս իրեն սպասեցի, պատասխանեց Ֆրանղ:

— Ո՛ւր երթալը դիտէք:

— Ո՛չ, ձիշդ չեմ գիտեր. բայց կարծեմ թէ ժամադիր եղած էր:

— Բայց ուշանալու համար պէշ դիշեր մ'է այս դիշեր, այնպէս չէ՞, սիկին կոմսուհի:

Այս վերջին խօսքերը կ... կոմսուհւոյն ուղղուած էին, որ դուքսին Պ. Թորլընիա եղբօրը թևը մտած պտըտելու ժամանակ՝ իրենց առջևը հասեր էին:

— Ընդհակառակն ինձ համար պատուական դիշեր մ'է, պատասխանեց կոմսուհին. և հոս գտնուողները միայն մէկ բանի համար պիտի դանգատին, այն է խիստ շուտ անցնելուն համար:

— Բայց հոս գտնուող անձանց համար չէ խօսքս, որոնք թէև ուրիշ վտանգներ ունին առջևնին. քանի մարդիկ ձեզ կը սիրահարին և կանայք ձեր դեղեցկութիւնը տեսնելով՝ նախանձութենէ կը հիւանդանան. այլ Հռոմի փողոցներուն մէջ վտանգի մէջ եղողներուն համար է խօսքս:

— Եւ ո՞վ կը գտնուի այս ժամուս Հռոմի փողոցներուն մէջ, եթէ ոչ՝ պարահանդէսը պացոնները:

— Մեր Ալպէր տը Մորսերֆ բարեկամը, սիկին կոմսուհի, ըսաւ Ֆրանղ, որ այս իրիկուն ժամը եօթնին ինձմէ բաժնուելով իր անձանօթ կնոջ ետևէն գնաց՝ դեռ չվերադարձաւ:

— Ինչ կ'ըսէք, և ուր ըլլալը չէք գիտեր:

— Ամենևին:

— Վրան ղէնք չունի՞:

— Խեղկատակի հագուստով է:

— Պէտք չէիք թողուլ զան, ըսաւ դուքսը Ֆրանղին, քանի որ դուք անորմէ աւելի Հռոմը կը ճանչնաք:

— Ո՛հ, այո. եթէ կարելի էր այս օրուան ձիարշաւին երրորդ թիւն ունեցող ձին արգիլել, կարելի էր և զան չթողուլ, պատասխանեց Ֆրանղ. բայց ինչ կրնայ պատահիլ անոր:

— Ո՞վ գիտէ, գիշերը խիստ մութ է, և Տիբերիս գետը Մաչէլլոյի խիստ մօտ է:

Ֆրանղ տեսնելով որ դուքսին և կոմսուհւոյն դաղափարը իր անձնական անհանգստութեանց կը համաձայնէր, իր երակաց մէջ սարսուռ մը զդաց:

— Այս պատճառաւ՝ այս գիշեր ձեր տունը անցընելու պատիւն ունենալս պանդոկապետին խնայուցի, պարոն դուք, ըսաւ Ֆրանղ, և անոր վերադարձը պիտի դան խնայընենն ինձ:

— Ահա, ըսաւ դուքսը, կարծեմ թէ ծառաներէս մէկը զձեզ կը փնտռէ:

Դուքսը սխալած չէր. ծառան Ֆրանղը տեսնելով անոր մօտեցաւ:

— Տէր իմ, ըսաւ, ձեր պանդոկապետը կ'իմայընէ ձեզ իմ մարդ մը տը Մորսերֆ դերակոմսէն նամակ մը բերելով իր պանդոկը ձեզ կ'ըսպասէ:

— Դերակոմսէն նամա՞կ մը բերելով, պոռաց Ֆրանղ:

— Այո՛:

— Եւ ինչպէս մարդ է:

— Ձեմ գիտեր:

— Ինչո՞ւ հոս չբերաւ նամակը:

— Եկող մարդը ուրիշ բան չըսաւ:

— Եւ ո՞ր է այդ մարդը:

— Ձեզ իմայընելու համար պարահանդէսին սրահը մտնելը տեսնելուն պէս անհետացեր եղաւ:

— Ո՛հ, պարոն, ըսաւ կոմսուհին Ֆրանղին, դնա՛ շուտով. խեղճ աղայ, դուցէ դիպուած մը պատահեցաւ անոր:

— Երթամ շուտով, ըսաւ Ֆրանղ:

— Մեզ լուր մը տալու համար վերստին պիտի տեսնուինք, հարցուց կոմսուհին:

— Այո՛, թէ որ դործը ծանր չէ. եթէ ոչ՝ ինչ ըլլալիքս անդամ չեմ գիտեր:

— Ի՛նչ և է, խոհեմութիւնը ձեռքէ մի՛ թողուք, ըսաւ կոմսուհին:

— Ո՛հ, անհոդ եղիք:

Ֆրանղ իր գլխարկն առնելով դուրս ելաւ:

Իր կառքը ձանբելով հրամայեր էր որ ժամը երկուքին վերա-

դառնայ. բայց բարեբաղդաբար Պրաչիանոյի պալատը, որ մէկ կողմէն Գօրսօ փողոցին վրայ կը նայէր և միւս կողմէն Սբբոց-Առաքելոց հրապարակին վրայ, Բասթրինիի պանդոկէն հազիւ տասն վայրկեան հեռաւորութիւն ունէր։

Պանդոկին մօտ՝ Ֆրանց փողոցին մէջ տեղը կանգնած մարդ մը տեսաւ. տարակոյս չունէր որ Ալպէրի ղրկած նուիրակն էր այն։

Այս մարդը մեծ վերարկուով մը ծածկուած էր։

Ֆրանց անոր մօտեցաւ, բայց խիստ զարմացաւ երբ տեսաւ որ իրմէ առաջ այն մարդը իր խօսքը իրեն կ'ուղղէր։

— Ի՞նչ կ'ուզէք, տէր իմ, ըսաւ նուիրակը՝ անձնապահ ըլլալ ուզող մարդու մը պէս քայլ մը ետ քաշուելով։

— Տը Մորսէրֆ դերակոմսին նամակը բերողը դուն չե՞ս, հարցուց Ֆրանց։

— Բասթրինիին պանդոկը բնակողը Ձեր Վսեմութիւնն է։

— Այո՛։

— Դո՞ւք էք դերակոմսին ճամապարհորդակից ընկերը։

— Այո՛։

— Ի՞նչ է Ձեր Վսեմութեան անունը։

— Սեպուհ Ֆրանց տ'Էբինէ։

— Ուրեմն այս նամակը Ձեր Վսեմութեան ուղղուած է։

— Պատասխանի պիտի սպասե՞ս, հարցուց Ֆրանց նամակը առնելով։

— Այո՛, գոնէ ձեր բարեկամը անոր կը սպասէ։

— Ուրեմն վեր ելիր, ու գրեմ տամ։

— Աւելի աղէկ է որ հոս սպասեմ, ըսաւ նուիրակը ծիծաղելով։

— Ինչո՞ւ համար։

— Ձեր Վսեմութիւնը երբ նամակը կարդայ՝ գործը կը հասկընայ։

— Ուրեմն վերստին հո՞ս պիտի գտնեմ զքեզ։

— Անտարակոյս։

Ֆրանց պանդոկը մտաւ. սանդուղին վրայ պանդոկապետին հանդիպեցաւ։

— Ի՞նչ լուր, հարցուց Բասթրինի։

— Ի՞նչ լուր կ'ուզես, պատասխանեց Ֆրանց։

— Բարեկամնուդ կողմէն ձեզի հետ խօսիլ ուզող մարդը տեսա՞ք։

— Այո՛, տեսայ, և այս նամակը ինծ յանձնեց. կ'աղաչեմ՝ սենեակս ճրագ մը ղրկէ։

Պանդոկապետը հրամայեց ծառայի մը որ Ֆրանցին սենեակը մոմ մը տանի։

Երիտասարդը Բասթրինիին դէմքը այլայլած տեսնելով՝ աւելի մեծ եռանդեամբ նամակը կարդալու փութաց։

Ուստի մոմին մօտեցաւ, նամակը բացաւ և նայեցաւ որ Ալպէրի ձեռօքը գրուած և անորմէ ստորագրուած էր։

Ֆրանց երկու անգամ կարդաց զայն, ա՛յնչափ անոր պարունակութիւնը անհաւատալի կ'երևէր իրեն։

Ահա՛ նամակին բուն օրինակը.

«Սիրելի բարեկամ,

«Նամակս ձեռքդ հասածին պէս՝ բարեհաճէ գրասեղանիս քառակուսի գզրոցին մէջ եղած թղթադարանիս մէջէն վարկատոմս առնուլ, և եթէ բաւական չըլլայ՝ քուկդ ալ միացուր, Թօրլոնիային վազէ, իսկոյն անորմէ չորս հազար թալեռ առ և գրաբերիս յանձնէ։

«Այս գումարը անյապաղ ձեռքս հասնիլ պէտք է։

«Վստահ ըլլալով քու վրադ աւելի չեմ աղաչեր, ինչպէս և դուն կրնաս վստահ ըլլալ իմ վրաս։

«Յ. Գ. I believe him now to be an italian banditi*.

«Բարեկամդ
«ԱԼՊԷՐ ՏԸ ՄՈՐՍԷՐՖ»

Այս տողերուն տակ օտար գրիչով մը հետևեալ Իտալերէն խօսքերը գրուած էին.

*Հիմա կը հասկընամ Իտալացի աւազակ ըլլալը։

«Se alle sei della mattina le quattro mile piastre non sono nelle mie mani, alle sette il conte Alberto aura cessato di vivere†.

«LUIGI VAMPA»

Այս երկրորդ ստորագրութենէն Ֆրանզ ամեն բան իմացաւ, հասկըցաւ նաև նուիրակին իր սենեակը ելնելու դժկամակութեան պատճառը: Անշուշտ փողոցը Ֆրանզին սենեկէն աւելի ապահով կ'երևէր իրեն:

Ալպէր այն աւազակապետին ձեռքն ինկեր էր, որուն դոյութեանը երկար ժամանակ չուզեր էր հաւատալ:

Կորսընցընելու ժամանակ չկար:

Դրասեղանին քովը վազեց, բացաւ զայն, և յիշուած դզրոցին մէջ թղթադարանը, և թղթադարանին մէջ վարկատոմսը դտաւ, որ միայն վեց հազար թալեռի կը հասնէր, բայց այն վեց հազար թալեռէն Ալպէր արդէն երեք հազարը վատներ էր:

Իսկ Ֆրանզ ամենևին վարկատոմս մը չունէր. և որովհետև ինքը Ֆիորէնցա կը բնակէր, և եօթն կամ ութ օր Հռոմ անցընելու համար եկեր էր, ուստի հետը միայն հարիւրի չափ Լուի ոսկի առած էր, և այն հարիւր Լուիէն հալիւ յիսունը մնացած էին:

Պահանջուած դումարը ամբողջացընելու համար՝ Ֆրանզի և Ալպէրի ունեցածէն զատ՝ եօթն կամ ութ հարիւր թալեռ կը պակսէին:

Ստոյգ է որ Ֆրանզ այսպիսի պարագայի մէջ կրնար Պ. Թորլոնիայի մարդասիրութեանը վրայ վստահիլ:

Ուստի առանց վայրկեան մը կորսընցընելու՝ կը պատրաստուէր Պրաչիանօ դուքսին պալատը վերադառնալ, երբ յանկարծ իր միտքը լուսաւոր խորհուրդ մը ծագեցաւ:

Մօնթէ–Քրիսթօ կոմսը իր միտքը եկաւ:

† Եթէ առտուանց ժամը վեցին՝ չորս հազար թալեռը ձեռքս չհասնի, ժամը եօթնին՝ Ալպէր կոմսը ապրելէ պիտի դադրի:

ԼՈՒԻՃԻ ՎԱՆԲԱ

Ֆրանզ Բասթրինին վեր կանչելու վրայ էր, երբ իր դրան առջևը տեսաւ զայն:

— Սիրելիդ իմ պարոն Բասթրինի, ըսաւ աշխուժիւ, կը կարծես որ կոմսը իւր սենեակը ըլլայ:

— Այո՛, տէր իմ, դեռ հիմա եկաւ:

— Անկողինը մտած է արդեօք:

— Կը տարակուսիմ:

— Ուրեմն կ'աղաչեմ, անոր դրան զանգակը զարկ, և իմ կողմանէս իրեն ներկայանալու հրաման խնդրէ:

Բասթրինի իրեն եղած հրամանները կատարելու փութայ, և հինդ վայրկեան ետքը վերադարձաւ:

Կոմսը Ձեր Վսեմութեան կ'ըսպասէ, ըսաւ:

Ֆրանզ անմիջապէս դուրս ելաւ, և ծառայ մը կոմսին սենեակը մտցուց զան:

Կոմսը բազմոյներով շրջապատեալ փոքր դահլիճի մը մէջ կը պտնուէր, և Ֆրանզը տեսնելով՝ զան դիմաւորելու կու գար:

— Ի՞նչ բարեբաղդ հով մը այս ժամուս զձեզ իմ սենեակս կը բերէ, ըսաւ կոմսը անոր, ստուգիւ խիստ մեծ պատիւ մը ըրած պիտի ըլլաք ինձ՝ եթէ միատեղ ընթրելու հաճած էք:

— Ո՛չ, պարոն, այլ ծանր դործի մը համար եկած եմ:

— Դործի՞ մը համար, ըսաւ կոմսը իւր սովորական խորունկ նայուածքովը Ֆրանզին երեսը նայելով. և ի՞նչ դործ է այդ:

— Մինակ ենք:

Կոմսը դէպ 'ի դուռը դնաց և ետ դարձաւ:

— Բոլորովին մինակ ենք, ըսաւ:

Ֆրանզ Ալպէրի նամակը ներկայացուց անոր:

— Կարդացէ՛ք, ըսաւ:

Կոմսը նամակը կարդաց:

— Ո՛հ, ըսաւ:

— Ցետին դրութիւնը դիտեցի՞ք:

— Այո՛, տեսայ.

« Եթէ առտուան ժամը վեցին՝ չորս հազար թալեռը ձեռքս

չհասնի, ժամը եօթնին Ալպէր կոմսը ապրելէ պիտի դադրի։

«ԼՈՒԻՃԻ ՎԱՆԲԱ»

— Ասոր ի՞նչ կ՚ըսէք, հարցուց Ֆրանց։

— Պահանջուած գումարն ունի՞ք։

— Այո՛, բայց ութ հարիւր թալեր պակաս է։

Կոմսը իր գրասեղանին մօտեցաւ, բացաւ զայն և ոսկւով լեցուն գզրոց մը բանալով,

— Կը յուսամ որ, ըսաւ, ուրիշի դիմելով պիտի չանպատուէք զիս։

— Ընդ հակառակն՝ կը տեսնէք որ ուղղակի ձեզ եկած եմ։

— Ես ալ շնորհակալ եմ ձեզ, ուրեմն առէք, ըսաւ կոմսը նշան ընելով Ֆրանցին որ ուզածին չափ առնու։

— Անհրաժեշտ պէ՞տք է այս գումարը Լուիճի Վանբային ղրկել, հարցուց երիտասարդը աչքը յարած կոմսին երեսը նայելով։

— Զարմանալի բան, դուք ինքնին դատեցէք, պարոն. յետին գրութիւնը ամեն բան կը յայտնէ։

— Ինձ այնպէս կ՚երևի որ եթէ մտածէք՝ կրնաք այնպիսի միջոց մը գտնել, որով այս գործը շատ աղէկ կրնայ պարզուիլ։

— Ի՞նչպէս, հարցուց կոմսը զարմանքով։

— Օրինակի համար՝ եթէ միատեղ երթանք Լուիճի Վանբան գտնենք, ապահով եմ որ Ալպէրի ազատութիւնը պիտի չմերժէ ձեզ։

— Ինծի՞, և ի՞նչ ազդեցութիւն կը կարծէք որ այն աւազակապետին վրայ ունենամ։

— Միթէ դուք այնպիսի ծառայութիւն մը չմատուցի՞ք անոր որ երբեք չմոռցուիր։

— Ի՞նչ ծառայութիւն։

— Միթէ Բէբբինոյին կեանքը չազատեցի՞ք։

— Ա՛հ, ո՞վ ըսաւ ձեզ այդ բանը։

— Ի՞նչ հարկ, ես գիտեմ։

Կոմսը վայրկեան մը լուռ և յօնքը կնճռուած մնաց։

— Եւ եթէ երթամ Վանբան գտնելու, պիտի ընկերանա՞ք ինձ։

— Եթէ իմ ընկերութիւնս ձեզ անհաճոյ չըլլայ։

— Շատ աղէկ, կը հաւանիմ. օդը գեղեցիկ է, և Հռոմի դաշտին մէջ շրջագայութիւնը վնաս չտալէն զատ՝ օգտակար կրն ըլլալ։

— Զէնք առնուլ պէ՞տք է։

— Ի՞նչ ընելու համար։

— Ստա՞կ։

— Հարկ չէ. այս տոմսակը բերող մարդը ո՞ւր է։

— Փողոցն է։

— Պատասխանի՞ն կ՚ըսպասէ։

— Այո՛։

— Պէտք է որ նախ հարցընենք թէ ո՞ւր պիտի երթանք. երթամ կանչեմ զան։

— Պարապ տեղը պիտի կանչէք. չուզեց վեր ելնել։

— Ձեր սենեակը գալու համար գուցէ, բայց իմ սենեակս գալու դժուարութիւն պիտի չցուցընէ։

Կոմսը դէպ ՚ի փողոցին վրայ նայող դահլիճին պատուհանը գնաց, և եղանակաւ մը սուլեց։

Վերարկուով մարդը պատին քովէն զատուեցաւ և փողոցին մինչև մէջ տեղը յառաջացաւ։

— Վե՛ր եկուր, ըսաւ կոմսը իր ծառային հրաման մը ըրածին պէս։

Նուիրակը առանց յապաղելու և առանց երկմտելու իսկոյն պանդոկը մտաւ և հինգ մանրերկրորդ ետքը դահլիճին առջևը երևցաւ։

— Ո՛հ, Բէբբինօ, դո՞ւն ես, ըսաւ կոմսը։

Բայց Բէբբինօ՝ փոխանակ պատասխանելու՝ ծնկան վրայ եկաւ, կոմսին ձեռքը բռնեց և քանի մը անգամ համբուրեց։

— Զարմանալի բան, ըսաւ կոմսը, կեանքդ ազատելս չմոռցա՞ր տակաւին, թէև այսօր ութ օր եղաւ։

— Ո՛չ, տէր իմ, բնաւ չպիտի մոռնամ, պատասխանեց Բէբբինօ խորին երախտագիտութեան ձայնով մը։

— Բայց վերջապէս շատ է այդ երախտագիտութիւնը, ոտք ելիր և պատասխան տուր։

Բէբբինօ երկմտութեամբ Գրանդին նայեցաւ։

— Կրնաս համարձակ խօսիլ, Նորին Վսեմութիւնը բարեկամներէս մէկն է, ըսաւ կոմսը նուիրակին, և Գրանդին դառնալով կրկնեց. — Անշուշտ կը ներէք որ այս տիտղոսը տամ ձեզ. այս մարդը վստահացընելու համար հարկ է որ այսպէս կոչեմ զձեզ։

— Ես կոմսին բարեկամն եմ, կրկնեց Գրանդ. կրնաս համարձակ խօսիլ։

— Շատ աղէկ ուրեմն, ըսաւ Բէբբինօ կոմսին դառնալով, Ձեր Վսեմութիւնը թող հարցընէ ինձ և ես պատասխան տամ։

— Ալպէր դերակոմսը ինչպէս Լուիզիին ձեռքը ինկաւ։

— Տէր իմ, Գաղղիացիին կառքը քանի մը անգամ Թէրէզային կտուքին առջևէն կ'անցնի։

— Գլխաւորին սիրուհո՞ն։

— Այո՛. Գաղղիացին սիրահար աչօք անոր կը նայի, Թէրէզա իսկ առ զբօսանս նոյնը կ'ընէ։ Գաղղիացին ծաղկի փունջեր կը նետէ, Թէրէզա ալ անոնց փոխարէնը կը հաստուցանէ. ամեն այս գործերը, ինչպէս յայտնի է, գլխաւորին հաւանութեամբը կ'ըլլային, որ նոյն կառքին մէջ կը գտնուէր։

— Ի՞նչպէս, ըսաւ Գրանդ, Լուիզի Վանբան Հռոմայեցի գեղջկուհիներուն կառքին մէ՞ջն էր։

— Կառավարի զգեստ հագած կառքը կը կառավարէր, պատասխանեց Բէբբինօ։

— Ետքը՞, հարցուց կոմսը։

— Ետքը, Գաղղիացին դիմակը երեսէն կը հանէ, Թէրէզա իսկ միշտ գլխաւորին հաւանութեամբը նոյնը կ'ընէ. Գաղղիացին ժամադրութիւն մը կը պահանջէ, և Թէրէզա կը շնորհէ անոր, միայն թէ Թէրէզային տեղ Պէբբօն կ'երթայ Սան-Ճիաղոմօ հրեղեցոյն սանդուխին վրայ Գաղղիացիին հանդիպելու։

— Ի՞նչպէս, ընդմիջեց դարձեալ Գրանդ, անոր ձեռքէն մոմը յափշտակող գեղջկուհին . . . ։

— Տասն ու հինգ տարեկան պատանի մ'էր, պատասխանեց Բէբբինօ. բայց բարեկամիդ անորմէ խաբուիլը ամօթ չէր, քանզի Պէբբօն շատ մարդեր խաբած է։

— Պէբբօն պարիսպներէն դուրս հաներ է զան, հարցուց կոմսը։

— Այո՛, Մաչէլլոյի ծայրը կառք մը կ'ըսպասէր. Պէբբօ ներս կը մտնէ և կը հրաւիրէ Գաղղիացին որ իր եաւէն գայ, Գաղղիացին առանց երկմտելու ազնուութեամբ իր աջ ձեռքը Պէբբոյին կ'երկնցընէ և անոր քովը կը նստի։ Այն ժամանակ Պէբբօ անոր կ'իմացընէ թէ Հռոմէն մղոն մը հեռու ամարանոց մը պիտի տանի զինքը։ Գաղղիացին կ'ապահովցընէ Պէբբօն թէ մինչև աշխարհիս ծայրը իր հետը երթալու պատրաստ է։ Կառավարը անմիջապէս Ռիբէթթա փողոցէն կ'անցնի, և երբ Սան Բաօլօ դռնէն երկու հարիւր քայլ անդին դաշտը կը հասնի, Գաղղիացին չափազանց յանդգնութիւն ընել ուզելով, Պէբբօ զոյգ մը ատրճանակ անոր կոկորդին կը բռնէ. կառավարը անմիջապէս ձիերը կը կեցընէ, իր նստարանին վրայ ետին կը դառնայ և Պէբբոյին պէս կ'ընէ։ Նոյն միջոցին Ալմոյի եղերքը պահուռտ մերիններէն չորս հոգի կառքին երկու կողմը կը վազեն։ Գաղղիացին ինքզինքը պաշտպանելու շատ ջանք կ'ընէ և Պէբբօն խեղդել ուզեր է. բայց ինչ կրնար ընել զինեալ հինգ հոգւոյ դէմ. կ'ըստիպուի անձնատուր ըլլալ։ Մերինները կառքէն կ'իջեցընեն զան, և փոքր դետին եղերքէն յառաջանալով, Թէրէզայի և Լուիզիի քով կը տանին, որոնք Սան-Սէպաստիանոյի ստորերկրեայ դերեզմանատան մէջ իրեն կ'ըսպասէին։

— Բայց, ըսաւ կոմսը Գրանդին կողմը դառնալով, խիստ հետաքրքրական պատմութիւն մը կ'երևի ինձ այս. դուք ինչ կ'ըսէք, դուք որ աղէկ կը ճանչնաք այսպիսի բաները։

— Այո՛, խիստ զուարճալի պատմութիւն մը պիտի ըլլար, ըսաւ Գրանդ, եթէ այս դիպուածը Ալպէրէն ուրիշ մէկու մը հանդիպէր։

— Իրօք, ըսաւ կոմսը, եթէ զիս հոս չդտնէիք, բարեկամուդ ծանր պիտի նստէր այս դիպուածը. բայց ապահով եղիր, միայն վախը իր քովը պիտի մնայ։

— Ուրեմն պիտի երթանք զան գտնելու, հարցուց Գրանդ։

— Ինչո՞ւ չէ, մանաւանդ որ գտնուած տեղը խիստ զուարճա-

լի է։ Սան–Սէպաստիանոյի գերեզմանատունը կը ճանչնաք։

— Ո՛չ, ամենևին գացած չեմ, բայց միտք ունէի օր մը երթալու։

— Ուրեմն, ասկէ առելի յաջող առիթ մը չէր կրնար ըլլալ. կառքդ պատրաստ է։

— Ո՛չ։

— Հոգ չէ. սովորութիւն ունին ինծի համար դիշեր և ցորեկ լծուած պատրաստ կառք մը կը պահեն։

— Լծուած պատրաստ կառք մը։

— Այո՛, ես խիստ մտահաճ մէկն եմ. ստոյգն ըսելով՝ երբեմն արթնցած ժամանակս, ճաշէս վերջը, կամ դիշերուան մութին, աշխարհիս որ և է կողմը երթալու բաղձանք մը կ'ըզգամ, և կը մեկնիմ։

Կոմսը զանգակը մէկ անգամ հնչեցուց, իւր սենեկապանը եւրևցաւ։

— Կառքը իւր կայանէն հանել տուր, ըսաւ, և պրպանակներուն մէջէն ատրճանակները հանէ. հարկ չէ կառավարը արթընցընել, Ալին կը տանի ղմեզ։

Վայրկեան մը ետքը կառքին ձայնը լսուեցաւ, որ դրան առջևը կեցաւ։

Կոմսը ժամացոյցը նայեցաւ։

— Կէս դիշերը կէս ժամ անցած է, ըսաւ. կրնայինք առտուան ժամը հինգին ասկէ մեկնիլ և ժամանակին երթալու տեղերնիս հասնիլ. բայց դուք այս յապաղումը ձեր ընկերին անհանգիստ դիշեր մը անցընելուն պատճառ ըլլայ. ուստի լաւագոյն է շուտով երթալ և անօրէններուն ձեռքէն ազատել զան։ Միշտ ինձ ընկերանալու որոշած էք։

— Միշտ։

— Եկէք ուրեմն։

Բէբբինօ դուրս ելաւ։ Ֆրանզ և կոմսը անոր ետևէն դացին։

Դրան առջև կառքը պատրաստ կեցեր էր, և Ալի առջի նստարանին վրայ կը դտնուէր։

Ֆրանզ Մօնթէ–Քրիսթոյի քարայրին համր դերին ճանչցաւ։

Ֆրանզ և կոմսը կառքին մէջ մտան։

Բէբբինօ Ալիին քովը նստաւ, և կառքը ձիարշաւ ճանբայ ելաւ։

Ալի հարկ եղած հրամանները ընդունելով, գորաւոր փողոցը մտաւ, վաչխնոյէն Սան Կրէկորիօ փողոցը ելաւ և Սան–Սէպաստիանոյի դուռը հասաւ։

Հոս դռնապանը ուղեց դժուարութիւններ յուցընել և չթողուլ որ կառքը անցնի. բայց Մօնթէ–Քրիսթոյ կոմսը Հռոմի կառավարչին հրամանագիրը ցուցուց անոր, որ արտօնութիւն կու տար իրեն թէ դիշերուան և թէ ցորեկուան ուզած ժամուն քաղաքը մտնել ու ելնել. դռնապանը զայն տեսնելուն պէս՝ վանդակը բացաւ, իւր աշխատութեան փոխարէն Լուի մը շնորհուեցաւ իրեն, և կառքը անցաւ։

Կառքին անցած ճանբան Աբբիէնի հին ճանբան էր, որ դերեզմաններով բոլորուելին պատած էր։

Ժամանակ առ ժամանակ՝ նոր ծագող լուսնին լուսովը Ֆրանզին այնպէս կ'երևէր թէ աւերակներուն մէջէն պահանորդ մը դուրս կ'ելնէ։

Բայց Բէբբինոյին մէկ նշանովը այս պահանորդը վերստին ստուերին մէջ կը մտնէր և աներևոյթ կ'ըլլար։

Գարագալլայի կրկէսէն քիչ մը ապին կառքը կեցաւ, Բէբբինօ երկու դռնակը բացաւ, և կոմսն ու Ֆրանզ կառքէն իջան։

— Տասն վայրկենէն պիտի հասնինք, ըսաւ կոմսը իւր ընկերին։

Ետքը Բէբբինօն մէկ կողմ կանչեց, ցած ձայնով հրաման մը ըրաւ, և Բէբբինօ կառքին պահանոցին մէջէն ջահ մը առնելով մեկնեցաւ, և բարձր խոտերուն մէջ աներևոյթ եղաւ։

— Հիմա, ըսաւ կոմսը, անոր ետևէն երթանք։

Ֆրանզ և կոմսը Բէբբինոյի բռնած շաւղին վրայէն հարիւր քայլի չափ յառաջանալով զառիվայր ձորակի մը մէջ մտան, և ստուերին մէջ երկու հոգի տեսան, որոնք իրարու հետ կը խօսէին։

— Յառաջանալ պէտք ենք, հարցուց Ֆրանզ կոմսին, թէ սպասելու ենք։

— Քալենք, Ռէբբինօն մեր հասնիլը պահանորդին իմացուցած պիտի ըլլայ։

Իրօք՝ այն երկու մարդոց մէկը Ռէբբինօն էր և միւսը պահանորդը։

Ֆրանզ և կոմսը մօտեցան, և աւազակը բարևեց զանոնք։

— Տէր իմ, ըսաւ Ռէբբինօ կոմսին դառնալով. եթէ կը հաճիք եռևէս գալ, ստորերկրեայ պերեզմանատան դուռը ասկէ երկու քայլ հեռու է։

— Շատ աղէկ, ըսաւ կոմսը, առջևէն քալէ։

Իրօք՝ մայրաքաղաքներու կոյտի մը ետին և ժայռերու մէջ տեղը բացուած մը կար, ուրկից հազիւ մարդ մը կրնար անցնիլ։

Ռէբբինօ ամենէն առաջ ներս մտնելով և քանի մը քայլ յառաջանալէն ետև՝ ստորերկրեայ անցքը սկսաւ լայննալ։ Այն ատեն կեցաւ, ջահը վառեց և ետին դարձաւ որպէս զի տեսնէ թէ միւսները ներս մտա՞ն։

Ֆրանզ հրաւիրեր էր որ կոմսը առաջ մտնէ, ու ինքը ետևէն մտաւ։

Երկիրը անղդալի զառիվայրով մը կը յառաջանար, և երթալով կը լայննար. այսու ամենայնիւ Ֆրանզ և կոմսը տակաւին ստիպեալ էին պռկուած յառաջանալ և դժուարաւ քով քովի քալել։

Այսպէս հարիւր յիսուն քայլ յառաջանալէն ետև՝ — Ո՞վ է+ — ձայնէն կեցան։

Նոյն միջոցին՝ իրենց ջահին ցոլացումէն լայնաբերան հրացանի մը փողին փայլիլը տեսան։

— Բոբեկա՞ ես+, ըսաւ Ռէբբինօ մինակ յառաջանալով և ցած ձայնով քանի մը խօսք խօսելով այս երկրորդ պահանորդին, որ առաջինին պէս բարևեցին ետև՝ նշան ըրաւ պիշերային հիւրերուն որ կրնան իրենց ճանբան շարունակել։

Պահանորդին ետին քսանի չափ աստիճանով սանդուղ մը կար։

Ֆրանզ և կոմսը վար իջան և տեսակ մը բակի մէջ պտնուեցան։

Աստղի մը ճառագայթներուն պէս առջևնին հինգ ճանբայ կը տարածուէին, և որմերուն մէջ դաղաղի ձևով իրարու վրայ փո-

րուած ծակերը կը ցոյցընէին որ վերջապէս ստորերկրեայ պերեզմանատունը մտած են։

Այս ճանբաներէն մէկուն մէջ, որուն տարածութիւնը անհնար էր որոշելը, լոյսի ցոլացում մը կը տեսնէին։

Կոմսը իւր ձեռքը Ֆրանզին ուսին վրայ դրաւ։

— Հանգստացած աւազակներու բանակ մը կ'ուզէք տեսնել, ըսաւ։

— Անշուշտ, պատասխանեց Ֆրանզ։

— Ուրեմն հետս եկէք. . . . Ռէբբինօ, ջահը մարէ։

Ռէբբինօ հնազանդեցաւ. Ֆրանզ և կոմսը խորին մթութեան մէջ մնացին։

Միայն թէ իրենցմէ յիսուն քայլի չափ անդին պատերուն երկայնութեանը վրայ սկսաւ շողալ կարմրագոյն լոյսի մը ցոլացումը, որ Ռէբբինոյին ջահին մարելէն ետև աւելի տեսանելի եղաւ։

Կոմսը մթութեան մէջ տեսնելու եզական կարողութիւն ունեցողի մը պէս Ֆրանզին առաջնորդելով, լուսութեամբ յառաջացան։

Սակայն քիչ քիչ իրարև առաջնորդ բռնած լուսին մօտենալով, Ֆրանզ իսկ կ'ըսկսէր իւր ճանբան դիւրութեամբ որոշել։

Իրենց ճանբուն վրայ երեք կամար կային, որոց մէջ տեղինը դուռի տեղ կը ծառայէր։

Այս կամարներուն մէկ կողմը այն ներբանցքը կը պտնուէր, ուր կը դանուէին Ֆրանզ և կոմսը, և միւս կողմը քառակուսի մեծ սենեակ մը կար արդէն յիշուած ծակերուն նման խորշերով շրջապատեալ։

Այս սենեկին մէջ տեղը չորս քար տնկուած էին, որոնք ժամանակաւ խորանի տեղ կը ծառայէին, ինչպէս որ դեռ անոնց վրայ եղած խաչը կը յայտնէր։

Սիւնի մը բունին վրայ դրուած ճրագի մը ժժղոյն և դողդոջուն լոյսը ստուերին մէջ պահուած երկու այցելուներուն այն տարօրինակ տեսարանը կը լուսաւորէր։

Նստած մարդ մը արմուկը այն սիւնին կոթնցուցած և կռնակը կամարներուն դարձուցած կը կարդար, ուրկից այցելուները զինքը կը դիտէին։

Ա յս մարդը Լուիճի Վանբա աւազակապետն էր :

Իր բոլորտիքը վերարկուներուն մէջ ամփոփուած քսանի չափ աւազակներ երկնցած պառկած էին :

Իւրաքանչիւր ոք իւր հրացանը իւր քովը դրած էր :

Խիստ ներսը՝ ստուերի նման հազիւ տեսանելի պահանորդ մը լռութեամբ կ՚երթևեկէր բացուածքի մը առջև, որ դրեթէ անտեսանելի էր այն կողմին մթութեանը պատճառաւ :

Կոմսը քիչ մը ժամանակ թողլէն ետև որ Ֆրանզ այս զբաղճալի տեսարանը դիտելով իւր նայուածքը յագեցընէ, ձեռքը շրթանց վրայ դրաւ և լռութիւն պատուիրեց. այնուհետև միջին կամարէն սենեկին մէջ մտաւ և դէպ՚ի Վանբա յառաջացաւ, որ իւր ընթերցանութեանը մէջ այնչափ խորունկ ընկղմեր էր որ կոմսին քայլերուն ձայնը անգամ չառեր էր :

— Ո՞վ է, պոռաց պահանորդը, որ ամեն կողմ կը հսկէր և ճրագին լուսովը իւր գլխաւորին ետին տարածուած ստուերը տեսեր էր :

Այս ձայնին վրայ Վանբա աշխուժիւ ոտք ելաւ, և իւր մէջքէն ատրճանակը քաշելով պարպեց զայն :

Նոյն միջոցին բոլոր աւազակները ոտք ելան, և քսանի չափ լայնաբերան հրացաններու փողերը կոմսին ուղղուեցան :

— Ո՛ հօ՛, սիրելիդ իմ Վանբա, ըսաւ կոմսը հանդարտութեամբ և կատարեալ անխռով ձայնով մը, կ՚երևի թէ մեծ պատրաստութիւն կը տեսնես բարեկամի մը ընդունելութիւն տալու համար :

— Վա՛ր առէք ղէնքերնիդ, պոռաց աւազակապետը մէկ ձեռքովը հրամայական նշան մը ընելով, իսկ միւսովը ակնածութեամբ իւր գլխարկը կը հանէր : Կը ներես, պարոն կոմս, ըսաւ այն բոլոր տեսարանին վրայ իշխող եզական անձին դառնալով. չճանչցայ զքեզ, վասն զի ամենևին չէի յուսար որ այս ժամուս քու այցելութեամբդ զիս պատուես :

— Կ՚երևի թէ ամեն բանի մէջ կարճ յիշողութիւն ունիս, Վանբա, ըսաւ կոմսը, որով ոչ միայն մարդոց դէմքը կը մոռնաս, այլ և անոնց հետ ըրած դաշինքդ :

— Եւ որո՞նք են մոռցած դաշինքս, պարոն կոմս, հարցուց աւազակապետը այնպիսի մարդու մը պէս, որ եթէ պակասութիւն մը ըրած է, զան ուղղելու կը փութայ :

— Դաշինք ըրած չէ՞նք որ ոչ միայն իմ՝ այլ և բարեկամացս անձը քեզ նուիրական պիտի ըլլային :

— Եւ ի՞նչ բանի մէջ դաշանց հակառակ գտնուեցայ, տէր իմ :

— Այս իրիկուն Ալպէր տը Մորսէրֆ զերակոմսը բռնեցիր և հոս բերիր. միթէ չէի՞ր դիտեր անոր ոչ ըլլալը, շարունակեց կոմսը այնպիսի ձայնով մը, որմէ Ֆրանզ սարսռաց, այն երիտասարդը իմ բարեկամներէս մէկն է, այն երիտասարդը ինձի հետ մի և նոյն պանդոկը կը քնակի, այն երիտասարդը ութ օր իմ կառքովս պտըտեցաւ, այսու ամենայնիւ դարձեալ կը կրկնեմ՝ դուն բռնեցիր և հոս բերիր զան, և օտարականի մը պէս, յաւելցուց կոմսը նամակը ծոցէն հանելով, անոր փրկանքը պահանջեցիր :

— Ինչո՞ւ այս բանս չիմացուցիք ինձ դուք, ըսաւ աւազակապետը իւր մարդոց դառնալով, որոնք անոր նայուածքէն ամենքն ալ ետ քաշուեցան. ինչո՞ւ պատճառ եղաք խօսքս կրժելու պարոն կոմսին պէս մարդու մը դէմ, որուն ձեռաց մէջ կը գտնուի մեր ամենուս կեանքը : Կ՚երդնում որ եթէ գիտնայի թէ ձեզմէ մէկը երիտասարդին նորին Վսեմութեան բարեկամն ըլլալը գիտէր, իմ ձեռքս անոր գլուխը պիտի ջախջախէի :

— Կը տեսնէ՞ք, ըսաւ կոմսը Ֆրանզին կողմը դառնալով, ես ձեզ չըսի՞ թէ այս տեղ սխալմունք մը պիտի ըլլայ :

— Հետդ ո՞վ կայ, հարցուց Վանբա շփոթելով :

— Ան անձը, որուն այս նամակը ուղղուած էր, և որուն ուզեցի յուցընել թէ Լուիճի Վանբա խոստմնազանց չէ : Եկէք, պարոն, ըսաւ կոմսը Ֆրանզին, ահա Լուիճի Վանբան պիտի խոստովանի ձեզ թէ այս եղած սխալմանը համար աստիկ գժկամակած է :

Ֆրանզ մօտեցաւ, և աւազակապետը քանի մը քայլ յառաջնալով,

— Բարի եկաք, տէր իմ, ըսաւ անոր. պարոն կոմսին ըսածները և իմ տուած պատասխաններս լսեցիք, կը յաւելցընեմ որ

ամենևին չէր ուզեր չորս հազար թալեռի համար այսպիսի բան մը պատահեր:

— Բայց, ըսաւ Ֆրանզ անհանգստութեամբ իւր բոլորտիքը նայելով, ո՞ւր է կալանաւորը, զան չեմ տեսներ հոս:

— Կը յուսամ որ ամենևին բան մը պատահած չէ անոր, ըսաւ կոմսը իւր յօնքը կնճռելով:

— Կալանաւորը հոն է, ըսաւ Վանբա ձեռքովը պահանորդին եղած կողմը ցոյցընելով, երթամ ես անձամբ իմացընեմ որ ազատ է:

Աւազակապետը դէպ 'ի իւր ցուցուցած կողմը յառաջացաւ, և Ֆրանզ ու կոմսը անոր ետևէն գացին:

— Կալանաւորը ի՞նչ կ'ընէ, հարցուց Վանբա պահանորդին:

— Ճշմարիտ չեմ գիտեր, տէր իմ. ժամ մը 'ի վեր անոր շարժիլը անգամ չլսեցի:

— Եկէք, տեարք իմ, ըսաւ Վանբա:

Կոմսը և Ֆրանզ երթին կամ ուր աստիճաններէ վեր ելան միշտ աւազակապետին առաջնորդութեամբը, որ սարդունակը քաշեց և դուռ մը բացաւ:

Անոնք տեսան՝ ձրագի մը լուսովը Ալպէրը տեսան, որ աւազակի մը վերարկուովը ծածկուած՝ սնկիւն մը պառկեր և խորունկ քունի մէջ ընկղմեր էր:

— Ստուգիւ, ըսաւ կոմսը իրեն յատուկ եղած կերպովը ժպտելով, այնպիսի հանգարտութեամբ քնացեր է, որ չկարծուիր թէ առտուան ժամը եօթնին հրացանի պիտի բռնուէր:

Վանբա զարմացմամբ մը Ալպէրը կը դիտէր, և յայտնի կը ցոյցնէր որ անոր անվեհերութեանը անպատ չէր:

— Իրաւունք ունիք, պարոն կոմս, ըսաւ, այս մարդը ձեր բարեկամը պիտի ըլլայ:

Ետքը Ալպէրին մօտենալով և անոր ուսին դպչելով,

— Տէր իմ, ըսաւ, կը հաճի՞ք արթննալու:

Ալպէրը թևերը տարածեց, արտևանունքը շփեց և աչքը բացաւ:

— Ա՛հ, դո՞ւք էք, տէր իմ, ըսաւ. բայց պէտք էիք թողուլ որ քնանամ. հրաշալի երազ մը կը տեսնէի. չմողուցիք որ Թորլոնիա պուքսին պալատը կ... կոմսուհոյն հետ արշաւապարս լմընցընեմ: Ժամը դեռ մէկ ու կէս է, յաւելցուց իւր ժամացոյցը քննելով, զոր իւր քովը պահեր էր ժամը քանի ըլլալը գիտնալու համար. բայց ինչո՞ւ այս ժամուս կ'արթնցընէք զիս:

— Ըսելու համար որ ազատ էք, տէր իմ:

— Սիրելիս, կրկնեց Ալպէրը մտքի կատարեալ ազատութեամբ, այսուհետև Մեծին Նաբոլէոնի այս առակը մտքերնիդ պահեցէք որ կ'ըսէր թէ՝ «Միայն դոյժ մը տալու համար արթնցուցէք զիս»: Եթէ չարթնցընէիք զիս, արշաւապարս պիտի վերջացընէի, և բոլոր կենացս մէջ շնորհակալ պիտի ըլլայի ձեզ. . . : Ուրեմն փրկանքս բերի՞ն:

— Ո՛չ, տէր իմ:

— Հապա ի՞նչպէս ազատ եմ:

— Մարդ մը, որուն բան մը չեմ կրնար մերժել, զձեզ առնելու եկած է:

— Մինչև հո՞ս եկած է:

— Այո՛:

— Ճշմարիտ, խիստ սիրելի անձ մը պիտի ըլլայ այդ մարդը: Ալպէրը իւր բոլորտիքը նայեցաւ և Ֆրանզը տեսնելով,

— Դո՞ւն ես, սիրելիդ իմ Ֆրանզ, ըսաւ, որ այս աստիճան անձնանուիրութիւն կը ցուցընես ինձ:

— Ո՛չ ես՝ այլ Մօնթէ–Քրիսթոյ կոմսը մեր դրացին է:

— Ա՛հ, ստուգիւ, պարոն կոմս, ըսաւ զուարթ ձայնով մը Ալպէրը՝ իւր փողկապը և թեզանակները շիտակելով, ստուգիւ թանկագին մարդ մ'էք, և կը յուսամ թէ դիս ձեր մշտնջենաւոր երախտապարտը պիտի համարիք նախ մեզ կառք մը շնորհելնուդ և երկրորդ՝ այս դործին համար:

Այս ըսելով ձեռքը կոմսին երկնցուց, որ թէև իւր ձեռքը տուաւ, բայց անորը բռնած ժամանակը՝ սարսուռ մը ազատ չէր:

Աւազակապետը բոլոր այս տեսարանը ապշեալ կերպարանքով մը կը դիտէր:

Կալանաւորներուն իւր առջևը դողալը տեսնելու սովորած էր, և ահա անոնց մէջ այնպիսի մէկը կը դանուէր, որուն զուարթ բնութիւնը ամենևին փոփոխութիւն մը ստացած չէր:

Իսկ Ֆրանց չափազանց ուրախ էր որ Ալպէր աւազակի մը առջև իսկ ազգային պատիւը պաշտպաներ էր ։

— Սիրելիդ իմ Ալպէր, ըսաւ անոր, եթէ կը հաճիս՝ շուտ ըրէ, դեռ ժամանակ ունինք Թորլոնիայի տունը երթալու. ընդմիջած արշաւապարդ կը լրացընես, որով ամենևին Պ. Լուիճիէն գժգոհելու տեղ չես ունենար, որ ստուգիւ այս գործին մէջ խիստ ազնուութեամբ վարուեցաւ ։

— Ո՛հ, իրաւունք ունիս, ժամը երկուքին կրնանք հոն հասնիլ ։ Պարոն Լուիճի, շարունակեց Ալպէր, Ձեր Վսեմութենէն բաժնուելու համար կատարելու ուրիշ պայման մը կա՞յ ։

— Ամենևին, պարոն, պատասխանեց աւազակապետը, օդին պէս ազատ էք ։

— Ուրեմն ձեզ երջանիկ և ուրախ կեանք մը կը մաղթեմ ։ Եկէք, պարոններ, եկէք ։

Ֆրանց և կոմսը Ալպէրին ետևէն սանդուղէն վար իջան և քառակուսի սենեկէն անցան. բոլոր աւազակները գլխարկնին ձեռքերնին բռնած ոտքի վրայ կանգնած էին ։

— Բէբբինօ, ըսաւ աւազակապետը ջահը ինձ տուր ։

— Ի՞նչ կ՚ընես, սիրելիս, ըսաւ կոմսը ։

— Ձեզ պիտի առաջնորդեմ, ըսաւ աւազակապետը. Ձեր Վսեմութեանը այս փոքրիկ պատիւը կրնամ ընել ։

Եւ վառուած ջահը հովիւին ձեռքէն առնելով, հիւրերուն առջևը անցաւ՝ բայց ոչ թէ նուաստ ծառայութիւն ընող ծառայի մը պէս, այլ դեսպաններու առջևէն գացող թագաւորի մը պէս ։

Երբ դրան առջևը հասաւ՝ խոնարհութիւն մը ըրաւ ։

— Եւ հիմա, պարոն կոմս, ըսաւ, վերստին ներումն կը խնդրեմ և կը յուսամ թէ այս դիպուածին համար անյիշաչար կ՚ըլլաս ։

— Ապահով եղիր, սիրելիդ իմ Վամբա, ըսաւ կոմսը, մանաւանդ որ այնպիսի ազնուութեամբ քու սխալմունքդ ուղղեցիր, որ գրեթէ գոհ ըլլալու կը համարձակինք այս դիպուածին վրայ ։

— Պարոններ կրկնեց աւազակապետը երիտասարդներուն դառնալով, գուցէ առաջարկութիւնս անհաճոյ չերևի ձեզ. սակայն

եթէ երբէք ինձ երկրորդ այցելութիւն մը ընելու բաղձանք մը ունենաք, ո՛ւր որ ըլլամ՝ զձեզ պատուով պիտի ընդունիմ ։

Ֆրանց և Ալպէր բարևեցին զան, կոմսը առջևէն դուրս ելաւ, Ալպէր անոր ետևէն գնաց, և Ֆրանց ամենէն վերջը մնաց ։

— Ձեր Վսեմութիւնը ինձ ընելու հարցում մը ունի, ըսաւ Վամբա ժպտելով ։

— Այո՛, պատասխանեց Ֆրանց. մեծ հետաքրքրութեամբ կ՚ուզէի գիտնալ թէ մեր եկած ժամանակ ձեր այնչափ ուշադրութեամբ կարդացածնիդ ի՞նչ գիրք էր ։

— Կեսարու Յիշատակարանները, ըսաւ աւազակապետը, իմ ամենէն աւելի սիրած գիրքս այս է ։

— Ֆրանց, չե՞ս գար, հարցուց Ալպէր ։

— Ահա՛ եկայ, պատասխանեց Ֆրանց, և ինք անցքէն դուրս ելաւ ։

— Ա՛հ, թողութիւն շնորհեցէք, պարոններ, ըսաւ Ալպէր քանի մը քայլ յառաջանալէն ետև՝ ետ դառնալով ։ Կը ներէք, տէր իմ, ըսաւ Վամբային և իր գլանը անոր բռնած ջահէն վառեց ։ Հիմա, պարոն կոմս, որչափ որ կարելի է՝ շուտով մեկնինք, վասն զի մեծ բաղձանք մը ունիմ գիշերը Պրաչիանօ դուքսին տունը անցընելու ։

Կառքը թողուցած տեղերնին գտան. կոմսը Ալիին Արաբերէն խօսք մը ըսաւ, և ձիերը սաստիկ արագութեամբ արշաւեցին ։

Ճիշտ ժամը երկուքն էր երբ երկու բարեկամները պարահանդիսին սրահը մտան ։

Իրենց դարձը մեծ ազդեցութիւն ըրաւ. բայց անոնց միատեղ ներս մտնելը տեսնելով՝ Ալպէրի համար ամենուն զգացած անհանգստութիւնը դադրեցաւ ։

— Տիկին, ըսաւ Մորսէրֆ դերակոմսը՝ կոմսուհւոյն մօտենալով, երէկ հաճեցաք ինձ արշաւապար մը խոստանալ. թէև այս քաղցր խոստումնիդ ընդունելու համար քիչ մը ուշ եկայ, բայց ահա իմ բարեկամս, որուն ճշմարտախօսութիւնը կը ճանչնաք, այս յանցանքին իմս չըլլալը պիտի հաստատէ ձեզ ։

Այս ըսելով Ալպէր իր թևը կոմսուհւոյն մէջքին բոլորտիքը

անցուց և անոր հետ պարոնները յորձանքին մէջ անհետացած եղաւ։

Այս միջոցիս Ֆրանզին միտքը զբաղած էր Մօնթէ–Քրիսթոյ կոմսին այն զարմանալի սարսուռը, որ իւր ձեռքը Ալպէրին տալու ստիպուած ժամանակը զգացեր էր։



ԳԼՈՒԽ ԺԵ

ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ օրը Ալպէր արթննալուն պէս՝ Ֆրանզին առաջարկեց որ երթան կոմսին այցելութիւն մը ընեն. թէև դիշերը շնորհակալ եղեր էր անոր, բայց կը մտածէր որ այնպիսի ծառայութիւն մը մեծ շնորհակալութեանց արժանի է։

Ֆրանզ, որ երկիւղալից հակամիտութեամբ միշտ Մօնթէ–Քրիսթոյ կոմսին քովը դտնուիլ կ'ուզէր, չթողուց Ալպէրը որ առանձին այն մարդուն սենեակն երթայ և անոր ընկերացաւ. եւրիտասարդները մեծ սրահը հրաւիրուեցան, և հինդ վայրկեան ետքը կոմսը ներս մտաւ։

— Պարոն կոմս, ըսաւ Ալպէր զան դիմաւորելով, ներեցէք ինձ կրկնել ձեզ այս առտու ինչ որ չկրցայ երէկ արժանաւոր կերպով ըսել։ Այնպիսի պարագայի մէջ ինձ օդնութեան հասնելնիդ

քնաւ պիտի չմոռնամ, և պիտի յիշեմ միշտ որ դրեթէ ձեզ կը պարտաւորիմ իմ կեանքս։

— Սիրելի դրացիս, պատասխանեց կոմսը ձիծաղելով, ձեր շնորհապարտութեան չափը կ'անցընէք։ Ձեր ձանապարհորդութեան հաշուին քսան հազար ֆրանքի չափ փոքրիկ խնայողութիւն մը ընել տուի ձեզ. և ոչ ուրիշ բան. կը տեսնէք որ ասոր խօսքը ընելն անդամ աւելորդ է։ Ընդ հակառակին դուք ընդունեցէք իմ շնորհակալութիւններս, որ ինձի միշտ սիրելի և անհման բարեկամներ եղաք։

— Ի՞նչ կրնայի ընել, կոմս, ըսաւ Ալպէր, նայեցայ որ կառավով օդուտ մը չքաղելէն զատ՝ մենամարտութիւն մ'ալ հետևեցաւ. դոնէ այն առաջակներուն սա ուղեցի հասկըցընել թէ աշխարհիս ամեն երկիրներուն մէջ կը կռուին, բայց միայն Գաղղիացիք ձիծաղելով կը կռուին։ Այսու ամենայնիւ իմ երախտապիտութիւնս ձեզ յայտնելու համար՝ եկայ հարցընելու թէ արդեօք իմ, կամ բարեկամներուս և կամ ծանօթներուս միջոցաւ ծառայութիւն մը կրնամ մատուցանել ձեզ։ Հայրս Մորսէրֆ կոմսը, որ Սպանիական սերտունդէ է, Գաղղիոյ և Սպանիոյ մէջ մեծ համբաւ ունի. ուստի բոլոր գլխս սիրողները և գլխս ալ ձեր հրամանին կը յանձնեմ։

— Հաւատացէք, պարոն սը Մորսէրֆ, ըսաւ կոմսը, որ ես ձեր առաջարկութեան կ'ըսպասէի, և հիմա բոլոր սրտով կ'ընդունիմ զայն։ Արդէն միտքս դրած էի ձեղմէ մեծ շնորհք մը խնդրելու։

— Ի՞նչ շնորհք։

— Բնաւ փարիզ գացած չեմ, և ամենևին չեմ ձանչնար...։

— Ստո՞յգ կ'ըսէք, մինչև հիմա Փարիզ տեսած չէք, ո՛հ, անհաւատալի է։

— Այո՛, ստոյգ է, սակայն հիմա կ'ըզդամ ձեզի պէս որ լուսաւորեալ աշխարհին մայրաքաղաքը տեսնելը կարևոր է։ Աւելի մեծ պատճառ մը ունէի չերթալու, և դուք երկար ժամանակէ՛ի վեր այս անհրաժեշտ ձանապարհորդութիւնը ընէի, եթէ այնպիսի մէկը ձանչնայի հոն, որ կարենար ծանօթացընել ինձ այն

քաղաքը, որու հետ ամենևին յարաբերութիւն մը ունեցած չէի։

— Ո՛հ, ձեզի պէս մարդ մը կրնայ ամեն տեղ պատիւ դտնել։

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն. թէև Պ. Ակուա-տոյի և Պ. Ռոչիլտի հետ իբրև միլիոնատէր մրցելու կարողութիւն ունենամ, սակայն այսպիսի դրամային խաղերու մէջ մտնելու դիտաւորութիւն չունենալով՝ մինչև հիմա Փարիզ չդացի։ Հիմա ձեր առաջարկութեանը վրայ՝ երթալու որոշումս ըրի։ Ըսէք ինձ ուրեմն, սիրելիդ իմ պարոն տը Մորսէրֆ (այս խօսքերը կոմսը զարմանալի ժպիտով մը կ'արտասանէր) երբ Գաղղիա երթամ, յանձնառու պիտի ըլլա՞ք բանալ ինձ այն աշխարհին դռները, ուր Հիւրոնի կամ Զինացիի մը պէս օտարական պիտի ըլլամ։

— Ո՛հ, ապահով եղիք, պարոն կոմս, որ մեծ սիրով և յօժարութեամբ առաջարկութիւննիդ կ'ընդունիմ, պատասխանեց Ալպէր, մանաւանդ որ այս առտու նամակ մը ստացայ Փարիզէն (սիրելիդ իմ Ֆրանզ, շատ մի՛ ծաղրեր զիս) ուր կը հրաւիրեն զիս խիստ համբաւաւոր վաճառատուներու հետ յարաբերութիւն ունեցող երևելի ընտանիքի մը հետ խնամութիւն ընելու։

— Ամուսնանալո՞ւ խնամութիւն, հարցուց Ֆրանզ ծիծաղելով։

— Այո՛, անշուշտ, ուստի Փարիզ եկած ժամանակնիդ զիս ծանրաբարոյ մարդ մը պիտի դտնէք և դուք ընտանիքի հայր, և այս վիճակը իմ բնական ծանրաբարոյութեանս պիտի վայելէ, այնպէս չէ՞։ Այսու ամենայնիւ, կոմս, վերստին կը կրկնեմ՝ ես և իմիններս հոգւով և մարմնով ձերը պիտի ըլլանք։

— Կ'ընդունիմ, ըսաւ կոմսը, քանզի կ'երդնում որ երկար ժամանակէ 'ի վեր մտացս մէջ ունեցած խորհուրդներս 'ի գործ դնելու համար այսպիսի առթի մը կ'ըսպասէի։

Ֆրանզ ամենևին չտարակուսեցաւ որ կոմսին ըսածները այն խորհուրդներն էին, որոց վրայօք Մոնթէ—Քրիսթոյ կղզւոյն քարայրին մէջ կոմսը իւր բերանէն խօսք մը փախցուցեր էր. ուստի կոմսին խօսեցած ժամանակը անոր երեսը նայեցաւ, որպէս զի կարենայ զինքը Փարիզ տանող խորհուրդներուն մէկ նշանը անոր դիմաց վրայ նշմարել. սակայն շատ դժուար էր այն մարդուն

սրտին մէջ թափանցել, մանաւանդ երբ ժպիտով մը զայն կը քօղարկէր։

— Շիտակը ըսէք, կոմս, կրկնեց Ալպէր, որ Մոնթէ—Քրիսթոյի պէս մարդու մը ծանօթանալուն վրայ խիստ ուրախ էր, այդ ձանապարհորդութեան խորհուրդները մնոտի և օդի վրայ չէ՞ն, ինչպէս կ'ընեն մարդիկ շատ անգամ ձանապարհորդութեանց մէջ, և որոնք աւազի վրայ հիմնուած ըլլալով՝ հողմին մէկ շունչովը կը ջնջուին։

— Ո՛չ, ամենևին, պատուոյս վրայ կը խօսիմ որ Բարիզ երթալ կ'ուզեմ ու օր մը պէտք է որ երթամ։

— Բայց ե՞րբ։

— Դուք ե՞րբ պիտի դտնուիք հոն։

— Ե՞ս, ինչ ըսեմ, առ առաւելն տասն ու հինգ օրէն կամ երեք շաբաթէն. ասկէ ուղղակի Բարիզ պիտի երթամ։

— Շատ աղէկ, ուրեմն երեք ամիսէն. կը տեսնէք որ բաւական երկար ժամանակ ազատ կը թողում ձեզ։

— Եւ երեք ամիսէն պիտի դաք դուռս զարնելու, ըսաւ ուրախութեամբ Ալպէր։

— Ի՞նչպէս ժամադրութիւն կը խնդրէք, կ'ուզէք որ օրը և ժամը որոշենք. կ'իմացընեմ որ զարմանալի ճշդութիւն մը պիտի դտնէք իմ ժամադրութեանս մէջ։

— Այո՛, օրը և ժամը որոշենք, իմ ուզածս ալ այդ է։

— Շատ աղէկ ուրեմն, ըսաւ կոմսը ու ձեռքը հայելիին քովը կախուած օրացոյցին վրայ երկնցուց։ — Այսօր փետրուարի 21ն է, ըսաւ (ժամացոյցը նայելով) և առտուան ժամը տասն ու կէս։ Կ'ուզէք առաջիկայ մայիսի 21ին, առտուան ժամը տասն ու կէսին սպասել ինձ։

— Շատ բարի, ըսաւ Ալպէր, նախաճաշիկը պատրաստ պիտի ըլլայ։

— Ո՞ւր կը բնակիք։

— Հէլտէր փողոցը, թիւ 27։

— Մինակ էք ձեր տանը մէջ, և ես նեղութիւն մը չեմ պատճառեր ձեզ։

— Հօրս տանը մէջ, բայց բակին հեռաւորագոյն կողմը բոլորովին բաժնուած սենեակներու մէջ կը բնակիմ։

— Աղէկ։

Կոմսը իր յիշողատետրը բացաւ և գրեց.

«Հէլտէր փողոցը, թիւ 27, մայիսի 21ին, առտուան ժամը տասն ու կէսին»։

— Այսպէսով եղիք, ըսաւ կոմսը յիշողատետրը ծոցը դնելով, որ ձեր ժամացոյցին սլաքը ինձմէ աւելի ճիշտ պիտի չըլլայ։

— Մեկնելէս առաջ պիտի կրնա՞մ զձեզ տեսնել, հարցուց Ալպէր։

— Այո կամ ոչ, երբ պիտի մեկնիք։

— Վաղը իրիկուն ժամը հինգ ու կէսին։

— Ուրեմն երթաք բարեաւ։ Ես Նաբոլի գործ ունիմ և շաբաթ իրիկուն կամ կիրակի առտու պիտի վերադառնամ։

— Դուք ալ պիտի մեկնի՞ք, պարոն սեպուհ, հարցուց կոմսը Ֆրանզին։

— Այո։

— Գաղղիա պիտի երթաք։

— Ո՛չ, Վենետիկ. տակաւին մէկ կամ երկու տարի Իտալիա պիտի մնամ։

— Ուրեմն Փարիզ պիտի չտեսնուի՞նք։

— Կը վախնամ որ այս պատիւը պիտի չունենամ։

— Ուրեմն, պարոններ, բարի ճանապարհորդութիւն կը մաղթեմ ձեզ, ըսաւ կոմսը՝ իւրաքանչիւր ձեռքը երկու բարեկամներուն ներկայացնելով։

Առաջին անգամն էր որ Ֆրանզ այս մարդուն ձեռքը կը բռնէր, որուն դպչած ժամանակը՝ սարսռեցաւ. քանզի մեռելի ձեռքի մը պէս սառած էր։

— Վերջին անգամ մը ևս ըսենք, խօսքերնիս պատուոյ խօսք է, այնպէս չէ՞, ըսաւ Ալպէր. Հէլտէր փողոցը, թիւ 27, մայիսի 21ին, առտուան ժամը տասն ու կէսին։

— Այո, մայիսի 21ին, ժամը տասն ու կէսին, Հէլտէր փողոցը, թիւ 27, կրկնեց կոմսը։

Այնուհետև երկու երիտասարդները կոմսը բարևեցին և դուրս ելան։

— Ի՞նչ ունիս, ըսաւ Ալպէր Ֆրանզին երբ իրենց սենեակը մտան, տրտում կը տեսնեմ զքեզ։

— Այո, պատասխանեց Ֆրանզ, կը խոստովանիմ. կոմսը տարօրինակ մարդ մ'է, և Փարիզի մէջ քեզ տուած ժամադրութեանը չեմ հաւնիր։

— Ի՞նչ կ'ըսես, խենթեցե՞ր ես, սիրելի Ֆրանզ։

— Ի՞նչ գիտնամ, խենթ կամ խելօք, այսպէս կը մտածեմ։

— Մտիկ ըրէ. ես շատ ուրախ եմ որ քեզի խօսելու առիթը ունեցայ, կը տեսնեմ որ միշտ պաղ աչքով կը նայիս կոմսին, ընդ հակառակն՝ ինքը մեզի հետ միշտ ազնուութեամբ վարուեցաւ։ Մասնաւոր բան մը ունի՞ս անոր դէմ։

— Գուցէ։

— Հոս անոր հանդիպելէդ առաջ ուրիշ տեղ տեսա՞ծ էիր զան։

— Այո։

— Ո՞ւր։

— Կը խոստանա՞ս որ քեզ ըսելու պատմութիւնս մէկու մը պիտի չպատմես։

— Կը խոստանամ։

— Պատուո՞յդ վրայ։

— Պատուոյս վրայ։

— Շատ աղէկ. ուրեմն, մտիկ ըրէ։

Այն ատեն՝ Ֆրանզ իւր Մօնթէ-Քրիսթօ կղզին ըրած ճանապարհորդութեան, հոն գտած մաքսանենգերու խումբին, անոնց մէջ եղած երկու ծովահէններուն, և Հազար և Մէկ Գիշերներուն քարայրին մէջ կոմսին իրեն տուած դիւթական ասպնջականութեան բոլոր պարագաները մի առ մի պատմեց Ալպէրին։

Նկարագրեց նաև ընթրիքը, մանրագորը, արձանները, երազը, և ինչպէս իւր արթնցած ժամանակը՝ այն ամեն պատահածներուն իբրև ապացոյց և իբրև յիշատակ՝ այն փոքր շեղակայմը

Ճնայեր էր, որ դէպ 'ի Բորթօ-Վէքքիօ առաջատարած՝ հո-
րիզոնին վրայ կ'երևէր։

Ետքը անցաւ Հռոմի Գոլիզէի մէջ կոմսին և Վանբայնի ըրած խօսակցութիւնին պատմեց, որուն մէջ կոմսը խոստացեր էր ա-
ւազակապետին որ Բէրբինոյի աղատութիւնը ընդունի, ինչպէս որ իւր խոստումը կատարելը ընթերցողք տեսան։

Վերջապէս նախընթաց գիշերուան դիպուածին պատմութեանը հասաւ. պատմեց թէ ինչպէս շփոթեր Ճնայեր էր երբ պահանջուած դումարը ամբողջացընելու համար վեց կամ եօթն հարիւր թալեռ պակսիլը տեսեր էր, և ինչպէս վերջապէս կոմսը միտքը եկեր էր, որ այնպիսի զարմանալի և դոհացուցիչ կերպով գործը կատարեր էր։

Ալպէր ամենայն ուշադրութեամբ Ֆրանղին պատմութիւնը մտիկ կ'ընէր։

— Աղէկ, ըսաւ վերջապէս դերակոմսը, այս ամեն պատմածներուդ մէջ ինչ ստդտանաց արժանի բան մը տեսար։ Կոմսը Ճանապարհորդութիւնը կը սիրէ, նաև մը ունի, վասն զի հարուստ է։ Գնա Բորթամութ կամ Սաութհէմբըն, պիտի տեսնես որ նաւահանգիստները նոյն բնութեամբ հարուստ Անղղիացիներու շեղակայմերով լցուած են։ Իւր Ճանապարհորդութեանց մէջ կայարան մը ունենալու և այն տաղտկալի կերակուրները չուտելու համար, որոնք գլխս չորս ամսէ 'ի վեր և գքեզ չորս տարիէ 'ի վեր կը թունաւորեն, և այս անհանգիստ անկողիններուն մէջ չպառկելու համար՝ Մօնթէ-Քրիսթոյ կղզւոյն մէջ բնակութիւն մը հաստատեր և կարասեօք զարդարեր է. և վախնալով որ Թոսկանայի կառավարութիւնը օր մը գինքը անկէ չՃանրէ և իւր ըրած ծախքերը չկորսուին, կղզին կը գնէ և անոր անունը կ'առնու։ Սիրելիս, միտքդ բեր անգամ մը քու ծանօթներէդ ուրչաի մարդիկ կան, որոնք առանց ստացուածոց տէրն ըլլալու՝ անոնց անունը ստացած են։

— Բայց, ըսաւ Ֆրանղ, Քորսիացի ծովահէնները ինչ գործ ունին իւր նաւաստիներուն մէջ։

— Ինչու կը զարմանաս. ամենէն աղէկ գիտես որ Քորսիացի

ծովահէնները գող չեն, այլ իրենց քաղաքէն կամ գիւղէն աքսորուած փախստականներ. պէտք չենք զանոնք մեղադրել. ըստ իս՝ եթէ երբէք Քորսիքա երթամ, կառավարչին կամ կուսակալին ներկայանալէս առաջ, եթէ հնար ըլլայ՝ Գոլոմպայի աստղակիներուն պիտի ներկայանամ. ստուգիւ շատ աղնիւ մարդեր երևցան ինձ։

— Բայց Վանբան և իւր խումբը աւազակներ են, որոնք գողնալու համար մարդ կը բռնեն. այս Ճշմարտութիւնը չես կրնար ուրանալ կարծեմ. այսպիսի մարդոց վրայ կոմսին ունեցած ազդեցութեանը ինչ պիտի ըսես։

— Սիրելիս, որովհետև հատանգիստաբար իմ կեանքս այս ազդեցութեանը կը պարտաւորիմ, ինձի չիյնար զայն դատաքննելու։ Ուստի փոխանակ քեզի պէս կոմսը բամբասելու, պիտի չվշտանաս երբ ներեմ անոր՝ չըսես իմ կեանքս ազատելուն համար, ոչ գուցէ չափազանցութիւն մը երևի, այլ գոնէ չորս հազար թալեռի խնայողութիւն մը ընել տալուն համար, որ մեր ստակովը Ճիշտ քսան և չորս հազար ֆրանք կ'ընէ, և այս գումարին համար Գաղղիոյ մէջ շատ պատիւ պիտի չընէին ինձ. ասկէ յայտնի կ'երևի որ մարդարէ մը իւր երկրին մէջ պատիւ չունի։

— Եւ ահա իմ ուզածս ալ այս է, կ'ուզէի գիտնալ թէ կոմսը ո՞ր երկրէ է, ինչ լեզու կը խօսի, իւր ապրուստին միջոցները որո՞նք են, իւր անբաւ հարստութիւնը ո՞րկից ստացած է, ո՞րն է իւր գաղտնի և անծանօթ կենացը առաջին մասը, որուն երկրորդ մասին վրայ այն տխուր և մարդատեցիկ դոյնը պատեր է։

— Սիրելիդ իմ Ֆրանղ, երբ նամակս ընդունած ժամանակդ տեսար որ կոմսին ազդեցութեանը պէտք ունինք, անոր դիմելիը ըսելով թէ՝ Ալպէր տը Մորսէրֆ մեր բարեկամը վտանգի մէջ է, օգնէ ինձ որ այս վտանգէն ազատեմ զան, այնպէս չէ՞։

— Այո՛։

— Այն ատեն կոմսը հարցուց քեզ թէ Ալպէր տը Մորսէրֆ ո՛վ է, իւր անունը ո՞րկից առած է, իւր հարստութիւնը ո՞րկից է, իւր ապրուստին միջոցները որո՞նք են, ո՞ր երկրէ է, ո՞ր ծնած է։ Ըսէ, այս հարցումները ըրա՞ւ քեզ։

— Ո՛չ, կը խոստովանիմ։

— Այլ եկաւ զիս վանքային ձեռքէն ազատելու, որուն առջև թէև՝ ինչպէս որ կ՚ըսես՝ աներկիւղ կ՚երևէի, սակայն կը խոստովանիմ որ աղէկ վիճակի մէջ չէի։ Երբ այսպիսի ծառայութեան մը փոխարէն՝ կոմսը կը խնդրէ ինձմէ այն շնորհքը, որ ամեն օր փարիզէն անցնող օտարական Ռուս իշխանի մը կամ Իտալացիի մը կ՚ընեինք՝ բարեկամներու ներկայացընելով և երևելի հաստատութիւնները պտըտցընելով, միթէ կ՚ուզես որ մերժեմ այս բանս։ Ո՛հ, բարեկամ, դուն խեղճեցեր ես։

Ատոյն ըսելով՝ այս անգամ սովորութեան հակառակ Ալպէր իրաւունք ունէր։

— Վերջապէս, կրկնեց Ֆրանզ հառաչանքով մը, ուզածդ ըրէ, սիրելի դերակոմս, վասն զի բոլոր ըսածներդ ճշմարիտ են, կը խոստովանիմ. բայց Մոնթէ–Քրիսթոյ կոմսին տարօրինակ մարդ մը ըլլալն ալ ոչ նուազ ճշմարտութիւն մ՚է։

— Մոնթէ–Քրիսթոյ կոմսը ամենևին մարդատեաց չէ. ինչ նպատակաւ Փարիզ գալը չիմացուց մեզ, բայց ես ըսեմ, Մոնթիոնի մրցանակը ստանալու համար կու գայ. եթէ իմ ձայնիս և իւր աղեցութեանը պէտք ըլլայ, ձայնս պիտի տամ անոր և իւր աղեցութիւնը պիտի երաշխաւորեմ։ Բայց բաւական է ալ այս խօսքերը ընենք, սեղան նստինք և եաքը Սուրբ–Պետրոս եկեղեցւոյն վերջին այցելութիւն մ՚ընելու երթանք։

Ալպէրի ըսածը կատարեցին, և հետևեալ օրը կէսօրէն ետև ժամը հինգ ու կէսին՝ երկու երիտասարդները իրարմէ բաժնուեցան՝ Ալպէր տը Մորսէրֆ փարիզ դառնալու, և Ֆրանզ տ՚Էպինէ տան ու հինգ օր մը վենետիկ անցընելու։

Բայց կառքը հեծնելէն առաջ՝ Ալպէր վախնալով որ Մոնթէ–Քրիսթոյ կոմսը իւր ժամադրութիւնը կը մոռնայ, պանդոկին ծառային հետ տոմսակ մը ղրկեց անոր, որուն վրայ եղած «Ալպէր տը Մորսէրֆ դերակոմս» անունին տակը մատիտով այս խօսքերը գրեր էր.

Մայիս 21ին, առաւօտեան ժամը տասն ու կէսին, Ռիւ– 27, Հելուէթ փողոց։

ԳԼՈՒԽ Ժ.Զ

ՍԵՂԱՆԱԿԻՑՆԵՐԸ

Հելուէթ փողոցին տանը մէջ, ուր Ալպէր տը Մորսէրֆ Մոնթէ–Քրիսթոյ կոմսին ժամադիր եղած էր, մայիս 21ին առտուն պատրաստութիւններ կ՚ըլլային երիտասարդին խոստումը պատուելու համար։

Ալպէր տը Մորսէրֆ ընդարձակ բակի մը անկիւնը առանձին շէնքի մը մէջ կը բնակէր, որուն երկու պատուհանները փողոցին վրայ կը նայէին, և միացեալներէն երեքը բակին և երկուքը պարտէզին վրայ։

Այս բակին և պարտիզին մէջ տեղը կայսերական ճարտարապետէն շինուած Մորսէրֆ կոմսին և կոմսուհւոյն նորաձև և ընդարձակ սենեակները կը պտնուէին։

Տան փողոցին վրայի երեսը պատած որմին վրայ տեղ տեղ ծաղկի ամաններ տեղաւորուած էին, և մէջ տեղը ոսկեզօծ վանդակներով մեծ դուռ մը կար, որ կառքերու և այցելուաց կը ծառայէր. իսկ դռնապանին օթեակին դրեթէ յարած դռնակ մը ևս կար, ուրկից ծառաները և տան տէրերը կը մտնէին և կ՚ելնէին։

Ալպէրի բնակութեանը համար սահմանուած առանձին շէնքին ընտրութիւնը մօր մը երկիւղած զգուշութիւնը կը ցուցընէր, որ թէև իւր զաւակէն բաժնուիլ չուզեր էր, սակայն հասկըցեր էր որ դերակոմսին տարօքը երիտասարդ մը իւր բոլոր ազատութեանը պէտք ունէր։

Միւս կողմանէ՝ պէտք է խոստովանիլ որ հարուստ ընտանիքի զաւակաց հասարակ եղած այն ազատ և դատարկաստուն կեանց սովորող երիտասարդին հանճարեղ եսութիւնը յայտնի կ՚երևէր։

Ալպէր իւր երկու պատուհաններէն փողոցին մէջ անցնողնե՛րը

կրնար դիտել, և եթէ այն անցնողներուն մէջ աւելի քննութեան արժանաւոր մէկը տեսնէր, իր հետազօտութիւնը ընելու համար վար կ՚իջնէր և ուրիշ փոքր դուռ մը դուրս կ՚ելնէր, որ մասնաւոր յիշատակութեան արժանի է։

Այս փոքր դուռը այնչափ փոշոտեալ և այնչափ գաղտնապահ կ՚երևէր որ կարծես թէ տունը շինուելէն ՚ի վեր մոռցուած և անգործածելի էր. բայց խնամքով եղուած պարզունակը և ծխնիները գաղտնի և յաճախ երթևեկութիւն մը կ՚յայտնէին։

Այս գաղտագողի դուռը գործածութեամբ միւս երկու դռներուն կը գերազանցէր, և դռնապանին հսկողութենէն և իրաւասութենէն ազատ ըլլալով կը ծառայէր զան, և Հազար ու մէկ գիշերներուն քարայրին համբաւաւոր դրան, կամ Ալի-Պապայի դիւթեալ Սէզամին պէս՝ ամենաքաղցր ձայնիւ արտասանուած գաղտնի խօսքերու կամ՝ խիստ քնքուշ մատերով քերելու միջոցաւ կը բացուէր։

Թանձրախիտ և պատատող տունկերը գետնայարկին երկու սենեակներուն պատուհաններուն առջևը հովանհարի պէս ծածկելով՝ չէին ներեր որ պարտէզէն կամ բակէն անզգոյշ նայուածքներ այս սենեակներուն մէջ թափանցեն։

Առաջին դստիկոնին մէջ գետնայարկին նման երկու սենեակներ ըլլալէն զատ՝ դահլիճ մը ևս կար, որ քնանալու սենեկին վրայ կը բացուէր, և ուրիշ անտեսանելի դուռով մը սանդուղին հետ կը հաղորդակցէր։

Յայտնի կը տեսնուի որ զգուշութեան ամեն միջոցները ՚ի գործ դրուած էին։

Առաջին դստիկոնին վրայ ընդարձակ արուեստանոց մը կար, որուն մէջ Ալպէրի հետզհետէ ըրած հաւաքումները կը գտնուէին. ինչպէս էին՝ որսորդական փողեր, ստուարաձայն քնարներ, սրինգներ և երաժշտական ամբողջ գործիներ. վասն զի ժամանակաւ Ալպէր երաժշտութեան եթէ ոչ յարմարութիւնը գոնէ յօժարութիւնը ունեցեր էր։ Անոնցմէ ետքը կու գային նկարչի պատուանդաններ, ներկերու սնակներ և վրձիններ. ըստ որում երաժշտութեան յօժարութեան յաջորդեր էր նկարչութեան իղձը։

Վերջապէս կը տեսնուէին զինախաղութեան անսայր սուսերներ, կռփամարտի ձեռնոցներ, երկսայրի սուսերներ և ամեն տեսակ գաւազաններ. քանզի մեր ժամանակին նորասէր երիտասարդաց աւանդութեան համեմատ՝ Ալպէր տը Մորսէրֆ երաժշտական և նկարչական ուսմանց անփոյթ կենալով՝ խիստ մեծ յարատևութեամբ կը մշակէր առնական դաստիարակութիւնը ամբողջացընող այս երեք արուեստները, որոնք էին՝ զինախաղութիւնը, կռփամարտը և գաւազանակռուութիւնը, և այս մարմնամարզութեան սահմանուած սրահին մէջ հետզհետէ այցելութիւն կ՚ընէին իրեն Կրիզիէ, Գոքս և Շարլ Լըպուր։

Այս սրահին միացեալ կահմածներն էին Ֆրանսուա Ա.ին ժամանակէն մնացած հին մոլթարկղեր, որոնք Չինական յախճապակիներով, Ճափոնական ամաններով և ուրիշ ազնիւ խեցեղէններով և սկաւառակներով լեցուն էին. հինօրեայ թևաթոռներ, որոց վրայ դուցէ նստած էին Հէնրի Դ կամ Սիւլլի, Լուի ԺԳ կամ Ռիշըլիէօ. վասն զի անոնց վրայ քանդակուած զինանշանները Լուվրի կարասեաց պահանոցներէն կամ գոնէ թագաւորական դղեակէ մը ելած ըլլալը կը յայտնէին։

Սրահին ամենէն երևնալու կողմը Գաղղիոյ անուանի արհեստաւորի մը ձեռքէ ելած դաշնամուր մը կար։

Ասոնցմէ զատ՝ բոլոր պատերուն, դռներուն և առաստաղներուն վրայ սուրեր, դաշոյններ, լախտեր, կացիններ, ոսկեզօծեալ և դրուագեալ ամբողջ զրահներ, տնկային և հանքային հաւաքումներ և թևատարած թռչուններ։

Աւելորդ է ըսել թէ այս սրահը Ալպէրի ամենէն աւելի սիրած տեղն էր։

Սակայն ժամադրութեան օրը՝ երիտասարդը հասարակ հագուած՝ գետնայարկին փոքր սրահին մէջ կը գտնուէր, ուր իր հիւրերուն ընդունելութիւն պիտի տար։

Սեղանի մը վրայ յախճապակեայ ամաններու մէջ ամեն տեսակ ծուխեր և մասնաւոր խորշերու մէջ զանազան և թանկագին գլանիկներ տեղաւորուած էին։

Վերջապէս բոլորովին բաց պահանոցի մը մէջ Գերմանական

կամ բուստով զարդարուած սաթեայ բերաննոցով երկար ծխափողերու, կարմիր սեկով շինուած օձի նման երկար խողովակներով ոսկեզօծեալ կլկլակներու հաւաքում մը ծխասիրաց մտային հաճոյից և յօժարութեան կ'ըսպասէր :

Ալպէր անձամբ ներկայ գտնուեր էր այս խառն վիճակի մէջ եղած թանկագին բաները կարգադրել տալու համար . քանզի իր հետը նախաճաշիկ ընող հիւրերը իրենց բերանէն դուրս ելած և երկար ու օձապտոյտ շրջաններով դէպ 'ի առաստաղը բարձրացող ծուխին մէջէն զանոնք քննել կը սիրեն :

Ժամը տասնին քառորդ մնացեր էր երբ իր սենեկապանը ներս մտաւ, ծրար մը լրագիրներ սեղանին վրայ դրաւ, և քանի մը նամակներ Ալպէրին յանձնեց :

Այս սենեկապանը, որ Մորսէրֆին միակ ծառան էր և անոր վստահութիւնը ստացած էր, տասն ու հինգ տարեկան էր և միայն Անգղիարէն կը խօսէր, ու Ալպէր Ճօն կը կոչէր զան :

Դերակոմսը անուշադիր նայուածքով այս զանազան նամակները դիտեց, բարակ գրով և քաղցրաբոյր պահարանով եղած երկու նամակները զատեց, բայց զանոնք և ուշադրութեամբ կարդալէն ետև՝

— Այս նամակները ինչպէս հասան, հարցուց անոր :

— Մէկը թղթաբերը յանձնեց, և միւսը տիկին Տանկլարի սենեկապանը բերաւ :

— Տիկին Տանկլարին իմաց տուր որ իր օթեակին մէջ ինձ առաջարկած տեղը կ'ընդունիմ . . . : Կեցիր, ո՞ւր կ'երթաս . . . ետքը՝ Ռօզային տունէն անցիր, և ըսէ որ Օբէրայէն ելնելէս ետև՝ իր հրաւիրանաց համեմատ իրեն հետ ընթրելու պիտի երթամ, հետը տար նաև վեց շիշ Կիպրոսի, Քսէրէսի և Մալակայի գինի և Օսթանտի տիկ մը ոստրէ . . . : Ոստրէները Պորէլէն առ և ըսէ որ ինծի համար են :

— Ժամը քանիի՞ն սեղան պիտի նստիք :

— Հիմա ժամը քանի՞ է :

— Տասնին քառորդ կայ :

— Ուրեմն ճիշտ տասն ու կէսին կերակուրները պատրաստ ըլ-

լան : Տըպրէն գուցէ իր պաշտօնատունը երթալու ստիպուած ըլլայ . . . : Բայց . . . (իր յիշողատետրը քննելով) այո՛, ճիշտ մայիսի 21ին, ժամը տասն ու կէսին կոմսը պիտի գայ . թէև խոստմանը վրայ վստահ չեմ, սակայն ես կ'ուզեմ որ ժամանակին ամէն բան պատրաստ ըլլայ : Աղէկ մտքս եկաւ, տիկին կոմսուհի մայրս արթնցա՞ծ է, գիտե՞ս :

— Եթէ տէրս կը հաճի, երթամ տեղեկանամ :

— Այո՛ . . . ըմպելեաց զարաններուն մէկին բանալին ուզէ, խմելիս մէջէն շատ բան պակաս է, և ըսէ որ ժամը երեքին իր քովը երթալու պատիւը պիտի ունենամ, և հրաման կը խնդրեմ իրմէ որ մէկը ներկայացընեմ իրեն :

Ծառան դուրս ելաւ :

Ալպէր բազմոցին վրայ նստաւ, երկու կամ երեք օրագիրներու զօտիները պատռեց, ներկայացումները աչքէ անցուց և երեսը ծռմռեց տեսնելով որ պարի տեղ դուսանական խաղ մը պիտի ներկայացընեն . պարապ տեղը հոտավաճառներուն ծանուցմանց մէջ ակռաները մաքրելու խիւս մը փնտռեց և Փարիզի ամենէն երևելի թերթերը իրարու ետև ձեռքէն նետեց երկար յօրանջմամբ մը մրմնջելով .

— Ստուգիւ այս օրագիրները երթալով ձանձրացուցիչ կ'ըլլան :

Այս միջոցիս՝ դրան առջև թեթև կառք մը կեցեր էր, և վայրկեան մը ետքը՝ սենեկապանը ներս մտնելով՝ Պ . Լիւսիէն Տըպրէին գալուստը իմացուց :

Պ . Լիւսիէն Տըպրէ խարտեաշ և դեղնագոյն դէմքով, մոխրագոյն և համարձակ աչօք, բարակ և ցուրտ շրթամբք, բանուած ոսկի կոճակներով զգեստ մը հագած, սպիտակ փողկապով, մետաքսեայ ժապաւէնով կախուած ակնոցով մը, զոր յօնական և այտային ջղերուն ուժովը ժամանակ առ ժամանակ իր աջ աչքին խոռոչին մէջ կը տեղաւորէր, առանց ժպտելու, առանց խօսելու և կէս պաշտօնական կերպարանքով ներս մտաւ :

— Բարի լոյս, Լիւսիէն, բարի լոյս, ըսաւ Ալպէր, ձեր ճշդութեամբը կը հիացընէք զիս . բայց ինչ կ'ըսեմ, ժամադրութիւնը ճիշտ տասն ու կէսին է, և դուք տասնին հինգ վայրկեան

Ճեալով հոս կը հասնիք. շնաակը ևս ձեզ ամենէն վերջը կ'ըսպասէի. այս ինչ հրաշք է, արդեօք պաշտօնատունը կոլծանեցան։

— Ո՛չ, սիրելիս, ըսաւ երիտասարդը բազմոցին վրայ երկննալով. ապահով եղիք, թէև միշտ կ'երերանք, բայց ամենևին չենք իյնար, և եթէ թերակղզւոյն գործերը այսպէս շարունակուին, մեր պաշտօնը տևական ըլլալու է։

— Ո՛հ, այո՛, ստոյգ է, տօն Գարլօն Սպանիայէն կը հալածէք, այնպէս չէ՞։

— Ո՛չ, սիրելիս, չշփոթենք գործը. Գաղղիոյ սահմանին միս կողմը կը տանինք զան, և Պուրժի մէջ թագաւորական ընդունելութիւն մը կու տանք անոր։

— Պուրժի՞ մէջ։

— Այո՛, խիստ հանգիստ պիտի ըլլայ հոն։ Պուրժ կարոլոս Ը թագաւորին մայրաքաղաքն է։ Ստուգիւ այս լուրը իմացած չէիք, երէկուանէ՝ի վեր բոլոր Փարիզ պիտէ, և երէկ չէ առջի օրը՝ գործը վաճառականաց ժողովատեղին յայտնի եղեր է, քանզի պ. Տանկլար (ամենևին չեմ հասկընար թէ այս մարդը ինչ միջոցաւ լուրերը մեզի հետ մի և նոյն միջոցին կ'ըստանայ) քանզի պ. Տանկլար արժէթղթոց վրայ մէկ միլիոն շահեցաւ։

— Եւ դուք նոր ժապաւէն մը, ինչպէս որ կ'երևի, քանզի չքանշանուդ վրայ կապոյտ երիզ մը աւելցուած կը տեսնեմ։

— Այո՛, կարոլոս Դ-ին չքանշանը ղրկեր են ինձ, պատասխաննեց անհոգութեամբ Տըպրէ։

— Է՛հ, անտարբերութիւն մի՛ ցուցընէք, կ'աղաչեմ, և խոստովանեցէք որ շատ ուրախ էք զայն ընդունելնուդ։

— Ո՛հ, այո՛. կոճկուած սև ղգեստի մը վրայ չքանշանը վայելուչ զարդ մ'է։

— Եւ միանգամայն, ըսաւ Մորսէրֆ ծիծաղելով, անով կալլի իշխան մը կամ Ռէյխշթաատի դուքս մը կը ձևանայ մարդ։

— Եւ ահա այս պատճառաւ այսօր կանուխ դուրս ելայ։

— Այո՛, որպէս զի կարոլոս Դ-ին չքանշանը ընդունելնիդ ինձ իմացընէք։

— Ո՛չ, վասն զի բոլոր պիշերը քանի ու հինգ պաշտօնագիրեր ղրկելու ղբաղեայ։ Առտու տունս դարձայ որ քնանամ. բայց գլխուս ցաւը բռնելով, վերստին հագուեցայ և ձի հեծայ։ Երբ Պուլոյներ հասայ, սրտնեղութիւնը ու անօթութիւնը, որոնք երկու թշնամիներ են և քիչ անգամ միասեղ կ'երթան, ինձի դէմ միաբանելով՝ զիս սաստիկ կը նեղէին. այնատեն միտքս եկաւ որ այս առտու ձեր տունը խնջոյք կայ, և ահա եկայ. անօթի եմ, կերակուր տուէք ինձ, սիրոս կը նեղանայ, զբօսցուցէք զիս։

— Հիւրասիրութեան պարտքս է, սիրելի բարեկամ, ըսաւ Ալպէր զանգակը հնչեցընելով, ինչ ատեն Լիւսիէն գոճազմ քաղերով յեռեալ ոսկի դունդով նուրբ պատազանովը՝ բացուած օրագիրներուն հետ կը խաղար։ Ճօն, բաժակ մը Քէրէսի գինի և պակսիմատ մը բեր։ Այսու ամենայնիւ, սիրելիդ իմ Լիւսիէն, ահա ձեզ պատուական գլանիկներ, որոնք՝ ինչպէս յայտնի է՝ մաքսէ փախուցուած են. կը խնդրեմ որ անոնց համը նայիք, և առաջարկէք ձեր պաշտօնէին որ նոյնը մեզ ծախէ՝ փոխանակ այն ընկուզենիի տերևներու նման գլանիկներուն, զորոնք բարի քաղաքացիները ծխելու դատապարտուած են։

— Ամենևին այդպիսի առաջարկութիւն մը չեմ ըներ. երբ կառավարութիւնը սկսեր այս գլանիկներէն վաճառել, պիտի չուզէիք գնել և զզուելի պիտի գտնէիք զանոնք. բայց յայսմանէ՝ այս բանս ոչ մեզ, այլ ելումտից պաշտօնեաներուն կը նկատի. պ. Հիւմանին դիմեցէք, որ կը գտնուի ելումտից պաշտօնատունը, Ա. պաւիթը, թիւ 26։

— Ստուգիւ ձեր ընդարձակ տեղեկութիւններովը կը հիացընէք զիս. բայց ինչո՞ւ գլանիկ մը չէք առներ։

— Ո՞րչափ երջանիկ էք, սիրելի կոմս, որ ամենևին զործ չունիք, ըսաւ Լիւսիէն ոսկեզօծ աշտանակի մը մէջ վառուած վարդագոյն մոմէ մը իւր գլանիկը վառելով. յիրաւի ձեր երջանկութիւնը չէք ճանչնար։

— Եւ դուք ի՞նչ պիտի ընէիք եթէ ամենևին զործ մը չունենայիք, ով թագաւորայ խաղաղարարը, կրկնեց Մորսէրֆ սակաւ ինչ հեգնութեամբ։ Ի՞նչ կ'ըսէք, դուք որ պաշտօնեայի մը մաս-

նաւոր դիւանադպիրը, Եւրոպական մեծ դաւաճանութեանց և փա-
րիզի փոքրիկ խորամանկութեանց մէջ պատաղեալ էք, թագա-
ւորներ մանաւանդ թագուհիներ կը պաշտպանէք, պառակտեալ
կուսակցութիւններ կը միացընէք, ընարութիւններ կը կազմէք,
ձեր դահիճովը, գրիչովը և հեռադիրով աւելի շատ գործ կը
տեսնէք՝ քան թէ Նաբոլէոն պատերազմի դաշտերուն մէջ իւր
սուրովն ու յաղթութիւններովը. ձեր պաշտօնէն զատ քսան ու
հինգ հազար ֆրանք եկամուտի տէր էք. ձի մը ունիք, որուն
համար Շաթօ-Ռընօ ձեզ չորս հարիւր Լուի ոսկի առաջարկեց
և դուք չընդունեցիք. դերձակ մը ձեր ամեն պէտք եղած զգեստ-
ները կը հոգայ. զբօսանաց համար՝ Օբէրա, Ժօքի-Կլըպ և Վա-
րիէթէ թատրոնը ունիք, և այս ամենուն մէջ զբօսնելու միջոց
մը չէք գտներ. ուրեմն ես կ'ըզբօսցընեմ զձեզ։

— Ի՞նչպէս։

— Մէկու մը հետ ծանօթացընելով։

— Մարդո՞ւ թէ կնոջ։

— Մարդու։

— Արդէն ճանչցածներս ալ շատ են։

— Բայց այս մարդուն պէս մէկը ճանչցած չէք։

— Ո՞ւրկից է այդ մարդը. աշխարհիս ծայրէ՞ն։

— Գուցէ աւելի հեռուէն։

— Ա՛հ, արդեօք նախաճաշիկնիս ա՞ն պիտի բերէ։

— Ո՛չ, անհոգ եղիք, մեր նախաճաշիկը տան խոհանոցներուն
մէջ կը պատրաստուի։ Միթէ այդչափ անօթի՞ էք։

— Այո՛, կը խոստովանիմ, թէև նուաստացուցիչ խօսք մը
ըլլայ ըսածս. երէկ իրիկուն Պ. Վիլըֆօրի տունը ճաշեցի, և
շատ անդամ դիտած էք, բարեկամ, որ այս առեղնակալներուն
տունը աղէկ կերակուր չուտուիր. կարծես թէ խղճմտանքնին բեռ-
նաւորած է։

— Ուրիշներուն տուած ճաշերը չէք հաւնիր, միթէ ձեր պաշ-
տօնէից տուած ճաշերը աւելի՞ ընտիր են։

— Բայց գոնէ երևելի մարդերը չենք հրաւիրեր մենք, և եթէ
պարտաւորած չըլլայինք մեր սեղանը հրաւիրել քանի մը որկրա-

մոլ մարդիկ, որոնք քուէարկութեան հոգ կը տանին և աղէկ
գործ կը տեսնեն, ժանտախտէ զգուշանալու պէս մեր տան մէջ
ալ ճաշելէն պիտի զգուշանայինք, հաւատացէք լինձ։

— Ուրեմն, սիրելիս, ուրիշ բաժակ մը պինդ և պակսիմատ մը
ևս առէք։

— Յօժարութեամբ կ'ընդունիմ. ձեր Սպանիական պինդն խիստ
ընտիր է, կը տեսնէք որ այն երկիրը խաղաղցընելու մեծ իրաւ-
ունք ունէինք։

— Այո՛, բայց տէն Գարլօն։

— Տէն Գարլօն Պորտոյի պինդի թողխմէ, և տասն տարիէն
իւր զաւակը փոքր թագուհւոյն հետ կ'ամուսնացընենք։

— Որով և դուք Թուաղոն տ'Օրի պատուոյն կը հասնիք, եթէ
մինչև այն ժամանակը պաշտօնատունը մնացած ըլլաք։

— Ալպէր, կարծեմ թէ այս առտու ծուխով ղիս կշտացընե-
լու միտք ունիք։

— Է՛հ, պէտք է խոստովանիլ որ ամենէն աւելի ստամոքսը
խաբող բանը ծուխն է. բայց ահա նախասենեկին մէջ Պոշանին
ձայնը կը լսեմ, հետը բանակուեցէք, որով քիչ մը ժամանակ
կրնաք համբերել։

— Ի՞նչ բանի վրայ։

— Օրագիրներու։

— Ո՛հ, սիրելիս, ըսաւ Լիւսիէն չափազանց արհամարհանօք,
կը կարծէք որ օրագիր կը կարդամ ես։

— Աւելի մեծ պատճառ մ'է այդ բանակուելու։

— Պ. Պոշանը եկաւ, պուռայ սենեկապանը։

— Նէրս մտէք, ահաւոր գրիչ, ըսաւ Ալպէր ոտք ելնելով և
երիտասարդը դիմաւորելով. Նէրս մտէք, ահա Պ. Տըպրէ որ ա-
ռանց ձեր գրածները կարդալու կ'ատէ զձեզ, գոնէ այսպէս կ'ըսէ։

— Շատ իրաւունք ունի, ըսաւ Պոշան, վասն զի ես ալ ա-
ռանց անոր ըրած գործերը գիտնալու՝ կը բանադատեմ զան։ Բա-
րի լոյս, հրամանատար։

— Ա՛հ, արդէն իմացաք այս բանս, պատասխանեց դիւանա-
դպիրը փոխադարձ ժպիտով մը խմբագրին ձեռքը բռնելով։

— Անշուշտ, կրկնեց Պոշան։

— Եւ ի՞նչ կ'ըսէ ժողովուրդը։

— Ո՞ր ժողովուրդը. Քրիստոսի 1838 թուականին մէջ շատ ժողովուրդներ ունինք։

— Քաղաքականութիւնը քննադատող ժողովուրդը, որուն մէ աւիւծն ալ դուք էք։

— Խիստ արդարացի կը գտնէ և կ'ըսէ թէ շատ կարմիր կ սերմանէք որպէս զի կապոյտ հնձէք։

— Շատ աղէկ, ըսաւ Լիւսիէն. բայց դուք ինչո՞ւ մեզի հե չէք միանար, սիրելիդ իմ Պոշան, դուք որ այնչափ հանճար ո նիք, երեք կամ չորս տարուան մէջ կրնաք հարստանալ։

— Ձեր այդ խրատին հետևելու համար միայն կ'ուզէի դիս նալ թէ ձեր պաշտօնէից խումբը իրենց պաշտօնին մէջ մնալ համար միթէ վեց ամիս ապահո՞վ են։ Սիրելի Ալպէր, թողու մեր խեղճ Լիւսիէնը որ քիչ մը շունչ առնու և դուք ըսէք ի թէ առտուան ձաշը պիտի ընենք՝ եթէ իրիկուան. վասն զի խորհրդարանը պիտի երթամ, և մեր պաշտօնը՝ ինչպէս կը տես նէք՝ դիւրին գործ մը չէ։

— Առտուան ձաշը պիտի ընենք միայն. տակաւին երկու գո՛յ կ'ըսպասենք, որոնք հասնելնուն պէս՝ սեղան պիտի նստինք

— Եւ ի՞նչ տեսակ մարդիկ են նախաճաշի սպասած մարդիկը, ըսաւ Պոշան։

— Աղնուական մը և քաղաքագէտ մը, կրկնեց Ալպէր։

— Ուրեմն երկու փոքրիկ ժամեր աղնուականին համար պիտ սպասենք, և երկու մեծ ժամեր քաղաքագէտին համար։ Ես կ'ել թամ ու աղանդերին ժամանակը կը վերադառնամ. ինձի համա ելած, սուրճ և գլանիկներ պահեցէք. խորհրդատունը կասկարո մը կ'ուտեմ։

— Ո՛չ, Պոշան. եթէ աղնուականը Մոնմորէնսի մը ըլլայ և քաղաքագէտը Մէթէրնիկ մը, ձիշտ ժամը տասն ու մէկին պիտի նախաճաշենք. դուք ալ Տըպրէյին պէս ըրէք, քիչ մը ֆսէրէս և պակսիմատ մը կերէք։

— Շատ աղէկ, կը մնամ. բայց այս առտու զուարճանալու պէտք ունիմ։

— Ահա ձիշտ դուք ալ Տըպրէյին պէս կը խօսիք. սակայն ինձ այնպէս կ'երևի թէ երբ պաշտօնատունը տխուր է, հակառակ կողմը զուարթ կ'ըլլայ։

— Բայց չէք գիտեր ինչո՛ւ այսպէս կ'աճապարեմ, սիրելիս. վասն զի այս առտու խորհրդատան մէջ Պ. Տանկլարին ըսելու առեներաբանութիւնը մտիկ պիտի ընեմ, և այս իրիկուն իւր կնոջ տունը՝ Գաղղիոյ առեներական մը ողբերգութիւնը։ Անիծեա՛լ ըլլայ այս սահմանադրական կառավարութիւնը. քանի որ ինչպէս կ'ըսուի ընտրութիւնը մեր ձեռքն էր, չեմ գիտեր թէ ինչպէս ընտրեցինք զայն։

— Կը հասկընամ՝ զուարճանալու պէտք ունիք։

— Ըլլայ որ դէշ խօսիք Պ. Տանկլարին առեներաբանութեանը համար, ըսաւ Տըպրէ. ըստ որում ձեզ քուէ կու տայ, և հակառակ կուսակցութենէն է։

— Աւելի աղէկ, ա՜հ, կ'ըսպասեմ որ Լիւքսանպուր ղրկէք զան առեներաբանութիւն ընելու, որպէս զի ուղածիս պէս ծիծաղիմ առնոր վրայ։

— Սիրելիս, ըսաւ Ալպէր Պոշանին, Սպանիոյ գործերը կարդի մտնելուն համար՝ այս առտու սաստիկ զբաղած կ'երևիք։ Քանի որ օրիորդ Էօժէնի Տանկլարին ինձի հետ ամուսնանալու խօսք մը կայ իրաք, չեմ կրնար թողուլ ձեզի որ գէշ խօսիք այնպիսի մարդու մը պերճախօսութեանը վրայ, որ օր մը պիտի ըսէ ինձ. « Պարոն դերակոմս, պէտք է գիտնաս որ աղջկանս երկու միլիոն կու տամ »։

— Իմ կարծեօքս՝ այս ամուսնութիւնը ամենևին չկրնար ըլլալ, ըսաւ Պոշան։ Թագաւորը Տանկլարին ասպետութեան պատիւը տուաւ, կրնայ առեներական իսկ ընել, բայց երբէք աղնուական չկրնար ընել, և Մորսէրֆ կոմսը խիստ աղնուական ցեղէ ըլլալուն համար՝ երկու չնչին միլիոնի համար այսպիսի անտոհմ ամուսնութեան չկրնար հաւանիլ։ Մորսէրֆ դերակոմսը մարքէզուհու մը հետ կրնայ ամուսնանալ։

— Այսու ամենայնիւ երկու միլիոնը փոքր գումար մը չէ, ըսաւ Մորսէրֆ։

— Ծառուղիներու թատրոնի մը կամ Տնկոյ Պարահրվին երկաթուղւոյ մը ընկերային դրամագլուխ մը կրնայ ըլլալ:

— Ուզածը թող խօսի, Մորսէրֆ, կրկնեց անհոգութեամբ Տըպրէ, և դուք ամենևին հոգերնիդ չընելով օրիորդ Տանկլարին հետ ամուսնայէք. աղգատհմական նշան մը պակաս կամ ղէրօ մը աւելի մի և նոյն բանն է. արդէն ձեր աղգատհմական նշանին վրայ եօթն թռչուն ունիք, եթէ երեքը ձեր կնոջը տաք, տակաւին չորսը ձեզ կը մնայ: Պ. տը Կիզին ունեցածէն մէկ աւելի ունիք, որ քիչ մնայ Գաղղիոյ թագաւոր պիտի ըլլար, և որուն հօրեղբօրորդին Գերմանիոյ կայսրն էր:

— Ստուգիւ շիտակ է ըսածնիդ, Լիւսիէն, պատասխանեց ուրախութեամբ Ալպէր:

— Անշուշտ, մանաւանդ որ միլիոնատէր մը եթէ պռունկորդի իսկ ըլլայ՝ ազնուական կը համարուի:

— Լռեցէք, այդ խօսքը մի՛ ըսէք, Տըպրէ, կրկնեց Պոշան ծիծաղելով, վասն զի եթէ Ճաթօ-Ռընօ այդ ընդհմաբան խօսքը լսելու ըլլայ՝ իւր Ռընօ տը Մոնթոսան նախահօր սուրը փորերնիդ կը մխէ:

— Այն ատեն իւր ազնուականութիւնը պիտի տուժէ, պատասխանեց Լիւսիէն:

— Տեսէք, ըսաւ Պոշան, մեր պաշտօնակալը պէրանժէին երգը կ'երգէ. Տէր Աստուած, ո՛ւր կ'երթանք:

— Պարոն Ճաթօ-Ռընօն և պարոն Մաքսիմիլիէն Մորէլը եկան, պռուայ սենեկապանը:

— Ուրեմն ամբողջ ենք, ըսաւ Պոշան, և հիմա պիտի նախաճաշենք. վասն զի եթէ չեմ սխալիր՝ երկու հոգւոյ կ'ըսպասէինք, այնպէս չէ՞, Ալպէր:

— Մորէլ, մրմնջեց Ալպէր զարմանքով, Մորէլ, ո՞վ է այս պարոնը:

Բայց իւր խօսքը լմընցընելէն առաջ՝ պ. Ճաթօ-Ռընօ, որ ընտրեալ տարեկան ազնուական պեղեցիկ երիտասարդ մ'էր, ներս մտնելով՝ Ալպէրի ձեռքը բռնեց:

— Ներեցէք ինձ, սիրելիս, ըսաւ, որ հեծելոյ հրամանատար

պ. Մաքսիմիլիէն Մորէլ բարեկամս և միանգամայն ազատիչս ձեզ ներկայացընեմ: Բարևեցէք իմ դիւցազնս, պարոն դերակոմս:

Այս լսելով մէկ կողմ քաշուեցաւ, ու լայն ձակատով, փայլուն աչքերով, սև ընչացքով, բարձրահասակ և ազնիւ երիտասարդ մը ներկայացաւ, զոր ընթերցողք խիստ զարմանալի պարագայի մը մէջ ճանչնալնուն համար՝ անշուշտ մոռցած պիտի չըլլան զան Մարսիլիոյ մէջ տեսնելնին:

Կէս Գաղղիական և կէս Արևելեան անոր փառաւոր միագեստը՝ պատուոյ Լէգէոնի խաչովը պատուեալ աղեղնաձև անվեհեր լայն կուրծքին վրայ շքեղ կ'երևէր:

Երիտասարդ պաշտօնակալը խիստ վայելուչ քաղաքավարութեամբ խոնարհութիւն մը ըրաւ, և իւր ամէն մէկ շարժմանց մէջ շնորհալի կ'երևէր, քանզի զօրաւոր էր:

— Պարոն, ըսաւ Ալպէր սիրալիր քաղցրութեամբ մը, պ. Ճաթօ-Ռընօ սեպուհը ղձեզ ինձ ծանօթացընելով՝ ինձ մեծ ուրախութիւն պատճառելիքը գիտէր, ուստի քանի որ անոր բարեկամն էք, մերն ալ եղիք:

— Այո՛, ըսաւ Ճաթօ-Ռընօ, և երանի թէ առիթը պատահած ժամանակը ինձ ըրածը ձեզ ալ ընէ:

— Եւ ի՞նչ ըրաւ ձեզ, հարցուց Ալպէր:

— Ո՛հ, ըսաւ Մորէլ, խօսքն անգամ ընելու արժանի չէ, և պարոնը չափազանցօրէն կը խօսի:

— Ի՞նչ կ'ըսէք, խօսքը ընելն արժանի չէ՞, ըսաւ Ճաթօ-Ռընօ, մթէ կեանք մը ազատելը պզտիկ բան է . . . : Ձեր խիստ ազնուամտութենէն է որ այդպէս կը խօսիք, սիրելիդ իմ պարոն Մորէլ . . . : Դուք ամեն օր կեանքերնիդ վտանգի մէջ դնելով հոգերնիդ չէ, բայց ես որ դիպուածով անգամ մը վտանգի մէջ գտնուեցայ . . . :

— Ձեր այս խօսքերէն յայտնի կը տեսնեմ, պարոն սեպուհ, որ պ. Մորէլ հրամանատարը ձեր կեանքը ազատած է:

— Ո՛հ, այո՛, ճիշտ այդպէս, կրկնեց Ճաթօ-Ռընօ:

— Եւ ի՞նչ առիթի մէջ, հարցուց Պոշան:

— Պոշան, բարեկամ, գիտէք որ ես անօթութենէ կը մեռնիմ, ըսաւ Տըպրէ, պատմութեանց մէջ մի՛ մտնէք:

— Մեր խօսակցութիւնը արդէլք չկրնար ըլլալ որ սեղան նստինք . . . Շաթօ-Ռընօն սեղանին վրայ կրնայ պատմել մեզ :

— Պարոններ , ըսաւ Մորսէրֆ , տակաւին ժամը տասն քառորդ անցած է , և վերջին սեղանակցի մը կ'ըսպասենք :

— Ո՛հ , այո՛ , քաղաքագէտի մը , այնպէս չէ՞ , կրկնեց Տըպրէ . ուրեմն քանի որ տակաւին սեղան պիտի չնստինք , մեր ըրածին պէս բաժակ մը գինի խմէ և պատմէ մեզ , պարոն սեղուհ :

— Ամենքնիդ ալ գիտէք որ ես Ափրիկէ երթալու մտային հաճոյք մը ունեցայ մի միայն պարզև ստացած նոր ատրճանակներս Արաբացիներուն վրայ փորձելու համար : Ուստի Օրան գայի , անկէ Կոստանդին անցայ և ձիշտ պաշարումը վերցուած ժամանակը հասայ . միւսներուն պէս ես ալ սկսայ ես դառնալ . քառասուն և ութ ժամ ցորեկը անձրևին և գիշերը ձիւնին համբերեցի . վերջապէս երրորդ առտուն ձիս ցուրտէն մեռաւ , և ես պարտաւորեցայ ոտքով քալել . յանկարծ վեց Արաբացիներ արշաւանօք վրաս հասան որ գիս ոպաննեն . անոնցմէ երկուքը հրացանիս երկու հարուածներովը և երկուքը ատրճանակիս երկու հարուածներովը պետինը պառկեցուցի , սակայն տակաւին երկու հոգի մնացած էին , և ես ինքզինքս պաշտպանելու զէնք չունէի : Մէկը մազերէս բռնեց , այս պատճառաւ հիմա մազերս կարճ կը թողում . մարդ չգիտեր ինչ կը պատահի , և միւսը իւր դաշոյնը պարանոցիս ուղղեց . արդէն երկաթին ցուրտ ծայրը կ'ըզգայի , երբ այս պարոնը իւր հրացանովը մազերէս բռնողը սպաննեց , և պարանոցս կտրելու պատրաստուողին գլուխը կացինի հարուածով մը ջախջախեց : Պարոնը այն օրը մարդ մը պիտի ազատէ եղեր , և բաղդը այնպէս բերաւ որ այն մարդը ես ըլլամ , եթէ հարստանամ՝ բաղդին արձանը շինել պիտի տամ :

— Այո՛ , ըսաւ Մորէլ ժպտելով , այն օրը սեպտեմբերի ՅՆ էր , այսինքն հօրս հրաշքով մը ազատած օրին տարեդարձը , ամեն տարի նոյն օրը ըստ կարի կը տօնախմբեմ գործ մը ընելով . . . :

— Գիւցազնական գործ մը , այնպէս չէ՞ , ընդմիջեց Շաթօ-Ռընօ : Ձիս դաշոյնի հարուածէն ազատելէն ետև՝ պաղէն ալ ա-

զատեց , ոչ եթէ իւր վերարկուին կէսը տալով , ինչպէս կ'ընէր Ս . Մարթէն , այլ ամենը , և վերջապէս անօթութենէ , բայց դուշակեցէք ինչ էր կերածնիս :

— Կարկանդակ , հարցուց Պոշան :

— Ո՛չ , այլ իւր ձին , որմէ իւրաքանչիւր ոք մեծ ախորժանօք մէկ մէկ կտոր կերանք . ստուգիւ խիստ մեծ էր այս ըրած զոհը . հարցուցէք Տըպրէյին , արդեօք օտարականի մը համար իւր Անգղիական ձին կը զոհէ՞ :

— Օտարականի մը համար չեմ զոհեր , ըսաւ Տըպրէ , բայց բարեկամի մը համար՝ այո՛ :

— Եւ ես կը դուշակէի որ դուք իմ բարեկամս պիտի ըլլաք , պարոն կոմս , ըսաւ Մորէլ : Այսու ամենայնիւ , ըրածս եթէ գիւցազնական ըլլայ և եթէ ոչ , եթէ զոհ և եթէ ոչ , այն օրը պէտք էի բաղդին նուէր մը ընել՝ ժամանակաւ մեզ ըրած մեծ շնորհացը փոխարէն :

— Պ . Մորէլի այս ըսածը զարմանալի պատմութիւն մ'է , շարունակեց Շաթօ-Ռընօ , զոր օր մը թող պատմէ ձեզ երբ իրարու հետ երկար տեսութիւն ընելու առիթն ունենաք . վասն զի այսօր ստամոքսնիս լեցընելու ենք և ոչ մտքերնիս : Ժամը քանի՞ն պիտի նախաճաշենք , Ալպէր :

— Տասն ու կէսին :

— Ճիշտ տասն ու կէսին , հարցուց Տըպրէ իւր ժամացոյցը նայելով :

— Ո՛հ , կը յուսամ թէ հինգ վայրկեան մը ևս կը ներէք ինձ , ըսաւ Մորսէրֆ . վասն զի ես ալ ազատիչի մը կ'ըսպասեմ :

— Որո՞ւն ազատիչին :

— Իմ ազատիչիս . կը կարծէք որ ինձի համար ալ ազատիչ մը չի՞ գտնուիր և միայն Արաբացիները մարդու գլուխ կը կտրեն : Մեր նախաճաշը մարդասիրաց նախաճաշ մը պիտի ըլլայ , և մեր սեղանին վրայ կը յուսամ թէ գոնէ մարդկութեան երկու բարերարներ պիտի ունենանք :

— Ի՞նչպէս պիտի ընենք , ըսաւ Տըպրէ . Մոնթիհոն միայն մէկ մրցանակ ունինք :

— Ինչո՞ւ կը մտածէք. այնպիսի մարդու մը կու տանք որ ամենևին գործ մը ըրած չէ զայն ստանալու համար, ըսաւ Պոշան. սովորաբար այս միջոցաւ Ակադեմիան տարակուսանքէ կ՝ազատի։

— Եւ ո՞րկից կու գայ այդ մարդը, հարցուց Տըպրէ. կը նեղէք ըրած կրկնութեանս. դիտեմ՝ արդէն այս հարցմանս պատասխանեցիք, բայց այնչափ անորոշ կերպով էր որ կը համարձակիմ երկրորդ անգամ կրկնելու։

— Ստուգիւ, ըսաւ Ալպէր, ես ալ չեմ դիտեր։ Ասկէ երկու ամիս առաջ զան հրաւիրած ժամանակս Հռոմ կը գտնուէր, բայց այն ժամանակէն ետքը ո՛վ գիտէ ո՛րչափ տեղեր պտըտած է։

— Եւ կը կարծէ՞ք որ իւր խօսքին վրայ կրնալու կարող ըլլայ։

— Ամեն բանի կարող կը կարծեմ՝ զան։

— Ուրեմն դիտեցէք անգամ մը որ ձեզ նուիրուած հինգ վայրկեանով միայն տասն վայրկեան ունինք։

— Եւ ես այս տասն վայրկեանին մէջ մեր սեղանակցին վրայ քանի մը խօսք խօսիմ։

— Կը ներէք, ըսաւ Պոշան, պատմելու պատմութիւննիդ օրագրի նիւթ մը կրնայ ըլլալ։

— Այո՛, ըսաւ Մորսէրֆ, և խիստ հետաքրքրական նիւթ մը։

— Պատմեցէք ուրեմն, քանզի կը տեսնեմ որ խորհրդարանը պիտի չկրնամ երթալ. գոնէ պատմութենդ օղուտ քաղեմ։

— Վերջին բարեկենդանին Հռոմ կը գտնուի՞ր։

— Գիտենք, ըսաւ Պոշան։

— Այո՛, բայց չգիտցածնիդ ալ կայ, աւազակներէ բռնուիլս գիտէք։

— Հռոմի մէջ աւազակ չկայ, ըսաւ Տըպրէ։

— Անհրելի կամ ղարմանալի աւազակներ կան. վասն զի ըստ իս՝ աղէկ սոսկում կրնան պատճառել։

— Խոստովանեցէք, սիրելիդ իմ Ալպէր, ըսաւ Տըպրէ, որ խոհարարնիդ կերակուրը ուշացուցած է, կամ ոստրէները Մարանէն կամ Օսթանտէն հասած չեն տակաւին, և դուք տիկին Մէնթընոնին պէս կ՝ուզէք կերակուրին տեղ պատմութիւն մը տալ։ Համարձակ ըսէք, սիրելիս, ամենքս ալ կը համաձայնինք ներ-

ղամիտ ըլլալ ձեզ և պատմութիւննիդ մտիկ ընել, որչափ և առասպելական իսկ երևի մեզ։

— Եւ ես կը վստահայընեմ զձեզ որ որչափ և առասպելական կարծուի, խիստ ստոյգ պատմութիւն մ՚է։ Աւազակները զիս բռնելով Ս. Սեպաստիանոյի տորերկրեայ պերեզմանատունը ըսուած տխուր տեղ մը տարին։

— Կը ճանչնամ այդ տեղը, ըսաւ Շաթօ-Ռընօ, քիչ մնաց որ տենդ մը պիտի տանայի հոն։

— Եւ ես իրօք տագայ զայն, ըսաւ Մորսէրֆ. աւազակները իմացուցին ինձ թէ զերի ինկած եմ ձեռքերնին, և չորս հազար Հռոմայեցի սկուտի այսինքն քսան և չորս հազար ֆրանքի չնչին դումար մը փրկանք վճարելով կրնամ ազատիլ. դժբաղդաբար միայն հազար հինգ հարիւր սկուտս մնացեր էր. գրեթէ ճանապարհորդութիւնս վերջացուցեր էի և վարկաստմախս սահմանը հասեր էր. ուստի ֆրանղին գրեցի. ահա ճիշտ ֆրանղ ալ Հռոմ կը գտնուէր, և կրնաք անոր հարցընել եթէ կէտ մը կը ստեմ ձեզ. ուստի ֆրանղին գրեցի որ եթէ առտու ժամը վեցին չորս հազար թալէռով ինձ չհասնի, վեցը տասն վայրկեան անցած՝ այն պերերջանիկ սրբոց և փառաւորեալ մարտիրոսաց քովը պիտի երթայի, որոց պերեզմանին քովը գտնուելու պատիւն ունէի, և Լուիճի Վանբան, որ աւազակապետին անունն է, հաւատացէք ինձ՝ ճշդութեամբ իւր ըսածը պիտի գործադրէր։

— Մինթէ ֆրանղ տ՚Էբլինէ կամ Ալպէր տը Մորսէրֆի անունն ունեցող մարդիկ չորս հազար թալէռի համար տարակուսանքի մէջ պիտի մնան, ըսաւ Շաթօ-Ռընօ. անշուշտ ֆրանղ պահանջուած դումարը առնելով եկաւ։

— Ո՛չ, այլ պարզապէս և միայն այն անձին հետ եկաւ, որ մեզի հետ հիմա պիտի սեղանակցի, և զոր ձեզ ներկայացընելու կը յուսամ։

— Ուրեմն այդ մարդը կակոսը սպաննող Հէրքիւլէս մը կամ Անտրոմէտը ազատող Պերսէոս մ՚է։

— Ո՛չ, գրեթէ իմ հասակաւս մարդ մ՚է։

— Բոլորովին սպառազինեա՞լ։

— Ասեղ մը անդամ չունէր վրան։

— Ուրեմն փրկանքին միջնորդութիւն ըրաւ։

— Ամենևին, այլ աւազակապետին ականջին երկու խօսք ըսաւ և աղատեց զիս։

— Եւ աւազակապետը զձեզ բռնելուն համար ներումն անդամ խնդրեց, ըսաւ Պոշան։

— Ճիշտ այդպէս, ըսաւ Մորսէրֆ։

— Ուրեմն այդ մարդը Արիոսդն էր։

— Ո՛չ, այլ պարզապէս Մօնթէ–Քրիսթոյ կոմսը։

— Մօնթէ–Քրիսթոյ կոմս չկայ, ըսաւ Տըպրէ։

— Ձեմ կարծեր, յաւելցուց Շաթօ–Ռընօ՝ Եւրոպական ազնուատոհմերը մի առ մի ճանչցող մարդու մը հանդարտութեամբը. ոչ կը ճանչնայ Մօնթէ–Քրիսթոյ կոմսը։

— Կարելի է Սուրբ Երկրէն կու գայ, ըսաւ Պոշան. իւր նախահայրերէն մէկը Գողգոթա լերան տիրած է, ինչպէս որ Մորթըմար՝ Մեռեալ ծովին։

— Կը ներէք, ըսաւ Մաքսիմիլիէն, կարծեմ թէ ձեզ տարաբաղդութեանքէ պիտի ազատեմ, պարոններ. հօրս նաւաստիներուն բերանէն շատ անդամ լսած եմ որ Մօնթէ–Քրիսթօ կղզեակ մ'է, որ Միջերկրական ծովուն մէջ իբրև աւազի հատ մը և անսահմանի տարածութեան մէջ իբրև հիւղէ մը կ'երևի։

— Այո՛, ճիշտ այդպէս, պարոն, ըսաւ Ալպէր. այդ աւազի հատին և այդ հիւղէին տէրն ու թագաւորն է յիշած անձս. անշուշտ իւր կոմսութեան արտօնութիւնը Թոսկանայի մէկ կողմը դնած է։

— Ուրեմն հարուստ է այդ կոմսը։

— Ստուգիւ՝ այնպէս կը կարծեմ։

— Բայց կարծեմ թէ հարստութիւնը յայտնի կ'երևի։

— Ահա հոդ կը սխալիք, Տըպրէ։

— Ըսածներնուդ խելքս չհասնիր։

— Հաղար և մէկ տեղերները կարդացած էք։

— Ատ ալ հարցընելո՞ւ բան է։

— Ուրեմն դիտէք որ անոնց մէջ եղած մարդերը հարուստ են

թէ աղքատ, անոնց ցորենի հատերը ստակ են թէ ադամանդ։ Թշուառ ձկնորսի կերպարանք ունին, և յանկարծ այնպիսի պաղտնի քարայր մը կը բանան, որուն մէջ Հնդկաստանը դնելու չափ գանձ մը կը գտնուի։

— Եաքը՞։

— Եաքը՝ Մօնթէ–Քրիսթոյ կոմսն ալ այն ձկնորսներուն կը նմանի. անոնց մէկուն անունն անդամ կը կրէ. վասն զի Սէնպատ նաւաստի իսկ կը կոչուի, և ոսկւով լեցուն քարայրի մը տէր է։

— Այդ քարայրը տեսա՞ք դուք, Մորսէրֆ, հարցուց Պոշան։

— Ես չտեսայ, բայց Ֆրանզ տեսեր է. սակայն՝ լռութիւն, պէտք չէ որ ասոր վրայ անոր առջևը խօսք մը խօսինք։ Ֆրանզ աչքը կապած այն քարայրին մէջ իջեր է. համրեր և կիներ իրեն ծառայութիւն ըրեր են. այս կիներուն քովը՝ իւր ըսածին նայելով՝ Կղէոպատրի գեղեցկութիւնը աննշան բան մ'է եղեր։ Միայն թէ կանանց համար խիստ վստահ չէր, քանզի իւր մանրապորը ուտելէն ետև՝ անոնք ներս մտեր էին. կարելի է որ կիներ կարծածը պարզապէս արձաններ ըլլան։

Սեղանակիցները այնպիսի նայուածքով Մորսէրֆին երեսը կը նայէին, որով ըսել կ'ուզէին թէ՝

— Բարեկամ, կը ցնորիք եթէ կը ծաղրէք զմեզ։

— Իրաք, ըսաւ Մորէլ մտածելով, պ. Մորսէրֆին ըսածին նման բան մը Բէնըլըն անուն ձեր նաւաստիի մը պատմելը լսեր եմ։

— Ա՛հ, շատ երջանիկ եմ որ պ. Մորէլ ինձ օգնութեան կը հասնի։ Այսպէս իմ բաղխս մէջ դերձանի կծիկ մը նետելով՝ ձեզ հակառակ կ'երևի, այնպէս չէ՞։

— Կը ներէք, բարեկամ, ըսաւ Տըպրէ, պատմածնիդ այնչափ անհաւանական կ'երևի որ . . .։

— Անշուշտ, վասն զի ձեր դեսպանները և ձեր հիւպատոսները այսպիսի բան մը չեն պատմեր. վասն զի ժամանակ չունին, և իրենց ձանապարհորդ հայրենակիցները կեղեքել պէտք են։

— Ահա շուտով վշտացաք և մեր անբաղդ դործակալաց մեր

կը յարձակիք. զարմանալի բան, ինչպէս ուրեմն ապրին. դիւանատունը օրէ օր անոնց ոճիրները կը նուազեցընէ, այն աստիճան որ այն պաշտօններուն փափաքող անդամ չգտնուիր հիմա: Ալպէր, կ'ուզէք որ ձեզ Կոստանդնուպօլսոյ դեսպան անուանել տամ:

— Ո՛չ, չնորհակալ եմ:

— Կը տեսնէք ուրեմն, ըսաւ Տըպրէ:

— Բայց այս բանս արդելք չկրնար ըլլալ որ Մօնթէ–Քրիսթոյ կոմսը դոյուէիւն չունենայ:

— Զարմանալի խօսքեր կ'ընէք. ամեն մարդ դոյուէիւն ունի:

— Անտարակոյս՝ ամեն մարդ դոյուէիւն ունի, բայց այսպիսի յատկութիւններու տէր չէ. ամեն մարդ սև գերիներ, ստորերկրեայ պալատներ, աննման ձիեր, վեց հազար ֆրանքնոց ձիեր, ցոյն սիրուհիներ չունի:

— Ցոյն սիրուհին տեսաք դուք:

— Այո՛, Արքէնթինա թատրոնին մէջ տեսայ զան, և կոմսին տունը նախաճաշ ըրած օրս անոր ձայնը լսեցի:

— Այդ տարօրինակ մարդը հայ կ'ուտէ՞ ուրեմն:

— Այո՛, բայց այնչափ քիչ բան է կերածը որ խօսքը անդամ չըլլար:

— Պիտի տեսնէք որ ուրուական մ'է այն:

— Ծիծաղեցէք որչափ կ'ուզէք: Կ... կոմսուհւոյն կարծիքն ալատ էր, որ ինչպէս դիտէք՝ Լորտ Ռիւթվէնը կը ճանչնար:

— Կեցիք անոր նկարագրութիւնն ընեմ. աչքը խարտեաշ է, որուն բիբերը իւր կամաց համեմատ կը փոքրկանան և կ'ընդարձակուին, ըսաւ Տըպրէ. ճակատը դեղեցիկ, դէմքը կապարի, մօրուքը սև, ակռաները սուր և սպիտակ, և քաղաքավարութիւնը ասոնց համեմատ:

— Ցիրաւի, Լիւսիէն, ըսաւ Մորսէրֆ. ճիշտ ատ է անոր դիմաց գծագրութիւնը: Այո՛, իւր քաղաքավարութիւնը աղտու և չափազանց է: Այս մարդը շատ անգամ սոսկումով պատճառած է ինձ. օր մը երբ միատեղ սպանութեան մը հանդէսը կը դիտէինք, մարելիք մը եկաւ վրաս՝ պահճին դործողութիւնը տեսնելիս

և մեռեալին ձայները լսելիս աւելի՝ անոր՝ աշխարհիս մէջ գտնուած ամեն տեսակ տանջանաց վրայ պաղութեամբ մը խօսիլը տեսնելուս և լսելուս համար:

— Արիւննիդ ծծելու համար՝ Գոլիզէի աւերակները չտարաւ ձեզ, Մորսէրֆ, հարցուց Պոշան, և կամ ձեզ աղատէլէն ետև՝ բոսորագոյն մագաղաթի մը վրայ ստորագրել չտուաւ ձեզ, որ ձեր կեանքը անոր յանձնէք, ինչպէս Եսաւ իւր անդրանկութեան իրաւունքը յանձնեց:

— Ծաղրեցէք, ծաղրեցէք ուզածնուդ չափ, պարոններ, ըսաւ Մորսէրֆ քիչ մը դժկամակելով. բայց երբ անոր հետ կը համեմատեմ ձեզ, դուք աղնուական փարիզեաններ, որ Կանի ծառուղւոյն մէջ կը քնակիք, և Պուլոյնեի անտառը կը պտըտիք, շիտակը ըսեմ՝ ինձ այնպէս կ'երևի թէ մի և նոյն սեռէ չենք:

— Գուցէ, ըսաւ Պոշան:

— Ձեր Մօնթէ–Քրիսթոյ կոմսը, յաւելցուց Ճաթօ–Ռընօ, կրնայ մեծ մարդ մը ըլլալ բայ 'ի երբեմն Իտալացի աւազակներու հետ հաղորդակցութիւն ունեցած ժամանակներէն:

— Ի՞նչ կ'ըսէք, Իտալացի աւազակներ չկան, ըսաւ Տըպրէ:

— Ուրուական չկայ, յաւելցուց Պոշան:

— Եւ ոչ իսկ Մօնթէ–Քրիսթոյ կոմս, յաւելցուց Տըպրէ: Ահա, Ալպէր, ժամացոյցը տասն ու կէս կը զարնէ:

— Խոստովանեցէք ուրեմն որ բոլոր ըսածնիդ երազի մը ցնորքն էր, և երթանք նախաճաշելու, ըսաւ Պոշան:

Ժամացոյցին հնչիւնը տակաւին մարած չէր երբ դուռը բացուեցաւ և սենեկապանը պոռաց.

— Նորին Վսեմութիւն Մօնթէ–Քրիսթոյ կոմսը:

Բոլոր ունկնդիրները նստած տեղերնէն ակամայ վեր ցատկեցին, որով Մորսէրֆի պատմած պատմութեան իրենց սրտին պատճառած ազդեցութիւնը յայտնի կը ցուցընէին: Ալպէր իսկ յանկարծական յուզման մը ենթակայ եղեր էր: Ոչ փողոցին մէջ կառքի ձայն մը լսուեր էր, և ոչ նախասենեկին մէջ ոտքի ձայն. դուռն իսկ լռիկ և անձայն բացուեր էր:

Կոմսը խիստ պարզ հագուած՝ սեամին վրայ երևցաւ, ամենէն

բծախնդիր մարդն անկամ անոր հագուստին վրայ պակասութիւն մը պիտի չկրնար գտնել. իր ղեստները, գլխարկն ու կոշիկները ամենէն ճարտար վարպետներու ձեռքէ ելած խիստ վայելուչ և ձևաւոր էին:

Հաղիւ երեսուն և հինգ տարեկան կ'երևէր, և ամենէն աւելի ամենուն զարմանք պատճառողը՝ անոր վրայ քիչ մը առաջ Տըպրէյին ըրած գծագրութեան նմանութիւնն էր:

Կոմսը ժպտելով ներս մտաւ և ուղղակի Ալպէրին քովը եկաւ, որ զան դիմաւորելով՝ եռանդեամբ իր ձեռքը անոր երկնցուց:

— Ձեր թագաւորներէն մէկը կարծեմ կը հաստատէր թէ Ճշդութիւնը թագաւորայ քաղաքավարութիւնն է, ըսաւ Մոնթէ-Քրիսթոյ կոմսը: Սակայն անոնց բարի կամքը ինչ որ ըլլայ՝ Ճանբորդները չեն կրնար միշտ իրենց նպատակին հասնիլ: Այսու ամենայնիւ, սիրելիդ իմ դերակոմս, կը յուսամ թէ իմ բարի կամքս տեսնելով՝ ժամադրութենէն կարծեօք երկու կամ երեք մանրերկրորդ ուշանալուս պիտի ներէք: Հինգ հարիւր մղոն տեղը անշուշտ առանց արգելք մը պատահելու չառնուիր մանաւանդ Գաղղիոյ մէջ, ուր ըստ երևութիւ սուրհանդակները ձեձելը արգիլուած է:

— Պարոն կոմս, պատասխանեց Ալպէրը, ձեր ինձ տուած խոստման առթիւ հոս հրաւիրած մէկ քանի բարեկամաց ձեր այցելութիւնը իմացընելու վրայ էի, և որոնք ձեզ ներկայացընելու պատիւն ունիմ: Ահա Պ. Շաթօ-Ռընօ կոմսը, որուն աղնուականութիւնը մինչև երկոտասան առեղնակալաց կը հասնի, և որուն նախահարքը Թապլը-Ռոնտի բոլորտիքը իրենց աթոռն ունէին. Պ. Լիւսիէն Տըպրէ՝ ներքին գործոց պաշտօնէին մանաւանդ դիւանադպիրը. Պ. Պոշան՝ Գաղղիական կառավարութիւնը զարհուրեցընող օրագրապետը. դուքէ իւր ազգային համբաւին վրայ Իտալիոյ մէջ խօսուիլը լսած չէք, քանզի իւր օրագիրը հոն մտնելու հրաման չկայ. վերջապէս Պ. Մաքսիմիլիէն Մորէլ՝ հեծելոց հրամանատարը:

Կոմսը՝ որ մինչև այն առենը քաղաքավարութեամբ բայց անղէական պաղութեամբ և անտարբերութեամբ բարևեր էր, Մորէլի անունը լսելով՝ քայլ մը յառաջ անցաւ, և բոցադոյն կարմրութիւն մը փայլակի պէս իւր դէղնած այտերուն վրայ պատեց:

— Պարոնը Գաղղիական նոր յաղթականներուն միաղեստը հագած է, ըսաւ, խիստ գեղեցիկ հագուստ մ'է:

Կոմսին խօսելու ժամանակ իւր ձայնին դողալը ինչ զգացումէ մը յառաջ գալը և անոր գեղեցիկ, հանդարտ և յստակ աչքերուն ակամայ փայլելուն պատճառը չկրցան հասկընալ:

— Մեր Ափրիկէի զինուորականները տեսած չէ՞ք տակաւին, պարոն, ըսաւ Ալպէրը:

— Ո՛չ, պատասխանեց կոմսը՝ բոլորովին ինքզինքը զսպելով:

— Գիտէք ուրեմն, պարոն, որ այս միաղեստին տակը բանակին ամենէն քաջայց և ամենէն աղնուականայց սրտերուն մէկը կը բաբախէ:

— Ի՞նչ կ'ըսէք, պարոն կոմս, ընդմիջեց Մորէլ:

— Թողուցէք որ խօսիմ, պարոն հրամանատար . . . : Իւր այնպիսի դիւցազնական գործերէն մէկը լսեցիք հիմա, յաւելցուց Ալպէրը, որ թէև այսօր առաջին անգամ զան կը ճանչնամ, բայց իբր իմ բարեկամս ձեզ ներկայացընելու շնորհքը կը խնդրեմ իրմէ:

Եւ այս խօսքերուն վրայ՝ Մոնթէ-Քրիսթոյ կոմսին անսովոր ակնդէտ նայուածքը, դիմաց անցաւոր կարմրութիւնը և արտևանաց թեթև սարսուռը իւր սրտին յուզմունքը կը յայտնէին:

— Պարոնը աղնիւ սիրտ մը ունի եղեր, ըսաւ կոմսը. շատ գոհ եմ:

Այս խօսքերը, որ աւելի կոմսին մասնաւոր դիտաւորութենէն յառաջ եկած էին քան թէ Ալպէրի ըսածներէն, բոլոր հոն եղողները զարմացուցին մանաւանդ Մորէլը, որ հիացմամբ Մոնթէ-Քրիսթոյի երեսը կը նայէր: Սակայն անոր ձայնը այնչափ քաղցր էր և այնչափ սիրալիր, որ որչափ և տարօրինակ ըլլար այս բացատրութիւնը, դժկամակելու տեղի չէր տար:

— Ինչո՞ւ արդեօք կը տարակուսի անոր վրայ, ըսաւ Պոշան Շաթօ-Ռընոյին:

— Ստուգիւ, պատասխանեց Շաթօ-Ռընօ՝ որ իւր ճանաչողու-

թեամբն ու ազնուապետական յատակ նայեցուածքովը Մօնթէ-Քրիսթոյի ծածուկ խորհուրդներուն մէջ ըստ կարի թափանցեր էր, սուգիւ, Ալպէրի ըսածը սուտ չէ եղեր, և կոմսը եզական անձ մը կ'երևի. դուք ինչ կ'ըսէք, Մորէլ:

— Իրօք, ըսաւ Մաքսիմիլիէն. ազատ նայուածք մը ու համակիր ձայն մը ունի, և թէպէտ տարօրինակ ուշադրութեամբ երեսս նայեցաւ, այսու ամենայնիւ անոր դէմքը ինձ հաճելի երևցաւ:

— Պարոններ, ըսաւ Ալպէր, սեննեկապանը կ'իմացընէ թէ սեղանը պատրաստ է: Սիրելիդ իմ կոմս, ներեցէք ինձ որ ճամբան ցուցընեմ ձեզ:

Լռութեամբ սեղանատունը անցան, ու իւրաքանչիւր ոք իրեն սահմանեալ տեղը նստաւ:

— Պարոնայք, ըսաւ կոմսը նստելով, ներեցէք ինձ եթէ երբէք վարմանցս մէջ անպատեհ բան մը տեսնէք. ըստ որում ես օտարական եմ, այն աստիճան օտարական, որ Փարիզ գալս առաջին անգամն է: Հետևաբար Գաղղիական կեանքը ինձ բոլորովին անծանօթ է, և մինչև հիմա իմ վարած կեանքս Արևելեան էր, որ Փարիզեան կենաց ամենէն հակակիրն է: Ուստի ներեցէք ինձ եթէ վարմանցս մէջ Տաճկական, Նէապօլսեցի կամ Արաբացի սովորութիւն մը տեսնէք: Այս բանս իմացընելով, պարոններ, ուտենք կերակուրնիս:

— Անոր այսպէս խօսիլը լսելով, մրմնջեց Պօշան, յիրաւի ես կը հաստատեմ որ մեծ մարդ մ'է:

— Օտարական մեծ մարդ մը, յաւելցուց Տըպրէ:

— Ամեն երկրի մեծ մարդ մը, Պ. Տըպրէ, ըսաւ Շաթօ-Ռընօ:

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

		Երես.
Ա.	Շլացութիւն	3
Բ.	Անծանօթը	15
Գ.	Բօն-տէն-կարի պանդոկը	23
Դ.	Պատմութիւնը	39
Ե.	Բանտերուն արձանագիրքը	57
Զ.	Մորէլի վաճառատունը	65
Է.	Սեպտեմբերի 5ը	84
Ը.	Իտալիա — Սէնպատ նաւաստի	105
Թ.	Զարթումը	136
Ժ.	Հռոմայեցի աւազակներ	144
ԺԱ.	Երևոյթը	183
ԺԲ.	Լախտամահ	208
ԺԳ.	Հռոմի բարեկենդանը	228
ԺԴ.	Ս. Սէպաստիանոյի ստորերկրեայ գերեզմանատունը	252
ԺԵ.	Ժամադրութիւնը	274
ԺԶ.	Սեղանակիցները	283

3 n

1872
1873
1874

1
2

2013